ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ
ՀՐԱՉՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

200 Հայ զորավարներ

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ
ՀՐԱՉՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

200 ՀԱՅ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ

Կենսագրական
հանրագիտարան

Երևան
Հեղինակային հրատարակություն
2011

ՀՏԴ 355/359 (479.25): 941(479.25): 030
ԳՄԴ 68.4+63.3(2Հ) գ2
Հ 246

Հանրագիտարանը հրատարակության են երաշխավորել՝

- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտխորհուրդը
- Պատմական գիտությունների դոկտոր Համլետ Գևորգյանը
- Պատմական գիտությունների թեկնածու Ավագ Հարությունյանը

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ (Տիգրան Մնացականի Պետրոսյանց)
ՀՐԱՉՅԱ ՏԻԳՐԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
Հ 246. - 200 հայ զորավարներ -Ե.: Հեղինակային հրատարակություն, 2011 թ., 184 էջ:

«*200 հայ զորավարներ*» գիրքն առաջին փորձն է հայ իրականության մեջ որոշակի դասակարգմամբ Հայոց հազարավոր զորավարներից 200-ին առանձնացնելու և ընթերցողին ներկայացնելու ուղղությամբ:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 355/359 (479.25): 941(479.25): 030
ԳՄԴ 68.4+63.3(2Հ) գ2

ISBN 978.-9939-53-923-2

© ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ 2011
© Հ. Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆՑ 2011

Մեր մեծագույն պատմիչ
Մովսես Խորենացին հաղորդել է,
որ Քրիստոսի ծննդից առաջ, 2492 թվականին
հայ ազգի անվանադիր Հայկ Նահապետը
Խոշաբ գետի ափին հաղթել է Բելին
և Ժամանակի ու Պատմության մեջ
ապահովել Հայոց տեղը:

2008 թվականին լրացել է
Խոշաբի հաղթանակի
4500 - ամյակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ 13
2. ՀԻԱՆ 14
3. ԿԱՐԱՆԻ 15
4. ՀՈՒԿԱՆԱ 15
5. ԱՆՆԻԱՍ 16
6. ՁԱՐՄԱՅՐ ՀԱՅԿԱԶՆ 16
7. ՍԱՐԴՈՒՐԻ Ա 16
8. ԱՐԳԻՇՏԻ Ա 17
9. ՍԱՐԴՈՒՐԻ Բ 17
10. ԱՐԳԻՇՏԻ Բ 18
11. ՀՐԱՉՅԱ 18
12. ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԻ 19
13. ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾ 20
14. ԱՐՏԱՎԱԶԴ Բ 22
15. ԱՐՏԱՇԵՍ Բ 23
16. ՏՐԴԱՏ Գ ՄԵԾ ԱՐՇԱԿՈՒՆԻ 24
17. ՎԱՉԵ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 25
18. ԱՆԴՈՎԿ ՍՅՈՒՆԻ 25
19. ԱՐՇԱՎԻՐ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ 26
20. ԱՐՇԱԿ Բ 26
21. ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 27
22. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՍՊԵՏ 27
23. ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 28
24. ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 28
25. ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 28
26. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 30
27. ՄԺԵԺ ԳՆՈՒՆԻ 31
28. ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԿ 31
29. ԱՐԱՏԻՈՍ 31
30. ԱԼԵՔՍ-ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 32
31. ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ 32
32. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ 33
33. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԲԱԶՄԱՀԱՂԹ 33
34. ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 34
35. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ 34
36. ԳՐԻԳՈՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 34
37. ԼԵՎՈՆ Ե ՀԱՅԿԱԶՆ 35

38. ԲԱԳՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ 35
39. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ 35
40. ՍԱՀԼ ՍՄԲԱՏՅԱՆ 36
41. ԵՍԱՅԻ ԱԲՈՒ ՄՈՒՍԵ 36
42. ԱԼԻ ԻԲՆ ՅԱՀՅԱ ԱԲՈՒԼ-ՀԱՍԱՆ ԱԼ-ԱՐՄԱՆԻ 36
43. ԱՇՈՏ Ա ՄԵԾ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ 37
44. ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ԿՈՒՐԿՈՒԱՍ 38
45. ՆԻԿԵՓՈՐՈՍ Ա ՓՈԿԱՍ 38
46. ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ 38
47. ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ԿՈՒՐԿՈՒԱՍ 38
48. ԳԱԳԻԿ-ԽԱՉԻԿ ԱՐՇՐՈՒՆԻ 39
49. ԱՇՈՏ Բ ԵՐԿԱԹ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ 40
50. ԹԵՈՓԻԼՈՍ ԿՈՒՐԿՈՒԱՍ 40
51. ԱԼԵՔՍԻՈՍ - ՄՈՒՍԵԼԵ 41
52. ՌՈՄԱՆՈՍ Ա ԼԱԿԱԲԵՆՈՍ 41
53. ՆԻԿԵՓՈՐՈՍ Բ ՓՈԿԱՍ 42
54. ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ՉՄՇԿԻԿ 43
55. ՍՄԲԱՏ Ա 45
56. ՍԱՄՈՒԵԼԿՈՄՍԱՁԱԳ 45
57. ԳԱԳԻԿ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆԻ 46
58. ՎԱՍԱԿ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ 46
59. ՍՄԲԱՏ Բ 47
60. ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ 47
61. ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆԻ 48
62. ԿՅՈՒՐԻԿԵ Ա ԿՅՈՒՐԻԿՅԱՆ 49
63. ՌՈՒԲԵՆ Ա 49
64. ԹՈՐՈՍ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏ 49
65. ԳԱԲՐԻԵԼ 50
66 ԳՈՂ ՎԱՍԻԼ 50
67. ԹՈՐՈՍ Ա 50
68. ԹՈՐՈՍ Բ 51
69. ՄԼԵՀ ՌՈՒԲԻՆՅԱՆ 51
70. ՍԱՐԳԻՍ ՁԱՔԱՐՅԱՆ 52
71. ՀՈՒՍԱՄԱԴԴԻՆ ԼՈՒԼՈՒ ԱԼ ՀԱՋԻԲ 52
72. ՁԱՔԱՐԵ Բ ՁԱՔԱՐՅԱՆ 53
73. ԼԵՎՈՆ Բ ՌՈՒԲԻՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ 54
74. ԻՎԱՆԵ Ա ՁԱՔԱՐՅԱՆ 55
75. ՇԱՄՍԱԴԴԻՆ ԼՈՒԼՈՒ 56
76. ՇԱՀՆՇԱՀ Ա ՁԱՔԱՐՅԱՆ 57
77. ԿՈՍՏԱՆԴԻՆ 57
78. ՀԵԹՈՒՄ Ա ՀԵԹՈՒՄՅԱՆ 58
79. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԵԹՈՒՄՅԱՆ 59
80. ԼԵՎՈՆ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ 59
81. ԽՈՒԹԼՈՒԲՈՒՂԱ ԱՐՇՐՈՒՆԻ 60
82. ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ 60

83. ՇԱՀՆՇԱՀ Բ ԶԱՔԱՐՅԱՆ 60
84. ԿՈՍՏԱՆԴԻՆ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ 60
85. ՇԱՀՆՇԱՀ Գ ԶԱՔԱՐՅԱՆ 61
86. ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ ԹԱԳԱՎՈՐ 61
87. ԼԻՊԱՐԻՏ ՍՊԱՐԱՊԵՏ 62
88. ՀԵԹՈՒՄ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ ՀԵԹՈՒՄՅԱՆ 62
89. ՌՈՍՏՈՄ ՕՐԲԵԼՅԱՆ 62
90. ՅՈՆ ՔԱՋ 63
91. ՅՈՆ ՊՈՏԿՈԱՎԸ 63
92. ՇԻՄՈՆ ՇԻՄՈՆՈՎԻՉ 64
93. ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐՈՎԻՉ 64
94. ԽԱԼԻԼ ՓԱՇԱ 65
95. ՍՈՒԼԵՅՄԱՆ ՓԱՇԱ 66
96. ԱՎԱՆ ԲԱԲԱՆՈՎ 66
97. ԴԱՎԻԹ ԲԵԿ 67
98. ԱԲՐԱՀԱՄ ՍՊԱՐԱՊԵՏ 68
99. ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ 69
100. ԼԱԶԱՐ ԽՐԻՍՏԱՖՈՐՈՎ 69
101. ՄԵԼԻՔ ԼՈՌԻՍ-ՄԵԼԻՔՅԱՆՑ ԵԳԱՆ 70
102. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ 71
103. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ 72
104. ԴՈՒԽՏՈՒՐՈՎ ԴՄԻՏՐԻ ՍԵՐԳԵԻ 72
105. ՀԱԽՎԵՐԴՈՎ ՖԵՈԴՈՐ 73
106. ՅՈՒՍՈՒՖ ԽԱՆ ՄԱՅԻՆՅԱՆՑ 74
107. Իշխան ՄԱԴԱԹՈՎ ՎԱԼԵՐԻԱՆ 75
108. ԿԱՐՊՈՎ ԱԿԻՄ 76
109. ԶՈՀՐԱԲ ԽԱՆ ԱՄԻՐ-ԹՈՓԽԱՆԵ 77
110. ԿԻԾ ԷԴՆԵՍՏ 77
111. ՑԵՑ ՅԱՆՈՇ 78
112. ՉԻՉԱԳՈՎ ՊԱՎԵԼ 79
113. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ 80
114. ԼԱԶԱՐԵՎ ՄԻԽԱՅԻԼ 80
115. ՍՈՒԼԵՅՄԱՆ ԽԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ-ԵՆԻԿՈԼՈՊՅԱՆՑ 81
116. Իշխան ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ՄՈՎՍԵՍ 82
117. Իշխան ԲԵԲՈՒԹՈՎ ՎԱՍԻԼԻ 83
118. ՍԵՐԵԲՐՅԱԿՈՎ ԼԱԶԱՐ 85
119. Իշխան ԱՆԴՐՈՆԻԿՈՎ ԻՎԱՆ 86
120. ԼԱԶԱՐԵՎ ԻՎԱՆ 87
121. ԳԵԴԵՈՆՈՎԻՉ ՀՈՎՍԵՓ 88
122. ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ ԱՐՋԱՍ 88
123. ԲՈՒԴԱԳՈՎ ԳՐԻԳՈՐԻ 89
124. Կոմս ԼՈՌԻՍ-ՄԵԼԻՔՈՎ ՄԻՔԱՅԵԼ 89
125. Իշխան ՄԵԼԻՔՈՎ ԼԵՎՈՆ 91
126. ԱԼԽԱԶՈՎ ՀԱԿՈԲ 92
127. ԹԵՐՋՅԱՆ ՍԱՐԳԻՍ 93

128. ԱԽՇԱՐՈՒՄՈՎ ԲԵՆԻԱՄԻՆ 94
12 9. ԱՍԼԱՆԲԵԿՈՎ ԱԲՐԱՀԱՄ 94
130. Իշխան ԹՈՒՄԱՆՈՎ ԳԵՈՐԳԻ 95
131. ԴՈԽՏՈՒՐՈՎ ԴՄԻՏՐԻ ՊԵՏՐՈՎԻ 96
132. Իշխան ՄԱՆՎԵԼՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ 96
133. ԱՂԱՍԻ-ԲԵԿ-ԱՎՇԱՐՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ 97
134. ՄԱՐԿՈԶՈՎ ՎԱՍԻԼԻ 98
135. ԴՈԽՏՈՒՐՈՎ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԻ 98
136. ԻՍԿԱՆԴԱՐ ԽԱՆ ՍԵԹԽԱՆՅԱՆ 99
137. ԵՓՐԵՄ ԽԱՆ ԴԱՎԹՅԱՆ 99
138. ԼԱԼԱԵՎ ՄԱՏՎԵՅ 100
139. Իշխան ԹՈՒՄԱՆՈՎ ՆԻԿՈԼԱՅ 101
140. ԽԵՄԻՇԵՎ ԳԵՈՐԳԻ 102
141. ՂՈՐՂԱՆՅԱՆ ԱԴԱՄ 102
142. ԿՈՄԱՐՈՎ ԱՆԴՐԵՅ 103
143. Իշխան ԹՈՒՄԱՆՈՎ ԳԵՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ 103
144. ՕԳԱՆՈՎՍԿԻ ՊՅՈՏՐ 104
145. ԱԹԱԲԵԿՈՎ ԱՆԴՐԵՅ 105
146. Իշխան ԲԱՐԱԹՈՎ ՆԻԿՈԼԱՅ 105
147. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԻՎԱՆ 106
148. ՋԱՏԻԿ ՀԱԿՈԲ 107
149. ԲՈՋՈՅԱՆ (ՊՈՋՈԵՎ) ԵՂԲԱՅՐՆԵՐ 107
150. ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ ԹՈՎՄԱՍ 109
151. ՕՋԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ 110
152. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ 112
153. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՀԱԿՈԲ 113
154. ՍԻԼԻԿՅԱՆ ՄՈՎՍԵՍ 114
155. ՄԱՀՄՈՒԴ ՔԵՐԻՄ 115
156. ԿԱՆԱՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ 115
157. ՍԵՊՈՒՀ 116
158. ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 117
159. ՈՍԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ 119
160. ԲԺՇԿՅԱՆՑ ՀԱՅԿ (ԳԱՅ) 120
161. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՆԴՐԵՅ 122
162. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ 122
163. ԽԱԽԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ 123
164. ԽԱՆՓԵՐՅԱՆՑ ԱՐՄԵՆԱԿ 124
165. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ 125
166. ԻՍԱԿՈՎ ԻՎԱՆ 127
167. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ 128
168. ԱԳԱՆՈՎ ՍԵՐԳԵՅ 129
169. ԲԱՐՍԵՂՈՎ ՄԻՔԱՅԵԼ 130
170. ՍԱՐԴԱՐՈՎ ՍԵՐԳԵՅ 131
171. ՏԱՄՐՈՒՉԻ ՎԼԱԴԻՄԻՐ 132
172. ՎԵՔԻԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ 133

173. ՀԱԼԱՋԵՎ ՍԵՐԳԵՅ 134
174. ԳԻՆՈՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ 135
175. ՇԵՔԵՐՋՅԱՆ ՀԱՅԿ 135
176. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ 136
177. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԲԱԳՐԱՏ 137
178. ԳԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԱՄ 138
179. ԱՍՐԻԵՎ ՆԻԿՈԼԱՅ 139
180. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ՆՈՐԱՏ 140
181. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ 140
182. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ 141
183. ՄԱՆՍՈՒՐՈՎ ԲՈՐԻՍ 142
184. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԻՍԱՀԱԿ 142
185. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ 143
186. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՍՔԱՆԱԶ 144
187. ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ 145
188. ՍԱՖԱՐՅԱՆ ՆՎԵՐ 146
189. ԴԵԴԵՕՂԼՅԱՆ ՏԻՄՈՖԵՅ 146
190. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ 147
191. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ 148
192. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲԱԳՐԱՏ 149
193. ԺԵԼԱՌԽՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ 150
194. ԻՎԱՆՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ 151
195. ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ 152
196. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻԽԱՅԻԼ 154
197. ՕՀԱՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ 155
198. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ 156
199. ԲԱԲԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ 157
200. ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ 159

Համաշխարհային պատմության գանձարանում հայ ժողովրդի մեծագույն ներդրումներից մեկը հայ զինվորականությունն է: Ունեցե՞լ է հայ ազգը պետականություն, երկար դարերով զրկվա՞ծ է եղել պետականությունից՝ ոչ մի նշանակություն չունի, Հայաստանում, թե Հայաստանից հեռու, հայ զորավարների պակաս չի եղել: Նրանց քանակն ու առավել ևս նրանց անունն ու հռչակը շատ ու շատ ազգերի երազանքը կարող են միայն լինել:

Քրիստոսի ծննդից առաջ 2492 թվականին, մեզանից ուղիղ 4503 տարի առաջ, Հայ ազգի անվանադիր Հայկ Նահապետը զորավարական սխրանք է գործել և իր եռաթև նետը մխրճել թշնամու՝ Բելի սիրտը: Սրա մասին գրել ու կատարված սխրանքի նկարագրությունն ավանդել է Պատմահայր Մովսես Խորենացին:

Հիշենք մի պատմություն, որ հայ պատմիչ Փավստոս Բուզանդն է արձանագրել: 360-ական թվականների սկզբներին Պարսից Շապուհ Երկրորդ արքան պատերազմ է սկսել Հայաստանի դեմ: Սակայն բոլոր ճակատամարտերում պարտվել է Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանին: Չկարողանալով զենքով տիրել Մեծ Հայքին, Շապուհը դիմել է խորամանկության և, խաղաղության ու բարեկամության դաշն կնքելու պատրվակով, իր մայրաքաղաք Տիզբոն է հրավիրել Հայոց Արշակ Բ արքային և Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանին: Հրավիրել և ուխտադրժորեն ձերբակալել է իր հյուրերին: Պատմիչը գրել է. «Շապուհ թագավորը հրամայեց իր առաջը բերել Վասակ Մամիկոնյանին՝ Մեծ Հայքի զորավար-սպարապետին: Սկսեց նրան անարգել, որովհետև Վասակը փոքր էր մարմնով: Պարսից Շապուհ թագավորն ասաց. «Աղվես, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ չարչարեցիր, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին, հիմա ինչպե՞ս ես, որ քեզ աղվեսի մահով սպանեմ»: Վասակը, պատասխան տալով, ասաց. «Այժմ դու ինձ տեսնելով մարմնով փոքր, իմ մեծության չափը չզգացի՞ր, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՞ս: Բայց մինչև ես Վասակն էի, ես հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»: Շապուհ թագավորը հարցրեց և ասաց. «Դե ասա, իմանանք, այդ ի՞նչ լեռներ են, որ դու գետին էիր տանում»: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը»: Գիտենալով, որ իր ապրելու ժամանակն անգամ որոշված է, միևնույնն է, Վասակ Մամիկոնյանն ամբողջացրել է հայ զորավարի կերպարը. խնդիրը տարածքային մեծության ու բազմաքանակ բանակի մասին չէ, հայ զորավարն, այո, հզոր ու անփոխարինելի է:

Ու քանի-քանի Վասակ Մամիկոնյաններ են ղեկավարել Հայաստանի զորքերը, քանի-քանի հայազգի Վասակ Մամիկոնյաններ են ղեկավարել այլ պետությունների՝ Պարսկաստանի, Արաբական պետության (պետությունների), Բյուզանդիայի, Եգիպտոսի, ավելի ուշ շրջանում Թուրքիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Ռուսաստանի բանակները:

Համընդգրկուն ու տարողունակ է հայոց զորավարական պատմությունը, այն տարածքային, ժամանակային ու աշխարհագրական սահմաններ չի ճանաչում: Օտար երկրներում հայկազունները եղել են վարչապետ ու նահանգապետ, լիազոր դեսպան, արտակարգ դեսպանորդ ու արտակարգ դեսպան, քաղաքապետ ու համիարզ, փոխիյուպատոս ու խորհրդական, արքա ու տիրակալ, թագավոր ու մարզպան, նախարար ու իշխանապետ, թագադիր իշխան ու սպարապետ, իշխանաց իշխան ու հազարապետ, իշխան ու զորավար, մելիք ու զորական, կայսր ու կոմս, դուքս ու աթաբեկ, սեպուհ ու սատրապ, ասպետ ու մարաջախտ, կյուրապաղատ ու յուզբաշի, պայլ ու պատրիկ, սիր ու սարդար, գունդստաբլ ու ամիրսպասալար, ամիրա ու բդեշխ, բեկ ու կատեպան, հեջուբ ու մաղխազ, խան ու փաշա, ջանցլեր ու սեբաստոս, վեստ ու սինեջալ, գեներալ, ծովակալ ու մարշալ: Աշխարհի ո՞ր ազգն է այսքան տիտղոսների ու կոչումների արժանացել: Թերևս միայն հայերը:

Եվ, այնուամենայնիվ այդքան միանշանակ չէ նաև այն հանգամանքը, որ օտարներին անգամ անմնացորդ ու բողոքանվեր ծառայած հայազգի զորականներն են ըստ արժանվույն գնահատվել ու աստիճանների արժանացել: Յուրաքանչյուր երկրում էլ գործել է ինքնապահովագրման գրեթե նույն մոտեցումը, որ լավագույնս է ձևակերպված է 11-րդ դարի երկրորդ կեսի բյուզանդական տեսաբան Կեկավմենոնի «Խորհուրդներ կայսերը» աշխատության մեջ: Նա կայսերը խորհուրդ է տվել. «Ես Քեզ մի բան էլ եմ ասելու, Տեր Սուրբ: Սենեքերիմը, Դու գիտես, որ հին թագավորներից էր սերում: Նա ցանկացավ իր երկիրը տալ Ծիրանածին տեր Վասիլ Կայսերը, և դառնալ նրա ծառան: [Վասիլն] ընդունել է պարգևը, և նրան մագիստրոսի աստիճանով պատվել. բայց ոչ ավել, թեպետև [Սենեքերիմը] թագավոր էր՝ հին թագավորներից սերող: Օտարերկրացիներին, եթե նրանք նույնիսկ իրենց երկրի թագավորական զարմից սերեն, բարձր աստիճաններ մի շնորհիր, ոչ էլ վստահիր նրանց բարձր պաշտոններ: Հակառակ դեպքում Դու և Քեզ կխայտառակես այդպես անելով և Քո հռոմայեցի իշխանավորներին: Եթե Դու, օրինակի համար [կայսրություն] եկած օտարերկրացուն շնորհես պրիմիկերիոսի կամ զորավարի աստիճան, ապա հռոմայեցի զորավարին ի՞նչ [ավելի] աստիճան կարող ես շնորհել: Բոլոր դեպքերում նրան թշնամացնելու ես: Իսկ [օտարերկրացու] երկրում էլ, երբ լսեն, որ իրենց [հայրենակցին] նման աստիճան ու պաշտոն են տվել, բոլորը ծիծաղելու են և ասելու, թե մեզ մոտ նա ոչինչ էր, գնաց Ռոմանիա և արժանացավ նման աստիճանի, պարզ է, որ Ռոմանիայում հարմար մարդ չկար, դրա համար է, որ մեր [հայրենակիցը] այդպես բարձրացավ»: Այսպիսի դաժան չափորոշիչը, որ անգամ գրավոր խորհուրդ է Բյուզանդիայի կայսրին՝ գործել է թե հույների, թե արաբների, թե թուրքերի, թե ռուսների և թե մնացած ազգերի համար:

Որքան էլ ծանր լինի թվարկությունը, այնուամենայնիվ հայցելով Ձեր ներո-

ղամտությունը, բերում ենք Բյուզանդական կայսրությանը ծառայած առավել հայտնի հայազգի զորավարների ցանկը՝ ըստ դարերի.

4-րդ դար՝ Բակուր, Վարազ.

5-րդ դար՝ Խանարանգես.

6-րդ դար՝ Ադոլիս, Ակակիոս, Արատիոս, Արտաշիր, Արտավազդ, Արտավան Արշակունի, Բուզ, Գղակ, Գրիգոր Արշակունի, Գրիգոր, Թովմա, Թրոյլաթ, Համազասպ, Հերակլիոս, Հովհաննես Գուզես, Հովհաննես նախարար, Մաղաս, դուքս Մուշեղ Մամիկոնյան, Նարսես, Ներսես Բասենցի, Ներսես Պատրիկ, Շմավոն, Սահակ, Սիտտաս, Վահան Արշակունի.

7-րդ դար՝ Ալեքս-Մուշեղ Մամիկոնյան, Գրիգոր, Դավիթ Հայկազն, Դավիթ Սահառունի, Թեոդորոս, Իսահակ Հայկազն, Մանուել, Մժեժ (668 թ-ին կարճ ժամանակով կայսր է հռչակվել), Մժեժ Գնունի Կյուրապաղատ, Մուշ, Շապուհ Ամատունի, Պետրոս, Սահակ Կամսարական, Սահակ Մամիկոնյան, Վահան, Վահրամ, Վալենտին Արշակունի, Վասակ Արծրունի, Վարազ-Գնել Գնունի, Վասակ Արշակունի, Վասակ Պատրիկ.

8-րդ դար՝ Արտավազդ Կյուրապաղատ (741 թ-ին կարճ ժամանակով կայսր է հռչակվել), Արտավազդ Մամիկոնյան, Գրիգոր Մամիկոնյան, Մուշեղ, Նիկետ, Նիկեփոր, Վարազբակուր Պատրիկ, Վարազտիրոց, Վարդ Արծրունի, Տրդատ Պատրիկ, Փիլիպիկոս Վարդան (711-713 թթ-ին՝ կայսր).

9-րդ դար՝ Ալեքս, Անտիգոնոս, Արշավիր, Գուրգեն, Լևոն Լալակոն, Լևոն Ա Հայկազն (813-820 թթ-ին կայսր), Թովմա Սլավոն, Հովհաննես Խալդ, Հովհաննես Ա Կուրկուաս, Կոստանդին Տաքսարաս, Մանվել Մամիկոնյան, ծովակալ Մարիանոս Մամիկոնյան (810 թ.), Մլեհ, Մլեհ Գևորգ, Մուշեղիկ, Նիկեփորոս Փոկաս Պատրիկ, Պետրանոս Մամիկոնյան Մագիստրոս, Պետրոս Բուլղար, Սմբատ Պատրիկ (կեսար Վարդասի եղբայրը), Սմբատ Պատրիկ (կեսար Վարդասի փեսան), Սմբատիկ, Ստիլիանոս Զաուցես, Վարդ Փոկաս, Վարդան Հայկազն Պատրիկ (802 թ-ին 50 օրով հռչակվել է կայսր), կեսար Վարդաս Մամիկոնյան, Վասիլ Արշակունի (Վասիլ Ա Մակեդոնացի կայսր), Քրիստափոր, Քուրդիկ Հայկազն.

10-րդ դար՝ Ազոտոզ, ծովակալ Ալեքսիոս-Մուսելե, Անդրանիկ Մոկացի, Աշոտ Բագրատունի, Գրիգոր Բագրատունի, Գրիգոր Մագիստրոս, Գուրգեն Հայկազն, Թեոփիլոս Կուրկուաս, Թորոս մեծ իշխան Հաշտենցի, Նիկեփորոս Բ Փոկաս (963-969 թթ-ին՝ կայսր), Լևոն Փոկաս, Հովհաննես Չմշկիկ (969-976 թթ-ին կայսր), Հովհաննես Բ Կուրկուաս, Կոստանդին Սկլերոս, Կոստանդին Փոկաս, Մլեհ Մագիստրոս, Միքայել Բուրցես, ծովակալ Միքայել Քուրդիկ, Մխիթար Վասիլ, ծովակալ Մուշեղ Ալեքս, Մուշեղ Ռոմանոս, Պանգրատունկաս, Պրոկոպիոս, ծովակալ Ռոմանոս Ա Լակաբենոս (920-944 թթ-ին կայսր), Ռոմանոս Կուրկուաս, Ռոմանոս Տարոնացի, Սահակ, Սահակ Հանձիթցի, Վահրամ, Վասիլ Հայկազն, Վարդ Բոյլ, Վարդաս Սկլերոս (976 թ-ին իրեն հռչակել է կայսր), դուքս Վարդաս Փոկաս Մագիստրոս (987 թ-ին իրեն հռչակել է կայսր).

11-րդ դար՝ Ահարոն Բուլղար, Բագրատ Վխկացի, Բակուրան, Գաբրիել, Գրիգոր Բակուրյան, Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, Թորոս Կյուրապաղատ, Խաչատուր Շիրակունի վեստ, Կատակալոն Կեկավմենոս, Հասան Արծրունի,

Հովհաննես Պռոտոսպաթար, Ճնճղուկ Արծրունի, Նիկեփորոս Փոկաս, Պարսամ, Վասիլակ, Վարազ իշխան.

12-րդ դար՝ Գրիգոր, Փիլարետ:

Այս ցուցակում ընդգրկվել է 141 անուն: Եվ սա՝ միայն առաջին մեծության զորավարները: Իսկ որքան էին նրանք Բյուզանդիոնի բանակի միջին հրամկազմում: Կարելի է այն տպավորությունն ստանալ, որ Բյուզանդիան որպես վահան պահել ու պահպանել են հայ զորավարներն ու զինվորականները և 12-րդ դարից հետո նրանց բացակայության պատճառով 1453 թվականին Բյուզանդիան պարտվեց ու վերացավ:

Այս զորավարների անուններն այսօր գուցե թե ոչինչ չեն ասում, սակայն նրանց, հենց նրանց առաջ են դողացել այն ժամանակների հայտնի աշխարհի տիրակալները: Այս զորավարներից շատերը առաջնորդել են 50-100 հազարանոց բանակներ:

Բայց այս ցուցակից ընդամենը մեկ տասնյակ մարդու անուն է մտել մեր առանձնացրած 200-ի մեջ: Մենք սկսել ենք Հայկ Նահապետով (նա մ.թ.ա. 2492 թվականին Խոշաբ գետի ափին հաղթել է Բելին), ընդգրկել մինչև գրքի տպագրությունն ընկած շուրջ 4503 տարվա ժամանակաշրջան և այդ ժամանակի մեջ առանձնացրել 200 զորավարի: Այս երկու հարյուր զորավարների ընտրությունն ինչ խոսք սուբյեկտիվ է այն պարզ պատճառով, որ ցանկացած համեմատություն միշտ էլ թերի ու անձնավորված է:

Մինչև 18-րդ դարը գործած զորավարներից ընտրել ենք նրանց, ովքեր զորաբանակ են ղեկավարել (եղել են զինված ուժերի հրամանատար՝ թագավոր, սպարապետ, գունդստաբլ), իշխանություն իրականացնողի կողմից լիազորվել են ճակատամարտ ղեկավարել: Այդ առումով ընտրյալ բոլոր զորավարները համապատասխանում են ներկայացված պահանջին (այդպիսիք ընտրվածների կեսն են՝ մոտ հարյուրը):

18-21-րդ դարերում, երբ պետության ներսում զինված ուժերը մեծաթիվ են եղել, և արդեն միայն մեկ մարդ չէր ղեկավարում զինված ուժերը կամ բանակը՝ ընտրությունը կատարել ենք դիվիզիայի հրամանատարից սկսած, և ավելի բարձր պաշտոններում եղածներից (կորպուսի, ռազմաճակատի, օկրուգի, բանակի հրամանատարներ):

Տիգրան ՀԱՅԱԶՆ

Մ.թ.ա. 25-րդ դար

1. ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

Հայ ազգի Նահապետ և անվանադիր

Հայկ Նահապետ

Հայկ Նահապետը (կենսագրական տեղեկություններ չկան) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Հայոց անվանադիրը: Ջվանշեր պատմիչի մոտ պահպանված ավանդազրույցի համաձայն Կովկասյան լեռնաշղթայի, Պոնտոս (Սև) և Կասպից ծովերի միջև տարածված երկիրը Հայկը ժառանգել է հորից՝ Թորգոմից: Հայկը հարկատու է եղել աշշուրաբաբելական բռնապետ Բելին (Նեբրովթ): **Համախմբելով իր եղբայրների, որդիների, թոռների ուժերը Հայկն ապստամբել ու թոթափել է օտար բռնակալի իշխանությունը:** *Բելն իր որդիներից մեկի գլխավորությամբ դիվանագիտական պատգամավորություն է ուղարկել Արարատի երկիրը և Հայկից պահանջել հնազանդվել և վերստին ճանաչել իր գերագահի իրավունքները: Հայկը ենթակա աստծո գահն իր համար անպատվաբեր համարելով՝ հետ է ուղարկել Բելի պատգամավորներին:* Հայկին պատժելու նպատակով Բելը մեծաքանակ զորքով մտել է նրա բնակության սահմանը: Քերթողահայր Մովսես Խորենացին հիշատակում է, որ Կադմոս թոռան միջոցով իմանալով Բելի ներխուժման մասին, Հայկը հավաքել է իր զորքերը և արագ երթով հասել «աղի ջրեր ու մանր ձկներ ունեցող ծովակի»՝ Վանա լճի ափը և մ.թ.ա. 2492 թ-ին Խոշաբ գետի ափին, բռնակալ Բելի դեմ կռվի է ելել իր փոքրաթիվ զորաբանակով: Հայկյանները, չերկնչելով ստվար թշնամուց, մարտն ընդունել են քաջաբար. «Երբ երկու կողմի հսկաներն իրար մոտ հասան, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին իրենց գրոհներով և իրար վրա ահ ու սարսափ էին գցում իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով թավալվում ընկնում էին գետին, և կռիվն (անորոշ էր մնում), երկու կողմերն էլ անպարտելի մնալով: Այս անսպասելի տարակուսական դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց, և հետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր. որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի: Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շեշտակի թափով անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում. այս կերպով՝ ճոխացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գետին և շունչը փչում է: Իսկ ամբոխն այս քաջության ահագին գործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը»: Հայկի և Բելի մասին վեպը վերաբերում է հայ

ժողովրդի մանր ու տոհմային միավորումներից մեկ ընդհանուր պետական կազմավորում ստեղծելու փուլին և իր մեջ կրում է Հայկական լեռնաշխարհի ցեղերի համախմբման և հայ ժողովրդի ինքնահաստատման գաղափարը: Բելին սպանելուց հետո Հայկը վերադարձել է իր բնակատեղը՝ հետը տանելով Բելի զմռսած դիակը «ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց»: Ի պատիվ հաղթանակի Հայկը ճակատամարտի տեղում կառուցել է Հայք դաստակերտը, որի անունով շրջակա գավառը կոչվել է Հայոց ձոր, իսկ այն բլուրը, որտեղ նետսպան է եղել Բելը, Հայկն անվանել է Գերեզմանք: Այս դեպքերից հետո նրա բնակիչները Հայկի անունով կոչվել են Հայկազունք, Հայկազարմք, Հայք, իսկ նրանց երկիրը՝ Հայք, Հայոց աշխարհ, Հայոց տուն, Հայաստան: Անանիա Շիրակացու և Վանական Վարդապետի մոտ պահպանված ավանդություններում Հայկը նաև հայոց առաջին տոմարադիրն է, ժամանակի, տարվա չափ ու շրջան որոշողը (հայկական տարվա ամիսները կոչվել են Հայկի որդիների ու դուստրերի անուններով):

Մ.թ.ա. 18-րդ դար

2. ՀԻԱՆ

Հայկազյան-հիքսոսյան զորավար,
Եգիպտոսի փարավոն (մ.թ.ա. 18-րդ դար)

Հիան Հայկազյան

Հիան (Հիանալի) Հայկազունին (կենսագրական տեղեկություններ չկան) **մ.թ.ա. 18-րդ դարի վերջին քառորդին ստեղծել է արագաշարժ ու հզոր բանակ**, որը զինված էր երկաթե սրերով, զրահավորված էր երկաթե զրահներով, ապահովված էր երկանիվ մարտակառքերով, որոնց լծված էին ձիեր: Հայկական լեռնաշխահից շարժվել է դեպի հարավ, անցել է Մերձավոր Արևելքի երկրները և մ.թ.ա. 1710 թ-ին դուրս եկել Սինա թերակղզու եզրը: Եգիպտական փարավոնի բանակը փորձել է կանգնեցնել Հիանի առաջխաղացումը: *Ճակատամարտն ավարտվել է եգիպտական բանակի ջախջախիչ պարտությամբ, հայկական թուրը կիսել է եգիպտական փարավոնի բրոնզե սաղավարտն ու գլուխը*: Եգիպտական Միջին թագավորության այդ վերջին փարավոնի մումիան, կիսված գլխով, ցուցադրվում է Կահիրեի հնեաբանական թանգարանում: *Հիան Հայկազունին նվաճել է Եգիպտոսը և իրեն հռչակել Եգիպտոսի փարավոն՝ դրել է Եգիպտոսի տիրակալների Հայկազյան-հիքսոսյան արքայատան հիմքը*: Այս արքայատունը Եգիպտոսում տիրել է 130 տարի՝ մինչև մ.թ.ա. 1580 թ-ը: Հայկազյան-հիքսոսյաններն են ստեղծել հիերոգլիֆ այբուբենը, որ փյունիկացիների միջոցով դարձել է աշխարհի գրեթե բոլոր այբուբենների հիմքը: Նրանք են կատարելագործել եգիպտական օրացույցը և թափառողի փոխարեն ստեղծել անշարժ տարեցույց: Հայկազյան-հիքսոսյաններն են եգիպտացիներին սովորեցրել երկաթ

ծուլելու արվեստը: Իսկ այդ ամենն արդեն Հայրենիք-Հայաստանում վաղուց հայտնի էր: Եգիպտոսի դամբարաններից մեկում գտնվել է Հիան փարավոնի մոխրագույն ավազաքարից պատրաստված դիմաքանդակը: Քանդակը «արմենոիդ» տիպի եզակի օրինակ է: Թագավորն արծվաքիթ է, թեթևակի ուռուցիկ աչքերի բացվածքով, հոնքերի հաստ աղեղներով, սեղմված բարակ շուրթերով, կամային կզակով, մկանուտ մի փոքր երկարավուն դեմքով: Ուշագրավ է Հիան փարավոնի սաղավարտը: Այն դեպի վերնամաս նեղանում է, իսկ ճակատի մասում կերտված է ուժ և արիություն խորհրդանշող նետածայր, որպիսի խորհրդանիշ առկա է Արարատյան թագավորների սաղավարտներին: Հիան փարավոնի դիմաքանդակը պահվում է Լուվրում (Փարիզ):

Մ.թ.ա. 15-րդ դար

3. ԿԱՐԱՆԻ

Հայք-Հայասայի թագավոր (մ.թ.ա. 15-րդ դար)

Կարանին (կենսագրական տեղեկություններ չկան) Հայք-Հայասայում թագավորել է խեթական թագավորներ Թութխալիաս Գ-ի (մ.թ.ա. շուրջ 1400-1380 թթ-ին) և Սուպպիլուլիումաս Ա-ի (մ.թ.ա. 1380-1340թթ.) օրոք: Մ.թ.ա. 15-րդ դարի վերջին խեթական զորքերը հարձակվել են Հայք-Հայասայի վրա և գրավել Բարձր Հայքի արևմտյան մասը: *Կարանի թագավորի գլխավորությամբ հայկական զորքերը հարձակվել են, հաղթել թշնամուն և դուրս շպրտել հայկական տարածքներից*: Կարանի թագավորի անունից է առաջացել Կարին քաղաքի անունը:

Մ.թ.ա. 14-րդ դար

4. ՀՈՒԿԱՆԱ

Հայք-Հայասայի թագավոր (մ.թ.ա. 14-րդ դար)

Հուկանան (կենսագրական տեղեկություններ չկան) Հայք-Հայասայում թագավորել է խեթական թագավոր Սուպիլուլիումաս Ա-ի (1380-1340 թթ-ին) օրոք: *Հայք-Հայասայի թագավորը Խեթական պետության հարձակումների դեմ ստեղծել է հարևան երկրների դաշնակցություն և դիմագրավել խեթերի հարձակումներին*: Հետագայում հաղթելով դաշնակիցների զորքերին՝ խեթերը գրավել են Հայք-Հայասայի արևմտյան գավառները: Սկսվել է երկարատև պատերազմ: **Հայք-Հայասայի թագավոր Հուկանան խաղաղության պայմանագիր է կնքել Սուպիլուլիումաս Ա-ի հետ**: Երկու երկրների թագավորները համաձայնել են չպատերազմել իրար դեմ, պատերազմի դեպքում օգնել իրար, դաշնակցել և հրաժարվել թշնամությունից, հավատարիմ մնալ երդմանը և կնքված պայմանագրին: Հայ-խեթական դաշինքն ամրապնդվել է Հուկանայի և խեթական թագավորի քրոջ ամուսնությամբ: Հուկանա թագավորն այս պայմանագրով դիվանագիտական ճանապարհով կասեցրել է խեթերի հարձակումը Հայք-Հայասայի վրա: Այս պայմանագիրը մարդկությանը հայտնի առաջին գրավոր իրավական փաստաթուղթն է և հիմք է դրել միջազգային դիվանագիտությանը:

Մ.թ.ա. 13-րդ դար

5. ԱՆՆԻԱՍ

Հայք-Հայասայի թագավոր (մ.թ.ա. 13-րդ դար)

Աննիասը (կենսագրական տեղեկություններ չկան) շարունակել է իր նախորդների ակտիվ դիմադրողական քաղաքականությունը, որպեսզի երկիրն ապահովի հարևան պետությունների հարձակումներից: Աննիասի անունով են կոչվել Բարձր Հայքի Դարանաղի գավառի Անի-Կամախ և Այրարատ նահանգի Շիրակ գավառի Անի ամրոցները:

Մ.թ.ա. 11-րդ դար

6. ՁԱՐՄԱՅՐ ՀԱՅԿԱԶՆ

Հայ նահապետ (մ. թ. ա. 11-րդ դար)

Զարմայր Հայկազնը (ծննդյան թվականն անհայտ - մ.թ.ա. 1182 թ.) հայկական և եթովպական զորագնդերով *մ.թ.ա. 1194 թ-ին մասնակցել է Տրովադայի պատերազմին* որպես Պրիամոսի օգնական: Զոհվել է մարտում:

Մ.թ.ա. 9-րդ դար

7. ՍԱՐԴՈՒՐ Ա

Արարատյան թագավորության տիրակալ (մ.թ.ա. 845-825 թթ-ին)

Սարդուր Ա-ն (ծննդյան թվականն անհայտ-մ.թ.ա. 825 թ.) հաջորդել է Արամեին: Սերում է Հայկազունների հարավային թևը ներկայացնող Վասպուրական-Բիայնական (Արծրունյաց) երկրորդական հարստությունից: Սարդուր Ա-ն, լեռնաշխարհում իր գերակայությունը հաստատելիս, մրցակցության մեջ է մտել Հայկազունների արքայատոհմի գլխավոր ճյուղերի ներկայացուցիչների հետ, որոնք կենտրոնացել են Աղձնիքում, Սասունում: Թագավորության մայրաքաղաք է հռչակել հայրենի Վան-Տուշպա քաղաքը, Վանի ժայռի վրա կառուցել մայրաքաղաքի միջնաբերդը: Սարդուր Ա-ն հաջողությամբ դիմակայել է Ասորեստանի արշավանքներին, ընդարձակել և ամրապնդել է թագավորության սահմանները, միավորել է Արածանի գետի միջին և ստորին ավազանի երկրները: Ասորեստանում Սալմանասար Գ-ի դեմ ապստամբություններն ու գահակալական կռիվները (մ.թ.ա. 827-825 թթ-ին) զգալիորեն հեշտացրել են *Սարդուր Ա-ի առաջխաղացմանը Հայկական Տավրոս լեռնաշղթայի ուղղությամբ, որտեղ նա հսկողություն է սահմանել լեռնանցքների վրա*: Սարդուր Ա-ն արձանագրություններում իրեն անվանել է «մեծ արքա», «հզոր արքա», «բոլոր թագավորներից հարկեր ստացող արքա», «Նաիրի երկրների արքա»: Սարդուր Ա-ն դրել է Նաիրի, Բիայնիլի, Արարատի միասնականացման և Հայոց ընդհանրական պետականության հաստատման հիմնաքարը:

Մ.թ.ա. 8-րդ դար

8. ԱՐԳԻՇՏԻ Ա

Արարատյան թագավորության տիրակալ (մ.թ.ա. 784-764 թթ-ին)

Արգիշտի Ա

Արգիշտի Ա-ն (կենսագրական տեղեկություններ չկան) Մենուայի երկրորդ որդին է, հաջորդել է եղբորը՝ Իշպուինի արքային: Նրա գահակալության տարիներին Վանի թագավորությունը հասել է ռազմա-քաղաքական հզորության գագաթնակետին: **Կռվելով Ասորեստանի դեմ՝ Արգիշտի Ա-ն ընկճել է նրա զորությունը, դուրս մղել նրան Հյուսիսային Միջագետքից և Կոմմագենեից, նաև՝ Հյուսիսային Ասորիքից, իր գերիշխանության տակ առել Միջերկրական ծովի արևելյան և Փոքր Ասիայի հարավ-արևելյան շրջաններով անցնող ռազմական ու առևտրական մայրուղիները: Նա միասնական մի տերության մեջ է միավորել Հայկական լեռնաշխարհը:** Արգիշտի Ա-ի օրոք են հիմնադրվել Էրեբունի (Երևան) և Արգիշտիխինիլի (Արմավիր) բերդաքաղաքները, կառուցվել ջրանցքներ, տաճարներ, պալատներ, շտեմարաններ, զարգացել են երկրագործությունը, անասնապահությունը, արհեստները, առևտուրը: Արգիշտի Ա-ի անունով հայտնաբերվել են բազում մեհենագրեր, որոնց մեջ նշանավոր է Խորխորյան տարեգրությունը: Հնագետները ենթադրում են, որ Արգիշտի Ա-ն թաղվել է Բիայնիլիի կրոնական Մուսասիրի տաճարում, որտեղ աստվածների կուռքերի կողքին եղել է Արգիշտի Ա-ի երկու տոննա կշռող բրոնզաձույլ արձանը:

9. ՍԱՐԴՈՒՐ Բ

Արարատյան թագավորության տիրակալ
(մ.թ.ա. 764-735 թթ-ին)

Սարդուր Բ-ն (ծննդյան թվականն անհայտ-մ.թ.ա. 735 թ.) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Արգիշտի Ա թագավորի որդին է, գահակիցը և հաջորդը: Գահակալման սկզբում բարենորոգել, հզորացրել է երկրի զինված ուժերը: Պատժիչ արշավանքներով իրեն է ենթարկել ծայրամասային իշխանություններին և ամրապնդել միապետությունը, բազմաթիվ արշավանքներով ընդարձակել է թագավորության սահմանները: Արարատյան թագավորության գլխավոր հակառակորդի՝ Ասորեստանի դեմ մրցապայքարում, մ.թ.ա. 753 կամ 752 թ-ին հաղթել է Աշշուրնիրարի Զ թագավորին և դուրս մղել Հյուսիսային Ասորիքից և Հյուսիսային Միջագետքից: Սարդուր Բ-ի գերիշխանությունն ընդունել և հարկեր են վճարել Մելիտեայի (Մելիտինե), Կոմմախայի (Կոմմագենե), Արմեի (Հյուսիսային Ասորիք), Մանայի և այլ թագավորություններ: Նրա օրոք Արարատյան թագավորության սահմանները հյուսիս-արևելքում հասել են մինչև Կուլխա (Կողքիս) եր-

կիրը, հյուսիսում և հյուսիս-արևելքում՝ Կուր, արևմուտքում՝ Եփրատ գետերը, հարավ-արևմուտքում՝ Կումմախա և Արմե երկրները, հարավում՝ Հյուսիսային Միջագետք և Ասորեստան, հարավ-արևելքում՝ Սանա երկիրը: *Իրականացնելով ճկուն դիմադրողական քաղաքականություն Ասորեստանի դեմ պայքարում՝ Սարդուր Բ-ն դիվանագիտական ճանապարհով ստեղծել է ռազմա-քաղաքական խմբավորում, որի մեջ մտել են Մելիտեան, Կումմախան, Բիթ-Ագուսը, Գուրգումը:* Մ.թ.ա. 743 թ-ին Արփադում, ապա Կումմախայում խմբավորման ռազմական ուժերը պարտվել են և Սարդուր Բ-ն կորցրել է իր ազդեցությունն Անդրեփրատյան երկրամասերում և արևմուտքում, սահմանափակվել է Եփրատ գետով: Մ.թ.ա. 735 թ-ին Թգլատպալասար Գ-ն ներխուժել է Արարատյան թագավորություն և պաշարել Վան բերդաքաղաքը: Չկարողանալով գրավել Վանը՝ թշնամին ավերել է շրջակա բնակավայրերը, սակայն թշնամուն չի հաջողվել սասանել Արարատյան թագավորության հզորությունը: Սարդուր Բ-ն բազմաթիվ արձանագրություններում և իր հայտնի տարեգրությունում իրեն կոչել է **«մեծ արքա»**, **«հզոր արքա»**, **«տիեզերքի արքա»**, **«արքաների արքա»**: Սարդուր Բ-ի արձանագրություններ են հայտնաբերվել Վանում, Արածանիի հովտում, Արարատյան դաշտում, Սևանի ավազանում: Սարդուր Բ-ն, հավանաբար, թաղվել է Մուսասիրի արքունի դամբարանում:

10. ԱՐԳԻՇՏԻ Բ

Արարատյան թագավորության տիրակալ (մ.թ.ա. 713-685 թթ-ին)

Արգիշտի Բ-ն (կենսագրական տեղեկություններ չկան) *իր զորքով արշավել է արևելք, հասել Կուր գետի ափը, Կասպից ծովի առափնյա շրջանները: Ամրապնդել է Հայաստանի արևմտյան շրջանները՝ Եփրատի ավազանի հատվածում:* Բարձր Հայքի Եկեղյաց գավառում կառուցել է հզոր ամրոց: Շինարարական աշխատանքներ է իրականացրել երկրի կենտրոնական մասում՝ Վանա լճի հյուսիսային ափին՝ Արճեշի շրջանում:

Մ.թ.ա. 7-րդ դար

11. ՀՐԱՉՅԱ

Հայոց Հայկազյան թագավոր (մ.թ.ա. 610-590-ական թթ-ին)

Հրաչյան (կենսագրական տեղեկություններ չկան) Հայկազյան տոհմից է և հաջորդել է հորը՝ Պարույր Հսկայորդուն: Քերթողահայր Մովսես Խորենացին Հրաչյա թագավորին համարել է Նոր Բաբելոնիայի թագավոր Նաբուգոդոնոսոր Ա-ի (մ.թ.ա. 604-562 թթ-ին) ժամանակակիցը: Շարունակել է հոր՝ Պարույր Հսկայորդու աշխարհաքաղաքական գործունեությունը մնալով Մարաստանի, Պարսկաստանի, Հայաստանի պետությունների կողմից ստեղծած Արիական Եռադաշինք ռազմա-քաղաքական միավորման կազմում, ինչպես նաև գործակցել է հայկական մյուս մեծ տիրակալությունների՝ Արարատյան և Մանայի թագավորությունների հետ: Այս փաստը ժամանակակիցներից արձանագրել է հրեաների հոգևոր առաջնորդ Երեմիան (մ.թ.ա. 628-586 թթ-ին): Հայկական այդ ուժերի զորաբանակով (մոտ 50.000 զինվոր, 100 մարտակառք) Հրաչյան մ.թ.ա. 610 թ-ի ամռանը Արիական Եռադաշինքի միացյալ բանակի կազմում

մասնակցել է Ասորեստանի Խառան քաղաքի գրավման գործողությանը. 605 թ-ի մայիսի վերջին՝ եգիպտական մոտ 100.000 բանակի դեմ տարած Կարքեմիշի հաղթական ճակատամարտին (հայկական բանակն ունեցել է մոտ 30.000 զինվոր, 100 մարտակառք): Կարքեմիշի ճակատամարտով փաստորեն ավարտվել է Ասորական պատերազմը, որի մեծագույն արդյունքը Առաջավոր Ասիայում Ասորեստանի ավելի քան հազարամյա տիրապետության ավարտն էր ու այդ պետության պատմության ասպարեզից առհավետ հեռանալը: Հրաչյա Պարույրորդին արշավել է Փոքր Ասիա, ջախջախել կիմմերական տրերների ցեղամիության առաջնորդ Կոբասին և Փոքրասիական տարածաշրջանում հաստատել իր գերիշխանությունը: Մ.թ.ա. 597 թ-ին Արիական Եռադաշինքի միացյալ բանակի կազմում (հայկական բանակը եղել է մոտ 10.000) մասնակցել է Երուսաղեմի գրավմանը և մեծ ավար բերել Հայաստան: Հրեա գերիների հետ Բաբելոն է տարվել նաև Արմենիի թագավորության դեսպան Սմբատ Բագրատունին, որը ավելի ուշ Հրաչյա Պարույրորդու միջամտությամբ ազատ է արձակվել և վերադարձել է Հայրենիք (այս փաստի սխալ մեկնաբանությունն էլ պատճառ է դարձել բնիկ հայկական Բագրատունի տոհմը հրեական կոչելու համար):

Մ.թ.ա. 2-րդ դար

12. ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԻ

Հայոց թագավոր (մ.թ.ա. 189-160 թթ-ին)

Արտաշես Ա Բարի թագավորը (կենսագրական տեղեկություններ չկան) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Հայոց Երվանդունիների տոհմից վերընձյուղած Արտաշեսյան արքայատոհմի հիմնադիրն է. Զարեհի որդին: Մինչ թագադրումը զորավար է եղել Սելևկյանների բանակում: Մ.թ.ա. 190 թ-ին Մագնեսիայի ճակատամարտում՝ Սելևկյան թագավոր Անտիոքոս Գ-ի պարտությունից հետո. Արտաշես Ա Բարի թագավորը Մեծ Հայքը հռչակել է անկախ թագավորություն: Վերամիավորել է հայկական հողերի մեծ մասը, ստեղծել կենտրոնացված հզոր հայկական պետություն: Նրան չի հաջողվել Հայաստանին միավորել միայն բուն հայկական հողատարածքներ Փոքր Հայքը, Ծոփքը և Կոմմագենեն: Կարգավորել է պետական կառույցը. կատարել հողային բարեփոխումներ, երկիրը վարչականորեն բաժանել է 120 ստրատեգիաների: Մեծացրել և հզորացրել է Հայկական բանակը: Կառուցել է Արտաշատ մայրաքաղաքը, Զարեհավան և Զարիշատ քաղաքները: *Մ.թ.ա. 179 թ-ին Արտաշես Ա-ն միջնորդ դատավորի (խաղաղարար) կարգավիճակով դիվանագիտական բանակցություններ է վարել Փոքր Ասիայի հինգ պետությունների՝ Փոքր Հայքի, Պոնտոսի, Պերգամոնի, Կապադովկիայի, Գաղատիայի թագավորների հետ և* ***կնքել է խաղաղության պայմանագիր***: Այդ պայմանագրով Փոքր Հայքի Միհրդատ թագավորը և Պոնտոսի Փառնակես Ա թագավորը հրաժարվել են մյուս երեք թագավորություններից նվաճած տարածքներից և մուծել են ռազմատուգանք:

Տիգրան Բ Մեծ

Մ.թ.ա. 1-ին դար

13. ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾ

Հայոց արքայից արքա (մ. թ. ա. 96-55 թթ-ին)

Տիգրան Բ Մեծը (մ.թ.ա. մոտ 140 թ.-55 թ.) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Արտաշեսյան հարստության ամենահզոր արքան, Տիգրան Ա-ի որդին, Արտաշես Ա Բարի թագավորի ծոռը: Երկար տարիներ պատանդ է եղել Պարթևստանում: Տիգրան Բ-ն մ.թ.ա 96 թ-ին պարթև Միհրդատ Բ Արշակունուն (մ.թ.ա. 123-87 թթ-ին) զիջել է Հայաստանի հարավ-արևելյան գավառները (70 հովիտները), վերադարձել Հայաստան և մ.թ.ա. 96 թ-ին ժառանգել հայրական գահը: Դիվանագիտական ճկունություն է դրսևորել երկու հզոր հարևանների՝ Պարթևստանի ու Հռոմի նվաճողական ձգտումներին հանդեպ և Հայաստանը դարձրել է զարգացող ու հզոր երկիր և զերծ պահել վտանգներից: Սրան զուգահեռ ռազմական ճանապարհով ամբողջացրել է իր նախորդների սկսած Հայաստանի հողահավաքի քաղաքականությունը: Մ.թ.ա. 94 թ-ին Հայաստանին է միացրել Ծոփքի թագավորությունը: Մ.թ.ա. 93-91 թթ-ին դիվանագիտական պայքար է ծավալել Կապադովկիայում հռոմեական տիրապետության հաստատման դեմ, որը սպառնալիք էր դառնալու Հայաստանի արևմտյան սահմաններին: Մ.թ.ա. 93 թ-ին արշավել է Կապադովկիա և գահից զրկել Հռոմի դրածո թագավորին: ***Հայաստանի սահմանները հյուսիսից անվտանգ դարձնելու համար մ.թ.ա. 94-91 թթ-ին դաշինք է կնքել Պոնտոսի արքա Միհրդատ Զ Եվպատորի (մ.թ.ա. 111-63 թթ-ին) հետ: Հին աշխահում ընդունված կարգի համաձայն կնության է առել Միհրդատ Զ-ի դստերը***: Կապադովկիայի համար պայքարում մ.թ.ա. 92 թ-ին տեղի է ունեցել հայ-հռոմեական առաջին բախումը, որն ավարտվել է հայկական զորքի պարտությամբ: Նույն թ-ին Հայաստանի սահմանին է մոտեցել հռոմեական զորավար Սուլլան, որ Եփրատի մոտ հանդիպել է պարթևների հետ և քննարկել Հայաստանի դեմ հռոմեա-պարսկական դաշինք ստեղծելու հարցը: Երկու կողմերը որոշել են Եփրատ գետը դարձնել Հռոմի և Պարսից տերության ազդեցության ոլորտների սահման: Պարթևների որդեգրած սպառնալից դիրքը ստիպել է Տիգրան Բ-ին առժամանակ Կապադովկիայի խնդրով դադարեցնելու Հռոմի հետ առճակատումը: Մ.թ.ա. 91-86 թթ-ին Տիգրան Բ-ն իրեն է ենթարկել Վիրքն ու Աղվանքը, իրականացրել է ռազմական լայնամասշտաբ ռեֆորմ և ավարտել է Պարթևստանի դեմ պատերազմի նախապատրաստությունը: Մ.թ.ա. 86-85 թթ-ին պատերազմելով պարթևների դեմ՝ հաղթել է նրանց, ազատագրել 70 հովիտները, գրավել Ատրպատականը, Հյուսիսային Միջագետքի և Բաբելոնյայի միջև ընկած պետությունները: Վերջնական կործա-

նումից խուսափելու համար պարթևները իրենց համար ծանր պայմաններով դաշն են կնքել Տիգրան Բ-ի հետ: **Մ. թ. ա. 85 թ-ին հայ-պարթևական պայմանագրով Տիգրան Բ-ն Առաջավոր Ասիայում հաստատել է իր գերիշխանությունը, պարթև Արշակունիները նրան են զիջել «արքայից արքա» տիտղոսը:** *Տիգրան Բ-ն Հռոմի տիրապետությունը Միջերկրծովյան ավազանում կանխելու նպատակով զուտ դիվանագիտական քայլեր է ձեռնարկել Ասորիքի հանդեպ: Այս երկրի հելլեն վերնախավը Տիգրան Բ-ի անձի մեջ տեսնելով հելլենիզմի իրական պահապանի մ.թ.ա. 83 թ-ին, առանց ռազմական գրավման, Սելևկյան գահը հանձնել է Արևելքի գերագույն տիրակալին Տիգրան Բ-ին:* Միաժամանակ գրավել է Կոմմագենեն ու դաշտային Կիլիկիան: Լայնարձակ պետության հզորությունը ցուցադրելու, ինչպես նաև պետության կառավարումը մեկ կենտրոնից իրականացնելու համար Աղձնիք նահանգում մ. թ. ա. 83-78 թթ-ին կառուցել է Տիգրանակերտ մայրաքաղաքը: Տիգրանակերտ անունով հիմնադրել է ևս 3 քաղաք՝ Գողթն գավառում, Ուտիք և Արցախ նահանգներում: Ռազմական գործողություններին զուգահեռ դիվանագիտական ճանապարհով վարել է Պարթևստանի հետագա թուլացման քաղաքականությունը. **հակապարթևական դաշինքներ կնքել Պարսից ծոցի Խարակենե արաբական պետության և Միջին Ասիայի քոչվորների՝ սակարաուկների հետ, մ.թ.ա. 81 թ-ին խրախուսել և հովանավորել Միջերկրական ծովում ծովահենների շարժումը Հռոմի դեմ,** մ.թ.ա. 78 թ-ին գրավել Հռոմի դաշնակից Կապադովկիան: Տիգրան Բ-ի գերիշխանությունը տարածվել է Կասպից ծովից մինչև Միջերկրականի արևելյան ափերը, Մեծ Կովկասի լեռնաշղթայից մինչև Կարմիր ծովը: Տիգրանյան Հայաստանի հզորության վկայություններից է այն իրողությունը, որ նրա գահակալության օրոք Հայաստանն ուներ միաժամանակ երեք մայրաքաղաք Տիգրանակերտ, Արտաշատ և Անտիոք: Մ.թ.ա. 70-ական թթ-ին Տիգրան Բ-ն մշտապես եղել է պատերազմական գործողությունների մեջ: Մ.թ.ա. 73-69 թթ-ին պատերազմել է Փյունիկյայում Սելևկյանների, Հարավային Ասորիքում Նաբաթեացիների արաբական թագավորության դեմ, մ.թ.ա. 73-72 թթ-ին ճնշել է ավագ որդու՝ Զարեհի ապստամբությունը: Պատերազմական գործողություններ է ծավալել Հռոմի դեմ: Մ.թ.ա. 69 թ-ին Հռոմի դեմ սկսված պատերազմի սկզբնական փուլում Տիգրանակերտի ճակատամարտում կրած պարտությունից հետո Արածանիի ճակատամարտում ջախջախիչ պարտության է մատնել Լուկուլլոսի բանակին, որը բարոյալքվելով հրաժարվել է շարժվել դեպի Արտաշատ և մ.թ.ա. 67 թ-ին ամբողջովին վտարվել է Հայաստանի սահմաններից: Մ.թ.ա. 67-66 թթ-ին ճնշել է որդու՝ Տիգրան Կրտսերի ապստամբությունը, որը պարտությունից հետո փախել է Պարթևստան և քաղաքական նկատառումներով փեսայացել Պարսից Հրահատ Գ թագավորին: Մ.թ.ա. 66 թ-ին հռոմեա-պարթևական պայմանագրի համաձայն Հրահատ Գ-ն ներխուժել է Հայաստան, միևնույն ժամանակ Հայաստանի արևմտյան սահմաններին է մոտեցել Հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոսը (մ.թ.ա. 106-48 թթ-ին): Հայաստանի համար կորստաբեր կլիներ երկու ճակատով պատերազմը: Դրանից խուսափել է՝ ջախջախելով պարթևներին (Տիգրան Կրտսերն այս անգամ փախել է Պոնտոս, ապա հռոմեական զորավար Պոմպեոսի մոտ) և հաշտության պայմանագիր առաջարկելով հռոմեացիներին: Պոմպեոսը նույնպես ցանկություն է ունեցել քաղաքական նպատակներով օգտագործել Տիգրան Կրտսերին, սակայն Տիգրան Բ-ի հաշտության առաջարկից հետո չի օգտագործել նրա անձի շահարկումը: **Մ.թ.ա. 64 թ-ին, ամենայն հավանականությամբ Ծոփքում, Տիգրան Բ-ի ներկայացուցիչները հաշտության պայմանագիր են կնքել Պոմպեոսի հետ, որի արդյունքում Տիգրան Բ-ն հրաժարվել է իր արտաքին նվա-**

ճումներից և պահպանել է Հայաստանի ամբողջականությունը, իսկ պայմանագրի համաձայն տրվելիք 6 հազար տաղանդ պատերազմական ռազմատուգանքը դրվել է Ծոփքի վրա, որը տրվել է Տիգրան Կրտսերին: Այս պայմանագրով պահպանվել է Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու պետական ինքնիշխանությունը: Հետագայում ևս Տիգրան Բ-ն շարունակել է հակահռոմեական քաղաքականությունը և **մ.թ.ա. 64 թ-ին կնքելով հայ-պարթևական պայմանագիր, դրել է Հռոմի դեմ հայ-պարթևական հետագա համագործակցության հիմնաքարը:** Տիգրան Բ-ն Հին աշխարհի վերջին մեծ զորավարը, դիվանագետն ու հելլենիզմի պաշտպանն է և հենց իր ժամանակակիցներից է ստացել «Մեծ» կոչումը: Տիգրան Բ Մեծի պատկերով հատվել են արծաթե և պղնձե դրամներ: Եվրոպացի կոմպոզիտորները նրան նվիրված 24 օպերա են գրել:

14. ԱՐՏԱՎԱԶԴ Բ

Հայոց արքայից-արքա (մ.թ.ա. 55-34 թթ-ին)

Արտավազդ Բ

Արտավազդ Բ թագավորը (ծննդյան թվականն անհայտ - մ.թ.ա. 31 թ.) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Տիգրան Բ Մեծ արքայից արքայի կյանքի վերջին տարիներին գահակցել է հորը: Նրա մահից հետո հռոմեա-պարթևական հակամարտության, հռոմեական նվաճողական քաղաքականության ծավալման պայմաններում վարել է դիվանագիտական ճկուն դիմակայության քաղաքականություն: Նախապես ունեցել է հռոմեական կողմնորոշում: Մ.թ.ա. 54-53 թթ-ին հռոմեական եռապետ Մարկոս Կրասոսի պարթևական անհաջող արշավանքի ժամանակ **Արտավազդ Բ-ն մ.թ.ա. 53 թ-ին դաշինք է կնքել Պաթևստանի արքա Որոդես Բ-ի հետ և դաշինքն ամրապնդելու համար իր քրոջը կնության է տվել Որոդես Բ-ի որդի ու գահաժառանգ Բակուրին** (զոհվել է մ.թ.ա. 38 թ-ին Անտիոքից ոչ հեռու՝ Գինդարոս լեռան մոտ): Մ.թ.ա. 53 թ-ին Խառանի մոտ հռոմեական զորքերը ջախջախվել են, ինքը՝ Կրասոսը զոհվել, իսկ հայ-պարթևական զորքերը մինչև մ.թ.ա. 38 թ-ը ասպատակել են Հռոմի Արևելյան տիրույթները, գրավել Պաղեստինը, Փյունիկյան, Ասորիքը, Փոքր Հայքը: *Մ.թ.ա. 37 թ-ին Պարթևստանի Որոդես Բ թագավորի դավադիր սպանությունից հետո, ինչպես նաև նոր արքա Հրահատ Դ-ի և Ատրպատականի թագավոր Արտավազդի Հայաստանի դեմ ուղղված դաշինքի պատճառով Արտավազդ Բ-ն դիվանագիտական անցում է կատարել դեպի հռոմեական կողմը:* Մ.թ.ա. 36 թ-ին հռոմեական զորավար Մարկոս Անտոնիոսի պարսկական արշավանքի ժամանակ 5 հազարանոց զորքով ներկայացել է Անտոնիոսի զորակայան և խորհուրդ է տվել դեպի Պարսկաստան արշավել Հայաստանի տարածքով, որտեղ լեռնե-

որը բնական ամրություն են և թույլ չեն տա պարսկական հեծելազորին ընդլայնված ճակատով մարտ վարել, և ամենակարևորը, Հայաստանում հռոմեական զորքին ինքը կարող է անխափան սնունդ մատակարարել: Գոռոզամիտ Անտոնիոսը դեպի Պարսկաստան շարժվել է Միջագետքի անապատային մասով և, ինչպես սպասվում էր, անհաջողության մատնվել: Արտավազդ Բ-ն զգուշավորություն է դրսևորել ու հեռացել Հայաստան: **Հրահատ Դ-ն իր հերթին հարձակվել է Հռոմի դաշնակից Հայաստանի վրա, Արտավազդ Բ-ն կասեցրել է այդ հարձակումը և դաշն կնքել Հրահատ Դ-ի հետ**: Հռոմեական զորահրամանատարները երկու անհաջողությունների համար էլ մեղադրել են Արտավազդ Բ-ին, որը իր երկրի անվտանգությունն ապահովելու նպատակով չի համագործակցել սխալ ռազմավարություն որդեգրած հռոմեացի զորավարների հետ և *դիվանագիտական գործարք է կնքել Պարսկաստանի հետ*: Մ.թ.ա. 34 թ-ին Անտոնիոսը հռոմեական բանակի գլուխ անցած մտել է Հայաստան, ավերել Արտաշատը և Արտավազդ Բ-ին ընտանիքի մյուս անդամների՝ կնոջ և երկու որդիների հետ ձերբակալել և ուղարկել Ալեքսանդրիա և ցուցադրել իր հաղթահանդեսի ժամանակ: Շղթայված Հայոց թագավորն իրեն պահել է արժանավայել և գլուխ չի խոնարհել Կլեոպատրայի առջև: Արտավազդ Բ-ն գցվել է զնդան և Ակտիոնի ճակատամարտից առաջ՝ մ.թ.ա. 31 թ-ին գլխատվել: Արտավազդ Բ-ն կրթված, լուսավոր անձ է եղել, գրել է հունարեն թատերգություններ: Հատել է իր պատկերով արծաթե և պղնձե դրամներ:

15. ԱՐՏԱՇԵՍ Բ

Հայոց արքա (մ.թ.ա. 30-20 թթ-ին)

Արտաշես Բ-ն (ծննդյան թվականն անհայտ- մ.թ.ա. 20 թ.) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Արտաշեսյան արքայատոհմի հզոր այրերից, Արտավազդ Բ թագավորի որդին, Տիգրան Բ Մեծ արքայից արքայի թոռը: Մ.թ.ա. 34 թ-ին հոր և եղբայրների գերեվարությունից հետո **Արտաշես Բ-ն մ.թ.ա. 31 թ-ին ռազմական դաշինք է կնքել պարթևաց արքա Հրահատ Դ-ի (մ.թ.ա. 38-2 թթ-ին) հետ և նրանից ստանալով որոշակի օգնություն վերագրավել է հայրական գահը**: Ի պատասխան Ալեքսանդրիա քաղաքում իր հոր՝ Արտավազդ Բ թագավորի սպանության, նրա հրամանով մի գիշերվա մեջ կոտորել են Հայաստանում գտնվող բոլոր հռոմեացիներին: Վարել է անկախ և դիմադրողական քաղաքականություն՝ իր դեմ հանելով հռոմեասեր կուսակցության ներկայացուցիչ ավագանու անդամներին, որոնք էլ դավադրաբար սպանել են նրան (եթե դավադրությամբ չսպանվեր նա Հայոց համար կդառնար Տիգրան Բ Մեծ արքայից արքայի նման հզոր տիրակալ):

3-4-րդ դարեր

Տրդատ Գ

16. ՏՐԴԱՏ Գ ՄԵԾ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Հայոց թագավոր (287- մոտ 330 թթ-ին)

Տրդատ Գ Մեծը (ծն. 250-ական թթ-ին - մոտ 330 թ.) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: 259 թ-ին հոր՝ Խոսրով Ա թագավորի սպանությունից հետո մանկահասակ թագաժառանգին նախարար Արտավազդ Մանդակունին փախցրել է Հռոմ: Կրթվել ու դաստիարակվել է հռոմեական արքունիքում: Պարսից տերության դեմ Ավրելիանոս կայսեր հաղթական արշավանքին մասնակցած Տրդատ Գ-ն կարճ ժամկետով՝ 274-276 թթ-ին տիրել է Հայոց գահին: 287 թ-ին Հռոմի կայսր Դիոկղետիանոսը Տրդատ Գ-ին ճանաչել է Հայոց թագավոր: Նա հռոմեական զորքերի աջակցությամբ Հայաստանից դուրս է մղել պարսիկ նվաճողներին և հաստատվել Հայոց գահին: Տրդատ Գ-ն ավելի քան տասը տարի պատերազմ է մղել Սասանյան Պարսկաստանի դեմ՝ **նախապես հյուսիսից թիկունքն ամրապնդելով ալանների հետ կնքած դաշինքով (կնության է առել Ալանաց թագավոր Աշխադարի դուստր Աշխենին)**: ***298 թ-ին Մծբինում կնքված հռոմեա-պարսկական քառասնամյա խաղաղության պայմանագրով Սասանյաններն ստիպված հրաժարվել են «Հայաստանի մեծ թագավոր» տիտղոսից և ճանաչել Տրդատ Գ-ի գահակալումը***: Վերականգնելով Հայաստանի պետական անկախությունը՝ Տրդատ Գ-ն վերահաստատել է պարսկական տիրապետության ժամանակ խախտված «Արտաշիսական» սահմանագծերը, անցկացրել նոր «աշխարհագիր», կարգավորել հարկային համակարգը: Գահակալման առաջին տարիներին հալածել է քրիստոնեության հետևորդներին: **Հետագայում փոխել է իր քաղաքականությունը, ընտրել է գաղափարաքաղաքական ու կրոնական նոր ուղի և 301 թ-ին քրիստոնեությունը Հայաստանում հռչակել պետական կրոն**: Նրա հրամանով Գրիգոր Ա Լուսավորիչը 302 թ-ին մեկնել է Կեսարիա և ձեռնադրվել Հայոց եպիսկոպոսապետ: Սկզբնական շրջանում Հռոմեական կայսրությունը թշնամաբար է վերաբերվել քրիստոնեությունը պետական կրոն ճանաչած Տրդատ Գ-ին, սակայն հետագայում *Հայոց արքային հաջողվել է դաշինք կնքել Կոստանդիանոս Մեծ կայսեր հետ*: Պարսկաստանում Շապուհ Բ-ի գահակալմամբ (309-379 թթ-ին) սրվել են հայ-պարսկական հարաբերությունները: Շապուհ Բ-ին հաջողվել է Տրդատ Գ-ի դեմ հանել նրա իշխանությունից դժգոհ հայ նախարարներին, Հյուսիսային Կովկասի ցեղերին: Տրդատ Գ-ն նախ հաշվեհարդար է տեսել ապստամբ նախարարների հետ, ապա Աղվանքի Գարգարացվոց դաշտում ջախջախել հյուսիսային ցե-

ղերին: Ըստ ավանդության Տրդատ Գ-ն կյանքի վերջին տարիներին հեռացել է Դարանաղի գավառի Սեպուհ լեռան Մանյա այրք կոչված վայրը, որտեղ թունավորվել է թշնամի նախարարների կողմից: Թագավորի դին տեղափոխվել և ամփոփվել է Թորդանում: Հայ եկեղեցին նրան դասել է սրբերի կարգը: Տրդատ Գ-ն Արշակունյաց Հայաստանի պետական և քաղաքական խոշոր գործիչներից է: Նրան հաջողվել է վերականգնել Մեծ Հայքի թագավորության տարածքային ամբողջականությունը, քաղաքական ամուր դաշինք կնքել Հռոմեական կայսրության հետ, ստեղծել կենտրոնացված ուժեղ պետություն:

17. ՎԱՉԵ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց սպարապետ (4-րդ դար)

Վաչե Մամիկոնյանը (ծննդան թվականն անհայտ - մոտ 338 թ.) Մամիկոնյան տոհմի նահապետն է, հայ նշանավոր զորավար: Հայոց Խոսրով Բ Կոտակ արքայի հրամանով բնաջնջել է միմյանց դեմ կռվող և երկրի ռազմական հզորությունը թուլացնող Մանավազյանների ու Որդունիների նախարարական տոհմերը: Փայլուն հաղթանակներ է տարել մի շարք ճակատամարտերում: 337 թ-ին Վանա լճի հյուսիսարևելյան ափին՝ Առեստ ավանի մոտ, պարտության է մատնել Հայաստան ներխուժած պարսից զորքին, ձերբակալել և մահապատժի ենթարկել թշնամուն միացած Բզնունյանց նախարար Դատաբեին: Զոհվել է պարսից արքա Շապուհ Բ-ի զորքի դեմ մղած կռվում:

18. ԱՆԴՈՎԿ ՍՅՈՒՆԻ

Սյունյաց նահապետ (350-370-ական թթ-ին)

Անդովկ Սյունին (կենսագրական տեղեկություններ չկան) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Հայոց արքա Խոսրով Բ Կոտակ թագավորի մահից (337թ.) և սպարապետ Վաչե Մամիկոնյանի զոհվելուց (338 թ.) հետո, իր քեռայր Արշավիր Կամսարականի հետ ստանձնել է երկրի պաշտպանության գործը: **Գլխավորել է Կ.Պոլիս մեկնած դեսպանությունը և ապահովել Տիրան Արշակունու հաստատումը Հայոց գահին**: Մինչև Արտավազդ Մամիկոնյանի չափահաս դառնալը, որպես Մամիկոնյան տան փեսա, Արշավիր Կամսարականի հետ վարել են սպարապետական գործակալությունը: Պարսիկների դեմ մղած 350 թ-ի Ոսխայի ճակատամարտում ինքը և Արշավիր Կամսարականը առաջնորդել են հայկական զորքը և հռոմեացիների օգնությամբ ջախջախել թշնամուն և երկրից վտարել օտար նվաճողներին: **353 թ-ին Կեսարիա է ուղեկցել Ներսես Մեծին՝ Հայոց կաթողիկոս օծվելու**: Անդովկ Սյունու ազդեցությունն ու հեղինակությունը հատկապես բարձրացել է, երբ Արշակ Գ թագավորը փեսայացել է նրան, ու թագուհի է դարձել նրա Փառանձեմ դուստրը: Արշակ Գ-ն աներոջն է վստահել Տիգրանակերտի ու շրջակայքի կառավարչի պաշտոնը: *Վարել է Բյուզանդիայի հետ մերձեցման քաղաքականություն, խանգարել Շապուհ Բ ու Արշակ Գ թագավորների դաշնակցությանը*: Արշակ Գ-ի ուխտադրուժ ձերբակալությունից ու դստերը անպատվաբեր մահվան դատապար-

տելու համար Անդովկ Սյունին իր զորամասով հասել է Տիզբոն, կրակի մատնել Շապուհ Բ-ի պալատը և վերադարձին հեռացել Բյուզանդիա, որտող ստացել է պատրիկի աստիճան և, այնտեղ էլ կնքել մահկանացուն:

19. ԱՐՇԱՎԻՐ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Արշարունյաց նահապետ (4-րդ դար)

Արշավիր Կամսարականը (կենսագրական տեղեկություններ չկան) 4-րդ դարի հայ երևելի պետական այրերից է: Սպարապետ Վաչե Մամիկոնյանի զոհվելուց հետո (338 թ.)՝ Սյունյաց նահապետ Անդովկ Սյունու հետ ստանձնել է երկրի սպարապետության գործը: Նրա և Անդովկ Սյունու ղեկավարությամբ պարսիկների դեմ մղված 350 թ-ի Ոսխայի ճակատամարտում հայկական զորքը հռոմեացիների օգնությամբ փայլուն հաղթանակ է տարել: Այդ հաղթանակի շնորհիվ ազատվել են Տիզբոնում բանտարկված Տիրան արքան և մյուս հայ գերիները:

20. ԱՐՇԱԿ Բ
(որդի ՏԻՐԱՆ Բ ԹԱԳԱՎՈՐԻ)

Հայոց թագավոր (4-րդ դար)

Արշակ Բ-ն (կենսագրական տեղեկություններ չկան) ուժեղ ու վճռական տիրակալ է եղել. վարել է ինքնուրույն ու անկախ քաղաքականություն: Նորոգել է հայ-հռոմեական դաշինքը, որի արդյունքում Հայաստան են վերադարձել Հռոմում սպանված եղբոր՝ Տրդատի որդի Գնելը և Տիրիթը (հետագայում սպանվել են Արշակի հրամանով): Մեծ Հայքի թագավորությունը հզորացնելու նպատակով փորձել է նախարարներին համախմբել կենտրոնական իշխանության շուրջը: Նախարարական զորքերը բաժանել է ըստ երկրի կողմերի, սպարապետ է կարգել Վասակ Մամիկոնյանին, վերակառուցել է պետական կառավարման համակարգը, նախարարներին վերադարձրել է իրենց գահերը, իսկ գործակալներին՝ աստիճանները: Կառուցել է Արշակավան քաղաքը, որը դժգոհ նախարարներն ավերել են: 359 թ-ին Ամիդ քաղաքի մոտ ջարդել է հռոմեական զորքերին: Սակայն կարճ ժամանակ անց բարելավել է հռոմեացիների հետ հարաբերությունները: Հռոմեացիները պարտվել են պարսիկներից, և հայերը միայնակ են մնացել պարսիկների դեմ: 363-364 թթ-ին հայերը հաղթել են նրանց Գանձակի, Երևելի, Առեստավանի, Ոսխայի ճակատամարտերում: Սակայն այս պահին թատերաբեմ է իջել Մերուժան Արծրունին, որ դավաճանել էր իր երկրի շահերին, պարսկական բանակներով ամայացրել երկիրը և պարսիկների հետ գերեվարել հազարավոր հայկական ընտանիքներ: 366 թ-ին Շապուհի կողմից փորձ է արվել առևանգել Անգեղ բերդում թաղված հայ թագավորների ոսկորները: Արշակ Բ-ն ու Վասակ սպարապետը 60000-անոց զորքով հարձակվել, հաղթել են պարսիկներին և ազատագրված մասունքները թաղել Արագածի լանջին՝ Աղձք գյուղում: Դավաճանել և Մերուժանին է զինակցել նաև նրա քեռին՝ Վահան Մամիկոնյանը: Հայոց նախարարական զորքերն անընդհատ ճակատամարտերից հյուծվել էին և Արշակ թագավո-

որը գնացել է Շապուհի հետ բանակցելու: Վերջինս երդմնազանց է դարձել և Արշակ Գ թագավորին շղթայել Անհուշ բերդում, իսկ Վասակին՝ մորթազերծ արել:

21. ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց սպարապետ (4-րդ դար)

Վասակ Մամիկոնյանը (Վասակ Զորավար) (ծննդյան թվականն անհայտ - 368 թ.) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Մեծացրել է հայկական զորական ուժերը, Հայոց ծանր զրահավոր այրուձին: 364 թ-ի գարնանը Վասակ Մամիկոնյանի և նրա կրտսեր եղբայր Բագոս Մամիկոնյանի առաջնորդությամբ 60000-անոց Հայկական բանակը վճռական ճակատամարտում պարտության է մատնել պարսկական մեծաթիվ զորաբանակին: *Չկարողանալով զենքով տիրանալ Մեծ Հայքին, պարսից արքա Շապուհ Բ-ն խաղաղության և բարեկամության դաշն կնքելու պատրվակով, Տիզբոն է հրավիրել Հայոց Արշակ Բ արքային և զորավար Վասակ Մամիկոնյանին և նենգորեն ձերբակալել նրանց*: Վասակ Մամիկոնյանը մորթազերծ է արվել, իսկ Արշակ Բ-ն բանտարկվել Խուժիստանի Անհուշ բերդում, որտեղ էլ մահացել է: Վասակ Մամիկոնյանի հերոսական կերպարը մնացել է հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ: Փավստոս Բուզանդը իր «Հայոց պատմություն» գրքում նկարագրել է. «Հաջորդ օրը Շապուհ թագավորը հրամայեց իր առաջը բերել Վասակ Մամիկոնյանին՝ Մեծ Հայքի զորավար-սպարապետին: Սկսեց նրան անարգել, որովհետև Վասակը փոքր էր մարմնով, Պարսից Շապուհ թագավորն ասաց. «Աղվես, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ չարչարեցիր. դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին, հիմա ինչպե՞ս ես, որ քեզ աղվեսի մահով սպանեմ»: Վասակը պատասխան տալով ասաց. «Այժմ դու ինձ տեսնելով մարմնով փոքր, իմ մեծության չափը չզգացի՞ր, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՞ս: Բայց մինչև ես Վասակն էի, ես հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետնին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»: Շապուհ թագավորը հարցրեց և ասաց. «Դե ասա, իմանանք, այդ ի՞նչ լեռներ են, որ դու գետին էիր տանում»: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը Հունաց թագավորը...»:

22. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՍՊԵՏ

Հայոց սպարապետ (370-374 թթ-ին)

Սմբատ Ասպետը (կենսագրական տեղեկություններ չկան) սերում է Բագրատունիների տոհմից, Բագրատ Բագրատունու որդին է: Հայոց սպարապետ է եղել Պապ թագավորի գահակալության տարիներին (370-374 թթ-ին): Նրա առաջնորդությամբ հայերը փայլուն հաղթանակ են տարել 371 թ-ին Ձիրավի ճակատամարտում: Գերի է վերցրել պարսից բանակում հայոց դեմ կռվող Մերուժան Արծրունուն և մահապատժի ենթարկել:

23. ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց սպարապետ (368 -376 թթ-ին)

Մուշեղ Մամիկոնյանը (ծննդյան թվականն անհայտ - մոտ 376 թ.) սպարապետական պաշտոնում հաջորդել է հորը՝ Վասակ Մամիկոնյանին: Զորակցել է Պապ թագավորին: 370 թ-ի գարնանը հաղթել է պարսից զորաբանակին, գերել պարսից արքա Շապուհ Բ-ի կանանոցը և ասպետաբար ազատ արձակել: Ղեկավարել է 371 թ-ի Ձիրավի ճակատամարտը և պարսկական զորքի դեմ փայլուն հաղթանակ տարել: Պապ թագավորի դավադրական սպանությունից հետո, Հայոց Վարազդատ թագավորը, անսալով Բատ Սահառունու և այլոց ամբաստանություններին, սպանել է տվել Մուշեղ Մամիկոնյանին:

24. ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց սպարապետ (377-385 թթ-ին)

Մանվել Մամիկոնյանը (ծննդյան թվականն անհայտ- մոտ 385թ.) 377 թ-ին վերադառնալով պարսկական գերությունից՝ Բատ Սահառունուց վերագրավել է տոհմական սպարապետական գործակալությունը: 378 թ-ին Կարինի դաշտում հաղթել է Հայոց թագավոր Վարազդատին, գահընկեց արել նրան: Ձերբակալել և մահապատժի է ենթարկել Բատ Սահառունուն: Հայ ավագանու համաձայնությամբ Հայոց թագավոր է հռչակել Պապ թագավորի անչափահաս որդի Արշակ Գ-ին (378-մոտ 388 թթ-ին)՝ արքայամայր Զարմանդուխտի հետ ստանձնելով նրա խնամակալությունը: Պատմիչ Փավստոս Բուզանդի հաղորդման համաձայն՝ Մանվել Մամիկոնյանը, օգտվելով Պարսկաստանում տիրող անկայուն վիճակից, Հայաստանը դարձրել է լիակատար անկախ և 7 տարի զբաղվել խաղաղ, շինարարական գործունեությամբ:

5-րդ դար

25. ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց սպարապետ (422-451 թթ-ին)

Վարդան Մամիկոնյանը (Վարդան Մամիկոնյան Մեծ, Քաջ Վարդան, Կարմիր Վարդան) (391 թ. - 26.05.451 թ.) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Սասանյան Պարսկաստանի դեմ 450-451 թթ-ի ազատագրական պայքարի առաջնորդը, սպարապետ Համազասպ Մամիկոնյանի և Սահակ Ա Պարթևի դուստր Սահականույշի ավագ որդին: Սովորել է Վաղարշապատի Սահակ-Մեսրոպյան դպրոցում: Մասնակցել է մի շարք պատերազմների, իրեն դրսևորել որ-

Վարդան Մամիկոնյան

պես խիզախ զորական: 422 թ-ին Պարսից Վռամ Ե Գոռ արքան նրան ճանաչել է Հայոց սպարապետ, 432 թ-ին՝ մարզպանական Հայաստանի զորքերի սպարապետ: 442 թ-ին Պարսից Հազկերտ Գ արքան Վարդան Մամիկոնյանի ղեկավարած Հայոց այրուձին հանել է Հայաստանից և ուղարկել պատերազմի քուշանների (հոների) դեմ: 449 թ-ին վերադարձել է Հայաստան, մասնակցել Արտաշատի ժողովին, որ մերժել է զրադաշտականության ընդունումը հայերի կողմից և դարձել սկսվող ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից մեկը: 449 թ-ին Հայաստանից վտարել է պարսիկ մոգերին և թոթափել պարսկական լուծը: **Համատեղ պայքարի դաշն կնքել Աղվանից ու Վրաց մարզպանությունների հետ** *և օգնության խնդրանքով պատվիրակություն ուղարկել Բյուզանդիայի Մարկիանոս կայսր մոտ, սակայն վերջինս մերժել է օգնության խնդրանքը և դրա մասին տեղեկացրել Հազկերտ Գ-ին:* **450 թ-ի ամռանը** Աղվանքի Խաղխաղ վայրում հաղթել է պարսիկ Սեբուխտի պատժիչ զորաբանակին, քանդել պարսկական ամրությունները, հայ-աղվանական միացյալ ուժերով ոչնչացրել Ճորա պահակի (Դարբանդի կիրճ) պարսկական կայազորը, **փոխօգնության դաշինք կնքել հոների հետ** և աշնանը վերադարձել Հայաստան: 450 թ-ի աշնանը Արտաշատում գումարված ժողովում ընտրվել է Հայոց տանուտեր (թագավոր) և սպարապետ: 451 թ-ի մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտում եղել է Հայոց 66000-անոց բանակի գլխավոր հրամանատարը, թշնամու դեմ կռվել դյուցազնի պես և զոհվել մարտում: Ավարայրի ճակատամարտի և հետագա պայքարի արդյունքում պարսկական արքունիքը ստիպված է եղել հետ կանչել իր զորքերին, ճանաչել Մարզպանական Հայաստանի ինքնավարությունը, հրաժարվել կրոնափոխությունից, թեթևացնել հարկերը: Վարդան Մամիկոնյանը դասվել է «Հայրենիքի սուրբ նահատակների» շարքը: Նրան է նվիրված «Նորահրաշ» շարականը: Հայաստանի Առաջին Հանրապետությունը Վարդան Մամիկոնյանի հիշատակին 1920 թ-ի հունիսին հիմնել է «Սուրբ Վարդան զորավար» շքանշանը, Հայաստանի Երկրորդ Հանրապետությունը 2002 թ-ին՝ «Վարդան Մամիկոնյան» զորավարական շքանշանը: Վարդան Մամիկոնյանի կերպարի արտացոլումն են Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի», Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» գրական ստեղծագործությունները, Երևանի կենտրոնում կանգնեցված Երվանդ Քոչարի անզուգական քարարձանը: Նրա անունով կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս:

26. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց սպարապետ (482-487 թթ-ին)
Հայոց մարզպան (487-505 թթ-ին)

Վահան Մամիկոնյանը (440-ական թթ-ին - մահվան թվականն անհայտ) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, 451 թ-ին Ավարայրի ճակատամարտում զոհված Հմայակ Մամիկոնյանի (Վարդան Մամիկոնյանի եղբայրը) և Ձվիկ իշխանուհու (Արծրունյաց տոհմից) ավագ որդին: Արարայրի ճակատամարտից հետո եղբայրների՝ Վասակի, Արտաշեսի հետ պատանդ է տարվել Պարսկաստան: 455 թ-ին Գուգարքի բդեշխ Աշուշան ազատել է եղբայրներին պատանդությունից և իր տանը ստանձնել է նրանց դաստիարակության գործը: Ավագության իրավունքով Վահան Մամիկոնյանը դարձել է Մամիկոնյան տան նահապետ: 470-ական թվականներին սկսված ազգային-ազատագրական շարժումներն ակտիվացել են կապված Հայոց կաթողիկոս Գյուտ Ա Արահեզացու և Վահան Մամիկոնյանի հայրենասիրական գործունեության հետ: Շուտով Վրաց թագավոր Վախթանգ Ա Գորգասալը ապստամբել է պարսիկների դեմ և ստեղծված նպաստավոր իրավիճակում Շիրակում կայացած գաղտնի խորհրդաժողովում հայերը ևս պարզել են ապստամբության դրոշ՝ մարզպան ընտրելով Սահակ Բագրատունուն և սպարապետ՝ Վահան Մամիկոնյանին: Հայկական զորքերը գրավել են Արտաշատը, իսկ պարսիկ մարզպան Ատրվշնասպը հեռացել է Ատրպատական: 482 թ-ին հայկական զորամիավորումները պարսիկներին հաղթել են Ակոռիի և Ներսեհապատի ճակատամարտերում, սակայն վրացիներին օգնելու նպատակով Կուր գետի ափին, Ճարմանայի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում պարտվել են: Զոհվել են Սահակ Բագրատունին, Վասակ Մամիկոնյանը: Վահան Մամիկոնյանն այնուհետև վարել է հիմնականում պարտիզանական հյուծիչ պատերազմ և զրկել է պարսիկներին հաղթելու հնարավորությունից: 484 թ-ին հեփթաղների դեմ կռվում Պարսից արքա Պերոզը զոհվել է և նոր արքան՝ Վաղարշը սկսված գահակալական կռիվներում ունենալով Հայկական այրուձիու կարիքը՝ վճռել է Վահան Մամիկոնյանի հետ բանակցությունների միջոցով լուծել խաղաղության խնդիրը: Սահմանամերձ Հեր գավառի Նվարսակ գյուղում հանդիպել են Վահան Մամիկոնյանը և Պարսից արքունիքի դեսպան Նիխոր Վշնասպդատը: Վահան Մամիկոնյանը ներկայացրել է պայմանագրի իր պահանջները, դրանք ընդունվել են և ստորագրվել է **Նվարսակի պայմանագիրը**: Պարսից արքունիքը Վահան Մամիկոնյանին ճանաչել է Հայոց սպարապետ: 487 թ-ին Վահան Մամիկոնյանը մեկնել է Տիզբոն և վերադարձել Հայոց մարզպանի կարգավիճակով: Նվարսակի պայմանագիրը մոտ 60 տարի առաջ պետականությունը կորցրած հայ ժողովրդի համար քաղաքական մեծ նվաճում էր: Պայմանագրով հաստատվել է Հայաստանի հոգևոր-մշակութային անկախությունը և վարչա-քաղաքական ներքին ինքնավարությունը, ապահովվել է հավատի լիակատար ազատությունը: Վահան Մամիկոնյանը ձեռնամուխ է եղել երկրի բարեկարգմանը: Վերանորոգել է Էջմիածնի Մայր տաճարը, աքսորից վերադարձրել Ղազար Փարպեցուն: Վերջինս Վահան Մամիկոնյանի պատվերով գրել է «Հայոց պատմություն» կոթողային աշխատությունը:

27. ՄԺԵԺ ԳՆՈՒՆԻ

Հայաստանի մարզպան (մոտ 517 թ-ից), զորավար

Մժեժ Գնունին (ծննդյան թվականն անհայտ - մոտ 548 թ.) միջնադարյան Հայաստանի երևելի պետական այրերից է, զորավար: 6-րդ դարի սկզբին միավորել է հայկական զորական ուժերը և ջախջախիչ պարտության մատնել հոներին: Այդ հաղթանակից հետո Պարսից արքան նրան նշանակել է Հայաստանի մարզպան:

6-րդ դար

28. ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԿ

Հայազգի բյուզանդական զորավար, պետական գործիչ (6-րդ դար)

Ներսես Պատրիկը (ծն. 472 թ.,Պարսկահայք - 567 թ., Հռոմ) բարձր պաշտոններ է վարել Հուստինիանոս Ա կայսեր (527-565 թթ-ին) արքունիքում: Եղել է զորավար Բելիսարիոսի օգնականը Հյուսիսային Աֆրիկայում: Հետագայում կայսեր կողմից նշանակվել է Իտալիայում գործող բյուզանդական զորքերի գլխավոր հրամանատար: 552 թ-ին պարտության է մատնել գոթերին և գրավել Հռոմը: 554 թ-ին գլխովին ջախջախել է Իտալիա ներխուժած ֆրանկների և ալեմանների 75000-անոց բանակը: 555-565 թթ-ին եղել է Իտալիայի կառավարիչ: Հիմնադրել է Միլան քաղաքը:

29. ԱՐԱՏԻՈՍ

Հայազգի բյուզանդական և պարսկական ռազմական գործիչ (6-րդ դար)

Արատիոսը (Հրահատը) (կենսագրական տեղեկություններ չկան) ռազմական գործիչ է, որն, ըստ պատմաբան Նիկողայոս Ադոնցի, Կամսարականների տոհմից էր: 520-ական թթ-ին Արատիոսն իր եղբայրներ Ներսեսի ու Իսահակի (Սահակ) հետ ծառայել է պարսկական բանակում, պարտության մատնել բյուզանդական զորավարներ Սիտտասին և Բելիսարիոսին: Հետագայում ծառայության է անցել բյուզանդացիների մոտ և 538-539 թթ-ին նույն Բելիսարիոսի հետ մասնակցել գոթերի ու լանգոբարդների դեմ արշավանքին, Իտալիայի նվաճմանը: 549-550 թթ-ին կռվել է սլավոնների դեմ: Կասեցրել է հոների ներխուժումը:

7-րդ դար

30. ԱԼԵՔՍ-ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայազգի բյուզանդական զորավար (7-րդ դար)

Ալեքս-Մուշեղ Մամիկոնյանը (կենսագրական տեղեկություններ չկան) եղել է պատրիկ, պրոկոնսուլ, մագիստրոս, կեսար, սիցիլիական զորաբանակի հրամանատար:

31. ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ

Հայոց իշխան
Հայոց սպարապետ (628-634)
Հայոց մարզպան (634-654 թթ-ին)

Թեոդորոս Ռշտունին (ծննդյան թվականն անհայտ - մոտ 654 թ., Դամասկոս) հայ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Հայոց սպարապետ, Հայոց մարզպան: Նրա մարզպանության սկզբին Բյուզանդիայի հայազգի Հերակլիոս Ա կայսրը 636 թ-ին զորքով մտել է Հայաստանի խորքը և բյուզանդական ու հայկական եկեղեցիների կամ կրոնների միասնության առաջարկով խորհրդակցելու համար Կարին հրավիրել Հայաստանի ղեկավարներին: Թեոդորոս Ռշտունին խուսափել է մեկնել Կարին: Հրավերին գնացել է Հայոց կաթողիկոս Եզր Ա Փառաժնակերտցին, բանակցել է կայսրի հետ և առերես համաձայնության ուխտ կնքել: Արաբական արշավանքների պատճառով Սասանյան տերության քայքայումից հետո, **Թեոդորոս Ռշտունին 637 թ-ին Հայաստանը հռչակել է անկախ, իսկ 2 տարի անց՝ 639 թ-ին, միայն դիվանագիտական ճանապարհով իր իշխանությանը վերամիավորել նաև Բյուզանդիային ենթակա Հայաստանը**: Թուլացած Բյուզանդիան ստիպված է եղել Թեոդորոս Ռշտունուն ճանաչել Հայաստանի կառավարիչ և նրան շնորհել «պատրիկի» ու «կյուրապաղատի» աստիճաններ: Ամրացրել է երկրի բերդերը, հզորացրել Հայոց բանակը (15000-անոց այրուձի), տարել մի շարք հաղթանակներ և դիմակայել արաբական նվաճողներին: Սակայն, նրա վարած անկախ քաղաքականությունը դժգոհություն է առաջացրել Բյուզանդիայում և 646 թ-ին Բյուզանդական Կոստաս կայսրը Հայոց իշխան է հաստատել ոմն Թովմայի: Այս վերջինը Կոտայքում դավադրաբար բանտարկել է Թեոդորոս Ռշտունուն և ուղարկել Կ.Պոլիս: Կայսրը վախենալով հայերի դժգոհությունից՝ Թեոդորոս Ռշտունուն վերահաստատել է իր պաշտոնում: Օգտվելով արաբական արշավանքների առաջացրած դժվարություններից, *648 թ-ին Բյուզանդիայի կայսրը և պատրիարքը նամակով դիմել են Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունուն և Հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցուն՝ առաջարկելով ընդունել քաղկեդոնականություն և միանալ Բյուզանդական եղեղեցուն*: Հայոց իշխանն ու Հայոց կաթողիկոսը նույն թվականին հրավիրել են Դվինի Հինգերորդ ժողովը, որին մասնակցել են հայ ավագանու, հոգևոր դասի ներկայացուցիչները: *Ժողովը մերժել է դավանական միասնության առաջարկը, կազմել է հավատի ձեռնարկ, որտեղ պարզաբանվել է Հայոց դավանանքը և նրա տարբերությունը քաղկեդոնական երկաբնակ եկեղեցուց*: Բյուզան-

դական քրիստոնեախառն խարդավանքներին դիմակայելու համար Թեոդորոս Ռշտունին իր շուրջն է միավորել Աղվանքի, Քարթլիի իշխող վերնախավին և **գործուն դիվանագիտությամբ 652 թ-ին շահավետ պայմանագիր կնքել Ասորիքի Արաբական կառավարիչ Մուավիայի հետ**: *Ընդունելով արաբական Խալիֆայության գերիշխանությունը՝ Թեոդորոս Ռշտունին երեք տարով երկիրն ազատել է հարկահանությունից, պահպանել է Հայոց այրուձին (որի աշխատավարձը վճարելու էր Արաբական Խալիֆայությունը) և կառավարման բոլոր հարցերում՝ ներքին ինքնավարությունը*: Թեոդորոս Ռշտունին իր որդու՝ Վարդի հետ արաբական 7 հազարանոց զորագնդով հաղթել են Հայաստան մտած բյուզանդական բանակին, ազատագրել են երկրի հյուսիս-արևմտյան սահմանամերձ տարածքները մինչև Տրապիզոն: Օգտվելով Թեոդորոս Ռշտունու հիվանդությունից՝ արաբները ներխուժել են Հայաստան: Կամավոր միացել է 1800 հայ մեծատոհմիկ պատանիներին՝ Դամասկոսում նախորդ պայմանագիրը վերակնքելու հույսով: Սակայն արդյունքի չհասած՝ Դամասկոսում վախճանվել է:

32. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայ զորավար (6-7-րդ դարեր)

Սմբատ Բագրատունին (կենսագրական տեղեկություններ չկան) միջնադարի հայ նշանավոր ռազմական գործիչ է, Մանվել Բագրատունու որդին: Մորիկ կայսեր ժամանակ (582-602 թթ-ին) Բյուզանդիան ջանում էր ջլատել Հայաստանի ռազմական ուժերը և հայերին հունադավան դարձնել: Հայերն ըմբոստացել են, ապստամբել: Կայսրը ճնշել է ապստամբությունը, ձերբակալել Սմբատ Բագրատունուն և մյուս հայ նախարարներին: Սմբատ Բագրատունուն բերել են Կոստանդնուպոլիս: Բյուզանդիայի պալատական դատարանը այսպիսի վճիռ է կայացրել. Սմբատ Բագրատունին և 7 այլ նախարարներ պետք է կրկեսում մենամարտեն գիշատիչ գազանների դեմ: Սմբատը հաղթել է երեք գիշատիչի, այդ թվում՝ առյուծին, որի համար Մորիկ կայսրը նրան ներում է շնորհել: Հետագայում Սմբատը զինվորական ծառայության է ուղարկվել Աֆրիկա:

33. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԲԱԶՄԱՀԱՂԹ

Հայ զորավար, մարզպան (7-րդ դար)

Սմբատ Բագրատունին (Բազմահաղթ Խոսրով, Խոսրով Շում) (ծննդյան թվականն անհայտ - 617/8 թ.) կրել է Բազմահաղթ մականունը: Հայ պետական գործիչ է, տաղանդավոր զորավար, Քչիկ Բագրատունու որդին է: Հայ նախարարների հետ ծառայության է մտել պարսից Խոսրով Փարվեզ արքայի մոտ, հայկական զորախմբով մասնակցել քուշանների և վաչկատուն այլ ցեղերի դեմ մղված մի շարք ճակատամարտերի: 600-607 թթ-ին եղել է Վրկանից նահանգի մարզպան: 607 թ-ին նշանակվել է Հայոց մարզպան, կրել Տերանց զինվոր պատվանունը: Սմբատ Բագրատունու եղբայրն էր Հայոց կաթողիկոսի տեղապահ Վրթանես Քերթողը: 608 թ-ին նա նորից է նշանակվել Վրկանից նահանգի մարզպան: Սմբատ Բագրատունին իր քաջագործությունների համար Խոսրով Փարվեզ արքայից ստացել է «**Խոսրով Շում**»՝ «**Խոսրովի**

ուրախություն» պատվանունը: 610 թ-ից ապրել է Պարսկաստանի մայրաքաղաք Տիզբոնում, որտեղ էլ մահացել է: Նրա աճյունը թաղվել է Կոգովիտ գավառի Դարոյնք գյուղի Բագրատունիների տոհմական գերեզմանատանը:

34. ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց իշխան (654-661 թթ-ին), զորապետ

Համազասպ Մամիկոնյանը (կենսագրական տեղեկություններ չկան) սերում է Մամիկոնյանների սպարապետական տոհմից: Հայոց իշխանի պաշտոնում փոխարինել է աներոջը՝ Թեոդորոս Ռշտունուն: Բյուզանդիայի Կոստանդին Բ կայսրը նրան շնորհել է «կյուրապաղատ» տիտղոս:

35. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայոց իշխան (701-726 թթ-ին), զորավար

Սմբատը (Բյուրատյան) (կենսագրական տեղեկություններ չկան) 8-րդ դարի առաջին քառորդի ռազմական գործիչ է, Վարազտիրոցի որդին: Մարտնչել է արաբական նվաճողների դեմ: 703 թ-ին նրա ղեկավարած հայկական մի զորախումբ փորձել է օգնություն ստանալու համար անցնել Բյուզանդիա, բայց հայերի ճանապարհը փակել է արաբական 8000-անոց մի այրուձի: Արաքս գետի ափին, Արարատ լեռան ստորոտում, Վարդանակերտ գյուղի մոտ տեղի է ունեցել ճակատամարտ, որտեղ հայերը Սմբատի հրամանատարությամբ փայլուն հաղթանակ են տարել: Այդ հաղթանակի համար Բյուզանդիայի կայսրը Սմբատին շնորհել է «կյուրապաղատ» տիտղոս: Սակայն երկու տարի հետո՝ 705 թ-ին, արաբները նենգաբար Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում այրել են մեծաթիվ հայ նախարարների, այդ թվում՝ շատ Բագրատունիների: Այդ աղետից հետո Սմբատն ստիպված է եղել Տայքից անցնել Բյուզանդիայի սահմանը (Փոթի նավահանգիստ) և այնտեղ մնացել 6 տարի:

8-րդ դար

36. ԳՐԻԳՈՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայոց սպարապետ (8-րդ դար)

Գրիգոր Մամիկոնյանը (ծննդյան թվականն անհայտ- մոտ 750 թ.) հայ ռազմական գործիչ է, Սմբատ Մամիկոնյանի որդին: Եղել է Արաբական խալիֆայության դեմ 747-750 թթ-ի ապստամբության առաջնորդը և հայկական զինուժի հրամանատարը: Եղբոր՝ Դավթի հետ ձերբակալվել և ուղարկվել է Դամասկոս, աքսորվել Եմեն: Աքսորից վերադարձել է Հայաստան և Աշոտ Բագրատունուց խլել Հայոց սպարապետի պաշտոնը:

9-րդ դար

37. ԼԵՎՈՆ Ե ՀԱՅԿԱԶՆ

Լևոն Ե Հայկազն

Բյուզանդական բանակի ռազմական գործիչ
Բյուզանդիայի կայսր (813-820 թթ-ին)

Լևոն Ե Հայկազնը (ծննդյան թվականն անհայտ - 27.12. 820 թ.) Բյուզանդիայի պետական ու ռազմական գործիչ է, Բյուզանդիայի Արմենիակների բանակաթեմի զորավար Վարդի որդին: Եղել է հմուտ զորավար, ստացել «պատրիկի» աստիճան, նշանակվել Անատոլիկոն բանակաթեմի զորավար: Հետագայում դարձել է Բյուզանդիայի կայսր: Սպանվել է դավադրաբար:

38. ԲԱԳԱՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
(որդի ԱՇՈՏ ՄՍԱԿԵՐԻ)

Հայոց իշխան (826-851 թթ-ին)

Բագարատ Բագրատունին (կենսագրական տեղեկություններ չկան) հաջորդել է հորը՝ Աշոտ Մսակերին՝ որպես Հայոց իշխան (826-851թթ-ին): Աբասյան խալիֆայից ստացել է «իշխանաց իշխան» (պատրիկների պատրիկ) տիտղոսը: Նրան ենթակա էր ամբողջ Արմինիա (Հայաստան, Վիրք, Աղվանք, Շիրվան, Դերբենդ) նահանգը: 851թ-ին **իշխանական 36 զորագնդերով Մշո դաշտում հաղթել է իր փեսա (քրոջ ամուսին) Մուսա իբն Զարուրայի արաբական բանակին**, 851 թ-ին հավատալով իրեն ուղղված երդմնագրին՝ ներկայացել է արաբ զորավար Յուսուֆին, ձերբակալվել է նրա կողմից և իր բոլոր հարազատներով աքսորվել Սամառա:

39. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ

Հայոց սպարապետ (820-ական թթ-ից մինչև 855 թ.)

Սմբատ Սպարապետը (ծննդյան թվականն անհայտ - մահացել է բանտում, 859 կամ 860 թ-ին) կրում էր նաև Խոստովանող մականունը: Արաբները նրան անվանում էին Աբուլ-Աբբաս: Հայ ռազմական գործիչ է, Աշոտ Բագրատունի Մսակերի որդին: 826-827 թթ-ին մասնակցել է Կավակերտի ճակատամարտին: Չնայած փորձել է արաբների հանդեպ վարել զգուշավոր քաղաքականություն, բայց արաբ զորավար Բուղան ձերբակալել է նրան և տարել Բաղդադ: Խալիֆը ջանացել է հավատափոխ անել նրան: Բայց նա մնացել է հավատացյալ քրիստոնյա և նահատակվել:

40. ՍԱՀԼ ՍՄԲԱՏՅԱՆ

Արցախի Հայոց իշխան, զորավար (9-րդ դար)

Սահլ Սմբատյանը (Սահղ Սմբատյան, Սահակ Սմբատյան) (ծննդյան թվականն անհայտ - 855 թ-ից հետո) եղել է Մեծ Հայքի Արցախ նահանգի հյուսիսային գավառների իշխան: Սերում է Առանշահիկների տոհմից: Զինակցել է Արցախի լեգենդար իշխան Եսայի Աբու Մուսեին և պայքարել արաբ նվաճողների դեմ: 821 թ-ին հանկարծակի գրոհով գրավել է Շիկաքար բերդը, ջարդել Ամարասի վանքն ասպատակած և 1000 հոգի գերած արաբական զորախմբին: 837 թ-ին վճռական դեր է խաղացել Մուխանքի դաշտում արաբական 12000-անոց զորքի դեմ տարած հաղթանակում: Նույն տարում ձերբակալել է Խուրամյան շարժման առաջնորդ Բաբեկին, որը պարբերաբար ասպատակում էր Արցախի ու Սյունիքի գավառները և կոտորում հայ բնակչությանը:

41. ԵՍԱՅԻ ԱԲՈՒ ՄՈՒՍԵ

Արցախի Հայոց իշխան, զորավար (9-րդ դար)

Եսայի Աբու Մուսեն (կենսագրական տեղեկություններ չկան) Արցախի հզոր զորավարներից է: 853 թ-ի ամռանից մինչև հաջորդ տարվա ամառը ամրանալով Գտիչ ամրոցում՝ նա իր փոքրաթիվ զորքով դիմագրավել է արաբ զորավար Բուղայի 200000-անոց զորաբանակի հարձակումներին, հերոսաբար հետ է մղել հակառակորդի 28 գրոհ: 854 թ-ին Բուղան նենգորեն ձերբակալել է նրան և ուղարկել Բաղդադ:

42. ԱԼԻ ԻԲՆ ՅԱՀՅԱ ԱԲՈՒԼ-ՀԱՍԱՆ ԱԼ-ԱՐՄԱՆԻ

Հայազգի արաբական զորավար
Եգիպտոսի կառավարիչ (841-843, 849-850 թթ-ին)
Արմենիայի փոխարքա (862-863 թթ-ին)

Ալի իբն Յահյան (ծննդյան թվականն անհայտ - 863 թ.) արաբական խալիֆայության պետական ու ռազմական գործիչ է, ազգությամբ հայ, 862-863 թթ-ին եղել է Արմենիայի փոխարքա: Ալ-Մամունի խալիֆայության (813-833 թթ-ին) ժամանակ Խալիդ իբն Յազիդ իբն Մազյադը Ալիին ձերբակալել և ուղարկել է Բաղդադ: Խալիֆը նրան ուղարկել է իր եղբորը՝ Աբու Իսահակին, վերջինս Եգիպտոսի կառավարիչն էր: Խալիֆն Ալիին աշխատավարձ է նշանակել: Մամունի հաջորդ Ալ-Մուտասիմ (831-842 թթ-ին) խալիֆի վերջին տարում՝ 841 թ-ին, Ալին նշանակվել է Եգիպտոսի կառավարիչ: Հաջորդ խալիֆ Վաթեքը (842-847 թթ-ին) նրան պահել է այդ պաշտոնում: Ալին երկրի վարչական և ելևմտական ասպարեզում մեծ գործ է կատարել: 843 թ-ին նրան տրվել է խալիֆայական նահանգների վարչության ղեկավարությունը: Երկրորդ անգամ նշանակվել է Եգիպտոսի կառավարչի պաշտոնին 849 թ-ին՝ Մուտավաքիլ խալիֆի կող-

մից: 850 թ-ին խալիֆը նրան նշանակել է Արևմտյան սահմանային նահանգների կառավարիչ-հրամանատար: 851 թ-ից սկսած՝ Ալին, իբրև Տարսոնի կառավարիչ, ամեն տարի արշավել է Բյուզանդական կայսրության սահմանների վրա՝ մերթ Մալաթիայի կառավարիչ Օմարի, մերթ պավլիկյանների (Կարբեաս) օգնությամբ: Իր արշավանքների ընթացքում նա հասել է մինչև Սև ծովի ափերը և Կ. Պոլսի մատույցները: Հաղթել է բյուզանդացիներին՝ Ամիդի, Սամոսատի և այլ ճակատամարտերում: Նա մի քանի անգամ գլխավորել է Լամիս գետի վրա կատարված գերիների փոխանակության գործը: 862 թ-ին (հոկտեմբեր-նոյեմբեր) խալիֆը նրան նշանակել է Հայաստանի ոստիկան-փոխարքա: Մուտավաքիլ խալիֆն արաբական լծի դեմ հայերի երկարատև պայքարի հետևանքով հարկադրվել է սիրաշահել հայերին և ազատ արձակել Սամառա աքսորված հայ իշխաններին, իսկ Ալուն նշանակել է միջնորդ՝ հայերի հետ առկախ հարցերի լուծման համար: Նրա միջոցով Աշոտ Բագրատունուն տրվել է իշխանաց իշխանի պաշտոն՝ լայն ինքնավարության իրավունքներով: Բյուզանդական բանակը զորավար Պետրոնաս Մամիկոնյանի հրամանատարությամբ, Պոսոնում (Կյուրինի մոտ), 863 թ-ի սեպտեմբերին ջախջախել է Մալաթիայի կառավարիչ Օմարի բանակը և սպանել արաբ հրամանատարին: Ստանալով այդ լուրը՝ Ալի իբն Յահյան դուրս է եկել նրա դեմ և նահատակվել 400 զինվորներով:

43. ԱՇՈՏ Ա ՄԵԾ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայոց սպարապետ (855-885 թթ-ին),
Հայոց թագավոր (885-890 թթ-ին)

Աշոտ Ա Մեծը (ծն. 820 թ. - 890 թ., թաղված է իր գահանիստ Բագարանում) Հայաստանի պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Բագրատունի արքայատան հիմնադիրն է, Սմբատ Բագրատունի սպարապետի որդին: Դրսևորել է իրեն որպես քաջ զորավար, իմաստուն պետական գործիչ: *876 թ-ին Բյուզանդիայի Վասիլ Ա կայսրը դիմել է Հայոց Աշոտ Բագրատունի թագավորին՝ որպես Հայոց Արշակունի թագավորների թագադրի, և խնդրել թագ:* ***Աշոտ Բագրատունին Վասիլ Ա-ին ուղարկել է թագ և 10000 արծաթ***: Սկզբում Արաբական խալիֆայությունը նրան ճանաչել է որպես Հայոց, Վրաց և Աղվանից իշխանաց իշխան, իսկ 885 թ-ին Մութամիդ-Բիլլահ խալիֆը Ինա իբն Շեյխ ոստիկանի միջոցով Աշոտին է հանձնում թագ և արքայական զգեստներ: Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչը հիշատակում է, որ Աշոտ Ա Բագրատունին մեծ հանդիսավորությամբ թագադրվել է Բագարանում: Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցին նրան պսակել է «Թագավոր ի վերա Ասքանազեան ազգին»: Աշոտ Ա Բագրատունուն արքայական թագ է ուղարկել նաև Բյուզանդիայի կայսր Վասիլ Ա-ն (Բարսեղ):

44. ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ԿՈՒՐԿՈՒԱՍ

Հայազգի բյուզանդական զորավար (9-րդ դար)

Հովհաննես Ա Կուրկուասը (Գուրգեն) (կենսագրական տեղեկություններ չկան) բյուզանդական բանակի ռազմական գործիչ է: Գործել է Բյուզանդիայի հայազգի կայսր Վասիլ Ա-ի օրոք, 867-886 թթ-ին: Բյուզանդահայ զորավարական Կուրկուաս (Գուրգեն) ընտանիքի նահապետն է: Հովհաննես Ա Կուրկուասի թոռնորդին է ժամանակի մեծ զորավար, Բյուզանդիայի կայսր Հովհաննես Ա Չմշկիկը:

45. ՆԻԿԵՓՈՐՈՍ ՓՈԿԱՍ

Հայազգի բյուզանդական զորավար (9-րդ դար)
Մխոլերի դոմեստիկոս (գլխավոր հրամանատար/սպարապետ)

Նիկեփորոս Փոկասը (կենսագրական տեղեկություններ չկան) բյուզանդական բանակի ռազմական գործիչ է, Բյուզանդիայի կայսր Նիկեփորոս Բ Փոկասի պապը: Գործել է բյուզանդական հայազգի կայսրերի՝ Վասիլ Ա-ի (867-886 թթ-ին) և Լևոն Զ Իմաստասերի (886-912 թթ-ին) օրոք: Եղել է Թրակեսիոն բանակաթեմի զորավար, ունեցել «պատրիկի» աստիճան, գլխավորել է Բյուզանդիայի Արևելյան զորքերը: 885 թ-ին պարտության է մատնել Իտալիայի հարավային մասը նվաճած արաբներին:

10-րդ դար

46. ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

Հայ իշխան, զորավար (10-րդ դար)

Գևորգ Մարզպետունին (կենսագրական տեղեկություններ չկան) միջնադարի հայ ռազմական գործիչ է: Նա հիշատակվում է 920-940-ական թթ-ի պատմական-ճակատագրական իրադարձությունների կապակցությամբ: Նա երկու անգամ պարտության է մատնել Սևանա կղզի արշավող արաբ զորավար Բեշիրին: Եղել է Աշոտ Բ Երկաթ թագավորի զինակիցը, ապա՝ Աբաս թագավորի զորավարն ու խորհրդատուն:

47. ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ԿՈՒՐԿՈՒԱՍ

Հայազգի բյուզանդական ռազմական գործիչ (10-րդ դար)
Մխոլերի դոմեստիկոս (գլխավոր հրամանատար / սպարապետ)

Հովհաննես Բ Կուրկուասը (Գուրգեն) (կենսագրական տեղեկություններ չկան) բյուզանդական բանակի ռազմական գործիչ է: Սերում է Բյուզանդիայում հայտնի

հայազգի Կուրկուաս տոհմից, զորավար Թեոփիլոս Կուրկուասի եղբայրն է: Գործել է 920-940-ական թթ-ին, համարվել է ժամանակի մեծագույն զորավարը: Հույն Մանուել պատմիչը նրա մասին գրել է 8 գիրք (չեն պահպանվել): ***921 թ-ին արշավանք է կատարել դեպի Դվին՝ օգնության հասնելով Հայոց Աբաս թագավորին***: Նվաճել է Պոնտոսը, Մելիտինեն (934 թ-ին), Եդեսիան: 941 թ-ին գլխովին ոչնչացրել է Բյուզանդիա արշաված ռուսական 40000-անոց բանակն ու նավատորմը: Հավատարմորեն ծառայել է Բյուզանդական պետությանը: 923 թ-ին ճնշել է Ռոմանոս Ա կայսեր դեմ ապստամբած Խաղտիք բանակաթեմի զորավար հայազգի Վարդաս Բոյիլասի ապստամբությունը և ապստամբության պարագլուխներին կուրացրել ու բռնագրավել նրանց ունեցվածքը, 935 թ-ին ճնշել է հայազգի իշխաններ Վարդանի, Վուլի և Ադրիանոս Ապերցու ապստամբությունը: Եղել է հավատավոր քրիստոնյա: Խլաթի, Բաղեշի մզկիթների վրա խաչ է դրել, Եդեսիայից Քրիստոսի դաստառակն անձամբ փոխադրել է Կ.Պոլիս:

48. ԳԱԳԻԿ-ԽԱՉԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ
(որդի ԳՐԻԳՈՐ-ԴԵՐԵՆԻԿԻ)

Գագիկ-Խաչիկ Արծրունի

Վասպուրականի թագավոր (908-943 թթ-ին)

Գագիկ-Խաչիկ Արծրունին (ծն. 879 թ. - մոտ 943 թ.) Հայաստանի պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Կրտսեր եղբոր՝ Գուրգենի հետ բաժանել է նահանգի տարածքը և տիրել է Վասպուրականի հյուսիս-արևմտյան գավառներին: Պայքարել է կենտրոնախույս ուժերի, Ատրպատականում և Կորճայքում հաստատված օտար ցեղերի դեմ: Արաբներից ազատագրել է Ամյուկ ամրոցը, Պարսկահայքի Տամբեր և Ըռնա ամրոցները, Կորճայքի Ափուջափր բերդը: Հակադրվել է Հայոց արքա Սմբատ Ա-ին, որը Նախիջևանը Վասպուրականից անջատել և հանձնել է Սյունյաց տերերին: **Ատրպատականի կառավարիչ Յուսուֆը, Հայաստանը մասնատելու և թուլացնելու նպատակով՝ 908 թ-ին Գագիկ Արծրունուն թագադրել է, որով հիմնվել է Վասպուրականի թագավորությունը**: Գագիկ Արծրունին մասնակցել է Սմբատ Ա-ի դեմ Յուսուֆի կազմակերպած ռազմական արշավին, սակայն ըմբռնելով Յուսուֆի նպատակը՝ հեռացել է նրանից: 915 թ-ին Վասպուրականին է միացրել Այրարատի Կոգովիտ, Բագրևանդ, Մասյացոտն գավառները: **929 թ-ին թագադրել է Հայոց արքա Աբասին**, իսկ 936 թ-ին աջակցել նրան Գիլանի ամրոցի դեմ պատերազմում: Գագիկ Արծրունին կառուցել է Աղթամարի արքայական պալատն ու Սուրբ խաչ տաճարը, վերաշինել է Ոստանը, Վանը:

49. ԱՇՈՏ Բ ԵՐԿԱԹ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայոց թագավոր (914-929 թթ-ին)

Աշոտ Բ Երկաթ Բագրատունին (ծննդյան թվականն անհայտ - 929 թ.) Հայաստանի պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Բագրատունյաց արքայատան հզոր այրերից է, Սմբատ Ա-ի որդին: Նա պատմական ասպարեզ է իջել այն ժամանակ, երբ արաբ ոստիկան Յուսուֆի զորքերն ավերածություններ էին տարածել Հայաստանում, ոտքի կոխան էին դարձրել ամբողջ երկիրը: Եղբոր՝ Մուշեղի հետ մասնակցել է Յուսուֆի դեմ Նիգ գավառում տեղի ունեցած 910 թ-ի Ձկնավաճառի ճակատամարտին, որի ժամանակ Հայկական բանակը պարտություն է կրել: Հոր՝ Սմբատ Ա Բագրատունու մահից հետո, ***914 թ-ին, Աշոտ Բ Երկաթը և Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին հրավիրվել են Բյուզանդիա, Կ.Պոլիս՝ Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի միասնության ծրագրի շուրջ բանակցելու, սակայն գնացել է միայն Աշոտ Բ Երկաթը***: *914 թ-ից սկսած Աշոտ Բ Երկաթը, մյուս եղբոր՝ Աբաս Բագրատունու հետ արաբներից ազատագրել է Հայաստանի զգալի մասը, հասել Տփղիս և այստեղ ջախջախել արաբական կայազորը*: Երկրում խաղաղություն հաստատելը, այնուամենայնիվ, դժվարին գործ էր: Արտաքին հարձակումներից բացի՝ շարունակվում էին ներքին խռովությունները: Ընդհարում է տեղի ունեցել Աշոտ Բ Երկաթի և նրա աներոջ՝ Փառիսոսի իշխան Սահակ Սևադայի միջև, վերջինս պարտվել և կուրացվել է: 924-925 թթ-ին արաբները զորական մեծ ուժերով վերսկսել են հարձակումները: Աշոտ Բ Երկաթը ամրացել է Սևանա կղզու ամրոցում, իսկ Դվինի ոստիկան Բեշիրը ճամբար է դրել լճի ափին: Հենց այստեղ Հայոց արքան իր փոքրաթիվ զորաջոկատով անսպասելի գրոհել է արաբական զորքի վրա. տեղի է ունեցել Սևանի ճակատամարտը, որտեղ հայերը փայլուն հաղթանակ են տարել: Աշոտ Բ Երկաթի հետագա հաղթանակներն ավելի են ամրապնդել նրա դիրքերը: Իր խիզախության, դիվանագիտական խորաթափանցության համար այս իմաստուն ու հաղթաբազուկ արքան կոչվել է Երկաթ և այդ պատվանունով էլ անմահացել հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ:

50. ԹԵՈՓԻԼՈՍ ԿՈՒՐԿՈՒԱՍ

Հայազգի բյուզանդական զորավար (10-րդ դար)
Սխոլերի դոմեստիկոս (գլխավոր հրամանատար / սպարապետ)

Թեոփիլոս Կուրկուասը (կենսագրական տեղեկություններ չկան) բյուզանդական բանակի ռազմական գործիչ է: Բյուզանդիայում հայտնի հայազգի Կուրկուաս տոհմից է, սխոլերի դոմեստիկոս (գլխավոր հրամանատար / սպարապետ) Հովհաննես Բ Կուրկուասի (Գուրգեն) եղբայրը: 923 կամ 924 թ-ին նշանակվել է Խաղտիքի կառավարիչ-զորավար: Ստացել է սխոլերի դոմեստիկոսի, պատրիկի, մագիստրոսի աստիճաններ (ամենաբարձրագույն աստիճանները Բյուզանդիայում, որ տրվել են «օտար» հայերին): Զորավար եղբոր հետ մասնակցել է Փոքր Ասիայի նվաճմանը: 920-942 թթ-ին ծանր պատերազմներով եղբայրներով արաբներից գրավել են շուրջ 1000 բերդ, քաղաք, բնակավայր: Փայլուն հաղթանակներ է տարել Միջագետքում:

Հաղթել ու հարկադրել է Թեոդոսուպոլսի և շրջակայքի արաբներին: Միայնակ նվաճել է Պոնտոսը: Այս Թեոփիլոս Կուրկուասի թոռն է Բյուզանդիայի հայազգի կայսր Հովհաննես Ա Չմշկիկ Կուրկուասը:

51. ԱԼԵՔՍԻՈՍ-ՄՈՒՍԵԼԵ

Հայազգի բյուզանդական ծովակալ (10-րդ դար)

Ալեքսիոս-Մուսելեն (Մուշեղ) (կենսագրական տեղեկություններ չկան) եղել է Արմենիակների բանակաթեմի զորավար, Ռոմանոս Ա Լակաբենոս կայսեր (920-940-ական թթ-ին) զորավարներից:

52. ՌՈՄԱՆՈՍ Ա ԼԱԿԱԲԵՆՈՍ

Հայազգի բյուզանդական զորավար (10-րդ դար)
Բյուզանդիայի բանակի ծովակալ (916 թ.)
Բյուզանդիայի հայազգի կայսր (920-944 թթ-ին)

Ռոմանոս Ա Լակաբենոս

Ռոմանոս Ա Լակաբենոսը (ծննդյան թվականն անհայտ - 948 թ.) Բյուզանդիայի պետական ու ռազմածովային գործիչ է, հայազգի զորավար Վաշտակ Լակաբենոսի որդին: 919 թ-ին նշանակվել է մանկահասակ հայազգի Կոստանդին Է Ծիրանածին կայսեր խնամակալ: Մանկահասակ կայսեր հետ ամուսնացնելով իր դստերը՝ Հելենեին, դարձել է կայսերահայր, ստացել մագիստրոսի, ծովակալի և կեսարի աստիճաններ, հռչակվել կայսերակից, ապա՝ Կոստանդին Է-ի ձեռքով օծվել կայսր: 921-924 թթ-ին կայսերակից է հռչակել իր որդիներ Քրիստափորին, Ստեփանոսին և Կոստանդինին, իսկ 16-ամյա Թեոփիլոսին նշանակել է պատրիարք: Ռոմանոս Ա-ն պաշտպանել է մայրաքաղաքի պաշտոնյա ավագանու շահերը, պայքարել ազատ գյուղացիների հողազրկման դեմ: 922 թ-ին մեծ բանակ է ուղարկել Դվինի ամիրա Սպուքի դեմ, սակայն վերջինս Հայոց Աշոտ Բ թագավորի օգնությամբ վտարել է բյուզանդացիներին: Պատերազմել է Բուլղարիայի և արաբների դեմ: Կայսրության սահմանները հասցրել է մինչև Վերին Եփրատ և Տիգրիս: 941 թ-ին հաղթել է Կիևյան Ռուսիայի իշխան Իգորին, ապա նրա հետ կնքել հաշտության պայմանագիր 944 թ-ին: Ռոմանոս Ա-ի դեմ կազմակերպվել են մի շարք դավադրություններ: 944 թ-ին գահընկեց է արվել իր կայսերակից որդիների ձեռքով և աքսորվել Պրոտե կղզի՝ որպես վանական: Ռոմանոս Ա-ի բազմաթիվ հաղթանակները մարտադաշտերում կռել են նրա հայազգի զորավարներ Հովհաննես և Թեոփիլոս Կուրկուասները, Մլեհ Մեծը (Մելիաս), ծովակալ Ալեքսիոս Մուսելեն (Մուշեղ):

53. ՆԻԿԵՓՈՐ Բ ՓՈԿԱՍ

Հայազգի բյուզանդական զորավար (10-րդ դար)
Սխոլերի դոմեստիկոս (գլխավոր հրամանատար / սպարապետ)
Հայազգի բյուզանդական կայսր (963 -969 թթ-ին)

Նիկեփոր Բ Փոկասը (մոտ 912 թ. - 10.12.969 թ., Կ.Պոլիս) Բյուզանդիայի կայսրության հայազգի պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Սերում է Բյուզանդիայում հայտնի Թոռնիկյանների (Մամիկոնյանների) գերդաստանից: Հայրը մագիստրոս Վարդասն է: Ծառայելով բյուզանդական բանակում իր քաջության ու զինարվեստին կատարելապես տիրապետելու ընդունակությամբ բարձրացել է զինվորական հիերարխիայի աստիճանակարգերով: Եղել է Արևելյան զորքերի մագիստրոս (զորավար): 954 թ-ին Բյուզանդիայի կայսր Կոստանդին է Ծիրանածինի կողմից նշանակվել է Արևելյան զորքերի սխոլերի դոմեստիկոս (գլխավոր հրամանատար / սպարապետ): Մասնակցել է Բյուզանդիայի արևելյան սահմաններում մղված բոլոր ռազմական արշավներին: Իր զորավարների՝ եղբոր՝ մագիստրոս Լևոն Փոկասի, դոմեստիկոս Հովհաննես Չմշկիկի, Միքայել Բուրցեսի հետ բազմաթիվ ճակատամարտերում հաղթել է արաբներին: 961 թվականին արաբներից գրավել և Բյուզանդիային է կցել Կրետե կղզին, որ 135 տարի գտնվում էր արաբական գերիշխանության տակ: Բյուզանդիայի հայկական-մակեդոնական գերդաստանի Ռոմանոս կայսեր մահից մոտ չորս ամիս անց, Բյուզանդիայի Արևելյան տիրույթների զորավարներն ու ավագանին 963 թ-ի հուլիսի 3-ին հավաքվել են Կեսարիա քաղաքի մոտ գտնվող զորակայանում և Նիկեփոր Փոկասին իր կամքին հակառակ հռչակել Բյուզանդիայի կայսր: Նիկեփոր Բ Փոկասի կայսերական օծումը տեղի է ունեցել Կ.Պոլսում նույն տարվա օգոստոսի 10-ին (*Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ծիրանածինը իր «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» գրքի 96-րդ գլուխն ամբողջովին նվիրել է Նիկեփոր Բ Փոկասի կայսերական օծման արարողության նկարագրությանը*): Իր փոխարեն Բյուզանդիայի Արևելյան զորքերի սխոլերի դոմեստիկոս է նշանակել Հովհաննես Չմշկիկին (968 թ-ին շնորհազրկել և աքսորել է իր ծննդավայր Հերապոլիս): Ուժեղացրել է բանակը, ինչ հետևանքով ծանրացրել է հարկերը, պայքարել է եկեղեցու հարստացման դեմ: Դադարեցրել է արաբներին հարկ վճարել և իր իշխանության տարիներին անընդհատ պատերազմ է մղել նրանց դեմ: *964 թ-ին գրավվել են Կիլիկիայի Անարզաբա, Ադանա, Մամեստիա բերդերը, 965 թ-ին՝ Տարսոնը, ապա՝ Կիպրոս կղզին: 968 թ-ին զորավար Միքայել Բուրցեսը գրավել է երեք հարյուր տարի արաբական իշխանության տակ գտնվող Անտիոք քաղաքը*: Դաշնակցել է Կիևյան Ռուսիայի իշխան Սվյատոսլավի հետ և ընկճել է բուլղարներին: Պատերազմներում տարած հաղթանակների համար ժամանակակիցներից ստացել է «սարակինոսների (արաբների) սև մահ» պատվանունը: Կրոնասեր է եղել և սատարել է եկեղեցաշինության գործին: Նրա հրամարտակով է Աթանաս Աթոնացին 963 թ-ին Հունաստանի Քաղկիդիկե թերակղզու երեք ճյուղերից աջինի վրա հիմնել Աթոնի կամ Սուրբ լեռան Մեծ Մայրավանքը, որտեղ ցայսօր գոյատևում է Կ.Պոլսի պատրիարքին ենթակա կրոնական Ինքնավարությունը: Բյուզանդիայում ապրող հայերի նկատմամբ վարել է հանդուրժողական քաղաքականություն: **Հայաստանի նկատմամբ վարել է նվաճողական քաղաքականություն: Նրա օրոք, 966 թ-ին կտակի (նվիրատվության) ձևով Տարոնը կցվել է Բյուզանդիային և վերածվել բանակաթեմի: Այդ կործանարար քաղաքակա-**

նության արդյունքում մոտ 80 տարում Բյուզանդիան նվաճել է գրեթե ամբողջ Բագրատունյաց Հայաստանը (վերացնելով իր արևելյան սահմանի բնական պատվարը՝ Բյուզանդիան դատապարտեց իր պետականությունը կործանման): Հաշվի առնելով հայերի հավատարմությունը՝ բազմահազար հայերի փոխադրել է արաբներից նվաճված Կրետե կղզի (ցայսօր այնտեղ պահպանվում են Արմենի [հայեր], Արմենախորի [հայերի գյուղ] տեղանունները): 969 թ-ին սպանվել է իրենից դժգոհ Հովհաննես Չմշկիկի և նրա հոմանուհի՝ Բյուզանդիայի կայսրուհի Թեոփանոյի դավադրությամբ:

54. ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ՉՄՇԿԻԿ

Հովհաննես Ա Չմշկիկ

Հայազգի բյուզանդական զորավար (10-րդ դար)
Սխոլերի դոմեստիկոս (գլխավոր հրամանատար / սպարապետ)
Բյուզանդական կայսր (969-976 թթ-ին)

Հովհաննես Ա Չմշկիկը (հայկական աղբյուրներում՝ Կյուռժան, արաբական աղբյուրներում՝ Յանիս իբն ալ Շմշկիկ կամ իբն ալ Շմշկիկ) (մոտ 925 թ., Չորրորդ Հայք, Խոզան գավառ, Հերապոլիս քաղաք - 10.01.976 թ., Կ.Պոլիս) Բյուզանդիայի կայսրության հայազգի պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Բյուզանդիայի կայսրերից մեծագույնը: Հայրական գծով սերում է Կուրկուասների (Գուրգեն) զորավարական տոհմից, Թեոփիլոս Կուրկուասի թոռն է, մորական գծով Նիկեփոր Բ Փոկաս կայսեր տոհմից է: Մեկնել է Կ.Պոլիս, ամուսնացել մորական տոհմից Վարդ Փոկասի քրոջ՝ Մարիամի հետ և իր բնատուր շնորհի, քաջության, իր նախորդների հեղինակության և քեռի-աներների հովանավորությամբ բարձրացել բյուզանդական զինվորական հիերարխիայի աստիճանակարգով: 949 թ-ին, 24 տարեկան հասակում, մասնակցել է Կարին քաղաքի գրավմանը: Բյուզանդիայի Արևելյան զորքերի գլխավոր հրամանատար, ապագա կայսր Նիկեփոր Փոկասի բանակի կազմում մասնակցել է Կիլիկիայի բնակավայրերի ու ամրոցների գրավմանը, արաբների դեմ պատերազմներին: 958 թ-ին, 34 տարեկան հասակում, գլխավոր հրամանատար Նիկեփոր Փոկասի կողմից նշանակվել է Բյուզանդիայի Արևելյան զորքերի սխոլերի դոմեստիկոս՝ հրամանատար (սպարապետ): 963 թվականին գործում մասնակցություն է ունեցել Նիկեփոր Փոկասին Բյուզանդիայի կայսր հռչակելու գործում և կայսր Նիկեփոր Բ Փոկասի հրամանով նշանակվել է Բյուզանդիայի Արևելյան զորքերի գլխավոր հրամանատար: Խոշոր ճակատամարտերում ջախջախել է արաբական բանակը: Նրա հաջողություններն առասպելական էին ու նախանձով են լցրել բյուզանդական այլ զորավարների սրտերը և վերջիններս նրա մասին չա-

ուխտոսել են Նիկեփոր Բ Փոկաս կայսեր մոտ: Կայսրը 968 թ-ին շնորհազրկել է զորավարին և աքսորել իր ծննդավայր Հերապոլիս: Այսպիսի վերաբերմունքը զորավարի սիրտը վրեժխնդրությամբ է լցրել: Իրեն սիրահարված Բյուզանդական կայսրուհի Թեոփանեի օգնությամբ 969 թ-ին ստացել է Կ.Պոլիս վերադառնալու իրավունք և նրա ու կայսեր քաղաքականությունից դժգոհ զորականների միջոցով դավել է կայսրին և անձամբ սրախողխող արել նրան ու գրավել Բյուզանդիայի գահը: 970 թ-ի գարնանը արշավել է Ասորիք, գրավել Հալեպը, հաշտության պայմանագիր կնքել ամիրայի հետ և արշավել Թրակիա ներխուժած ռուսական մեծ իշխան Սվյատոսլավի դեմ: 971 թ-ին գրավել է բուլղարական Պարաստլավա քաղաքը, վերանվանել իր անունով Հովհաննուպոլիս, պարտության մատնել Սվյատոսլավին, գերել Բուլղարիայի Բորիս թագավորին և Բուլղարիայի հյուսիս-արևելյան մասը կցել կայսրությանը: *972 թ-ին դաշինք է կնքել Հռոմեական սրբազան կայսրության հետ և արշավել Արևելք: Արաբները, եգիպտացիները, պարսիկները 100.000 անոց միացյալ բանակով գրավել էին Անտիոքը: Միացյալ բանակը ջախջախել և Անտիոքը գրավել է: Գրավել է Մարտիրուպոլիս, Մծբին քաղաքները, Հյուսիսային Միջագետքը, 974-975 թթ-ին՝ Էմեսսան, Բաալբեկը, մտել Պաղեստին և Լիբանան:* Արաբական խալիֆայության դեմ կռվելիս 973 կամ 974 թ-ին փորձ է արել գրավել Բագրատունյաց Հայաստանի հարավարևմտյան մի քանի շրջան: Մինչև Հայկական հիմնական ուժերը կհասցնեին մոտենալ՝ բյուզանդական բանակին լուրջ հարվածներ է հասցրել Տարոնի իշխանի հետևակ զորամասը: Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածը իր, Կապանի Փիլիպպե թագավորի, Կարսի Աբաս թագավորի, Արծրունյաց Սենեքերիմ թագավորի 80 հազարանոց բանակով Հարքում, Եփրատի ափին փակել է նրա ճանապարհը: Համոզվելով, որ հայերի միաբանությունն անհնարին է հաղթահարել՝ Հովհաննես Բ Չմշկիկը Աշոտ Գ Ողորմածի հետ կնքել է խաղաղության դաշն: Աշոտ Գ Ողորմածը նրան է տրամադրել 10.000 անոց ընտիր այրուձի և առատ պաշար: Բյուզանդական բանակը կայծակնային արագությամբ առաջացել է, գրավել Տիգրանակերտը, Նփրկերտը, Մերդինը, Մծբինը և մոտեցել Բաղդադին: Սակայն թունավորումից իր մոտ սկսված հիվանդության պատճառով քաղաքի գրավումը հետաձգել ու հետ է շարժվել: Բյութանիայում սկսվել է հոգևարքը, հազիվ Կ.Պոլիս մտած՝ 976 թվականի հունվարի 10-ին կնքել է մահկանացուն: Կառավարել է ընդամենը 6 տարի, սակայն պատերազմական ու դիվանագիտական ճանապարհներով ստեղծել է մի մեծ աշխարհակալություն և դրել հզոր Բյուզանդիայի հիմնաքարը: Իր կառավարման ընթացքում անցկացրել է աշխարհիկ ու հոգևոր ազնվականության հողային տիրույթների հաշվառում, ազատ հայտարարել մասնավոր տիրույթներում հաստատված պետական գյուղացիներին և զինվորական ծառայության համար հող ստացած գյուղացիներին: Երկրի արևմտյան սահմանները վստահելի պահապաններով ապահովելու նպատակով հազարավոր հայկական ընտանիքներ է վերաբնակեցրել Թրակիայում: Իր հայկական արմատներին հավատարիմ նամակով դիմել է Աշոտ Գ Ողորմած թագավորին և Ղևոնդ Իմաստասեր վարդապետին: Նամակը պահպանվել է պատմիչ Մատթեոս Ուռհայեցու մոտ. «Աշոտ Շահնշահ Հայոց Մեծաց և իմ հոգեկան զավակ, լուր և իմացիր, թե որչափ ինչ սքանչելիս արար Աստուած առ Մեզ և զարմանալի յաղթութիւնս... կամեցաք և Փառավորությանդ ծանուցանել, ով Աշոտ Բագրատունի և զավակ իմ, իմացուցանեմ Քեզ, որ և Դու, որպես քրիստոնեայդ ես և հավատարիմ սիրելի թագավորութեանս Սերում, ուրախանաս և փառաւորես...»: Հատուկ վերաբերմունք է ունեցել ազգակիցների նկատմամբ և գահին բազմելուց անմիջապես հետո պետության տարածքում

ապրող հայերին ազատել է հարկերից: Գահակալության տարիներին կտրել է իր պատկերով ոսկեդրամներ: Իր պատվին հայրենի Հերապոլիս քաղաքն անվանափոխվել է Չմշկածագ:

55. ՍՄԲԱՏ Ա (որդի ՍԱՀԱԿԻ)

Սյունիքի թագավոր (987-998 թթ-ին)

Սմբատ Ա-ն (ծննդյան թվականն անհայտ – 998 թ.) Սյունիքի Ծղուկք, Բաղք գավառների գահակալ իշխան էր 963 թ-ից: 976-980 թթ-ին եղել է Սյունիքի գահերեցը և իր իշխանությունը տարածել ողջ Սյունիքի վրա: 987 թ-ին Ատրպատականի տիրակալ Աբու-ալ Հայջա Թավվադյանի և Արցախի արքայիկների օժանդակությամբ Սյունիքը (բացի Սևանա լճի ավազանից և Երնջակ գավառից) հռչակել է թագավորություն: Սմբատ Ա-ն ձևավորել է նորաստեղծ թագավորության պետական ապարատը, ստեղծել գործակալություններ, հիմնել դատարաններ, կարգի բերել բանակը, ամրացրել բերդերն ու ամրոցները: 989 թ-ին Սմբատ Ա թագավորը ճանաչել է Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունու գերագահությունը և իր զորքով մասնակցել Աբխազական թագավորության դեմ արշավանքին: 991-992 թթ-ին Հայոց Գագիկ Ա Բագրատունի թագավորը Սյունիքի թագավորությունից անջատել է Վայոց ձոր, Ճահուկ գավառները և Ծղուկք գավառի հյուսիսային հատվածը, որից հետո Սմբատ Ա-ի իշխանությունն ամփոփվել է Սյունիքի հարավային մասում: Գագիկ Ա Բագրատունին փոխարենը Սմբատ Ա-ին է հանձնել Գողթնի ամիրայությունից նվաճած Երնջակ գավառը: Մահացել և թաղվել է Տաթևի վանքի գավթում:

56. ՍԱՄՈՒԵԼ ԿՈՄՍԱԶԱԳ

Արևմտյան Բուլղարիայի թագավոր (997-1014 թթ-ին), զորավար

Սամուել Կոմսաձագը (կենսագրական տեղեկություններ չկան) ծնվել է Դերջանում, Նիկողայոսի և Հռիփսիմեի ընտանիքում: Ապրել և գործել է Բուլղարիայում, ձեռք է բերել զորավարական հմտություններ, հասել ռազմական հաջողությունների ու դարձել զորահրամանատար: Ազատագրել է Բուլղարիայի նշանակալից մասը, իրեն հայտարարել Բուլղարիայի թագավոր, ապա՝ ընդարձակել իր թագավորությունը՝ ի հաշիվ Մակեդոնիայի, Թեսալիայի, Էպիրոսի, Ալբանիայի մի մասի նվաճման: 1014 թ-ին պարտվել է բյուզանդական կայսր Վասիլ Բ Բուլղարասպանից: Թաղված է Մակեդոնիայի Կերման գյուղում:

Գագիկ Ա Բագրատունի

57. ԳԱԳԻԿ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայոց թագավոր (989-1020 թթ-ին)

Գագիկ Ա Բագրատունին (ծննդյան թվականն անհայտ - 1020 թ.) Հայաստանի պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, հաջորդել է եղբորը՝ Սմբատ Բ-ին: Բագրատունիների արքայատան ամենահզոր և երևելի այրն է: Կրել է «Հայոց և Վրաց Շահնշահ» տիտղոսը: Նրա գահակալության տարիներին Բագրատունիների Հայոց թագավորությունը հասել է իր հզորության բարձրակետին, քաղաքամայր Անին զարդարվել վեհաշուք կոթողներով: Գագիկը Հայոց արքունի մշտական զորքի՝ Մարզպետական գնդի զորականների թիվը հասցրել է 100000-ի: Մի քանի հաղթանակներ է տարել արաբական ամիրայությունների դեմ մղած ճակատամարտերում: **Բագրատունիներից սերած Կարսի Աբաս, Լոռու Դավիթ թագավորների, Տայքի Դավիթ Կյուրապաղատի, ինչպես նաև Վրաց թագավորներ Բագարատի և Գուրգենի դաշնակցությամբ 998 թ-ին հաղթել է Ծումբի ճակատամարտում:** Գագիկ Ա-ի օրոք Հայաստանի թագավորության սահմանները հյուսիսում հասել են մինչև Կուր գետը, հարավում՝ Վանա լճի մերձակայքը, արևմուտքում՝ Բասեն, արևելքում՝ Ուտիք: Գագիկ Ա-ին էին ենթակա Լոռու, Կարսի և Սյունիքի հայկական թագավորությունները: Երկիրը զարգացում է ապրել, մեծացել-հզորացել են Անի, Դվին քաղաքները: Անիի պեղումների ժամանակ (1905-1906 թթ-ին) գտնվել է Գագիկ Ա-ի 2,26 մ բարձրությամբ արձանը՝ Գագկաշենի մանրակերտը ձեռքին:

58. ՎԱՍԱԿ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

Հայոց սպարապետ (11-րդ դար)

Վասակ Պահլավունին (Վասակ Հոլում) (ծննդյան թվականն անհայտ - 1021 թ.) իշխանաց իշխան էր, Գրիգոր Համզեի և Շուշանի որդին, սպարապետ Վահրամ Պահլավունու եղբայրը, Գրիգոր մագիստրոս Պահլավունու հայրը: Եղել է Բջնիի և Նիգ գավառի տերը: 1021 թ. Հայաստան են ներխուժել դելմիկների հրոսակները և ավերել երկիրը: Առանց սպասելու օգնական ուժերի՝ Վասակ Պահլավունին իր 500 զորականներով Քասաղ գետի ափին ճակատամարտ է տվել և հաղթել թշնամուն և ստիպել նահանջել: Հաղթական մարտից հետո Վասակ Պահլավունին Սերկևիլի լեռան վրա զոհվել է դավաղիր նետից:

59. ՍՄԲԱՏ Բ
(որդի ԱՇՈՏԻ)

Սյունիքի թագավոր (1040-1044 թթ-ին)

Սմբատ Բ-ն (ծննդյան թվականն անհայտ – 1044 թ.) Ծղուկք գավառի տեր Աշոտյանների տոհմից է, Աշոտ իշխանի որդին, մոր գծով Սյունիքի Վասակ Ա թագավորի թոռը: Սյունյաց արքունիքում մասնակցել է պետական կառավարմանը և ժառանգել է թագավորական գահը: Սմբատ Բ-ն եղբորը՝ Գրիգորին (ապագա Գրիգոր Ա թագավոր) հանձնել է իշխանաց իշխանի պաշտոնը: 1040 թ-ին Սմբատ Բ-ն 2000-անոց զորաջոկատով մասնակցել է Կյուրիկյան թագավորություն ներխուժած Դվինի Շադդադյան ամիրա Աբու-լ Ասվարի դեմ հայկական զորքերի ճակատամարտին և էական դեր խաղացել թշնամու ջախջախման գործում: Օգտվելով Բագրատունյաց թագավորության ծանր կացությունից՝ Ատրպատականի, Արդաբիլի, Ահարի, Թալիշի մահմեդական ամիրայությունների միացյալ զորքը 1044 թ-ին ներխուժել է Սյունիք և ավերել երկրամասի հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքը: Հետ մղելով թշնամու բանակը՝ Սմբատ Բ-ն զբաղվել է Տաթևի վանքի և ավերված գավառների վերաշինությամբ:

60. ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

Հայոց սպարապետ (11-րդ դար)

Վահրամ Պահլավունին (մոտ 967 թ. -1045 թ.) միջնադարյան Հայաստանի նշանավոր ռազմական ու պետական գործիչ է: Սերում է Պահլավունիների իշխանական տոհմից, իշխան Գրիգոր Համզեի և Շուշանի որդին է, Գրիգոր մագիստրոս Պահլավունու հորեղբայրը: Ատրպատականի ամիրա Մամլանի դեմ 998 թ-ին Ծումբի ճակատամարտում գլխավորել է Հայկական զորաբանակը: Եղել է Անիի Բագրատունյաց թագավորության ամենահզոր պաշտպանը: Մի շարք ճակատամարտերում փայլուն հաղթանակներ է տարել բյուզանդացիների դեմ: Կառուցել է Մարմաշենի գլխավոր եկեղեցին (988-1029 թթ-ին) և Աբերդի եկեղեցին (1026 թ-ին): Իր որդու հետ գտնվել է Դվինի մատույցներում՝ ամիրա Աբու-լԱսվարի դեմ մղված կռվի ժամանակ: Թաղվել է Մարմաշենի վանքում:

11-րդ դար

61. ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆԻ

Հայազգի բյուզանդական զորավար (11-րդ դար)
Դիվանագիտական գործիչ

Փիլարտոս Վարաժնունին (ծննդյան թվականն անհայտ - 1086 թ.) հայ պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Վարաժնունիների նախարարական տոհմից: Պատմաբան Նիկողայոս Ադոնցը կարծիք է հայտնել, որ նա Վարդաս Սկլերոսի ապստամբությանը մասնակցած Սահակ-Վահրամ զորավարի սերնդից է: Հավատարիմ ծառայության համար ստացել է դոմեստիկոսի աստիճան: Բյուզանդիայի Ռոմանոս Դ Դիոգենես կայսրը 1070 թ-ին, Խլաթի արշավանքի ժամանակ, Փիլարտոսին նշանակել է իր բանակի գլխավոր հրամանատար, ապա՝ Եփրատի առափնյա շրջանների սահմանապահ զորքերի հրամանատար: Տրված պաշտոնը Փիլարտոսն օգտագործել է լավագույնս և մեծ ազդեցություն ու հեղինակություն է ձեռք բերել: 1071 թ-ին Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիները պարտվել են, իսկ Ռոմանոս Դ Դիոգենես կայսրը գերի է ընկել: Օգտվելով ստեղծված բարենպաստ իրավիճակից Փիլարտոս Վարաժնունին իր տնօրինած տարածքը Տավրոսից մինչև Եփրատ հայտարարել է անկախ իշխանապետություն: 1077 թ-ին գրավել է Մարաշ - Մելիտենեն և հռչակել իշխանապետության մայրաքաղաք: 1077 թ-ին կարողացել է բյուզանդացիներից նվաճել Սամոսատ ու Եդեսիա քաղաքները, 1078 թ-ին Անտիոքի դուքս Վասակ Պահլավունու սպանությունից հետո, տեղաբնիկ հայերի հրավերով, կոտորել է 500 դավաղիր հույներին և տիրել Անտիոքին և, փաստորեն, հիմնել Միջին Արևելքի խոշոր անկախ պետություններից մեկը: 1073 թ-ին փորձ է արել գրավելու նաև Սասունը, սակայն Անձիտ գավառի Ալելուա դաշտում տեղի ունեցած ճակատամարտում պարտվել է Թոռնիկ Մամիկոնյանի զորքերից: *Ռազմական ու դիվանագիտական անվրեպ քայլերով միավորել-ձևավորել է պետական միավորում*: **Բյուզանդական կայսրությունը հարկադրված ճանաչել է Փիլարտոս Վարաժնունու իշխանապետությունը՝ նրան շնորհելով սեբաստոսի (սպարապետ) աստիճան**: Իհարկե, սրա դիմաց Փիլարտոսը ընդունել է քաղկեդոնություն: Պատմիչ Միքայել Ասորին գրել է, որ Փիլարտոսը գրավել է Կիլիկիայի բոլոր ամուր բերդերը: 1083 թ-ից Փիլարտոս Վարաժնունու իշխանապետությունը, որ առժամանակ կարողացել էր կասեցնել սելջուկ թուրքերի առաջխաղացումը դեպի Միջերկրական ծով, թշնամիների հարձակումներից սկսել է թուլանալ: Թուրք սելջուքները զավթել են կիլիկյան Ադանա, Տարսոն, Մսիս (Մամեստիա), Անազարբա, Անտիոք քաղաքները: 1086 թ-ին Մելիքշահ Ա սուլթանի զորքերը նվաճել են նրա իշխանապետության ամբողջ տարածքը: Պահպանվել ու մեզ են հասել Փիլարտոս Վարաժնունու արձճե կնիքները:

62. ԿՅՈՒՐԻԿԵ Ա ԿՅՈՒՐԻԿՅԱՆ (ԲԱԳՐԱՏՈՒՆԻ)

Կյուրիկե Ա-ի հայագիր դրամը

Լոռու թագավոր (1048-1089 թթ-ին)

Կյուրիկե Ա-ն (ծննդյան թվականն անհայտ - 1089 թ.) սելջուկ-թուրքերի դեմ միասնական ճակատ կազմելու ակնկալությամբ մերձեցել է Բյուզանդական կայսրության հետ, ստացել դրամ հատելու իրավունք: Սելջուկների՝ Գուգարք և Վրաստան ներխուժելուց հետո (1064 թ-ին) հպատակվել է սուլթան Ալփ Ասլանին և պահպանել իր իշխանությունը՝ երկիրը փրկելով ավերածությունից: 1065 թ-ին մայրաքաղաք է դարձրել Լոռէ բերդը: Հայոց կաթողիկոսությունն Անիում վերահաստատելու հույսով՝ 1081 թ-ին օժանդակել է Շիրակի եպիսկոպոս Բարսեղ Ա Անեցուն: Իշխանության գոյությունը պահպանելու համար, 1088 թ-ին գնացել է Խորասան և բանակցել Մելիքշահի հետ: Կյուրիկե Ա-ի դրամի վրա առկա է «**Տէր օգնէ Կորիկէի Կորապաղատին**» հայերեն մակագրությունը:

63. ՌՈՒԲԵՆ Ա

Կիլիկիայի Հայոց իշխանապետության հիմնադիր, Կիլիկիայի Հայոց իշխանապետ (1080-1095 թթ-ին)

Ռուբեն Ա-ն (ծն. 1025 թ. - 1095 թ.) հայ պատմիչների կողմից համարվում է Բագրատունիների և Արծրունիների մերձավոր ազգականը: Եղել է Հայոց Գագիկ Բ Բագրատունի թագավորի թիկնապահը: Գագիկ Բ թագավորի սպանությունից հետո, 1079 թ-ին Ռուբեն Ա-ն ամրացել է Բարձրաբերդ, Կոպիտառ, Կոռոմոզոլ բերդերում և շրջակա հայերի աջակցությամբ ապստամբել Բյուզանդական կայսրության դեմ: ***1080 թ-ին թոթափել է բյուզանդական գերիշխանությունը և Լեռնային Կիլիկիայում հիմնել անկախ իշխանապետություն***: Թաղվել է Կաստալոնի վանքում: Իշխանապետության գահը ժառանգել է որդին՝ Կոստանդին Ա-ն:

64. ԹՈՐՈՍ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏ

Հայազգի բյուզանդական զորավար (11-րդ դար)

Թորոս Կյուրապաղատը (Թեոդորոս) (ծննդյան թվականն անհայտ - 1098 թ.) հայ քաղկեդոնական իշխան է, Հեթումի որդին: Փիլարտոս Վարաժնունին 1070-ական թթ-ին նրան նշանակել է Եդեսիայի կառավարիչ: Նա այդ պաշտոնը կարողացել է պահել նաև թուրք-սելջուկյան տիրապետության շրջանում՝ Բազուն ամի-

ռայի (1087-1094 թթ-ին) կողքին: 1094 թ-ին թունավորել և սպանել է Եդեսիայի թուրք կառավարիչ Ալփիրակին: Բազունի սպանությունից հետո Թորոսը քաղաքը վերցրել է իր ձեռքը և 4 տարի՝ 1094-1098 թթ-ին, լիակատար անկախ վարել է պաշտոնը: 1098 թ-ին օգնության է կանչել խաչակիր ֆրանկներին՝ Բաղդուինի գլխավորությամբ և քիչ ժամանակ անց զոհ է գնացել վերջինիս դավադրությանը:

12-րդ դար

65. ԳԱԲՐԻԵԼ

Հայազգի բյուզանդական զորավար (11-րդ դար)

Գաբրիելը (ծննդյան թվականն անհայտ - 1103 թ.) հունադավան հայ իշխան է, Եդեսիայի կառավարիչ Թորոս իշխանի աները: 1080-ական թթ-ից մինչև 1103 թ-ը իր ձեռքում է պահել Սելիտենե քաղաքի իշխանությունը և հաջողությամբ հետ մղել թուրքերի հարձակումները: Իր իշխանությունը պահել է նաև 1087-1094 թթ-ին՝ Եգիպտոսի սուլթան Սելիքշահ Ա-ի կողմից քաղաքի կառավարիչ նշանակված թուրք Ալփիրակի կողքին (Ալփիրակին սպանել է Գաբրիելի փեսա Թորոս իշխանը): Անկախությունը պահպանելու նպատակով դիմել է խաչակիր ֆրանկների օգնությանը և իր դուստր Մորֆային ամուսնացրել է Եդեսիայի կոմս, հետագայում Երուսաղեմի թագավոր Բաղդուին Բ-ի հետ: 1103 թ-ին Սելիտենեն գրավվել է թուրքերի կողմից, իսկ Գաբրիելը՝ սպանվել:

66. ԳՈՂ ՎԱՍԻԼ

Կիլիկյան Հայաստանի իշխանապետ, զորավար (1080-1110-ական թթ-ին)

Գող Վասիլը (ծննդյան թվականն անհայտ - 1112 թ.) Կիլիկյան Հայաստանի երևելի իշխանապետերից էր: Նա, հավանաբար, սերում է Կամսարականների տոհմից: 1080-ական թթ-ին հիմնել է անկախ իշխանապետություն, որի մեջ մտել են Քեսունը, Մարաշը, Հռոմկլան, Ռաբան և այլ գավառներ: Դիմակայել է սելջուկ-թուրքերի հարձակումներին, հաղթանակներ տարել մի քանի ճակատամարտերում:

67. ԹՈՐՈՍ Ա

Կիլիկիայի Հայկական պետության իշխանապետ (1100 թ.)

Թորոս Ա-ն (ծննդյան թվականն անհայտ - 1129 թ., թաղված է Դրազարկում) Կիլիկիայի Հայկական պետության պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Կոստանդին Ա-ի որդին: Բյուզանդացիներից ազատագրել է Դաշտային Կիլիկիան՝ Սիս, Անազարբա բերդաքաղաքներով: Հայ իշխան Գող Վասիլի զինակցությամբ Բերդուսի մոտ ջախջախել է Իկոնիայի սուլթանի զորքերին և երկիրը մաքրել սելջուկ-թուրքերից:

68. ԹՈՐՈՍ Բ

Կիլիկիայի Հայկական պետության իշխանապետ (1145 թ.)

Թորոս Բ-ն (ծննդյան թվականն անհայտ - 1169 թ.) Կիլիկիայի Հայկական պետության պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Սերում է Ռուբինյանների տոհմից: Իր եղբայրներ Ստեփանեի և Մլեհի օգնությամբ համախմբել է Կիլիկիայի հայկական ռազմական ուժերը, երկիրը մաքրել բյուզանդացի և սելջուկ-թուրքական զավթիչներից: Մի շարք ճակատամարտերում տարել է փայլուն հաղթանակներ: 1152 թ-ին պարտության է մատնել Մամեստիա (Մսիս) բերդը պաշարած բյուզանդական զորավար Անդրոնիկոս Կոմնենոսին: Հետագայում ևս նա հաղթել է բյուզանդական մի ուրիշ զորախմբի: 1159 թ-ին Բյուզանդիայի կայսր Մանվելը ստիպված է եղել հաշտություն կնքել Թորոս Բ-ի հետ և նրան ճանաչել Կիլիկիայի «**Առաջին սեբաստոս**»:

69. ՄԼԵՀ ՌՈՒԲԻՆՅԱՆ

Կիլիկիայի Հայկական պետության իշխանապետ (1169-1175 թթ-ին)

Մլեհ Ռուբինյանը (ծննդյան թվականն անհայտ - սպանվել է 1175 թ.) Կիլիկիայի Հայկական պետության պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Լևոն Ա իշխանապետի որդին: Հաջորդել է եղբորը՝ Թորոս Բ-ին: 1171-1172 թթ-ին երկրից վտարել է խաչակիր ասպետներին և լատին հոգևորականներին, հաղթել է խաչակիրներին աջակցող Անտիոքի դքսի և Երուսաղեմի թագավորության միացյալ ուժերին: *Դիվանագիտական կապ է հաստատել Հալեպի ամիրա Նուր ադ Դինի հետ* և նրա զինական աջակցությամբ 1173 թ-ին ջախջախել բյուզանդական զորքին և ազատագրել Դաշտային Կիլիկիան: Նույն թվականին Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք է հռչակել վերակառուցած Սիս քաղաքը. դաժանորեն պատժել է կենտրոնաձիգ իշխանությանն ընդդիմադիր հայ իշխաններին և լատինամոլ կղերականներին՝ հարուցելով վերջիններիս դժգոհությունը: Դարձել է պալատական դավադրության զոհ: Թաղված է Մեծքար վանքում: Հայ պատմիչները համակրանքով չեն արտահայտվել Մլեհի մասին, իսկ արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը կասկածանքով է խոսել նրա մասին: Միջնադարյան մտայնությամբ հայ քրիստոնյա իշխանի զինակցությունը մահմեդականի հետ խորթ երևույթ էր թե հայ, թե արաբ պատմիչների համար: Մլեհի քաղաքականությունը ուշագրավ է հայ ժողովրդի պատմության մեջ: Դիվանագիտական կապ հաստատելով արևելյան մահմեդական դրացիների հետ՝ նա կարողացել է ոչ միայն դիմադրել Բյուզանդիայի և խաչակիրների ենթադավերին, այլև գրավել Դաշտային Կիլիկիայի շատ քաղաքներ, որոնք կենսական նշանակություն ունեին հայկական պետականության ամրապնդման համար:

70. ՍԱՐԳԻՍ ՁԱՔԱՐՅԱՆ

Հայ իշխան, զորավար (12-րդ դար)

Սարգիս Զաքարյանը (Սարգիս Մեծ) (ծննդյան թվականն անհայտ - 1187 թ.) հայ քաղաքական ու ռազմական գործիչ է, Զաքարե Ա-ի որդին, Զաքարե Բ Մեծի և Իվանե Ա-ի հայրը: Սարգիս Զաքարյանը ամուսնացել է Մահկանաբերդի և Հաղպատի տեր Վահրամ Արծրունու դստեր՝ Սահակադուխտի հետ: 1161 թ-ին եղել է Անի քաղաքի կառավարիչ: Սանահինի վանքի 1181 թ-ի մի արձանագրությունում նա հիշատակվել է Հայ-վրացական բանակի հայկական զորախմբի ամիրսպասալար: 1185 թ-ին նշանակվել է Վրաց թագավորության զինված ուժերի ընդհանուր հրամանատար: Սարգիս Զաքարյանը թաղվել է Սանահինի վանքի Զաքարյանների տոհմական գերեզմանատանը:

71. ՀՈՒՍԱՄԱԴԴԻՆ ԼՈՒԼՈՒ ԱԼ ՀԱՋԻԲ

Եգիպտոսի ծովակալ (1183-1200 թթ-ին)

Հուսամադդին Լուլու Ալ Հաջիբը (ծննդյան թվականն անհայտ - 1200 թ.) Եգիպտոսի ռազմածովային ուժերի հայազգի գործիչ է: Եգիպտական նավատորմի կազմակերպիչն ու հրամանատարն է եղել Սալահադդին խալիֆի ժամանակ: Մեծ հեղինակություն է ձեռք բերել ֆրանկ ասպետների հարձակումից Մարգարեի գերեզմանը փրկելու համար: 1183 թ-ին իշխան Ռընո դը Շատիոնը Կարմիր ծովով արշավել է՝ նպատակ ունենալով Մուհամմեդի գերեզմանը գրավել և նրա մարմինը փոխադրել Եվրոպա: Հուսամադդին Լուլուի հրամանատարությամբ եգիպտական նավատորմը հետապնդել է նրան ու Մեդինայից մեկ օրվա հեռավորության վրա հանդիպել և ջարդել է: 1189 թ-ի վերջին Աքքայի առաջ ուժեղ բախում է տեղի ունեցել Սալահադդինի և Անգլիայի թագավոր Ռիչարդի զորքերի միջև: Խաչակիրները պաշարել են քաղաքը ծովից ու ցամաքից և խիստ դժվարին վիճակի դատապարտել եգիպտացիներին: Եգիպտոսի նավատորմը օգնության է հասել Հուսամադդին Լուլուի հրամանատարությամբ: Վերջինիս հաջողվել է ֆրանկներից մի նավ գրավել, դրանով մտնել Աքքա և իր ներկայությամբ քաջալերել պաշարվածներին: Հուսամադդին Լուլուն մի քանի անգամ ճեղքելով պաշարման շղթան՝ մտել է Աքքա՝ պարենավորելու և պահակազորը թարմացնելու համար, բայց ի վերջո խաչակիրները գրավել են քաղաքը: Պաշարումը տևել է մոտ երկու տարի և ավարտվել 1191 թ-ի հունիսի 17-ին: Արաբ պատմիչները մեծ գովեստով են գրել նրա մասին:

13-րդ դար

72. ՁԱՔԱՐԵ Բ ՁԱՔԱՐՅԱՆ

Հայ ինքնակալ տիրակալ, զորավար
(12-13-րդ դարեր)

Զաքարե Բ Զաքարյան

Զաքարե Բ Զաքարյանը (ծննդյան թվականն անհայտ – 1212 թ., թաղված է Սանահինի վանքի տոհմական դամբարանում) պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Հայ-վրացական բանակի ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի որդին: 1190 թ-ին՝ հորից հետո, նշանակվել է Հայ-վրացական բանակի ամիրսպասալար, 1203 թ-ին՝ նաև Վրաստանի պետության մանդատորթուխուցես: 1190-1210 թթ-ին անընդմեջ պատերազմներ է մղել սելջուկթուրքերի դեմ: 1196 թ-ին ազատագրել է անառիկ Անբերդ բերդաքաղաքը, 1199 թ-ին՝ Անին, 1201 թ-ին՝ Բջնին, 1203 թ-ին՝ Դվինը, 1206-1207 թթ-ին՝ Կարսը, Սուրմառին, Բագրևանդը, Նախիջևանը, 1208-1209 թթ-ին՝ Մանազկերտը, Արճեշը: Գրավել է Մարանդը, Թավրիզը, Ղազվինը, Բասենի մոտ ջախջախել է Իկոնիայի սուլթանի զորքերին, արշավել Խլաթ: Քսանամյա պատերազմներով, եղբոր Իվանե Ա-ի հետ ազատագրել է Բագրատունյաց Հայաստանից ավելի մեծ տարածք և դրա վրա ստեղծել բացարձակ ինքնուրույն, անկախ պետություն: Երկրի մայրաքաղաք է դարձրել Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին: Պետությունը բաժանել է վարչական տարածքների, հաստատել է կողմնակալություններ՝ Օրբելյանների, Պռոշյանների, Վաչուտյանների, Վահրամյանների, Խաչենի տերերի գլխավորությամբ: Որպես պետության գլուխ՝ տիրակալ, զինվորական ու ազնվական տիտղոսներ է շնորհել, հողային տիրույթներ պարգևել: Կրել է Բագրատունիների «շահնշահ» տիտղոսը, անվանվել «թագավոր Հայոց», «կեսար», «ինքնակալ»: *Վրաստանի պետության հետ հաստատել է հավասարազոր ռազմական ունիա-միություն՝ պահպանելով իրեն ենթակա տարածքի անկախ գործունեությունը*: Բացի ռազմական ոլորտից մյուս բոլոր հարցերում վարել է անկախ քաղաքականություն: *Դիվանագիտական կապ է հաստատել Կիլիկիայի Հայոց Լևոն Բ թագավորի հետ, բանակցել դավանաբանական հարցերով*: Կազմակերպել է Լոռու (1205 թ.) և Անիի (1207 թ.) եկեղեցական ժողովները: Հայաստանի անկախ պետականության գոյությունը հարատև դարձնելու նպատակով ապահովել է շինարարության և մշակույթի ծաղկումը. կառուցապատվել են քաղաքները, կառուցվել են բերդեր ու ամրոցներ, ճանապարհներ, կամուրջներ, ջրանցքներ: Այդ շրջանում են կառուցվել միջնադարի հայկական գրեթե բոլոր նշանավոր եկեղեցական համալիրները: Հովանավորել է գիտությունն ու մշակույթը: **Պատմագրությունը Զաքարե Բ Զաքարյանի ստեղծած անկախ պետականությանը սխալ գնահատական է տվել և անգամ դիտել Վրաստանի պետության մաս կամ կցորդ:**

Լևոն Բ Ռուբինյան

73. ԼԵՎՈՆ Բ ՌՈՒԲԻՆՅԱՆ

Կիլիկիայի Հայկական պետության իշխանապետ (1187-1198 թթ-ին)
Կիլիկիայի Հայկական պետության թագավոր (1198-1219 թթ-ին)

Լևոն Բ Ռուբինյանը (Լևոն Մեծագործ, Լևոն Մեծահաղթ, Լևոն Բարեպաշտ) (ծննդյան թվականն անհայտ – 02.05.1219 թ., կտակի համաձայն մարմինը թաղվել է Սսում, սիրտը՝ Ակներում) Կիլիկիայի Հայկական պետության պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Կիլիկիայի իշխանապետ Ստեփանեի կրտսեր որդին է: Իշխանական գահի վրա հաջորդել է եղբորը՝ Ռուբեն Գ-ին: Մինչև գահ բարձրանալը Լևոն Բ-ն վարել է Կիլիկյան բանակի հրամանատարությունը: Երբ Անտիոքի Բոհեմունդ դուքսը 1185 թ-ին խաղաղության դաշն կնքելու պատրվակով Ռուբեն Գ-ին հրավիրել է Անտիոք ու ձերբակալել և զորք մտցրել Դաշտային Կիլիկիա, Լևոն Բ-ն հակահարված է տվել թշնամուն և դուրս շպրտել երկրից: Իշխանապետ եղբորն ազատելու համար, այնուամենայնիվ, Լևոն Բ-ն գնացել է զիջումների և Բոհեմունդ դուքսին հանձնելով Կաստոն բերդից սկսած մինչև Ջահան գետն ընկած հողերը, փրկագնել է եղբորը: Վերադառնալով հայրենիք՝ օծյալ իշխանապետ Ռուբեն Գ-ն Լևոն Բ-ին է հանձնել գահը և մտել վանք: Լևոն Բ-ն հզորացրել է զինված ուժերը և ծանր, դժվարին ու հետևողական պայքար ծավալել հզոր, միասնական ու կենտրոնաձիգ իշխանություն ստեղծելու համար: 1187 թ-ին Հայկական բանակը Ռավին դաշտում (Սսի մոտ) ջախջախել է Կիլիկիա ներխուժած Իկոնիայի թուրքմեն հրոսակներին և ազատագրել հայաբնակ շրջանները՝ Պռականա բերդով: Հաղթել և Կիլիկիայից կախման մեջ է դրել Հալեպի և Դամասկոսի սուլթանին: *Դիվանագիտական քայլերով հոգուտ Կիլիկիայի է օգտագործել խաչակիրների հերթական արշավանքը. օգնության դիմաց Կիլիկիայի ճանաչումը որպես թագավորություն: Գերմանիայի Հենրիկոս Զ թագավորը և Բյուզանդիայի Ալեքսոս Գ կայսրը խոստման համաձայն թագ են ուղարկել Լևոն Բ-ին*: Անտիոքի դքսության և Կիլիկիայի Հայկական պետության միջև սահմանային վեճերը կարգավորելու և բարեկամություն հաստատելու պատրվակով Անտիոքի դուքս Բոհեմունդ Գ Կակազը 1193 թ-ին Հայոց Լևոն Ա իշխանապետին հրավիրել է բանակցության՝ նրան ձերբակալելու և հարմար պայմանագիր պարտադրելու մտադրությամբ: Սակայն Լևոն Բ-ն հանդիպման վայրը փոխել է Կաստոն բերդ, ինքն է ձերբակալել Բոհեմունդ Գ-ին և տարել Սիս: Այստեղ **նրանց միջև 1194 թ-ին հաշտության պայմանագիր է ստորագրվել Երուսաղեմի թագավորի միջնորդությամբ**: Պայմանագրով դուքսն ընդունել է Հայոց իշխանի գերագահությունը, վերադարձրել դեռևս 1185 թ-ին Ջահան գետից մինչև Կաստոն բերդը զավթած տարածքները, ինչպես նաև Ասորացոց դրունք ռազմական կարևոր հանգույցը: Պայմանա-

գիրն ամրապնդվել է դքսի գահաժառանգ որդու Ռայմոնդի և Լևոն Բ-ի եղբոր դուստր Ալիծի ամուսնությամբ: Բոհեմունդ Գ-ն ազատ է արձակվել Ռայմոնդ որդուն թողնելով Սսում պատանդ: 1198 թ-ի հունվարի 6-ին, Մեծ Հայքի թագավորության կորստից 153 տարի անց, Տարսոն քաղաքի Սուրբ Սոֆիա մայր տաճարում Լևոն Բ-ն օծվել է «Թագավոր ամենայն հայոց, և նահանգին Կիլիկէացոց. և Իսավոհոյ»: Լևոն Բ-ի կողմից Հայոց թագավորությունը վերականգնելու շրջանում Մայր Հայաստանում նույնպիսի խնդիր էին լուծել նաև Զաքարե և Իվանե Զաքարյան եղբայրները, որոնք իրենց նվաճած տարածքի վրա ստեղծել էին իշխանապետություն: Այս հողի վրա Լևոն Բ-ի և Զաքարե Բ-ի միջև կապ է հաստատվել և եղել են բազմաբնույթ քննարկումներ: Հնազանդեցրել է կիսանկախ ու կենտրոնախույս ավատատեր իշխաններին, մասնավորապես Լամբրոնի տեր Հեթումյաններին: Խնամիական կապեր է հաստատել մերձավոր քրիստոնեական Նիկիայի, Կիպրոսի, Երուսաղեմի արքայատների հետ: Լևոն Բ-ի օրոք Կիլիկիայի սահմանները տարածվել են Սելևկիայից մինչև Անտիոք, Միջերկրական ծովից մինչև Տավրոսի և Անտիտավրոսի լեռները: Նրան ենթարկվել են նաև Պամփիլիան, Իսավրիան, Լիկայոնիան, Կադառնիան, Գերմանիկեն: Լևոն Բ-ն վերաշինել է հին բերդերը, հիմնել նոր ամրություններ, ստեղծել մշտական հզոր բանակ, կանոնակարգել արքունի գործակալությունները, բարեկարգել տնտեսական կյանքը, *առևտրական արտոնյալ պայմանագրեր կնքել Վենետիկի, Պիզայի, Ջենովայի և այլ քաղաքների ու երկրների հետ, կազմակերպել է նավատորմ*: Բացել է վարժարաններ, դպրատներ, արտոնյալ պայմաններ է ստեղծել գիտնականների ու արվեստագետների համար: Կիլիկիայում ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր, թարգմանվել են գիտական և գրական արժեքավոր երկեր: Լևոն Բ-ն արու զավակ չի ունեցել և չկարողանալով լուծել թագաժառանգի հարցը՝ 1218 թ-ին գահաժառանգ է օծել իր երեքամյա դստերը՝ Զաբելին: Լևոն Բ թագավորը ոչ միայն հայկական, այլ իր ժամանակի միջազգային մասշտաբի պետական գործիչ է: Նա իր ժամանակի երկու մեծերի Եգիպտոսի Սալահադդինի և Գերմանիայի Ֆրեդերիկոսի հետ եռամիասնության մաս է կազմում:

74. ԻՎԱՆԵ Ա ԶԱՔԱՐՅԱՆ

Հայ պետական, ռազմական գործիչ (12-13-րդ դարեր)

Իվանե Ա Զաքարյան

Իվանե Ա Զաքարյանը (ծննդյան թվականն անհայտ – 1227 թ., թաղված է Ախթալայի վանքում) հայ պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Հայ-վրացական բանակի ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի կրտսեր որդին: 1191 թ-ին նշանակ-

վել է Վրաստանի պետության մսախուրթուխուցես, 1212 թ-ին՝ ավագ եղբոր՝ Զաքարե Բ-ի մահից հետո՝ Հայ-վրացական բանակի ամիրսպասալար, 1213 թ-ին՝ նաև Վրաստանի աթաբեկ: 1190-1210 թթ-ին զինակցել է Զաքարե Բ-ին և մասնակցել Հայաստանի ազատագրական պատերազմներին: Քսանամյա պատերազմներով, եղբոր՝ Զաքարե Բ-ի հետ ազատագրել է Բագրատունյաց Հայաստանից ավելի մեծ տարածք և դրա վրա ստեղծել բացարձակ ինքնուրույն, անկախ պետություն: Ազատագրված տարածքներից ստացել է Աղստևը, Ջորագետը, Սևանա լճի ավազանը, Փառիսոսը, Բջնին, Դվինը: Կայեն, Բջնի ամրոցներից հետո գահանիստ է դարձրել Դվին քաղաքը, որը դարձել է Զաքարյան պետության արևելյան վարչաքաղաքական կենտրոնը: 1209 թ-ին Խլաթի պաշարման ժամանակ անզգուշորեն գերի է ընկել և ազատվել փրկագնով՝ դստերը՝ Թամթային Խլաթի ամիրայի որդուն կնության տալու պայմանով: (Թամթան 1245 թ-ին դարձել է Խլաթի տիրակալ): Զաքարե Բ-ի մահից հետո փաստորեն դարձել է Հայաստանի միանձնյա տիրակալ և վրացական արքունիքի ամենաազդեցիկ դեմքը: *Դիվանագիտական ակտիվ քաղաքականություն է իրականացրել Հայաստանի մոտիկ ու հեռավոր հարևանների հետ՝ ապահովելով Հայաստանի անկախությունը:* 1219 թ-ին ազատագրել է Սյունիքի Որոտան բերդը: 1225 թ-ին Հայ-վրացական միացյալ բանակով Գառնի գյուղաքաղաքի մոտ ճակատամարտ է տվել Խորեզմի շահ Ջալալ ադ-Դինի զորքերի դեմ և պարտվել: Հովանավորել է գիտության և մշակույթի գործիչներին, կառուցել է աշխարհիկ ու հոգևոր շինություններ:

75. ՇԱՄՍԱԴԴԻՆ ԼՈՒԼՈՒ

Հայազգի արաբական զորավար (1251 թ.)

Շամսադդին Լուլուն (ծննդյան թվականն անհայտ - 1251թ.) հայ զորավար է: Եղել է Դամասկոսի բանակի հրամանատար: Եգիպտոսի Այուբյան դինաստիայի վերջին սուլթանի մահից հետո, նրա հոմանուհին՝ Շաջարադ ադ-Դորը, ստանձնել է իշխանությունը մինչև սուլթանի դեռատի որդու՝ Ղայադադդին Թուրան շահի ժամանումը: Բայց նա, փաստորեն, չի կառավարել: Մամլուք հրամանատարները դավադրություն են կազմակերպել ու սպանել նրան: Շաջարադ ադ-Դորը իրեն հռչակել է Եգիպտոսի թագուհի և ամուսնացել Այբեկ մամլուք Էմիրի հետ: Այդ կնոջ միջոցով Այուբյան դինաստիայի իշխանությունը փոխանցվել է մամլուքներին, և առաջին մամլուք սուլթանն ստացել է «ալ-Մալիք ալ-Մոյիզ» տիտղոսը: Եգիպտոսում տեղի ունեցած գահի փոփոխության կապակցությամբ Հալեպի Այուբյան ալ-Մալիք ան-Նասր սուլթանը օգնության է կանչել Դամասկոսում, Հեմսում և Խլաթում իշխող Այուբյան ինքնակալներին: Այդ բոլոր ուժերի հրամանատար է նշանակվել Շամսադդին Լուլուն: 1250 թ-ին դեկտեմբերի 11-ին նրա զորքերը շարժվել են դեպի Եգիպտոս: 1251թ-ի փետրվարի 3-ին եգիպտական բանակը (Այբեկի հրամանատարությամբ) հանդիպել է ասորական բանակին ալ-Աբբասալի մոտ: Եգիպտական զորքերն սկզբում փախուստի են դիմել, բայց ասորական գնդերի մի մասը վերջին պահին թշնամու կողմն է անցել և կռվի ելքը փոխվել է: Լուլուն գերվել է և, ինչպես հաղորդում է Աբու-ալ-Ֆիդա պատմիչը, հենց տեղում գլխատվել Այբեկի ներկայությամբ:

76. ՇԱՀՆՇԱՀ Ա ԶԱՔԱՐՅԱՆ

Հայոց և վրաց ամիրսպասալար (13-րդ դար)

Շահնշահ Ա Զաքարյանը (1207 թ.-1261 թ.) ամիրսպասալար Զաքարե Բ Զաքարյանի որդին է: Նա 5 տարեկան էր, երբ մահացել է հայրը, մեծացել է հորեղբոր Իվանեի խնամքի տակ: 1227 թ-ին, Իվանե Ա-ի մահից հետո, ստանձնել է Զաքարյան տան ավագությունը և ժառանգել է հայրական իշխանապետության գահը: Նրա օրոք են մոնղոլները գրավել Անդրկովկասը: Մոնղոլներին հպատակություն հայտնելով նրանց հետ համաձայնության է եկել պահպանել իր իշխանապետությունը՝ փոխադարձաբար իր զինական ուժով մասնակցել մոնղոլական արշավանքներին Մերձավոր Արևելքում: Պայմանավորվածությունը հայկական ավագանու կողմից կատարվել է: Աչքի է ընկել հատկապես Դամասկոսի զորապետ Ղարախանի 60000-անոց զորքի դեմ կռվում, որտեղ փայլուն հաղթանակ է տարել: Ամենայն հավանականությամբ 1254 և 1255 թթ-ին Նիգ-Ապարանի Վարդենիս գյուղում հանդիպել ու բանակցել է մոնղոլների հետ պայմանագիր կնքելու նպատակով Կարակորում մեկնած և վերադարձած Կիլիկիայի թագավոր Հեթում Ա-ի հետ: Թաղվել է Քոբայրում (այժմ՝ ՀՀ Լոռու մարզի տարածք):

77. ԿՈՍՏԱՆԴԻՆ

Կիլիկյան Հայաստանի սպարապետ (1210 թ-ից)

Կոստանդինը (ծննդյան թվականն անհայտ - 1263 թ.) Կիլիկյան Հայաստանի երևելի գործիչ է, գունդստաբլ, պայլ, ավագ պարոն: 1216 թ-ին Շողականի ճակատամարտում գերի է ընկել սելջուկ-թուրքերին: Լևոն Բ Մեծագործ արքան 1219 թ-ին փրկագնել է նրան և կարգել իր դուստր Զաբելի խնամակալ: Լևոն Բ Մեծագործի մահից հետո Կոստանդինը հայկական գահը պահպանել է Վահրամ Մարաջախտի և Ռուբեն Ռայմոնդի ոտնձգություններից: 1221 թ-ին դարձել է երկրի ինքնիշխան կառավարիչը: 1225 թ-ին արքայադուստր Զաբելին ամուսնացրել է իր որդի Հեթումի հետ և վերջինիս հռչակել գահաժառանգ: Նրա մյուս որդիներից Սմբատը դարձել է գունդստաբլ, Լևոնը՝ մարաջախտ և պարոնաց պարոն, Օշինը՝ պայլ և Կոռիկոսի բերդի տեր: Կոստանդինը մինչև մահը եղել է իր որդու՝ Հեթում Ա թագավորի գահակիցն ու խորհրդատուն:

Հեթում Ա Հեթումյան

78. ՀԵԹՈՒՄ Ա ՀԵԹՈՒՄՅԱՆ

Կիլիկիայի Հայկական պետության թագավոր (1226-1269 թթ-ին)

Հեթում Ա-ն (ծն.1203 թ. - 1270 թ.) Կիլիկիայի Հայկական պետության պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, Հեթումյանների արքայատան հիմնադիրը: 1225 թ-ին Ֆիլիպ թագավորին գահընկեց անելուց հետո Կոստանդին պայլը՝ «թագավորահայրը» իր 13 տարեկան որդի Հեթումին ամուսնացրել է Զաբել թագուհու հետ և հռչակել թագավոր ու մինչև Հեթում Ա-ի չափահաս դառնալը կառավարել է երկիրը: Հեթում Ա-ի գահակալության տարիներին Կիլիկիայի Հայկական պետությունը դարձել է բարգավաճ երկիր, հաղթահարվել են ներքին երկպառակտությունները, առավել կենտրոնացվել է թագավորի իշխանությունը: *Հեթում Ա-ն վարել է հավասարակշիռ ու խաղաղ արտաքին քաղաքականություն*, իսկ դրա արդյունքում ծաղկում է ապրել երկրի մշակույթը: **1243 թ-ին խաղաղության ու փոխօգնության պայմանագիր է ստորագրել մոնղոլ զորավար Բաչու Նոյինի հետ: 1254 թ-ին բանակցել է Մանգու խանի հետ՝ հայ-մոնղոլական դաշնության պայմանագրի շուրջ և կնքել հայ-մոնղոլական բարեկամության պայմանագիր:** 1254-1255 թթ-ին Մայր Հայաստանի վրայով դիվանագիտական այցով մեկնել է մոնղոլների մայրաքաղաք Կարակորում և վերադարձել Կիլիկիա: 1256-1259 թթ-ին մոնղոլների հետ զինակցությամբ դիմակայել է հարևան մահմեդական պետությունների հարձակումներին, ազատագրել մի շարք քաղաքներ ու բերդեր: 1269 թ-ին գահը հանձնել է իր Լևոն որդուն, դարձել կրոնավոր ու մտել վանք, որտեղ էլ մեկ տարի անց մահացել է: 1255 թ-ին մոնղոլների Մանգու խանի հետ կնքած պայմանագրով մոնղոլական կողմը երաշխավորել է Կիլիկյան Հայաստանի պետության անկախությունն ու սահմանների անխախտությունը, պարտավորվել Կիլիկյան Հայաստանին օգնել Իկոնյայի և Եգիպտոսի սուլթանությունների դեմ պայքարում, Կիլիկիային միացնել օտարների զավթած մերձակա հայկական հողերը, չափավորել մայր Հայաստանից գանձվող հարկերը, հայերին ազատ առևտրի իրավունք արտոնել Մոնղոլական տերության սահմաններում: Ըստ պայմանագրի Կիլիկյան Հայաստանը պարտավորվել է զինակցել մոնղոլներին Հյուսիսային Միջագետք, Ասորիք, Պաղեստին արշավելու ժամանակ: Պայմանագիրը սկզբնական շրջանում դրական նշանակություն է ունեցել մահմեդական իշխանությունների դեմ Կիլիկյան Հայաստանի պայքարում, ամրապնդել է Կիլիկիայի Հայկական պետության միջազգային դիրքը, նպաստել երկրի տնտեսական վերելքին: Սակայն 13-րդ դարի վերջին, հատկապես մոնղոլների մահմեդականություն ընդունելուց հետո, պայմանագիրը կորցրել է իր նախկին նշանակությունը, իսկ 1307 թ-ին,

երբ մոնղոլ Բիլարդունը դավադրաբար սպանել է Կիլիկյան Հայաստանի Լևոն Դ թագավորին ու նրա 40 իշխաններին, պայմանագիրը փաստորեն դադարել է գոյություն ունենալ:

79. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԵԹՈՒՄՅԱՆ

Կիլիկիայի Հայկական պետության ռազմական, դիվանագիտական գործիչ (13-րդ դար)

Սմբատ Սպարապետը (Սմբատ Գունդստաբլ) (ծն. 1208 թ. - 1276 թ.) Կիլիկիայի Հայկական պետության ռազմական, դիվանագիտական գործիչ է, իրավագետ, պատմագիր: Սերում է Հեթումյանների տոհմից, Կոստանդին պայլի և Տամա Վիծիի (Ներսես Լամբրոնացու քույրը) որդին է, Հեթում Ա թագավորի ավագ եղբայրը: Հայոց սպարապետությունը վարել է 1226 թ-ից և 50 տարի հաղթական մարտեր մղել թշնամի ուժերի դեմ (1246 թ-ին և 1259 թ-ին Իկոնյայի սուլթանության, 1276 թ-ին՝ Եգիպտոսի սուլթանության դեմ): **1243 թ-ին, երբ մոնղոլները մոտեցել են Կիլիկիայի Հայկական պետության սահմաններին Կոստանդին պայլի հետ Կեսարիայում բանակցել են մոնղոլ զորավար Բաչու նոյինի հետ և կնքել փոխշահավետ պայմանագիր**: *1248 թ-ին մեկնել է Կարակորում, **կնքել պայմանագիր**, բանակցել մոնղոլ մեծ խանի հետ Հեթում Ա թագավորի այցելության և հայ-մոնղոլական դաշնագրի վավերացման պայմանների վերաբերյալ*: 1250 թ-ին վերադարձել է Կիլիկիա: **1254-1255 թթ-ին Հեթում Ա թագավորին ուղեկցել է Կարակորում, որտեղ Մանգու խանի հետ բանակցել և կնքել են նոր պայմանագիր**: Զոհվել է 1276 թ-ին Սարվանդիքարի ճակատամարտում: 1265 թ-ին կազմել է մի դատաստանագիրք, որը հայտնի է Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք» վերնագրով: Նա գրել է նաև «Տարեգիրք» վերնագրով պատմական երկը (բովանդակում է 951-1272 թթ-ին Մեծ Հայքում, Կիլիկիայի Հայկական պետությունում և այլուր կատարված պատմական դեպքերը): 1269 թ-ին Սմբատ Սպարապետի գրած «Ի ճաշոց գրի» պոեմը նվիրված է 1266 թ-ին Եգիպտոսի սուլթանական բանակի դեմ Մառի բնակավայրի մոտ Հայոց զորաբանակի մղած ճակատամարտին:

80. ԼԵՎՈՆ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ
(որդի ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍՏԱԲԼԻ)

Կիլիկյան Հայաստանի սպարապետ (1276-1286 թթ-ին)

Լևոն Գունդստաբլը (ծննդյան թվականն անհայտ - 1286 թ.) Հեթում Ա թագավորի եղբայր, Կիլիկյան թագավորության մեծ սպարապետ Սմբատի որդին է: Եվ հոր կենդանության օրոք, և ավելի ուշ ղեկավարել է Կիլիկյան բանակը տարբեր ճակատամարտերում:

81. ԽՈՒԹԼՈՒԲՈՒՂԱ ԱՐԾՐՈՒՆԻ

Հայ զորավար (13-րդ դար)

Խութլուբուղա Արծրունին (ծննդյան թվականն անհայտ - 1293 թ.) Սադուն Ա Արծրունու ավագ որդին է: Նա 1281 թ-ին՝ հոր մահից հետո, ստանձնել է Մահկանաբերդի Արծրունիների տան ավագությունը և ամիրսպասալարության պաշտոնը Վրաց արքունիքում:

14 - ՐԴ ԴԱՐ

82. ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ
(որդի ԼԵՎՈՆ ԳՈՒՆԴՍՏԱԲԼԻ)

Կիլիկյան Հայաստանի սպարապետ (14-րդ դար)

Սմբատ Գունդստաբլը (կենսագրական տեղեկություններ չկան) Սմբատ Սպարապետի թոռն է և սպարապետի պաշտոնում հաջորդել է հորը: Մասնակցել է բազմաթիվ մարտերի, գործել է 1320-ական թվականներին:

83. ՇԱՀՆՇԱՀ Բ ԶԱՔԱՐՅԱՆ
(որդի ԻՎԱՆԵ Բ-Ի)

Հայ իշխան, զորավար (13-14-րդ դարեր)

Շահնշահ Բ Զաքարյանը (ծննդյան թվականն անհայտ - 1320 թ.) եղել է Վրաստանի ամիրսպասալար: Գործել է 1290-1320-ական թթ-ին: 1300 թ-ին մոնղոլ Ղազան խանի հետ արշավել է Եգիպտոս:

84. ԿՈՍՏԱՆԴԻՆ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ

Կիլիկյան Հայաստանի գունդստաբլ (1320 թ.-ից)

Կոստանդինը (ծննդյան թվականն անհայտ - 1329 թ.) Կիլիկյան Հայաստանի Լևոն Ե թագավորի խնամակալ և Կոռիկոս բերդի տեր Օշին պայլի եղբայրն է, Հեթում պատմիչի որդին: Դիմակայել է Եգիպտոսի սուլթանության հարձակումներին, պահպանել երկրի անկախությունը: Կոստանդինը դարձել է արքունական խարդավանքի զոհ:

85. ՇԱՀՆՇԱՀ Գ ԶԱՔԱՐՅԱՆ
(որդի ԶԱՉԱ ԱԹԱԲԵԿԻ)

Հայ իշխան, զորավար,
Վրաստանի աթաբեկ և սպասալար (14-րդ դար)

Շահնշահ Գ Զաքարյանը (ծննդյան թվականն անհայտ - 1358 թ.) Զաքարյան իշխանատոհմի վերջին ներկայացուցիչն է: Չոբանյան (թուրքական) Մելիք-Աշրաֆի զորքերը 1350 թ-ին գրավել են Անի քաղաքը: Շահնշահ Գ-ն փրկվել է գերությունից: Նույն տարում թշնամին գրավել է նաև Բջնիի անառիկ ամրոցը: 1357 թ-ին՝ Մելիք-Աշրաֆի սպանությունից հետո, Շահնշահ Գ-ին հաջողվել է կարճ ժամանակով վերագրավել Բջնին ու շինարարական որոշ աշխատանքներ կատարել այնտեղ, իսկ Անի քաղաքն այլևս չի ազատագրվել թշնամու ձեռքից:

86. ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ ԹԱԳԱՎՈՐ

Կիլիկիայի Հայկական պետության թագավոր
(1345-1363 թթ-ին)

Կոստանդին Դ-ն (ծննդյան թվականն անհայտ - 1363 թ.) Կիլիկիայի Հայկական պետության պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, մեծ մարաջախտ և Նղոր բերդի տեր Բաղդինի որդին: Մայրական գծով սերում է Հեթումյաններից (մայրը՝ Մարիուենն, Սմբատ Գունդստաբլի թոռն էր): Հայրենասեր իշխանների գլուխ անցած 1346 թ-ին դիմակայել է մամլուքների ու թուրքմենների հարձակմանը, ազատագրել Կիլիկիայի Հայկական պետության համար ռազմական կարևորություն ունեցող Կապան բերդը: 1347 թ-ին ջախջախել է Կիլիկիա ներխուժած Եգիպտոսի սուլթանության առաջապահ զորամասերը, **նույն աշնանը, զինակից Կիպրոսի նավատորմիղի օգնությամբ, ազատագրել Այաս քաղաքն ու նավահանգիստը**: Այս հաջողություններին զուգահեռ կատարել է դիվանագիտական քայլեր. *Եգիպտոսին առաջարկել է խաղաղության դաշն, սակայն վերջինս մերժել է* և, շրջակա մուսուլմանական պետությունների հետ համագործակցած, անցել է հարձակման: Եգիպտացիները գրավել են Այասը, Իկոնիայի սուլթանը՝ Պապեռոնը, Հալեպի ամիրան՝ երկրի արևելյան շրջանները: Օգտվելով Եգիպտոսում ծագած գահակալական կռիվներից՝ **Կոստանդին Դ-ն դաշնակցել է Հռոդոսի Սուրբ Հովհաննես օրդենի հետ և նրա օգնությամբ ջախջախել Հալեպի ամիրայի զորամասը և հասել մինչև Ալեքսանդրետի ծոցը**: *Հիասթափված Հռոմի պապի և Արևմտյան պետությունների օգնության դատարկ խոստումներից Ամենայն Հայոց Մեսրոպ Ա Արտազեցի կաթողիկոսի հետ 1361 թ-ին Սիս մայրաքաղաքում գումարել է խորհրդաժողով և չեղյալ հայտարարել հայ և կաթոլիկ եկեղեցիների միության վերաբերյալ նախկին ժողովների որոշումները, դատապարտել նրանց եկդիմի վարքագիծը*: Միջնադարի հայ մատենագիրները նրա մասին միայն դրական բնորոշումներ են թողել և անվանել են «**այր խռհական**» և «**մեծ արքայ**»: Նրա կողմից հաստվել է ոսկեդրամ:

87. ԼԻՊԱՐԻՏ

Կիլիկյան Հայաստանի սպարապետ (մոտ 1345 թ.)

Լիպարիտը (Ասպետ Լիպարիտյան) (ծննդյան թվականն անհայտ - 1371 թ.) Կիլիկյան Հայաստանի փառաբանված զորավար է: Հավանաբար սերում է Օրբելյան իշխանական տոհմից: **1345 թ-ին նշանակվել է Կիլիկիայի հայկական պետության սպարապետ:** 1347 թ-ին ջարդել է Կիլիկիա արշավող եգիպտական բանակի առաջապահ գնդերը: Զոհվել է Եգիպտոսի սուլթանության 60000-անոց զորքի դեմ անհավասար կռվում, Սիս մայրաքաղաքի դարպասների մոտ՝ կամրջի վրա:

88. ՀԵԹՈՒՄ ՀԵԹՈՒՄՅԱՆ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ

Կիլիկյան Հայաստանի սպարապետ (14-րդ դար)

Հեթում Հեթումյան Գունդստաբլը (կենսագրական տեղեկություններ չկան - սպանվել է 1376 թ.) 1371 **թ-ին նշանակվել է Կիլիկյան Հայաստանի սպարապետ:** Հայոց վերջին սպարապետն է: Լևոն Զ թագավորի գերեվարությունից հետո տիրել է Կանչի բերդին և կռվել եգիպտացոց դեմ: Գերել է սուլթանի որդուն, սակայն հայ Գրիգոր մատնիչի ձեռքով սպանվել է:

15-ՐԴ ԴԱՐ

89. ՌՈՒՍՏԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
(որդի ԲԵՇՔԵՆԻ)

Հայ զորապետ, էմիր (15-րդ դար)

Ռուստամ Օրբելյանը (կենսագրական տեղեկություններ չկան) Սյունիքի Օրբելյան տոհմի վերջին հզոր գործիչն է: Ծառայել է կարա-կոյունլու Իսկանդարի պալատում: **Վերջինս 1431 թ-ին սպանել է եղբորը՝ Աբու-Սայդին և տիրացել Թավրիզին: Նա իր զորապետ Ռուստամ Օրբելյանին շնորհել է «էմիրի» տիտղոս, դարձրել արքունի խորհրդական** և ժառանգական իրավունքով ընդարձակ հողային տիրույթներ պարգևել Սյունիքում (իր հայրենի տիրույթը), Այրարատի Արագածոտն, Նիգ, Կոտայք և այլ գավառներում: 1431թ-ին Ռուստամ Օրբելյանը չնչին գումարով կաթողիկոս Գրիգոր Մակվեցուն է վաճառել 8 գյուղ: Պատմաբան Գ. Գրիգորյանը գրել է, որ այդ քայլով Ռուստամը հետապնդել է Էջմիածինը եկամուտով ապահովելու նպատակ: Կարծիք կա, որ Ռուստամը ցանկացել է Այրարատում և Սյունիքում հայկական իշխանություն ստեղծել: Նա Իսկանդարի մոտ ծառայել է 1429/30 թ-ից մինչև 1437 թ-ը, մինչև վերջինիս պարտությունն ու մահը: 1437 թ-ին Շահռուխը գրավել է Թավրիզը: Համոզվելով, որ Իսկանդարի օրերը հաշված են, Ռուստամ Օրբելյանի հայրը՝ Բեշքեն Օրբելյանը, Սյունիքի 6000 ընտանիքների գլուխ անցած՝ գաղթել և իր փեսա,

Վրաստանի թագավոր Կոստանդինի համաձայնությամբ հաստատվել է Լոռի բերդում: Այդ ծանր օրերին անգամ Ռուստամ զորավարը չի լքել Իսկանդարին: Նա Իսկանդարից հեռացել է միայն այն ժամանակ, երբ 1437 թ-ին Սաֆյանի մոտ իր զինվորներից լքվել, պարտվել ու մազապուրծ ապավինել է Երնջակ բերդին, որտեղ հարազատ որդու՝ Շահկուբադի ձեռքով սպանվել է: Շահռուխի արշավանքը Հայաստան ուղղված էր Իսկանդարի ականավոր զորապետ ու պալատական գործիչ էմիր Ռուստամի դեմ: Ռուստամ Օրբելյանը հետապնդումից խուսափելով՝ փակվել է Լոռի բերդում: Նա Սյունիք է վերադարձել 1450 թ-ին և Տաթևի վանքին է վաճառել եկեղեցու շրջակայքի գյուղերը:

16-ՐԴ ԴԱՐ

90. ՅՈՆ ՔԱՋ

Մոլդովայի հայազգի հոսպոդար (1572-1574 թթ-ին)

Յոն Քաջը (Յոան Հայ) (ծն. մոտ 1521 թ., Սուչավա - 14.06.1574 թ., Ռոշկան) սերում է Շտեֆան Մեծի և լեհահայ Սերեբկովիչի գերդաստանից: Դաժանորեն ճնշել է բոյարների խռովությունները, մայրաքաղաքը Սուչավայից փոխադրել Յասսի (Յաշ): Ժողովուրդը նրան տվել է «Մոլդովայի հայր» պատվանունը: Հակառակորդները նրան անվանել են նաև «Անգութ», «Ահարկու»: Փայլուն հաղթանակներ է տարել մի քանի ճակատամարտերում: 1574 թ-ին Բենդերի և Աքերմանի մոտ պարտության է մատնել թուրքական զորքին: Զոհ է դարձել օսմանյան զորաբանակի հրամանատարի խարդավանքին:

91. ՅՈՆ ՊՈՏԿՈԱՎԸ

Մոլդովայի հայազգի հոսպոդար (1577-1578 թթ-ին)

Յոն Պոտկոավը (իսկական անունը՝ Կարապետ Սերպեգա) սերում է Սերպեգանների տոհմից: 1574 թ-ին անցել է Զապորոժյան Սեչ, կռվել Ղրիմի թաթարների դեմ: 1577 **թ-ին դարձել է հետման**: Յասսիի մոտ ջախջախել է Մոլդովայի իշխան Պետրա Կաղի թուրքական զորքին, տիրել գահին: Օսմանյան սուլթան Մուրադ Գ-ի ճնշմամբ Լեհաստանի թագավոր Ստեֆան Բատորին ձերբակալել և մահապատժի է ենթարկել Յոնին:

16-17-ՐԴ ԴԱՐԵՐ

92. ՇԻՄՈՆ ՇԻՄՈՆՈՎԻՉ

Լեհաստանի ռազմական, դիվանագիտական գործիչ
Լեհաստանի բանակի գեներալ (1593 թ.)

Շիմոն Շիմոնովիչը (Սիմոն Սիմոնիդես, Բենդոնսկի) (ծն. 24.10.1558 թ., Լվով – 05.05.1629 թ.) լեհահայ ռազմական, դիվանագիտական գործիչ է, բանաստեղծ, գրող, դավանանքը՝ կաթոլիկ: Սկզբնական կրթություն ստացել է տանը՝ փիլիսոփայության և ազատ արվեստների մագիստրոս հորից՝ Սիմոն Լվովցուց կամ Շիմոն Բերեժանսկուց: Ավարտել է Կրակովի համալսարանը, կատարելագործվել Իտալիայում և Ֆրանսիայում: 1583 թ-ին վերադարձել է Լվով: Կատարելապես տիրապետում էր հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն լեզուներին, գիտեր անտիկ գրականություն, իրավագիտություն, փիլիսոփայություն, մաթեմատիկա, բժշկություն: Որոշ ժամանակ եղել է ուսուցիչ և զբաղվել թարգմանչությամբ, գրել է բանաստեղծություններ, պոեմներ, ներբողներ, հիմներ: 1590 թ-ի ապրիլի 18-ին Լեհաստանի թագավոր Սիգիզմունդ Գ-ն նրան շնորհել է ազնվական Բենդոնսկի տիտղոս, իսկ դեկտեմբերի 23-ին հռչակել արքունի բանաստեղծ: 1593 թ-ին Հռոմի Կղեմենտիոս Ը պապը իր պատվիրակի միջոցով նրան է ուղարկել պոետական դափնեպսակ և նվերներ: 1593-1595 թթ-ին եղել է Ռեչ Պոսպոլիտայի զորքերի գլխավոր հրամանատարը: Մարտական գործողությունների ժամանակ ծանոթացել ու մտերմացել է թագավորական մեծ կանցլեր, իշխան Զամոյսկու հետ: *1598 թ-ին Զամոյսկու կողմից հրավիրվել է Զամոշչ՝ նշանակվել քարտուղար և թարգմանիչ:* Ղեկավարել է «Ակադեմիա Զամոյսկա» բարձրագույն դպրոցի կառուցման աշխատանքները, հիմնել ամբիոններ, տպարան, գրադարան, հավաքել բարձրակարգ պրոֆեսորներ, ակադեմիային նվիրել 1428 անուն գիրք: Տարիների ընթացքում դարձել է իշխան Զամոյսկու ամենահավատարիմ ու վստահելի բարեկամը: 1605 թ-ին մահացել է Զամոյսկին և նրա կտակի համաձայն որդու դաստիարակը դարձել է Շիմոն Շիմոնովիչը: 1614-1629 թթ-ին բնակվել է Պուր գետի մերձակա Չերնեցին կալվածքում: Գրել է «Զոզեֆ Գաստուս» (1587 թ.) ողբերգությունը, «Նախանձի աստվածը» (Կրակով, 1588 թ.), «Հովվերգություն» (1614 թ.) բանաստեղծությունների գրքերը, թարգմանություններ է կատարել Օվիդիուսից, Վերգիլիուսից: Նրան համեմատել են անտիկ շրջանի հույն ողբերգակների հետ:

93. ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

Ռումինիայի պետական, դիվանագիտական, ռազմական գործիչ
Ռումինական բանակի գեներալ (1600/1601 թ.)
Թուրքիայում Ավստրիայի դեսպան (1607 թ.)

Պետրոս (Պետրե) Գրիգորովիչը (Արմեն Պետեր, Գրիգորի որդի Պետրոս) (ծնվել է Լվովում, ծննդյան թվականն անհայտ – 1616 թ.) ռումինահայ ռազմական, պետական, դիվանագիտական, մշակութային գործիչ է: Խոսել է հայերեն, լատիներեն, գերմաներեն, իտալերեն, ռումիներեն: Եղել է Ռումինիայի հոսպոդար Միհայ Վիտեազուլի

(1593-1601 թթ-ին) դեսպանը, խորհրդականը, նկարիչը. Լեհաստանի ու Լիտվայի մեծ իշխան Սիգիզմունդ Գ-ի խորհրդականը: Եղել է ֆինանսական, դիվանագիտական գործակալ, դիվանագիտական հանձնարարություններ է կատարել Ավստրիայում, Ռուսաստանում (1599 թ.), Թուրքիայում: **1598 թ-ին նշանակվել է ջոկատի հրամանատար, մասնակցել է թուրքերի դեմ մղված Միրոսլուի ճակատամարտին, Դանուբի կռիվներին**: Միհայ հոսպոդարի մահից հետո, 1601-1607 թթ-ին, կատարել է Ռուդոլֆ Բ-ի և այլ իշխանների հանձնարարությունները: 1607 թ-ին նշանակվել է Թուրքիայում Ավստրիայի դեսպան: Գրառել է Միհայի օրագիրը (չի պահպանվել): Ավստրիայի կայսեր կողմից արժանացել է ազնվականի կոչման: Լեհ պատմաբանները նրան կոչել են «արտակարգ անձնավորություն»: Պահպանվել է նրա հայերեն ստորագրությունը: 1599 թ-ին ստացել է ազնվականության աստիճան և հատուկ տոհմանշան ունենալու իրավունք: Հակաթուրքական դաշինքն ամրապնդելու նպատակով 1616 թ-ին ճանապարհվել է Արևելք, սակայն Մոլդովայում սպանվել է (զուգահեռի համար նշենք, որ 1684 թ-ին Իրան մեկնող Ապետիք Պետրոսը ևս «անհետ» կորել է):

94. ԽԱԼԻԼ ՓԱՇԱ

Թուրքական բանակի փաշա
(ծովակալ, 1600/1610-ական թթ-ին)
Մեծ վեզիր (գեներալիսիմուս)

Խալիլ փաշան (կենսագրական տեղեկություններ չկան) թուրքական պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Կեսարացի հայ է: Մանուկ հասակում թուրքացվել է ու տարվել Կ.Պոլիս: Ջինվորական աստիճանակարգով բարձրացել ու դարձել է անվանի զորահրամանատար, *1600-ական թթ-ին եղել է Ահմեդ Ա սուլթանի ծովային փաշա - ծովակալ*: 1609 թ-ին նավամարտում հաղթել է մելիտացիների 10 նավերից բաղկացած էսկադրային և գերել 6 նավ: Գերված նավերի թվում էր «Գարա ճեհեննեմ»-ը, որ ուներ 90 թնդանոթ, 500 նավաստի, 2000 հրացան: Խալիլ փաշան այդ նավով մտել է Կ.Պոլիս: Այդ հաղթանակի համար արժանացել է վեզիրի (նախարար) պաշտոնի և 1610 թ-ին ամուսնացել սուլթան Ահմեդի դստեր հետ ու ստացել մեծ վեզիրի (առաջին նախարար) պաշտոն: Հաղթել է խազարներին Սինոպի ճակատամարտում: Թուրքիայի տարածքից հալածել ու դուրս է մղել ճիզվիտներին, իսկ Հռոմի պապի նվիրակին ջուրը նետել: **Վեզիրի պաշտոն է վարել նաև Մուստաֆա Ա (1619 թ-ին), Օսման Բ (1619-1622 թթ-ին), Մուրադ Դ (1622-1639 թթ-ին) սուլթանների օրոք**: 1619 թ-ին մասնակցել է Պարսկաստանի դեմ պատերազմին, հաղթել Շահ - Աբասին և ստիպել հաշտություն կնքել: 1620 թ-ին պաշտոնանկ է արվել մեծ վեզիրի պաշտոնից և վերընտրվել ծովակալ: 1621 թ-ին կռվել է Լեհաստանի դեմ: Հաջորդող տարիներին դիվանագիտական կապեր է հաստատել Ավստրոհունգարիայի և Լեհաստանի հետ: 1626-1627 թթ-ին կրկին եղել է մեծ վեզիր: 1627 թ-ին կրկին պաշտոնազրկվել է ապստամբ Ապազա փաշային պարտվելու պատճառով: Մահացել է Կ.Պոլսում խոր ծերության հասակում:

95. ՍՈՒԼԵՅՄԱՆ ՓԱՇԱ ԷՐՄԵՆԻ

Թուրքական բանակի փաշա (1650-ական թթ-ին)
Մեծ վեզիր (գեներալիսիմուս)

Սուլեյման փաշան (Էրմենի Սուլեյման փաշա) (ծն. 1605 թ., Մալաթիա - 1690 թ.) թուրքական պետական ու ռազմական գործիչ է: Մանկահավաքի ժամանակ տարվել է Կ.Պոլիս, թլպատվել ու մուսուլմանացվել: Ենիչերիի կարգից իր զորավարական տաղանդի, դիվանագիտական հատկանիշների շնորհիվ բարձրացել է թուրքական աստիճանակարգով: Իր նոր ընտանիքից Գաբու Աղասի խնդրանքով ոմն Իսմայիլի միջնորդությամբ դարձել է Աբդուլլահ փաշայի գործակալը, ապա՝ աշխատանք է ստացել պալատում, եղել է արհեստապետ (տիվլայենտճի աղասը), շուտով նշանակվել է Իբրահիմ Սուլթանի (1640-1648 թթ-ին) թիկնապահ և ստացել է վեզիրի (առաջին նախարար / գեներալիսիմուս) աստիճան: Մի քանի ամիս եղել է եպարքոսի խորհրդական, ապա՝ հաջորդաբար նշանակվել Կարինի, Սեբաստիայի կուսակալ, մասնակցել Կրետե կղզու գրավմանը: Վերադարձել է Կ.Պոլիս և ամուսնացել է Մոհամմեթ Դ Սուլթանի (1648-1687 թթ-ին) քրոջ՝ Այիշե Սուլթանուհու հետ: **1655-1656 թթ-ին եղել է Օսմանյան սուլթան Մոհամմեթ Դ-ի մեծ վեզիրը**: *Խառնակ ժամանակներ էին և կարճ փուլերով երեք անգամ եղել է եպարքոս, ապա՝ Միլիսթրեի կուսակալ: 1661-1676 թթ-ին եղել է սուլթանական պալատի վերակացու*: 1676 թ-ին հեռացել է ծառայությունից և խաղաղ կյանքով ապրել Սկյուտարի իր առանձնատանը, որտեղ 85 տարեկանում կնքել է իր մահկանացուն: Մեծ ծառայություններ է մատուցել Օսմանյան կայսրությանը: Նրա մասին գրել է 18-րդ դարի պատմագիր Երեմիա Չելեպի Քյոմյուրճյանը:

18 - ՐԴ ԴԱՐ

96. ԱՎԱՆ ԲԱԲԱՆՈՎ

Արցախի Խամսայի կիսանկախ մելիքության սպարապետ
(գլխավոր հրամանատար, 1722-1729 թթ-ին)
Պարսկական բանակի խան (գեներալ, 1727 թ.)
Ռուսական բանակի «գլխավոր խան»
(գեներալ-լեյտենանտ, 1734 թ.)

Ավան Բաբանովը (Ավան Յուզբաշի (հարյուրապետ) Բաբանով) (ծննդյան թվականն՝ անհայտ - 1734 թ., Աստրախան) հայ ազգային-ազատագրական շարժման, դիվանագիտական գործիչ է, *Արցախի Խամսայի կիսանկախ մելիքության զորքերի գլխավոր հրամանատարը*: **1712 թ-ին դարձել է Խամսայի մելիքության զորքերի գլխավոր հրամանատար**: Մասնակցել է 1722-1729 թթ-ին Արցախում ծավալված ազգային-ազատագրական պատերազմներին: *Պարսկաստանի թագավոր Թահմազ Բ-ն 1727 թ-ին արքայական հրովարտակով նրան շնորհել է «սպասալարի» (սպարապետ) և «խանի» (գեներալ) կոչում*: Սյունիք-Արցախյան ազատագրական շարժման անկումից հետո իր տեղում թողնելով Հովհան և Աբրահամ հարյուրապետներին (վեր-

ջինս հետագայում դարձել է սպարապետ)՝ եղբոր՝ Թարխան հարյուրապետի հետ գնացել է Բաքու՝ Ռուսաստանի Հարավային կորպուսի հրամանատարությունից զինվորական օգնություն խնդրելու նպատակով: Հաջողության չհասնելով՝ 1729 թ-ին իր ներկայացուցիչներին՝ հարյուրապետներ Թարխան Իսախանյանին, Մելքոն Այդինյանին, Գրիգոր Եսայանին և Ներսես Աղաբեկյանին ուղարկել է Սանկտ-Պետերբուրգ՝ Ռուսաստանի կայսրից ռազմական օգնություն խնդրելու ակնկալիքով: Նույնպիսի խնդրանքով դիմել է Ռուսաստանում գտնվող Վրաստանի Վախթանգ Զ թագավորին: Սակայն օգնություն չի ստացել: Իր անձնական անվտանգությունն ապահովելու նպատակով մնացել է ռուսական տիրույթներում և իր հարյուրապետ ենթակաների ու 250 զինվորների հետ ծառայության մտել Աստրախանում տեղակայված ռուսական կայազորում, ինչով դրել է Արցախի հայկական զինուժի կազմալուծման-քայքայման սկիզբը (հետագա տարիներին Արցախից հեռացել ու նրա մոտ կամ ռուսական այլ զորամասերում ծառայության են անցել արցախցի շատ զինվորականներ): Նրան ենթակա ջոկատում եղել է 250 մարդ, որոնցից 150-ին պահել է իր միջոցների հաշվին: Մասնակցել է ռուսական զորքերի բոլոր կռիվներին պարսիկների դեմ: 1734 թ-ին գնացել է Սանկտ-Պետերբուրգ և գրավոր դիմել Ռուսաստանի Աննա Իվանովնա կայսրուհուն իրեն գեներալ-մայորի զինվորական աստիճան շնորհելու խնդրանքով: Կայսրուհին մերժել է ռուսական բանակի գեներալ-մայորի աստիճանի շնորհումը, քանի որ նա արդեն իսկ խան-գեներալ էր: *Նա ճանաչել է Ավան Բաբանովի գեներալական «խան» աստիճանը և շնորհել ավագություն (գեներալ-լեյտենանտ)*, ինչպես նաև աշխատավարձի «գեներալական» դրույքաչափ: Նրան և իր ենթակա հարյուրապետներին տրվել են Աստրախանի մոտ գտնվող գյուղեր: 1736 թ-ին Աստրախան տեղափոխված Ավան Բաբանովի կնոջն ու որդուն՝ Ատլուխանին, ռուսական կառավարությունը նշանակել է թոշակ:

97. ԴԱՎԻԹ ԲԵԿ

Սյունիքի Անկախ Իշխանապետության գահերեց - զորավար
(միապետ-սպարապետ, 1722-1728 թթ-ին)
Պարսկական բանակի խան (գեներալ, 1727 թ.)

Դավիթ բեկ. Կապան

Դավիթ Բեկը (ծննդյան թվականն՝ անհայտ - 1728 թ., Հալիձոր) հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ է, Սյունիքի անկախ իշխանապետության հիմնադիր գահերեց - գահակալ, պարսկական բանակի «բեկ» (գեներալ): Ամենայն հավանականությամբ սերել է Վրաստան տեղափոխված Հյուսիսային Հայաստանի ազնվականական-իշխանական տոհմերից մեկից:

Ծառայել է վրաց թագավոր Վախթանգ Զ-ի բանակում և հասել մեծ ճանաչման: Սյունիքի մելիքների խնդրանքով իր զորաբանակով եկել է պատմական Սյունյաց նահանգ և ղեկավարել հայության ազատագրական պայքարը թուրքական ծագում ունեցող ցեղերի դեմ: Կարճ ժամանակամիջոցում ազատագրվել են Սյունյաց նահանգի Սիսիանի, Գորիսի, Քաշաթաղի, Կովսականի, Արևիք-Մեղրիի, Կապանի, Ագուլիսի գավառների տարածքները, շուրջ 15237 քառակուսի կիլոմետր տարածք, **որի վրա ավելի քան երեքհարյուրամյա պետականազրկությունից հետո կազմավորվել է Սյունիքի Անկախ Իշխանապետությունը**: Հայկական նորանկախ պետականության կենտրոններ են եղել Շինուհայր ավանը, Տաթևը, ապա՝ նրա կողմից կառուցված Հալիձոր բերդ-ավանը: ***Ստեղծվել է շուրջ 50000 զինվոր ունեցող կանոնավոր բանակ, որ կազմված է եղել հեծելազորից ու հետևակից, ունեցել է ընդհանուր հրամանատար-սպարապետ, զորավարներ, հազարապետներ ու հարյուրապետներ***: Դավիթ Բեկի զորավարական տաղանդը հատկապես երևացել է Եռաբլուրի (1722 թ.), Չավնդուրի, Հալիձորի (1726 թ.) ճակատամարտերում: *Հայկական իշխանապետության գոյությունն ու այդ ժամանակ ունեցած հզորությունը ստիպել են Պարսկաստանի թագավոր Թահմազ Բ-ին 1727 թ-ին արքայական հրովարտակով ճանաչել Սյունիքի Անկախ Իշխանապետությունը, Դավիթ զորավարին շնորհել «բեկ»-ի (գեներալ) տիտղոս, նրան ենթարկել շրջակա ոչ հայ խաներին ու բեկերին, որպես տարածաշրջանի գահերեց - գահակալի վերապահել դրամ հատել և դրոշմ (զինանշան) օգտագործել*: Հավանաբար մահացել է 1728 թ-ին, անսպասելի (ենթադրվում է, որ թունավորել են): Նրա զորավար զինակից Ստեփանոս Շահումյանը հետագայում շարադրել է «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեկին» երկը: Հայ գրողներ Բաֆֆին, Սերո Խանզադյանը Դավիթ Բեկի հերոսական կերպարը վիպականացրել են, «Հայֆիլմ» կինոստուդիան խորհրդային Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին նկարահանել է «Դավիթ Բեկ» գեղարվեստական ֆիլմը, Կապան քաղաքում կանգնեցվել է Դավիթ Բեկի ձիարձանը: Կապանի շրջակա բնակավայրերից մեկին տրվել է Դավիթ Բեկ անունը:

98. ԱԲՐԱՀԱՄ ՍՊԱՐԱՊԵՏ

Հայ զորավար, սպարապետ (1730 թ.)

Աբրահամը (կենսագրական տեղեկություններ չկան) Գյուլիստանի մելիքական գերդաստանից է, Գյուլիստանի մելիք Եսայու և Ջրաբերդի մելիք Սարգսի եղբայրը: Եղել է յուզբաշի, իշխանատոհմի զորահրամանատար: 1720-1730-ական թվականներին իր զորամասով կազմակերպել է հայրենի տարածքների պաշտպանությունը, եղել է Սղնախների զինված ուժերի ընդհանուր հրամանատար: Սպարապետ Ավան Յուզբաշին ռուսներից օգնական ուժեր ստանալու ակնկալիքով իր մի շարք օգնական յուզբաշիների հետ *1729 թ-ին գնացել է ռուսների մոտ՝ ընդհանուր հրամանատարությունը հանձնելով Աբրահամ յուզբաշուն*: Ստեղծվել էր ծանր իրավիճակ. ռուսները 1724 թ-ին պայմանագիր էին կնքել թուրքերի հետ և որևէ գործուն օգնություն հայերին չէին պատրաստվում ցույց տալ, ու նման իրավիճակում թուրքերի դեմ բարձրացված Սյունիքի ազգային-ազատագրական կռիվը դատապարտված էր պարտության: Հյուսիսային Արցախի՝ Գյուլիստանի տերերը՝ մելիք Եսային, Աբրահամ սպարապետը,

վարել են առավել ճկուն և դիմադրողական քաղաքականություն, որպեսզի առիթ ու հնարավորություն չտան թուրքերին ավերելու երկիրը: Հարկ եղած դեպքում խորամանկել են. 1725 թ-ի մարտի 1-ին թուրքական 4700-անոց հեծյալ զորաբանակը բաժանել են բնակավայրերի վրա և գիշերով գլխովին ոչնչացրել զինվորներին և երեք փաշայի: Աբրահամ սպարապետն անհրաժեշտության դեպքում օգնել ու օգնություն է ստացել հարևան թուրքական խանություններից: Թուրքական սուլթանն Աբրահամ սպարապետին վերացնելու համար նրա դեմ լարել է Գանձակի, Շաքիի կառավարիչներին: Սակայն վերջիններիս միացյալ զորաբանակը պարտվել է Աբրահամ սպարապետից: Երկրի պաշտպանությունը կազմակերպելու և երկիրն ավերածություններից զերծ պահելու համար Գյուլիստանի Ամենափրկիչ եկեղեցու առջև կանգնեցվել է Աբրահամ սպարապետի մարմարե հուշարձանը, որը փշուր-փշուր է արվել 1930-ական թվականներին:

99. ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ

Սյունիքի Անկախ Իշխանապետության գահերեց - զորավար
(միապետ-սպարապետ, 1729-1730թթ-ին)
Հայ զորավար (18-րդ դար)

Մխիթար Սպարապետը (Մխիթար Բեկ) (ծննդյան թվականն անհայտ. ք. Գանձակ - 1730 թ., գ. Խնձորեսկ. այժմ՝ ՀՀ. Սյունիքի մարզ) հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ է, *Դավիթ-Բեկի մերձավոր օգնականն ու զորապետը*: Մասնակցել է Դավիթ-Բեկի մղած կռիվներին: Սյունիքի Անկախ Իշխանապետության ստեղծումից հետո Դավիթ Բեկի կողմից նշանակվել է Հայոց նորաստեղծ 50 հազարանոց բանակի սպարապետ՝ գլխավոր հրամանատար: Դավիթ Բեկի մահից հետո ինքն է գլխավորել Սյունիքի հայության ազատագրական պայքարը: 1729 թ-ին ընտրվել է Կապանի հայոց գահերեց իշխան: Հաղթական մարտեր է մղել թուրքական զորքերի դեմ: Ենթադրվում է, որ նրա նախաձեռնությամբ է Մեղրիում կատարվել թուրք հարկահավաքների սպանությունը և մոտ 32 հազար հարկաթերթերի այրումը: Դավաղրաբար սպանվել է Խնձորեսկ գյուղում և այնտեղ թաղվել :

100. ԽՐԻՍՏԱՖՈՐՈՎ ԼԱԶԱՐ

Ռուսական բանակի գեներալ-մայոր (26.06.1734 թ.)

Լազար Խրիստաֆորովը (Աղազար դի Խաչիկ Ախիջանենց) (ծն. 1690 թ., Նոր Ջուղա - 1750 թ., Ղզլար) հայ ազգային-ազատագրական շարժման, ռուսական բանակի ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: Ծնվել է վաճառականի ընտանիքում: Սկզբնական կրթություն ստացել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի դպրոցում: 1721-1722 թթ. պարսկա-աֆղանական պատերազմի ժամանակ մասնակցել է Նոր Ջուղայի հայերի ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպմանը: Երբ Աֆղանստանի էմիր Միր-Մահմուդը գրավել է Նոր Ջուղան, 1722 թ-ի աշնանը իր զորա-

ջոկատով անցել է Գիլանում գործող ռուսական զորքերի կողմը և Պետրոս դի Սարգիս Գիլանենցի, Այվազ Աբրահամովի հետ դարձել ռուսական բանակի կազմում Հայկական էսկադրոնի կազմակերպիչներից մեկը: **1724 թ-ին դարձել է Հայկական էսկադրոնի հրամանատար**: *Նրա ջանքերով Հայկական էսկադրոնի հայազգի զինվորների թիվը հասել է 700-ի, որոնց զինման, հանդերձավորման, պարենավորման գործն անձամբ հոգացել է մինչև 1728 թ-ը:* Իր զորամասով մասնակցել է ռուսների 1722-1735 թթ. կասպիական արշավանքների բոլոր ճակատամարտերին: Ցուցաբերած խիզախության, հավատարիմ ծառայության համար Ռուսաստանի Զինվորական կոլեգիայի հատուկ միջնորդությամբ, Աննա Իվանովնա կայսրուհու հրամանագրով 1734 թ-ի հունիսի 26-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Վայելել է զինվորների հարգանքը և ռուսական բարձրաստիճան հրամանատարության անվերապահ վստահությունը: Եղել է ռուսական զորքերի հետ համագործակցող հայկական ու հայ-վրացական բոլոր զորաջոկատների սպայական կազմի ճանաչված ղեկավարը: Եղել է Կասպից ծովի ավազանում գործող ռուսական զինված ուժերի հրամանատարության և Արևելյան Հայաստանում պարսիկների ու թուրքերի դեմ մարտական գործողություններ ծավալած Հայոց զորքերի ղեկավարների կապող օղակը: 1734, 1736, 1742 թվականներին այցելել է Սանկտ-Պետերբուրգ:

101. ՄԵԼԻՔ ԼՈՌԻՍ-ՄԵԼԻՔՅԱՆՑ ԵԳԱՆ

Պարսկական բանակի խան (գեներալ, 1736 թ.)
Արցախի Խամսայի կիսանկախ մելիքության նահանգապետ
(գահերեց միապետ, 1736 թ.)

Մելիք Եգանի զինանշանը

Մելիք Եգան Տեր-Ղուկասի Լոռիս-Մելիքյանցը (Մելիք Ավանյան) (ծննդյան թվականն՝ անհայտ - 1744 թ., Դիզակ) հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ է, Արցախի Խամսայի կիսանկախ մելիքության գահերեց միապետ: Ըստ տոհմական առասպելի տոհմը Լոռիից փոխադրվել է Արցախի Դիզակ գավառ և հաստատվել Տող գյուղում: 1700-ական թվականներին ընտրվել է Տող գյուղի տանուտեր, 1723/1724 թ-ին Իրանի շահ Թահմասպ Բ-ի հրամանագրով նշանակվել է Դիզակի մելիք: 1722-1729 թթ-ին մասնակցել է Արցախում և Սյունիքում թուրքերի դեմ ծավալված ազգային-ազատագրական պատերազմներին: 1736 թ-ին Իրանի Նադիր շահի հրամանագրով նշանակվել է Արցախի հայկական մելիքությունների գահերեց և արժանացել խանի (գեներալ) աստիճանի:

102. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Հնդկաստանի բանակի խան (չորս աստղով գեներալ, 1760 թ.)

Գրիգոր Հարությունյանը (Գորգին Խան) (ծննդյան թվականն՝ անհայտ - 11.08.1763 թ., դավաճանաբար դաշունահար սպանվել է) Հնդկաստանի ազատագրական բանակի ռազմական և դիվանագիտական գործիչ է, հնդիկների հակաանգլիական պայքարի ղեկավարներից մեկը: Հնդկաստանի Բենգալիա նահանգի Հուկլիի շրջանում կերպասի առևտրով է զբաղվել և բավականին առաջադիմել է իր գործի մեջ, դարձել բավականին հայտնի անձնավորություն ու ստացել խոջայի (ազնվական) կոչում: Երևելի այս անձի հետ բարեկամական հարաբերություններ է հաստատել նավապ (փոխարքա, կառավարիչ) Միր Ջաֆարի փեսա Միր Կասումը: Գրիգորը անգլիացիների մոտ ծառայող դիվանագետ եղբոր՝ Պետրոս Հարությունյանի գործուն աջակցությամբ **1760 թ-ին Բենգալիայի կառավարիչի գահին է բարձրացրել Միր Կասումին: Վերջինս Գրիգորին կարգել է Բենգալիայի նախարարապետ և զորքերի գլխավոր հրամանատար-սպարապետ:** Երկրում տնտեսական ու ռազմական բարեփոխումներ են սկսվել: *Գրիգորը ձեռնամուխ է եղել բանակի ստեղծմանը և կարճ ժամանակում ստեղծել է 40.000-անոց բանակ, որի կազմում եղել է 25.000 հետևակ և 15.000 հեծյալ:* Գրիգորի խորհրդով Միր Կասումը Բենգալիայի մայրաքաղաքը Մուշիրապատից փոխադրել է պաշտպանական ավելի մեծ հնարավորություններ ունեցող Մոռկիր բնակավայրը, որտեղ ինքը պալատ է կառուցել, իսկ Գրիգորը ապարանք: Այսօրինակ բարեփոխումներից հետո 1760 թ-ի վերջերին Միր Կասումի հետ Բենգալիան հռչակել են անկախ պետություն: Սկսվել է հյուծիչ պատերազմ անգլիական գաղութարար զորքերի դեմ: Գանգեսի վտակներից մեկի ափին՝ Սանտա Դարիա դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտում Գորգին խանի ղեկավարած հնդկական բանակը պարտվել է, սակայն չի հուսալքվել և շարունակել է պայքարը: 1761-1762 թթ-ին տարել է մի շարք տպավորիչ հաղթանակներ և ստիպել անգլիացիներին դիմելու դիվանագիտական քայլերի: 1762 թ-ին Գորգին խանի և նրա դիվանագետ եղբոր՝ Պետրոսի միջնորդությամբ Մոռկիր մայրաքաղաքի Գորգին խանի ապարանքում հանդիպել և բանակցել են Բենգալիայի կառավարիչ Միր Կասումը և Հնդկաստանի անգլիական կառավարիչ Վանսիթարթը: Հաջորդող տարվա ընթացքում անգլիացիները դիվանագիտական ուղիներով Գորգին խանին մի քանի անգամ առաջարկել են անցնել իրենց կողմը, ինչից վերջինս կտրուկ հրաժարվել է: Եվ չնայած Գորգին խանի հավատարմությանն ու նվիրումին Բենգալիային ու անձամբ Միր Կասումին, վերջինս կասկածել է Գորգին խանին և հրամայել սպանել նրան, ինչը իրագործվել է հնդիկ դավաճանի ձեռքով: Մոռկիր քաղաքի նրա ապարանքի վրա մնում է հետևյալ ցուցանակը. «Այս ապարանքի մեջ ապրել է Բենգալիայի, Պեհարի և Օրիայի վերջին մեծ նավապի հայ նախարարապետ և սպարապետ Գորգին խանը և այստեղ է հյուրասիրվել անգլիացի կառավարիչ Վանսիթարթը 1762 թ-ին, երբ այցելել է նավապ Միր Կասումին»:

103. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

Հնդկական բանակի գեներալ (1760 թ.)

Մարգար (Հովհաննես) Քալանթարյանը (կենսագրական տեղեկություններ չկան) հնդկական ազատագրական բանակի ռազմական գործիչ է: Ծնվել է Իրանի Նոր Ջուղա քաղաքում: Զինվորական կրթություն ստացել է Հոլանդիայում: 1760-1763 թթ-ին մասնակցել է Բենգալիայում անգլիացիների դեմ մղված ազատագրական մարտերին: *1761 թ-ին իր զորագնդերով մասնակցել է Գանգեսի վտակներից մեկի մոտ գտնվող Սանթաղարիա դաշտավայրի ճակատամարտին և վճռական պահին ապահովել հաղթանակը:* Ղեկավարել է Փաթնա քաղաքի գրավման ռազմագործողությունը: Այս ճակատամարտում տարած հաղթանակի համար արժանացել է զինվորական բարձրագույն «Չախմախծագի» կոչման, իսկ ի պատիվ հայկական զորաջոկատի՝ բարձրացվել է Խաչի նշանով դրոշ: Սեյր-Մութաքերինի թարգմանիչ Սոնսյուր Ռայմոնդը գրել է. «Այս հայը ծառայել է Հոլանդիայում, և մեկ անգամ չէ, որ ապացուցել է իր գեներալական բարձր որակավորումը... Այժմ նա Կալկաթայում է և իր գոյությունը պահպանում է հայրենակիցների բարեգործության շնորհիվ: Նա բարետես, լայն կազմվածքով և ուժեղ մարդ է»:

19-ՐԴ ԴԱՐ

104. ԴՈԽՏՈՒՐՈՎ ԴՄԻՏՐԻ

Դոխտուրով Դմիտրի

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1799 թ.)
Ռուսական բանակի հետեւազորի գեներալ
(բանակի գեներալ, 1810 թ.)

Դմիտրի Սերգեի Դոխտուրովը (ծն. 1756 թ. - 14.11.1816 թ., Մոսկվա, թաղված է Մոսկվայի մարզի Սերպուխովի շրջանի Դավիդովյան վանքում) ռուսական բանակի ռազմական գործիչ է, 1812 թ-ի Հայրենական պատերազմի հերոս: Սերում է Կ.Պոլսից Ռուսաստան փոխադրված, ռուսական ազնվականի կարգավիճակ ստացած հայկական հնագույն գերդաստանից (տոհմի նախնին հավանաբար եղել է բժիշկ և ռուսական միջավայրում կոչվել է դոկտոր-դոխտուր, այստեղից էլ տոհմը ստացել է Դոխտուրով ազգանունը): Ծառայությունը բանակում սկսել է 1771 թ-ին: Մասնակցել է 1788-1790 թթ. ռուս-շվեդական, 1805-1807 թթ. և 1812-1814 թթ. ռուս-ֆրանսիական պատերազմներին: **Աուստեռլիցում եղել է դիվիզիայի հրամանատար:** Ֆրիդլանդի ճակատամարտում ղեկա-

վարել է կենտրոնը և ապահովել բանակի նահանջը Ալլե գետի մյուս ափը: 1812 թ-ին **ղեկավարել է 6-րդ հետևակային կորպուսը և կարողացել է կորպուսը շրջապատումից հանել Լիդայի շրջանում**: Բորոդինոյի ճակատամարտում նախ կռվել է կենտրոնում, ապա՝ Իվան Բագրատիոնի վիրավորվելուց հետո ղեկավարել է ձախ թևը: Ժամանակին կորպուսը դուրս բերելով Մալոյարոսլավեց՝ յոթժամյա մարտում կասեցրել է հակառակորդի առաջընթացը, նա հայտարարել է. «Նապոլեոնն ուզում է այստեղ ճեղքել պաշտպանությունը, բայց նա չի հասցնի, կամ կանցնի իմ դիակի վրայով»: Եվ հաղթանակն ապահովվել է. Նապոլեոնը ստիպված բռնել է նահանջի Սմոլենսկի ճանապարհը: Մասնակցել է Լայպցիգի ճակատամարտին: 1813 թ-ին, Վարշավայում մեծ օգնություն է կազմակերպել զոհված և գերի ընկած լեհերի ընտանիքներին: 1814 թ-ին ղեկավարել է Փարիզը գրոհող ռուսական բանակի աջ թևը: 1781 թ-ին ստացել է պորուչիկի, 1784 թ-ին՝ կապիտան-պորուչիկի, 1788 թ-ին՝ կապիտանի, 1795 թ-ին՝ գնդապետի կոչում: 1797 թ-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1807 թ.), Սպիտակ Արծվի (1807 թ.), Սուրբ Գեորգիի 3-րդ (1805 թ.), 2-րդ (1812 թ.), Սուրբ Վլադիմիրի 2-րդ (1805 թ.), Սուրբ Աննայի 1-ին (1807 թ.) աստիճանի շքանշաններով: Եղել է հավատավոր քրիստոնյա, սիրել է Ռուսաստանն ու ռուսականը այնպես, որ ռուսների թերություններն անգամ ուրիշների առավելությունից բարձր է դասել:

105. ՀԱԽՎԵՐԴՈՎ ՖԵՈԴՈՐ

Ռուսական բանակի գեներալ-մայոր (1808 թ.)
Վրաստանի կառավարիչ (1808-1812 թթ-ին)

Ֆեոդոր Հախվերդով

Ֆեոդոր Եսայու Հախվերդովը (Հախվերդյան) (ծն. 1774 թ., Թիֆլիս -1820 թ., Թիֆլիս) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական, վերամկրտել են հունական դավանանքի: 1788 թ-ից դաստիարակվել է հրետանային կադետական կորպուսում: 1797-1803 թթ-ին եղել է հրետանային 5-րդ գնդի մարտկոցի, ապա՝ վաշտի հրամանատար, 1803-1806 թթ-ին՝ 1-ին գումարտակի հրամանատար, ***1806 թ-ին՝ հրետանային 4-րդ գնդի հրամանատար, 1806-1808 թթ-ին՝ հրետանային 9-րդ բրիգադի հրամանատար:*** 1808-1812 թթ-ին եղել է Վրաստանի տիրակալ: ***1812 թ-ին նշանակվել է Կովկասում գործող 19-րդ դիվիզիայի հրամանատար, 1816 թ-ին՝ Վրացական առանձին կորպուսի հրետանու պետ: 1817-1820 թթ-ին եղել է գեղեուտների գլխավոր տիրակալ, կումիկների և խաղաղ չեչենների կառավարիչ, Կիզլյարի պարետ***: 1796 թ. մասնակցել է Գյանջայի գրավման արշավանքին, 1798-

1799 թթ-ին՝ Սիբիրյան արշավանքին, 1800 թ-ին՝ կաբարդիների խաղաղեցման գործողություններին, 1804 թ-ին՝ Գյանջայի գրոհին, 1807 թ-ին՝ Գյումրիի մոտ Յուսուֆ փաշայի ջախջախմանը: Պարգևատրվել է Սուրբ Հովհան Երուսաղեմցու (1800 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ աստիճանի (18.06.1807 թ.) շքանշաններով:

106. ՅՈՒՍՈՒՖ ԽԱՆ ՄԱՅԻՆՅԱՆՑ

Իրանի բանակի խան (գեներալ, 1810 թ.)
Արաղստանի մարզպան և սպարապետ
(1807-1824 թթ-ին)

Յուսուֆ խանը (Ծատուր կամ Մինաս Մայինյանց) (ծն. 1781/82 թ., գ. Կոդ, Թիֆլիսի մոտ – 1824 թ., Սպահան) Իրանի պետական ու ռազմական գործիչ է: 1792 թ-ին գերեվարվել է պարսիկների կողմից և նվիրաբերվել Պարսից Աղա-Մահամմեդ շահին, վերջինս իր հերթին հայազգի պատանուն նվիրել է իր եղբորորդի և թագաժառանգ Ֆաթհ-Ալի խանին և ուղարկել Շիրազ: Վերջինս պատանուն նվիրել է իր սիրելի կնոջը, հայուհի Զիբա-Չեհր խանումին, որ նույնպես Վրաստանից էր (ավելի ուշ նույն Զիբա-Չեհր խանումի մոտ կսովորի ու կդաստիարակվի Յուսուֆ խանի որդի Կուլամ-Հուսեյն խանը): Զիբա-Չեհրն անձամբ է զբաղվել պատանու դաստիարակությամբ: 1800 թ-ին Շահը հանել է պատանուն կանանոցից և նշանակել իր թիկնազորում սենեկապան: Յուսուֆն անբաժան է եղել Շահից և մեծ հեղինակություն է ձեռք բերել տիրակալի մոտ: 1806 թ-ին մարզվել է ռազմական գործի գիտակ Միրզա-Ռոստոմ Մամիկոնյանց-Ենիկոլոպյանցի մոտ և հմտացել ռազմական գործի մեջ: Ուսումնառությունից հետո 1806 թ-ին նշանակվել է Արաղստանի հետևակ զորքերի հազարապետ: 1807 թ-ին վերապատրաստվել է ֆրանսիացի զորապետ Գորդոնի բերած մարզիչների մոտ և նրա միջնորդությամբ *1807 թ-ին նշանակվել է Արաղստանի մարզպանի պաշտոնին: Իրեն տրված մարզի շրջաններից՝ Ֆարիսանից, Քեսազից, Քեսամարայից, Սարաբանդից, Վաֆսից, Բողջալուից, Շահռուից, Թավրիզից և Աշքեանից հավաքագրել ու կազմավորել է 20 գունդ:* Իր զորամասերում կատարել է բարեփոխումներ, զորագնդերը վերակառուցել ու մարզել է եվրոպական ձևով: **Ֆաթ-Ալի շահը Յուսուֆ խանի բանակի զորատեսն ընդունելուց հետո նրան շնորհել է հատուկ իր համար ստեղծված Արաղստանի սփահադար (սպարապետ) տիտղոսը, որը մինչ այդ որևէ մեկին չի շնորհվել:** Իր բանակով մասնակցել է բազմաթիվ պատերազմների, կռվել է թուրքերի, ռուսների դեմ, ճնշել խռովարար մարզերի ապստամբ ուժերին: **1824 թ-ին Ֆաթ-Ալի շահը նրան համատեղությամբ նշանակել է Սպահանի մարզպան, թագաժառանգ Սուլթան Մահամմեդ Միրզայի հոգաբարձու և վեզիր (նախարար):** Տարիների ընթացքում մեծ հարստություն է կուտակել և իր ժամանակներում առաջին հարուստն է եղել Պարսկաստանում: Արաղստանի ճանապարհներին կառուցել է աղբյուրներ, իջևանատներ, անվճար հյուրատուն է կառուցել իր սեփական Սուլթանաբադ բերդաքաղաքում: Վարել է հայանպաստ քաղաքականություն. նրա ժամանակների մասին հայերն ասել են. «ոսկի ժամանակ էր հայերիս համար, նա ամենիս հայրն էր և ոչ թե մարզպան»: Հայերի մեջ տարածված է եղել այն կարծիքը, որ գաղտնի քրիստոնեություն է դավանել:

107. Իշխան ՄԱԴԱԹՈՎ ՎԱԼԵՐԻԱՆ

Վալերիան Մադաթով

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (19.10.1826 թ.)

Վալերիան Գրիգորի Մադաթովը (Ռոստոմ Մադաթյան) (ծն. 18.05.1782 թ., Լեռնային Ղարաբաղ, Ասկերանի շրջան, գ. Ավետարանոց - 04.09.1829 թ., Բուլղարիա, Շումլե, թաղված է Սանկտ-Պետերբուրգի Ալեքսանդր Նևսկու մայրավանքի Տիխվինյան գերեզմանոցում) ռուսական բանակի ռազմական գործիչ է, զորավար, հայ-գրիգորյանական: Զինվորական ծառայությունն սկսել է Ռուսաստանի կայսր Պավել 1-ի հատուկ կարգադրությամբ 17 տարեկան հասակում 1799 թ-ին, Պրեոբրաժենսկյան գնդում: Սպայական կոչում ստացել է 1802 թ-ին Պավլովսկի գնդում: 1810-1812 թթ-ին եղել է 7-րդ գնդի վաշտի հրամանատար, 1812-1813 թթ-ին՝ Արևմտյան 3-րդ բանակի առաջատար ջոկատի հրամանատար, *1813 թ-ին՝ Ալեքսանդրյան գնդի հրամանատար, 1814-1815 թթ-ին՝ Փարիզում տեղակայված 3-րդ հուսարական դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար, 1816-1826 թթ-ին՝ Ղարաբաղի, Շիրվանի, Շաքիի խանությունների զորքերի պետ, Դաղստանի օկրուգի Կազիկումի խանության կառավարիչ, 1826-1829 թթ-ին՝ 3-րդ հուսարական դիվիզիայի հրամանատար*, 1829 թ-ին՝ **Բալկանյան ռազմաճակատի հրամանատար**: Մասնակցել է 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմին (աչքի է ընկել 1810 թ-ի Բատինի ճակատամարտում), 1812-1815 թթ. Հայրենական պատերազմին (աչքի ընկել Կոբրինի, Բերեզինայի, Բորիսովոյի, Կալիշի ճակատամարտերում), լեռնականների դեմ Ռուսաստանի մղած կռիվներին և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին: 1826 թ-ի սեպտեմբերի 3-ին, Շամխորի մոտ Վ. Մադաթովը իր գլխավորած 2000-անոց ջոկատով փայլուն հաղթանակ է տարել պարսկական 10000-անոց բանակի դեմ: Մադաթովի զորքերը 1826 թ-ի աշնանը Արցախը լիովին ազատագրել են պարսկական ուժերից: 1828 թ-ին դարձել է կոմս Պասկևիչի խարդավանքի զոհը, հեռացվել է Կովկասից, զրկվել է Արցախում ստացած հողերից և փոխադրվել է Արևմտյան ռազմաճակատ: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կռվել է Դանուբյան ճակատում: Փայլուն հաղթանակ է տարել բուլղարական Շումլե ամրոցի մոտ և գրավել Իսակչեյ և Գիրսով ամրոցները: Այստեղ հիվանդացել է ու մահացել: Գեներալ Դիբիչը գրել է. «Հանձին Մադաթովի մեր հեծելազորը զրկվեց ռուսական Մյուրատից»: Հետագայում նրա աճյունը տեղափոխվել է Սանկտ-Պետերբուրգ: 1813 թ. արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (09.06.1829 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ (11.04.1811 թ.), 3-րդ (22.02.1813 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (18.10.1809 թ.), 3-դ (15.09.1813 թ.), 2-րդ (19.08.1820 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (20.09.1809 թ.), 2-րդ (01.09.1810 թ., 23.09.1813 թ.), 1-ին

(20.02.1820 թ.) աստիճանի շքանշաններով, «Խիզախության համար» ոսկե զենքով (08.01.1808 թ.), «Խիզախության համար» ոսկե թրով (02.11.1812 թ., 19.08.1820 թ.), Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխի «Զինվորական արժանապատվության» (30.05.1814 թ.) շքանշանով: 1837 թ-ին նրա համարզներ Ա. Խոմյակովի, Ի. Բակունինի և զինակից Մ. Կոցեբուի հեղինակությամբ հրատարակվել է «Իշխան Մադաթովի կյանքն ու գործունեությունը» գիրքը (վերահրատարակվել է 1863 թ-ին): Իշխանուհի Մադաթովան 1863 թ-ին հրատարակել է «Իշխան Մադաթովի կենսագրությունը» գիրքը: Ռուսաստանի Դաշնության «Միջազգային կազակական միավորում» հասարակական կազմակերպությունը 2005 թ-ին հիմնել է «Վալերիան Մադաթով» շքանշան և մեդալ, որով պարգևատրվելու են առավել աչքի ընկած հասարակական-քաղաքական, ռազմական գործիչները: Բուլղարիայի Շումեն քաղաքի քաղաքապետարանի դիմացի այգում տեղադրվել է Վալերիան Մադաթովի կիսանդրին (հեղինակ՝ Գեորգի Ֆրանգուլյան):

Ակիմ Կարպով

108. ԿԱՐՊՈՎ ԱԿԻՄ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1815 թ.)

Ակիմ Ակիմի Կարպովը (ծն. 1760 թ. - 1830 թ.) ռուսական բանակի և կազակական զորքերի ռազմական գործիչ է: Ծառայությունը բանակում սկսել է 1778 թ-ին: Սերում է Չերկեսկի հայկական սպայական ընտանիքից: Եղել է կազակական զորքերի յեսաուլ, կազակական զորքերի ավագ Բելոռուսիայում, Ուստ-Մեդվեդիցի հետախուզական վարչության պետ, Դոնի հեծյալ հրետանու հրամանատար: 1799 թ-ին արժանացել է գնդապետի կոչման, 1809 թ-ին՝ գեներալ-մայորի աստիճանի: *1811 թ-ին նշանակվել է գնդի հրամանատար, 1812 թ-ին՝ միաժամանակ՝ գեներալ Բագրատիոնի 2-րդ բանակի հրետանու պետ*: 1782-1786 թթ-ին մշտապես եղել է Չեչնիայի և Թամանի էքսպեդիցիաներում, 1801 թ-ին մասնակցել է Օրենբուրգի արշավին, 1804-1805 թթ-ին՝ Կովկասի լեռնականների դեմ արշավին, 1807 թ-ին մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին Սերբիայում, 1809 թ-ին մասնակցել է Գ-իրտովի գրավմանը, 1810 թ-ին մասնակցել է Սիլիստրիի, Շումլեի, Բատինի, Ռուիդուկի ճակատամարտերին, 1812 թ-ին՝ Սմոլենսկի, Բորոդինոյի, Տարուտինոյի, Մալոյարոսլավլի ճակատամարտերին, 1813-1814 թթ-ին մասնակցել է ռուսական բանակի եվրոպական արշավանքին, կռվել է Կաուբախում, Սեզանպեում, Կրաոնում, Լաոնում, մասնակցել է Փարիզի գրավմանը: Պարգևատրվել է Սուրբ Գեորգիի 4-րդ (1807 թ.), 3-րդ (1812 թ.), Սուրբ Վլադիմիրի 2-րդ (1814 թ.) աստիճանի շքանշաններով:

109. ԶՈՀՐԱԲ ԽԱՆ ԱՄԻՐ ԹՈՓԽԱՆԵ

Իրանի բանակի խան (գեներալ, 1820-ական թթ-ին)

Զոհրաբ խանը (ծն. 1782/83 թ., Լոռի - մահվան թվականն անհայտ) Իրանի բանակի ռազմական գործիչ է: 1795 թ-ին Թիֆլիսի ճանապարհին գերվել է պարսիկների կողմից և տարվել Իրան: Նրա գործունեության, ռազմական կրթության մասին մինչև 1832 թ-ը ոչինչ հայտնի չէ: Հայտնի է միայն, որ նա այդ թվականին արդեն ունեցել է զորապետության (սարթիփության) պաշտոն և խանի (գեներալ) աստիճան: Յուսուֆ խան ամիր թոփխանեի սպանվելուց հետո Աբբաս-Միրզայի կողմից *նշանակվել է թագաժառանգի բանակի ամիր-թոփխանե՝ թնդանոթաձիգ զորքերի հրամանատար*: Աչքի է ընկել ապստամբած Սարասխ բերդի գրավման մարտը կազմակերպելիս: **1834 թ-ին կարևոր դերակատարություն է ունեցել մահացած Ֆաթ-Ալի շահի փոխարեն Աբբաս-Միրզայի որդի Մահամմեդ-Միրզային շահ դարձնելու գործում, որի արդյունքում նոր շահը հրովարտակով նրան նշանակել է Իրանի բանակի ամիր-թոփխանե՝ թնդանոթաձիգ և հրաձիգ զորքերի հրամանատար**: 1836 թ-ին պաշարել, գրավել և հիմնահատակ ավերել է Հերաթի Կարի-Կալե բերդը:

110. ԿԻՇ ԷՌՆԵՍՏ

Էռնեստ Կիշ

Հունգարական հեղափոխական բանակի
գեներալ-լեյտենանտ (03.01.1849 թ.)
Հունգարիայի զինվորական նախարարի պաշտոնակատար (1849 թ.)

Էռնեստ Օգոստինոս Կիշը (Գիշ, Գիշ Պստիկյան) (ծն. 1799 թ., Ռումինիա, Տեմիոշոարա - 06.10.1849 թ., Ռումինիա, Արադ, թաղված է Կատալին-Ֆալվայում) 1848-1849 թթ-ի հունգարական հեղափոխության ռազմական գործիչ է: Սերում է հայկական Ագոնցների տոհմից: 1818 թ. ավարտել է Վիեննայի Թերեզիանու ռազմական ակադեմիան: Զինվորական ծառայության է անցել 1818 թ-ի հունիսի 10-ին: 1845 թ-ին դարձել է գնդապետ, նշանակվել Հոնվեդական բանակի 2-րդ Հանովերյան հեծելազորային գնդի հրամանատար: Հունգարական հեղափոխությանն է նվիրաբերել իր գերդաստանի հարստությունը (գնահատվում էր 6-7 միլիոն ֆորինտ): **Նշանակվել է հեղափոխական բանակի հարավային ուժերի ընդհանուր հրամանատար**: Ազատագրել է Պերլաշ, Էլեմեր, Տոմաշևացի բերդերը: Գեներալ-մայորի աստիճանի արժանացել է 1848 թ-ի հոկտեմբերի 12-ին: Ազատագրական պայքարի ըն-

թացքում Մեսարոշից, ապա՝ Կլապկայից հետո **եղել է զինվորական նախարարի պաշտոնակատար**: Հեղափոխության պարտությունից հետո, 1849 թ-ի սեպտեմբերի 21-ին ձերբակալվել և 12 այլ զորապետների հետ (այդ թվում՝ հայազգի զորապետ Վիլմոշ Լազարը) գնդակահարվել է: Հարավսլավիայի Նադպեչկերեկ քաղաքում կանգնեցվել է նրա հուշարձանը:

111. ՑԵՑ ՅԱՆՈՇ

Հունգարական հեղափոխական բանակի գեներալ-մայոր (11.05.1849 թ.)

Յանոշ Ցեցը (Հովհաննես Ցեցյան) (ծն. 08(20).01. 1822 թ., Գիդոֆալվա, Հարոմսեկ, այժմ՝ Ռումինիայի Կովասնա գավառ - 06.09.1904 թ., Բուենոս Այրես, աճյունն ամփոփված է Բուենոս Այրեսի Ռիգոլետա գերեզմանատանը, Ռոսասների դամբարանում) 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության ռազմական գործիչ է, ռազմական պատմաբան: Ստացել է հիմնավոր կրթություն: Ավարտել է Կեզդիվաշարհեյի զինվորական ուսումնարանը, 1842 թ.՝ ռազմական ակադեմիա: 1848 թ-ի աշնանը նշանակվել է Տրանսիլվանիայի հեղափոխական զորաբանակի շտաբի պետ: Տրանսիլվանիայում հաղթական կռիվներ է մղել ավստրիական զորաբանակի դեմ, զորավարական իր տաղանդով աչքի ընկել մի քանի ճակատամարտերում: Եղել է Կոլոժվար-Տորդա-Նադյսեբեն-Մարոշվաարհեյի ուղղությամբ հարձակվող զորաբանակի հրամանատար: Աչքի է ընկել Պիշկիի, Մեդյեշի ճակատամարտերում: **1849 թ-ի ապրիլի 18-ին նշանակվել է Տրանսիլվանիայի զորաբանակի գլխավոր հրամանատար**: Հեղափոխության պարտությունից հետո տարագրվել է Գերմանիա, հեռակա դատապարտվել մահապատժի: 1851 թ-ին ընդգրկվել է Փարիզում ստեղծված հեղափոխական կոմիտեի կազմում, սակայն, հիասթափված Նապոլեոն Գ-ի երկդիմի քաղաքականությունից, Ֆրանսիայից անցել է Իտալիա, որտեղ Գարիբալդիի բանակում պայքարել է ավստրիացիների դեմ: 1861 թ-ին ընտանիքով հաստատվել է Բուենոս Այրեսում: *1865 թ-ին ծառայության է անցել արգենտինական բանակում, եղել է Արգենտինայի զինվորական ակադեմիայի հիմնադիրն ու առաջին պետը (1870-1874 թթ-ին)*: Բուդապեշտի փողոցներից մեկը կոչվում է Յանոշ Ցեցի անունով, իսկ նրա հուշարձանը կանգնեցված է Բուենոս Այրեսի զինվորական ակադեմիայի բակում: Գեներալի դիմանկարով թողարկվել են լեհական ու հունգարական դրոշմանիշեր: Գերմաներեն հրատարակել է «Բեմի արշավանքը Տրանսիլվանիայում 1848-1849 թթ-ին» (Համբուրգ, 1850 թ.), իսպաներեն՝ «Արգենտինայի Հանրապետության ռազմական աշխարհագրությունը» (Բուենոս-Այրես, 1885 թ.) աշխատությունները: Գործնական նամակագրություն է ունեցել հունգարահայ մտավորական Քշիշտոֆ Սոնգոտի (Խաչիկ Սոնգոտյան) հետ և թղթակցել է նրա «Արմենիա» ամսագրին: Պարգևատրվել է Զինվորական 3-րդ, 2-րդ (29.03.1849 թ.) կարգի շքանշաններով:

112. ՉԻՉԱԳՈՎ ՊԱՎԵԼ

Պավել Չիչագով

Ռուսաստանի նավատորմի ծովակալ (1807 թ.)
Ռուսաստանի Ծովային ուժերի նախարար (1802-1811 թթ-ին)
Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ
(1805-1809, 1811-1834 թթ-ին)

Պավել Վասիլիի Չիչագովը (Չիչագյան) (ծն. 1767 թ. - 1849 թ., Փարիզ) ռուսական ռազմածովային ուժերի գործիչ է, Ռուսաստանի գիտությունների կայսերական ակադեմիայի անդամ (1814 թ.), հայազգի ծովակալ Վասիլի Յակովլևիչ Չիչագովի որդին: Ռուսաստանի նավատորմում ծառայությունն սկսել է 1782 թ-ին, եղել է հոր համհարզը: Մասնակցել է 1788-1790 թթ. ռուս-շվեդական պատերազմին, ղեկավարել է գծային նավ: 1791-1792 թթ-ին սովորել և կատարելագործվել է Անգլիայում: 1797-1799 թթ-ին եղել է պահեստազորում: 1799 թ-ին նշանակվել է Հոլանդիայում դեսանտ իջեցնելու արշավախմբի պետ: 1801 թ-ին դարձել է Ալեքսանդր I-ի շքախմբի անդամ: **1802-1811 թթ-ին եղել է Ռուսաստանի Ծովային ուժերի նախարար**: Մի շարք միջոցառումներ է ձեռնարկել նավատորմի վերազինման ուղղությամբ: **1812 թ-ին նշանակվել է Դոնի բանակի գլխավոր հրամանատար, Սևծովյան նավատորմի գլխավոր պետ, Մոլդավիայի և Վալախիայի գեներալ-նահանգապետ**: 1812 թ-ի Հայրենական պատերազմի սկզբին Դոնի բանակը միավորվել է 3-րդ բանակի հետ և առաջադրանք ստացել հարվածելու Նապոլեոնյան բանակի թիկունքին: Մ.Ի.Կուտուզովի պլանի համաձայն 3-րդ բանակը գեներալ Պ.Վիտգենշտեյնի կորպուսի հետ պետք է փակեր ֆրանսիական նահանջող զորքերի ճանապարհը Բերեզինա գետի մոտ: Սակայն անհամաձայնեցված գործողությունների պատճառով պլանը չի իրականացվել: Ռուսաստանի հասարակական կարծիքը մեղքն ամբողջովին բարդել է Պավել Չիչագովի վրա: 1812-1813 թթ-ին իր բանակով հետապնդել է նահանջող ֆրանսիացիներին: Սակայն նրա անհաջողությունը չի մոռացվել և 1813 թ-ին նա արձակվել է պահեստազոր: Իրեն դավաճանության մեջ կասկածելուց վիրավորված 1814 թ-ին հեռացել է արտասահման, ապրել է Իտալիայում և Ֆրանսիայում: Գրել է հուշեր, որոնք հրատարակվել են «Ռուսսկի արխիվ» (1869-1870 թթ-ին) և «Ռուսսկի ստարինա» (1883 թ., 1886-1888 թթ-ին) հանդեսներում:

Հակոբ Պետրոսյան

113. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ

Հնդկական բանակի գեներալ (1840-ական թթ-ին)

Հակոբ Պետրոսյանը (ծն. 24.03.1755 թ., Դելի - 24.06.1850 թ., թաղված է Գլավիորի հայկական գերեզմանատանը) հնդկական բանակի ռազմական գործիչ է: 1841-1843 թթ-ին կռվել է անգլիական գաղութարարների դեմ: **Իր հրամանատարության տակ ունեցել է 12 հետևակային գումարտակ (յուրաքանչյուրում 1000-ական զինվոր), 4 հեծելազորային էսկադրոն և 150 հրանոթ**: Այս զորամիավորումում ծառայել է հայազգի 40 սպա: Հատկապես աչքի է ընկել 1843 թ-ի մարտական գործողությունների ժամանակ: Շուրջ 70 տարի հավատարմորեն ծառայել է Գլավիորի ռաջաներին և վայելել է սինդիների մեծ հարգանքը: Գլավիոր քաղաքում իր ծախսերով կառուցել է հայկական եկեղեցի՝ քաղաքում բնակվող 30 հայ ընտանիքների համար: Մահացել է 95 տարեկան 3 ամսական հասակում: Թաղման արարողությանը մասնակցել են Գլավիոր քաղաքի ավագանին, զինվորականությունը, ամբողջ բնակչությունը: Գլավիորի պատմական ամրոցի բերդապատվարներից զինվորականները 95 րոպե կրակ են արձակել (վետերան գեներալի տարիքին համապատասխան):

Միխայիլ Լազարև

114. ԼԱԶԱՐԵՎ ՄԻԽԱՅԻԼ

Ռուսաստանի նավատորմի փոխծովակալ (1833 թ.)
Ռուսական բանակի գեներալ-հրամիրալ (1833 թ.)
Ռուսաստանի նավատորմի ծովակալ (1843 թ.)

Միխայիլ Պետրովի Լազարևը (Միխայիլ Պետրոսի Լազարյան) (ծն. 03.11.1788 թ., Վլադիմիր - 11.04.1851 թ., Վիեննա) ռուսական ռազմածովային ուժերի գործիչ է, ծովագնաց: *Արժանացել է Ռուսաստանի բարձրագույն Սուրբ Անդրեյ Նախավկայի շքանշանի (1850 թ.)*: Փոխծովակալ Անդրեյ Պետրովի Լազարևի և դերծովակալ Ալեքսեյ Պետրովի Լազարևի եղբայրն է: 1803 թ. ավարտել է Ծովային կադետական կորպուսը: 1804-1808 թթ-ին կատարելագործվել է Բրիտանական նավատորմում: Ծառայել է Վալիյական և Սևծովյան նավատորմներում: Մասնակցել է 1808-1809 թթ. ռուս-շվեդական և 1812 թ-ի Հայրենական պատերազմներին: 1813-1816 թթ-ին ռուս-ամերիկյան ընկերությանը պատկանող «Սուվորով» նավով շուրջերկրյա ճանապարհորդություն է իրականացրել Կրոնշտադտ-Ալյասկա և հետադարձ ուղղությամբ: 1819-1821 թթ-ին, լինելով «Միրնի» նավի հրամանատարը և շուրջերկրյա ճանապարհորդության ղեկավար Ֆ.Ֆ.Բելինսգաուզենի տեղակալ, մասնակցել է Ալյասկայի և շրջակա կղզիների հայտ-

նաբերմանը: 1822-1825 թթ-ին «Կրեյսեր» ֆրեգատով (իր հրամանատարությամբ) և «Լադոգա» նավով (եղբոր Անդրեյ Լազարևի հետ) ճանապարհորդություն է կատարել Կրոնշտադտ-Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ ու հետադարձ ճանապարհով: *1826-1832 թթ-ին եղել է «Ազով» գծանավի հրամանատար: 1827 թ-ին աչքի է ընկել Նավարինի ծովային ճակատամարտում: 1827-1828 թթ. ռուս-թուրքական պատերազմում մասնակցել է Դարդանելի նեղուցի շրջափակմանը: 1832-1833 թթ-ին եղել է Սևծովյան նավատորմի շտաբի պետ*: 1833 թ-ին մի էսկադրոնով մտել է Միջերկրական ծով և թուրքական սուլթանի կողմից կռվել է Եգիպտոսի փաշա Մուհամմեդ Ալիի դեմ: **1833 թ-ին նշանակվել և 1834 թ-ին հաստատվել է Սևծովյան նավատորմի և նավահանգիստների գլխավոր հրամանատար**: 1836-1840 թթ-ին հինգ անգամ ղեկավարել է լեռնականների դեմ կազմակերպված դեսանտային գործողությունները: Նրա կողմից Սևաստոպոլում հիմնադրվել է ադմիրալությունը, կառուցվել են նավահանգիստը, վերանորոգման արհեստանոցները, ափամերձ մարտկոցները: 1867 թ-ին Սևաստոպոլում կանգնեցվել է ծովակալ Միխայիլ Լազարևի բրոնզածույլ արձանը:

115. ՍՈՒԼԵՅՄԱՆ ԽԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ-ԵՆԻԿՈԼՈՊՅԱՆՑ

Իրանի բանակի խան (գեներալ, 1829 թ.)
Իրանի բանակի չորս աստղով գեներալ
(բանակի գեներալ. 1830-ական թթ-ին)

Սուլեյման խան

Սուլեյման խանը (Սողոմոն Միրզա-Ռոստոմի Մամիկոնյանց-Ենիկոլոպյանց) (ծն. 1782 թ., Թիֆլիս – 18.01.1853 թ., Թեհրան, թաղված է Հայոց Սուրբ Գևորգ եկեղեցու բակում) Իրանի բանակի ռազմական գործիչ է: 1802/03 թ-ին ծառայության է անցել Թիֆլիսում տեղակայված ռուսական բանակում, սկզբում ծառայել է հետևազորում, ապա՝ հեծելազորում և շուտով արժանացել է սպայական կոչման: 1811 թ-ին եղբոր՝ Գուրգենի հորդորներով մեկնել է Թավրիզ և ծառայության անցել թագաժառանգ Աբբաս-Միրզայի հիմնած մուսուլմանացած ռուսների «Բհադրան» («Ենի մուսուլման»՝ «Նոր մուսուլմաններ») գնդում և անմիջապես ստացել կապիտանության պաշտոն: 1821 թ-ին ստացել է գնդապետի կոչում և մայորության պաշտոն: Մասնակցել է 1820-1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմին, այլ արշավանքների: *1829 թ-ին ստացել է խանի և սպարապետի աստիճան, զորագլխության (զորավարի) պաշտոն ու նշանակվել Դասպիլի և Մուհամռայ մարզերի վեզիր (նախարար) և հաստատվել Շուշտեր քաղաքում*: 1834 թ-ին գլխավորել է հորեղբոր՝ Մանուչար խանի բանակը, որ արշավել,

գրավել և հնազանդեցրել է Շիրազ քաղաքում իրեն Շահ հռչակած Ֆարման-Ֆարմանին: 1847 թ-ին եղել է Սպահանում և հորեղբոր Մանուչար խանի թաղումից հետո վերադարձել է Շուշտեր: 1848 թ-ին նրա վրա է հարձակվել հորեղբոր՝ Մանուչար խանի հակառակորդ ու ոխերիմ թշնամի Վելի-խանը՝ բախտիարցիների զորաբանակով: Սուլեյման խանի պարսիկ զինվորները փախել են, սակայն հայ զորականները հակահարված են տվել բախտիարցիների մեծաքանակ զորքին մինչև օգնության է հասել ռուս Սամսոն խանի «Բհադրան» գունդը, գերել Վելի-խանին: **1850-ական թթ-ին եղել է Խուզստանի, Լոռստանի, Արաբստանի զորքերի սպարապետ**, տեղակալ է ունեցել իր որդի Ջհանգիր խանին: *Հավատարմորեն ու քաջությամբ ծառայել է Իրանի չորս շահերի օրոք և արժանացել է «Սհամ-ուդ-դովլե»՝ «Սուր տերության» կամ «Տեգ տերության» պատվաստիճանի, որ իրենից առաջ որևէ մեկին՝ անգամ պարսիկի չի շնորհվել:* Պարգևատրվել է տասից ավելի շքանշաններով ու ասպետական նշաններով: Ծառայելով պարսից բանակում, ապրելով մուսուլմանական շրջապատում՝ չի փոխել հավատը, հաստատապես մնացել է Հայոց եկեղեցու զավակ և Հայոց եկեղեցու բակում էլ ավարտել է իր երկրային կյանքը: Նրա մահից հետո Շահը հրամայել է կազմակերպել առաջին կարգի զինվորական սպարապետին վայել թաղում: Պետական ու ռազմական գործիչ Ջհանգիր խանի և դիվանագետ ու գրող Նարիման խանի հայրն է:

Մովսես Արղության-Երկայնաբազուկ

116. Իշխան ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ՄՈՎՍԵՍ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (25.06.1845 թ.)
Ռուսական բանակի գեներալ-համիարգ (20.07.1848 թ.)
Հայկական մարզի կառավարիչ (1829-1832 թթ-ին)

Իշխան Մովսես Զաքարի Արղության-Երկայնաբազուկը (ծն. 1798 թ., Թիֆլիս- 20.02.1855 թ., թաղված է Սանահինի վանքի տոհմական գերեզմանոցում, այժմ՝ ՀՀ, Լոռու մարզ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: 1816 թ. ավարտել է Թիֆլիսի ազնվականական ուսումնարանը (վարժարան): Բանակում ծառայությունն սկսել է 1817 թ-ին, Կովկասի գլխավոր հրամանատար Ա.Պ. Երմոլովի միջնորդությամբ, Սանկտ-Պետերբուրգի լեյբ-գվարդիայի հեծյալ գնդում: 1827 թ-ի մարտի 23-ին, իր խնդրանքի համաձայն, զինվորական մայորի կոչումով փոխադրվել է Կովկաս, որտեղ ծառայել է ավելի քան 27 տարի: Մասնակցել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական, 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներին, Երևանի, Աբասաբատի, Սարդարապատի, Թավրիզի գրավմանը (1827 թ.): Աչքի է ընկել Օլթիի գրավման ժամանակ: Եռանդուն մասնակցություն է ցուցաբերել պարս-

կահպատակ հայերի ներգաղթի կազմակերպման գործին: 1829 թ-ին նշանակվել է Հայկական մարզի կառավարիչ: *1832-1837 թթ-ին եղել է Թիֆլիսի հետևակային գնդի հրամանատար (այդ ժամանակ գունդը գտնվում էր Երևանի բերդում), 1837-1838 թթ-ին Թիֆլիսի եգերական գնդի հրամանատար, 1838-1841 թթ-ին՝ Նուխիի ջոկատի հրամանատար, 1841-1842 թթ-ին՝ Ախալցխայի գավառի զինվորական օկրուգի պետ, 1842-1844 թթ-ին՝ Սամուրյան ջոկատի հրամանատար, 1844-1847 թթ-ին Դերբենդի զինվորական օկրուգի, Միջին և Հարավային Դաղստանի ռուսական զորքերի հրամանատար: 1847 թ-ին նշանակվել է Դերբենդի նահանգապետ, ապա՝ Մերձկասպյան երկրամասի զորքերի հրամանատար և քաղաքացիական նահանգապետ*: Դաղստանում հիմնել է Թեմիրխան-Շուրա քաղաքը (այժմ՝ Բույնակսկ, Դաղստան): Իր զորաջոկատով բազմիցս արշավել է լեռնականների առաջնորդ Շամիլի դեմ: 1854 թ-ի ձմռանը հաղթահարել է Կովկասյան գլխավոր լեռնաշղթան և դուրս եկել Շամիլի թիկունքը: 1842 թ-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1848 թ.), Սպիտակ Արծվի (1847 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ (1829 թ.), 3-րդ (1842 թ.), Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1842 թ.), 2-րդ (1845 թ.), 1-ին (1851 թ.), Սուրբ Աննայի 2-րդ (1838 թ.), 1-ին (1843 թ.), 1-ին՝ կայսերական ոսկե թագով (1844 թ.) աստիճանի շքանշաններով, «Խիզախության համար» ոսկե սվինով (1844 թ., 1847 թ.), Ալմաստե նշանով (1850 թ.), 30 տարի ծառայելու համար ոսկե զենքով (1851 թ.): 1872 թ. Թեմիրխան-Շուրա (Բույնակսկ) քաղաքում կանգնեցվել է գեներալ-համիարգ, իշխան Մովսես Արղության-Երկայնաբազուկի հուշարձանը (ավերվել է 1921 թ-ին):

117. Իշխան ԲԵԲՈՒԹՈՎ ՎԱՍԻԼԻ

Վասիլի Բեբութով

Հայկական մարզի կառավարիչ
(1832-1838 թթ-ին)
Ռուսական բանակի հետևազորի գեներալ-լեյտենանտ (10.10.1843 թ.)
Ռուսական բանակի հետևազորի գեներալ
(բանակի գեներալ, 1856 թ.)
Ռուսաստանի պետական խորհրդի անդամ (1857 թ.)
Կովկասի փոխարքայի պաշտոնակատար
(1857-1858 թթ-ին)

Վասիլի Օսիպի Բեբութովը (Բարսեղ Հովսեփի Բեբության) (ծն.1791 թ., Թիֆլիս- 10.03.1858 թ., Թիֆլիս) ռուսական ռազմական ականավոր գործիչ է, հայ-գրիգորյանական: ***Արժանացել է Ռուսաստանի բարձրագույն Սուրբ Անդրեյ Նախավկայի շքանշանի (1854 թ.)***: Սովորել է Թիֆլիսի ազնվականական դպրոցում և

1807-1809 թթ-ին՝ Պետերբուրգի առաջին կադետական կորպուսում: Զինվորական ծառայությունն սկսել է 1809 թ-ի դեկտեմբերի 13-ին Խերսոնյան գրենադերական գնդում: 1810 թ-ին նշանակվել է Կովկասյան զորքերի հրամանատար գեներալ Տորմասովի համհարզ, իսկ 1812 թ-ին նրա հետ փոխադրվել է Լատվիա: Մասնակցել է 1812 թ-ի Հայրենական պատերազմին, կռվել է ֆրանսիական մարշալ Մակդոնալդի դեմ և հասել է մինչև Սեմել: 1816 թ-ին նշանակվել է Կովկասի կառավարչապետ Ա. Պ. Երմոլովի համհարզ: 1817 թ-ին, դիվանագիտական հանձնախմբի կազմում, գեներալ Երմոլովի հետ Հայաստանով անցել է Թավրիզ ու Թեհրան: 1821-1825 թթ-ին եղել է լեյբ գվարդիայի Սեմյոնովյան գնդի կապիտան, ապա՝ *Մինգրելյան գնդի հրամանատար*: Մասնակցել է կովկասյան մուսուլմանական ցեղերի դեմ մղվող մարտերին: **1825-1827 թթ-ին եղել է Իմերեթիայի կառավարիչ**: Քաջաբար մարտնչել է 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում, ռազմավարական մեծ հմտություն դրսևորել Ալասլցխայի գրավման ու պաշտպանության ժամանակ: **1830-1838 թթ-ին եղել է Հայկական մարզի կառավարիչ: 1844 թ-ին նշանակվել է Հյուսիսային և Լեռնային Դաղստանի զորքերի հրամանատար**, կռվել լեռնականների առաջնորդ Շամիլի դեմ: **1847-1853 թթ-ին և 1854-1858 թթ-ին եղել է Անդրկովկասյան երկրամասի քաղաքացիական վարչության պետ և գլխավոր վարչության նախագահ: 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ եղել է Կովկասյան կորպուսի հրամանատար**: Աչքի է ընկել Բաշկադըքլարի (1853 թ.) և Քյուրուկ-Դարայի (1854 թ.) ճակատամարտերում, որոնցում փայլուն հաղթանակներ է տարել թուրքական մի քանի անգամ գերազանց ուժերի դեմ: Լսելով Քյուրուկ-Դարայի մոտ 1854 թ-ի հունիսի 24-ին տարած փայլուն հաղթանակի մասին՝ Նիկոլայ Ա կայսրն ասել է. «Իշխան Բեբութովն ուզում է զարմացնել ինձ իր հաղթանակներով, իսկ ես նրան կզարմացնեմ իմ պարգևներով», և Կովկասում առաջիններից մեկը նրան պարգևատրել է Ռուսաստանի կայսրության բարձրագույն՝ Սուրբ Անդրեյ Նախավկայի շքանշանով: 1854 թ-ին նշանակվել է Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և ռուս-թուրքական սահմանային զորքերի հրամանատար: 1857 թ-ին հաստատվել է Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ և Կովկասի փոխարքայի պաշտոնակատար: Գեներալ-մայորի աստիճանի արժանացել է 1928 թ-ի սկզբներին: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու եպկու (1849 թ., 1850 թ.), Սպիտակ Արծվի (1847 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ (1830 թ.), 3-րդ (1846 թ.), 2-րդ (1853 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1820 թ.), 2-րդ (1845 թ.), Սուրբ Աննայի 4-րդ (1812 թ.), 1-ին (1829 թ.), պարսկական՝ Առյուծի և Արևի 1-ին (1835 թ.) աստիճանի շքանշաններով, «Խիզախության համար» ոսկե սվինով (1829 թ.), 35 տարի ծառայելու համար՝ ոսկե զենքով (1852 թ.), Պարսկաստանի շահի ադամանդազարդ նկարով (1851 թ.):

118. ՍԵՐԵԲՐՅԱԿՈՎ ԼԱԶԱՐ

Լազար Սերեբրյակով

Ռուսաստանի նավատորմի փոխծովակալ (1848 թ.)
***Ռուսական նավատորմի ծովակալ** (30.08.1856 թ.)*
Ռուսաստանի Ծովակալական խորհրդի անդամ (1856-1862 թթ-ին)

Լազար Մարկեիչ Սերեբրյակովը (Ղազար Մարկոսի Արծաթագործյան) (ծն. 03.03.1792 թ., Ղարասուբազար, այժմ՝ Բելոգորսկ, Ղրիմ - 28.02.1862 թ., Ղարասուբազար, ք. Սևաստոպոլ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հավատը՝ հռոմեա-կաթոլիկ: Մոտ 50 տարվա ծառայության ընթացքում նավաստուց աճել դարձել է ծովակալ: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում, ապա՝ Օդեսայի ճեմարանում: 1815 թ-ին միչմանի կոչումով ավարտել է Նիկոլաևի ռազմածովային դպրոցը: 1825-1828 թթ-ին եղել է նավի հրամանատար, 1828-1833 թթ-ին՝ Կոստանդինոպոլսում տեղակայված ռուսական դեսանտային ճամբարի պարետ, 1833-1835 թթ-ին՝ «Պոլտավա» նավի հրամանատար, 1835-1839 թթ-ին՝ Սևծովյան ափամերձ գոտու 1-ին բաժնի պետ, 1839-1847 թթ-ին՝ Ցեմեսսի (Նովոռոսիյսկ) պաշտպանական կառույցների և կառուցվող նավահանգստի պետ, *1847-1853 թթ-ին՝ Սև ծովի ամբողջ ափամերձ գոտու պետ, 1853-1854 թթ-ին՝ նավախմբի հրամանատար - Սևծովյան նավատորմի և Կովկասյան նավերի հյուսիս-արևելյան մասի պետ, 1856-1862 թթ-ին՝ Ռուսաստանի ծովակալության խորհրդի անդամ*: 1838 թ-ին արժանացել է դերծովակալի աստիճանի: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ աչքի է ընկել Անապայի գրավման ժամանակ: Հետագայում մասնակցել է մի շարք ճակատամարտերի: Կառուցել է բազմաթիվ պաշտպանական ամրություններ: 1838 թ-ին հիմնադրել է Նովոռոսիյսկ քաղաքը և օգնել, որ քաղաքում հաստատվեն Չերքեզիայից, Անդրկուբանից և Տրապիզոնից գաղթած հայեր: Նամակագրական կապեր է ունեցել Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու հետ և նրա օգնությամբ Նովոռոսիյսկում հիմնել է հայկական հոգևոր կենտրոն: Ղրիմի պատերազմում հոր՝ Լազար Սերեբրյակովի հետ ծովային մարտերին մասնակցել են նրա երկու որդիները՝ կապիտան-լեյտենանտներ Մարկ (զոհվել է Սևաստոպոլում 1855 թ. մարտի 23-ին) և Եգոր Սերեբրյակովները: Ղրիմի պատերազմից հետո տեղափոխվել է Սանկտ-Պետերբուրգ: Զբաղվել է հայանպաստ գործունեությամբ: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1852 թ.), Սպիտակ Արծվի (1850 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ (1837 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1828 թ.), 3-րդ (1838 թ.), 2-րդ (1848 թ.), Սուրբ Աննայի 4-րդ (1829 թ.), 3-րդ (1831 թ.), 2-րդ (1831 թ.), 1-ին (1842 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1835 թ.), 1-ին (1840 թ.) աստիճանի շքանշաններով, «Խիզախության համար» ոսկե քրով (1838 թ.), ոսկե-ադամանդազարդ ծխախոտատուփով (1855 թ.), ոսկե զենքով (1857 թ.), թուր-

քական ոսկե մեդալով (1833 թ.): Նովոռոսիյսկ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը կրում է քաղաքի հիմնադիր Լազար Սերեբրյակովի անունը:

Իվան Անդրոնիկով

119. Իշխան ԱՆԴՐՈՆԻԿՈՎ ԻՎԱՆ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1850 թ.)
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
***(բանակի գեներալ**, 1868 թ.)*

Իշխան Իվան Մալխազի Անդրոնիկովը (ծն. 1798 թ., Թիֆլիսի նահանգ, Թելավի շրջան, գ. Կոդալո - 19.09.1868 թ., Թիֆլիս) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Սերում է Վրաստանում հաստատված 12-րդ դարում Բյուզանդիայի հայազգի կայսր Անդրոնիկ Կոմնինի Անդրոնիկ որդու տոհմից, տատի գծով Վրաստանի Հերակլ Բ Բագրատունի թագավորի ծոռն է, մոր գծով՝ Իմերեթիայի թագավոր Սոլոմոն Բ Բագրատունու թոռը: Ծառայությունը բանակում սկսել է լեյբ գվարդիայի հեծելազորային գնդում և 1818 թ-ին դարձել է կոռնետ: 1824 թ-ին ստացել է մայորի կոչում և իր խնդրանքով նշանակվել է Կովկասյան Նիժեգորոդյան հեծելազորային գնդի 1-ին դիվիզիոնի հրամանատար: Մասնակցել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին և աչքի է ընկել Ելիզավետապոլի (1826 թ.), Սարդարապատի (1827 թ.) ճակատամարտերում, Երևանի (1827 թ.) գրավման ժամանակ, 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմին և աչքի ընկել Ախալցխայի մոտ տեղի ունեցած հեծելազորային ճակատամարտում (05.08.1828 թ., որի համար արժանացել է գնդապետի կոչման), Ախալքալակի և Բայազետի բերդերի գրավման մարտերում (1829 թ.): 1829-1830 թթ-ին եղել է Նիժեգորոդյան գնդի հրամանատարի պաշտոնակատար: 1830 թ-ին Կովկասի փոխարքա կոմս Ի.Պասկևիչը նրան առաջարկել է տեղափոխվել Ռուսաստան գնդի հրամանատարի պաշտոնով, սակայն հրաժարվել է և իր խնդրանքով՝ զորացրվել: 1830-1849 թթ-ին եղել է պահեստազորում: Սակայն իր խնդրանքով մասնակցել է Լեզգիական գծի խաղաղեցման (1837 թ.), Օսեթիայի ճնշման (1840 թ.), Դաղստանի արշավանքին (1841 թ.): Վերջին արշավի համար 1841 թ-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: *Կովկասյան առանձին կորպուսի գլխավոր հրամանատար իշխան Մ.Ս.Վորոնցովի պահանջով 1849-1856 թթ-ին եղել է Թիֆլիսի զինվորական և քաղաքացիական նահանգապետ: Այս պաշտոնում մասնակցել է Ղրիմի պատերազմին, եղել է Ախալցխայի զորաջոկատի հրամանատար: Ախալցխայի մոտ 5 հազարանոց ջոկատով հաղթել է Ալի փաշայի 20 հազարանոց կորպուսին (Ախալցխա, 14.11.1853 թ.), 10 հազարանոց ջոկատով հաղթել է Սե-*

լիմ փաշայի 30 հազարանոց կորպուսին (Ճորոխ գետի մոտ, 1854 թ, հունիս): Այս ճակատամարտերում գրավել է թուրքական 58 դրոշ ու նշան, 26 հրանոթ: 1856-1868 թթ-ին եղել է բանակի գլխավոր հրամանատարի տրամադրության տակ: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1854 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ (1829 թ.), 3-րդ (1853 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1826 թ.), Սուրբ Աննայի 2-րդ (1827 թ.), 2-րդ՝ ալմաստով (1828 թ.), Սուրբ Ստանիսլավի 1-ին (1847 թ.) աստիճանի շքանշաններով:

120. ԼԱԶԱՐԵՎ ԻՎԱՆ

Իվան Լազարև

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ
(27.03.1866 թ.)
Ռուսական բանակի գեներալ-համիարզ (1878 թ.)

Իվան Դավիդի Լազարևը (Հովհաննես Դավթի Լազարյան) (ծն. 1820 թ., Արցախ, Շուշի -14.08.1879 թ., Չաթ, թաղված է Թիֆլիսում) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական, գեներալ-մայոր Ալեքսանդր Իվանի Լազարևի հայրն է: Սերում է Արցախի մելիքական տոհմից: Սովորել է Շուշիի ռեալական ուսումնարանում: 1839 թ-ին զինվորական ծառայությունն սկսել է գեներալ-ֆելդմարշալ, կոմս Պասկևիչի անվան հետևակային գնդում: 1850-1854 թթ-ին եղել է Սեխտուլինի խանության, 1854-1859 թթ-ին՝ Դարգինի օկրուգի կառավարիչ, 1859 թ-ին՝ **Միջին Դաղստանի զորքերի ժամանակավոր հրամանատար, Մերձկասպյան երկրամասին միացված Դաղստանի գրավյալ տարածքների ժամանակավոր վարչության պետ, 1860-1865 թթ-ին՝ Միջին Դաղստանի զինվորական պետ, 1865-1868 թթ-ին՝ 21-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, 1868-1878 թթ-ին՝ Կովկասյան բանակի գեներալ-աղյուտանտ, 1878 թ-ին՝ Կովկասյան 2-րդ կորպուսի հրամանատար, 1879 թ-ին՝ Ախալցխայի էքսպեդիցիայի պետ**: 1840-1841, 1844-1851 թթ-ին կռվել է Կովկասի լեռնականների դեմ, որոնց առաջնորդ Շամիլը Գունիբում գերի է հանձնվել Իվան Լազարևին: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Նշանակվել է Կարսը պաշարած ռուսական զորաջոկատի հրամանատար, գլխավորել Կարսի գրոհը և գրավումը: 1878-1879 թթ-ին եղել է Կովկասյան բանակի 2-րդ կորպուսի հրամանատար: Պարգևատրվել է Սուրբ Գեորգիի 4-րդ (1842 թ.), 3-րդ (27.10.1877 թ.), 2-րդ (1877 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1848 թ.), 2-րդ (1863 թ.), Սուրբ Աննայի 4-րդ (1846 թ.), 3-րդ (1847 թ.), 2-րդ (1859 թ.), 1-ին (1860 թ.) աստիճանի շքանշաններով, «Խիզախության համար» ոսկե թրով (1858 թ.):

121. ԳԵԴԵՈՆՈՎԻՉ ՀՈՎՍԵՓ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1861 թ.)
Ռուսական բանակի ճարտարագետ-գեներալ
(բանակի գեներալ. 1870-ական թթ-ին)

Հովսեփ Գեդեոնովիչը (կենսագրական տեղեկություններ չկան) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Ենթասպայի կոչում ստացել է 1818 թ. դեկտեմբերի 1-ին, գեներալ-մայորի աստիճան՝ 1854 թ. դեկտեմբերի 6-ին: Ծառայել է Գլխավոր շտաբի գլխավոր ճարտարագիտական վարչությունում:

Արզաս Տեր-Ղուկասով

122. ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ ԱՐԶԱՍ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1874 թ.)
Ռուսական բանակի գեներալ-համիարգ (1880 թ.)

Արզաս Արտեմի Տեր-Ղուկասովը (Արշակ Հարությունի Տեր-Ղուկասյան) (ծն. 1819 թ. Թիֆլիս - 08.01.1881 թ., Թիֆլիս) ռուսական բանակի ռազմական գործիչ է, զորավար, հայ-գրիգորյանական: Հայրը Չարդախլու գյուղի հոգևոր հովիվն է եղել: Սկզբնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1838 թ. ավարտել է Պետերբուրգի հաղորդակցության ճանապարհների ինստիտուտը: 1838 թ-ին ծառայել է Սանկտ-Պետերբուրգի հաղորդակցության ճանապարհների 1-ին դիրեկցիայում, 1838-1848 թթ-ին՝ Կովկասյան զինվորական օկրուգի ճանապարհային հաղորդակցության վարչության սպա: 1852 թ-ին անցել է զինվորական ծառայության և նշանակվել է Ապշերոնյան 84-րդ հետևակային գնդի 3-րդ գումարտակի, 1859 թ. փետրվարի 12-ին՝ նույն գնդի հրամանատար: 1868-1869 թթ-ին եղել է 19-րդ հետևակային դիվիզիայի հրամանատարի օգնական, Տվերի մարզի միջին բաժնի պետ, 1869-1877 թթ-ին՝ **38-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, 1877-1878 թթ-ին՝ Երևանի ջոկատի հրամանատար, 1878 թ-ին՝ Ախալցխայի զորաջոկատի, ապա՝ Կովկասյան դիվիզիայի հրամանատար, 1879 թ-ին՝ Մերձկասպյան զինվորական օկրուգի հրամանատար, 1880 թ-ին՝ Կովկասյան 2-րդ բանակային կորպուսի հրամանատար**: Մասնակցել է կովկասյան լեռնականների դեմ մղվող մարտերին: Աչքի է ընկել լեռնականների առաջնորդ Շամիլի անառիկ Գունիբ ամրոցի գրավման ժամանակ: 1865 թ-ի օգոստոսի 6-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Նրա զորաջոկատը մտել է Բայազետ, գրավել մի շարք ամրություններ: Մի քանի մարտերում ջախջախել է թուրքական զորքերին: Թաղվել է

Թիֆլիսի հայոց եկեղեցու բակում: Պարգևատրվել է Սպիտակ արծվի, Սուրբ Աննայի 3-րդ, 2-րդ, 1-ին, Սուրբ Գեորգիի 4-րդ (08.09.1859 թ.), 3-րդ (30.06.1874 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1860 թ.), 3-րդ (1862 թ.), 2-րդ (28.12.1877 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1848 թ.) աստիճանի, Կայսերական թագի շքանշաններով (1857 թ.), «Խիզախության համար» ոսկյա թրով (1848 թ.):

123. ԲՈՒԴԱԳՈՎ ԳՐԻԳՈՐԻ

Ռուսաստանի նավատորմի ծովակալ (1860-1870-ական թթ-ին)

Գրիգորի Իվանի Բուդագովը (Բուդաղով-Բուդաղյան) (ծն. 1820 թ. - 1882 թ.) ռուսական ռազմածովային ուժերի գործիչ է: Սերում է հնագույն հայկական տոհմից: 1847-1849 թթ-ին լեյտենանտի կոչումով եղել է «Պոսպեշնի» նավակի հրամանատար: 1851 թ-ին ստացել է կապիտան-լեյտենանտի կոչում: 1850-ական թվականների սկզբին կատարելագործվել է Բրիտանական նավատորմում: *Այդ շրջանում ստացել է առաջին կարգի կապիտանի, ապա՝ ադմիրալի աստիճան*: Եղբայրը՝ միչման Դմիտրի Իվանի Բուդագովը 1848 թ-ին իր ծառայակից ու հայրենակից Ֆեոդոր Վասիլի Պետրոսովի հետ «Օրիադնա» նավակով հաղթել է ապորտային մրցումներում և ստացել գլխավոր մրցանակը:

124. Կոմս ԼՈՌԻՍ-ՄԵԼԻՔՈՎ ՄԻՔԱՅԵԼ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (17.03.1863 թ.)
Ռուսական բանակի գեներալ-համիարզ (30.08.1865 թ.)
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
(բանակի գեներալ, 30.08.1875 թ.)
Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ (1879 թ.)
Կովկասի փոխարքայի պաշտոնակատար (1880 թ-ին)
Ռուսաստանի դիկտատոր (1880-1881 թթ-ին)
Ռուսաստանի ներքին գործերի նախարար (1881 թ-ին)

Միքայել Լոռիս-Մելիքով

Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքովը (ծն. 1825 թ., Թիֆլիս - 12.12.1888 թ., Ֆրանսիա, Նիցցա, թաղված է Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու բակում) Ռուսաստանի պետական, ռազմական ու դիվանագիտական ականավոր գործիչ է, հայ-գրիգորյանական, Ռուսաստանի գիտությունների կայսերական ակադեմիայի ակադեմիկոս (1880 թ.): ***Արժանացել է Ռուսաստանի բարձրագույն Սուրբ Անդրեյ Նախավկայի շքանշանի (01.11.1880թ.)***: Սերում է Լոռիս-Մելիքյանների ազնվական տոհմից: Սովորել է Մոսկվայի

Լազարյան ճեմարանում և Պետերբուրգի հեծելազորի յունկերների դպրոցում: Զինվորական ծառայությունն սկսել է 1845 թվականին Կովկասում, որտեղ ընդհանուր առմամբ ծառայել է 32 տարի: 1852 թ-ին, 27 տարեկան հասակում արժանացել է գնդապետի, 1856 թ-ի օգոստոսի 4-ին՝ 31 տարեկան հասակում՝ գեներալ-մայորի աստիճանի: Մասնակցել է Շամիլի գլխավորած լեռնականների դեմ ռազմական գործողություններին: 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ հեծելազորի ջոկատի հրամանատար էր, աչքի է ընկել մի շարք մարտերում: 1860-1873 թթ-ին եղել է Հարավային Դաղստանի զինվորական պետ և Դերբենդի քաղաքապետ, Թերեքի մարզի պետ: 1877 թ-ին նշանակվել է Կովկասյան բանակի առանձին կորպուսի հրամանատար և մասնակցել ռուս-թուրքական պատերազմին: Գլխավորել է Արդահանի գրոհը և գրավումը, Ալաջայի բարձունքներում ջախջախել է Մուխթար փաշայի զորքերին, գրավել Կարսը: Պատերազմի արդյունքում Ռուսաստանին է միացվել 17 հազար քառակուսի կիլոմետր տարածք: 1879 թ-ին նշանակվել է Աստրախանի, Սարատովի, Սամարայի և Խարկովի ժամանակավոր գեներալ-նահանգապետ: 1880 թ-ին եղել է Կովկասի փոխարքայի ժամանակավոր պաշտոնակատար: 1880 թ-ի փետրվարի 12-ին նշանակվել է Ռուսաստանի կայսրության Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի նախագահ՝ դիկտատորի լիազորություններով: Նախապատրաստել է Ռուսաստանի կայսեր իրավունքները սահմանափակող ռեֆորմի նախագիծ, որով Ռուսաստանը վերածվելու էր սահմանադրական միապետության: Մանիֆեստի հրատարակության նախօրյակին՝ 1881 թ-ի մարտի 1-ին Ռուսաստանի կայսր Ալեքսանդր 2-րդը սպանվել է: Նոր կայսրը հրաժարվել է ռեֆորմից և վերացրել է կարգադրիչ հանձնաժողովը: Հանձնաժողովի վերացումից հետո Լոռիս-Մելիքովը նշանակվել է Ռուսաստանի ներքին գործերի նախարար: 1881 թ-ին պաշտոնաթող է եղել: Առողջությունը վերականգնելու նպատակով մեկնել է Նիցցա, որտեղ էլ կնքել է մահկանացուն: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1869 թ.), Սուրբ Մեծ իշխան Ալեքսանդր Նևսկու ադամանդազարդ (1871 թ.), Սպիտակ Արծվի (1865 թ.), Սուրբ Գեորգիի 3-րդ (1877 թ.), 2-րդ (1877 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1854 թ.), 3-րդ (1855 թ.), 2-րդ (1864 թ.), 1-ին (1877 թ.), Սուրբ Աննայի 4-րդ (1848 թ.), 3-րդ (1850 թ.), 2-րդ (1852 թ.), 1-ին (1860 թ.), Սուրբ Ստանիսլավի 1-ին (1859 թ.) աստիճանի շքանշաններով, «Խիզախության համար» ոսկե սուսերով (1854 թ.), Ոսկե զենքով (1862 թ.), Կովկասի գրավման համար խաչով (30.07.1864 թ.), Կոմսի տիտղոսով (16.04.1878 թ.), թուրքական՝ Մեջլիսի շքանշանով (1857 թ.), պարսկական՝ Առյուծի և Արծվի 2-րդ աստիճանի շքանշանով (1864 թ.): Հրատարակել է «Կովկասի կառավարիչների մասին», «Երկտող Թերեքի մարզի կացության մասին», «Նոթեր Հաջի Մուրադի մասին» գրքերը:

125. Իշխան ՄԵԼԻՔՈՎ ԼԵՎՈՆ

Լևոն Մելիքով

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (08.07.1859 թ.)
Ռուսական բանակի գեներալ-համիարզ (13.09.1861 թ.),
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
(բանակի գեներալ, 30.08.1869 թ.)
Կովկասի փոխարքայի պաշտոնակատար (1880-1882 թթ-ին)
Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ (1882-1889 թթ-ին)

Իշխան Լևոն Իվանի Մելիքովը (ծն. 1817 թ., Թիֆլիս - 02.02.1892 թ., Թիֆլիս, թաղված է Սուրբ Դավիթ եկեղեցում) ռուսական բանակի ռազմական և պետական գործիչ է: ***Արժանացել է Ռուսաստանի բարձրագույն Սուրբ Անդրեյ Նախավկայի շքանշանի (1887 թ.)***: Սերում է Թիֆլիսի հայկական իշխանական տոհմից: 1833 թ. ավարտել է Թիֆլիսի նահանգային վարժարանը: 1833-1835 թթ-ին աշխատել է Վրաստանի գլխավոր կառավարչի գրասենյակում: Զինվորական ծառայության է անցել 1835 թ-ի հոկտեմբերի 15-ին: 1837-1866 թթ-ին մշտապես մասնակցել է Կովկասյան լեռնականների դեմ կազմակերպված արշավանքներին: Առանձնապես աչքի է ընկել Դաղստանի Կարա-Կայտագ, Շուռնանտ, Կատտագան աուլների գրավման մարտերում (1837 թ.), Շամիլի ջոկատի դեմ Բիգրաշ-Բելեռ բերդի մոտ մղված կռվում (1841 թ.): 1844 թ-ի ապրիլին արժանացել է շտաբային կապիտանի, օգոստոսին՝ կապիտանի, 1845 թ-ին՝ մայորի, 1847 թ-ին՝ փոխգնդապետի, 1849 թ-ին՝ գնդապետի, 1854 թ-ին՝ գեներալ-մայորի աստիճանի: 1844 թ-ին նշանակվել է Ելիզավետապոլի գավառի պետ և առանձին հեծյալ միլիցիայի ջոկատի հրամանատար, 1845 թ-ին՝ Իմերեթյան միլիցիայի Թիֆլիսի դրուժինայի հրամանատար, 1849 թ-ին՝ Վրացական 1-ին հետևակային գնդի հրամանատար: *1858-1859 թթ-ին եղել է Ջառո-Բելոկանի արևելյան ջոկատի և լեզգիների սահմանային գոտու պետ, 1859-1861 թթ-ին՝ Մերձկասպյան երկրամասի զորքերի հրամանատար, 1861-1869 թթ-ին՝ Դաղստանի մարզի զորքերի հրամանատար, Կովկասյան գծի ձախ թևի պետ, 1861-1869 թթ-ին՝ Դաղստանի մարզի պետ և երկրամասի զորքերի հրամանատար*: 1880 թ-ին նշանակվել է Ռուսաստանի Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի օգնական, 1881-1882 **թթ-ին՝ Կովկասյան բանակի հրամանատար, Կովկասի փոխարքայի պաշտոնակատար: 1882 թ-ին հաստատվել է Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ**: 1837-1866 թթ-ին մասնակցել է Հյուսիսային Կովկասի լեռնականների դեմ կազմակերպված արշավանքներին, 1877-1878 թթ-ին՝ ռուս-թուրքական պատերազմին: 1857 թ-ին հատուկ հանձնարարությամբ ծառայել է Պարսկաստանի շահի պալատում: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1871 թ.), Սպիտակ Արծվի (1866 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ (1845 թ.), Վլադիմիրի 3-րդ (1853 թ.), 2-րդ (1864 թ.), 1-ին (1877 թ.),

Սուրբ Աննայի 3-րդ (1842 թ.), 2-րդ (1851 թ.), 1-ին (1861 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1839 թ.), 1-ին (1856 թ.), պարսկական՝ Առյուծի և Արևի 1-ին աստիճանի (1857 թ.) շքանշաններով, ոսկե, արծաթե, բրոնզե մեդալներով:

Հակոբ Ալխազով

126. ԱԼԽԱԶՈՎ ՀԱԿՈԲ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (24.10.1877 թ.)
Ռուսական բանակի հետևազորի գեներալ
(բանակի գեներալ, 30.08.1891 թ.)
Ռուսաստանի զինվորական խորհրդի անդամ
(19.10.1894 - 03.11.1896 թթ-ին)

Հակոբ Քայխոսրովի Ալխազովը (Ալխազյան) (ծն. 01.01. 1826 թ., Թիֆլիս, Գորիի գավառ - 03.11. 1896 թ.) ռուսական բանակի ռազմական գործիչ է, զորավար, հայ-գրիգորյանական: 1844 թ. ոսկե մեդալով ավարտել է Սանկտ-Պետերբուրգի 2-րդ կադետական կորպուսը (նրա ազգանունը լավագույնների թվում փորագրվել է մարմարե տախտակի վրա) և անմիջապես գրանցվել լեյբ-գվարդիայի Ֆինլանդական գնդում, որտեղ ծառայել է 20 տարի: Այստեղ աչքի է ընկել սպայի բոլոր հատկանիշներով, բայց առավել հաճախ գերազանց նշանառության համար. բազմիցս հաղթել է հրաձգության մրցումներում և արժանացել պարգևների, այդ թվում անձամբ Կայսրից: Մասնակցել է Ղրիմի պատերազմին: Հետագայում ծառայել է Բալթյան նավատորմում՝ Սանկտ-Պետերբուրգի և Վիբորգի նահանգների ծովեզրը պաշտպանող զորքերում, մասնակցել է 1863-1864 թթ-ի լեհական ապստամբության ճնշմանը: 1864 թ-ին նշանակվել է 4-րդ Կոպորյան հետևակային գնդի հրամանատար: 1873 թ-ի օգոստոսի 30-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի և նշանակվել 19-րդ հետևակային դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Իր բրիգադի հետ համատեղ եղել է Քութայիսի, հետագայում՝ նաև Սուխումի, Ինգուրիայի, Գուրիայի միլիցիայի միացյալ ջոկատի հրամանատար, մասնակցել մի շարք մարտական գործողությունների, այդ թվում Սուխումի բերդի գրավմանը (06.09.1877 թ.), թուրքական դեսանտի ոչնչացմանը և Աբխազիայի ազատագրմանը: Ցուցաբերած քաջության համար 1877 թ-ի հոկտեմբերի 24-ին ստացել է գեներալ-լեյտենանտի աստիճան: 1877 թ-ի նոյեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը մասնակցել է Կարս ամրոց-քաղաքի գրավմանը և անձամբ մարտի է տարել հարձակվող զորախմբերից մեկը և ձախ բունքի շրջանում ստացել է բեկորային վիրավորում: 1878-1883 թթ-ին եղել է 41-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, 1883-1885 թթ-ին՝ Կով-

կասյան հեծելազորային դիվիզիայի հրամանատար: 1885 թ-ին նշանակվել է Կովկասյան բանակային կորպուսի հրամանատար: Պարգևատրվել է ռուսական Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1889 թ., 1894 թ-ից՝ ադամանդակուռ նշանով), Սպիտակ արծվի (1882 թ.), Սուրբ Գեորգիի 4-րդ (1877 թ.) , 3-րդ (19.12.1877 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1863 թ.), 3-րդ (1864 թ.), 2-րդ (1877 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1859 թ.), 2-րդ (1863 թ.), 1-ին (1877 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1856 թ.), 2-րդ (1861 թ.), 1-ին (1876 թ.) աստիճանի շքանշաններով, ադամանդակուռ երկու մատանիով (1868 և 1871 թթ-ին), ոսկե զենքով (1889 թ.), պրուսական Կարմիր արծվի 2-րդ աստիճանի շքանշանով, չեռնոգորյան 1877-1878 թթ-ի ռուս-թուրքական պատերազմի մասնակցի մեդալով: Կարս քաղաքի փողոցներից մեկը նրա անունով կոչվել է «Ալխազովսկի»:

127. ԹԵՐԶՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Եթովպիայի ռազմական, դիվանագիտական գործիչ
Եթովպիայի բանակի գեներալ (1880-1890-ական թթ-ին)

Սարգիս Թերզյանը (Սարգիս Թըլլիք /Սարգիս Մեծ/) (ծննդյան թվականն անհայտ - 1896 թ., Ադիս-Աբեբա) եթովպահայ պետական, ռազմական, դիվանագիտական գործիչ է: Եթովպիայի Հարար քաղաքում հաստատվել է 1882 թ-ին: Ավելի ուշ զինվորական ծառայության է անցել Մենելիք Բ թագավորի բանակում: Ցուցաբերած քաջության, ռազմական շրջահայացության համար առաջ է քաշվել և նշանակվել Եթովպիայի Կելետեսա և Բեյոկարոպա շրջանների կառավարիչ: Աչքի է ընկել Մենելիք Բ թագավորի երկրի Արևելյան անհնազանդ շրջաններ կատարած արշավանքի ժամանակ: ***Նրան հանձնարարվել է Հարար քաղաքի ազատագրումը: Այն այդ ժամանակ գտնվել է Էշրթ էմիր Աբդուլլայի իշխանության տակ: Սարգիս Թերզյանը քաղաքի ազատագրման գործողությունը փայլուն իրագործել է***: Այդ ռազմագործողությունից հետո նրա փառքը տարածվել է ողջ երկրով և նրան է վստահվել երկրի անկախության ու խաղաղության պաշտպանի պատիվը: Երկար ժամանակ եղել է Նալե, Կամպուլա, ապա՝ Կելեսա նահանգների կառավարիչ: Բացի ռազմական ասպարեզում ցուցաբերած արժանիքներից՝ եղել է տաղանդավոր դիվանագետ և տնտեսագետ: *Տարբեր տարիների ղեկավարել է Լոնդոն, Բեռլին, Վիեննա, Հռոմ, Բրյուսել. Վաշինգտոն այցելած դիվանագիտական ու առևտրային պատվիրակությունները*: Եթովպիայի տնտեսության համար կարևոր համարելով արդյունավետ կապն ապահովելու համար գցել է Ջիբութի-Ադիս-Աբեբա երկաթգիծը և կազմակերպել այդ երկաթուղով ապրանքների ներկրումը: Կազմակերպել է նորագույն զենքի՝ հեռահար հրետանու, արագահարված հրացանների ներմուծումը, որով զինված եթովպական բանակը 1895 թ-ի դեկտեմբերի 7-ին հաղթել է երկիր ներխուժած իտալական գաղութարար բանակին, որով ապահովվել է Եթովպիայի անկախությունը: Ականավոր զորահրամանատարին, մեծ դիվանագետին և Եթովպիայի պահապանին շարքից կարողացել են հանել դավադրությամբ. նրան սպանել են 1896 թ-ին, Ադիս-Աբեբայում Գերմանիայի դեսպանատան բակում:

Բենիամին Ախշարումով

128. ԱԽՇԱՐՈՒՄՈՎ ԲԵՆԻԱՄԻՆ

Ռուսաստանի բանակի գեներալ-լեյտենանտ (26.02.1873 թ.)
Ռուսական բանակի ճարտարագետ-գեներալ
*(**բանակի գեներալ**, 09.04.1889 թ.)*

Բենիամին Իվանի Ախշարումովը (ծն. 18.12. 1826 թ. - մահվան թվականն՝ անհայտ) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Գերազանցությամբ ավարտել է Նիկոլաևյան ճարտարագիտական ակադեմիան: Ծառայությունը բանակում սկսել է 1843 թ-ի հունվարի 24-ին: Սպայական կոչում ստացել է 1848 թ-ի ապրիլի 11-ին: Եղել է սակրավորական գումարտակի հրամանատար: 1859 թ-ին ծառայության է անցել ճարտարագիտական կորպուսում, *նշանակվել է Մոսկվայի Սուրբ Եկատերինայի անվան ռազմական ուսումնարանի խորհրդի անդամ և պատվավոր հոգաբարձու: 1899-1903 թթ-ին եղել է Ռուսաստանի արդարադատության նախարարության գրասենյակի նախագահ*: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի լեռնականների դեմ կազմակերպված 1849, 1854 թ-ի արշավանքներին: Պարգևատրվել է Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1884 թ.), Սպիտակ արծվի (1877 թ.), Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1864 թ.), 2-րդ (1871թ.), 1-ին (1889 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1853 թ.), 2-րդ (1861 թ.), 1-ին (1867 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1857 թ.), 1-ին (1865 թ.) աստիճանի շքանշաններով:

Աբրահամ Ասլանբեկով

129. ԱՍԼԱՆԲԵԿՈՎ ԱԲՐԱՀԱՄ

Ռուսաստանի նավատորմի ծովակալ (1885 թ.)

Աբրահամ Բոգդանի Ասլանբեկովը (Ասլանբեկյան) (ծն. 1822 թ. - 1901 թ.) ռուսական ռազմածովային ուժերի գործիչ է: Մոտ 50 տարի ծառայել է նավատորմում: Սովորել է Ծովային կորպուսում: 1838-1842 թթ-ին ծառայել է Բալթիական նավատորմում: 1842 թ-ին փոխադրվել է Սևծովյան նավատորմ: 1854 թ-ին եղել է «Էլբրուս» նավի հրամանատար, 1854-1856 թթ-ին՝ դեսանտային նավախմբի հրամանատար, 1856-1860 թթ-ին՝ Նիկոլաևի նավահանգստի 36 նավերի հրամանատար, 1860-1861 թթ-ին՝ «Սոկոլ» նավի հրամանատար, 1865 թ-ին՝ Կրոնշտադտի «Ռետվիզան» նավի հրամանատար, 1865-1874 թթ-ին՝ 8-րդ ծովային անձնակազմի հրամանատար, **1874-1882 թթ-ին՝ Խաղաղօվկիանոսյան նավախմբի հրամանատար, 1882-1884 թթ-ին՝ Բալթիական նավատորմի կրտսեր հրամանատար, 1885 թ-ին՝ Ծովային նավատորմի հրամանատար**: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի լեռնական-

ների դեմ 1842-1853 թթ-ին կազմակերպված արշավանքներին Սև ծովի արևելյան ափամերձ հատվածում, 1854 թ-ին՝ Սևաստոպոլի պաշտպանական մարտերին, որտեղ ցնցակաթված է ստացել: 1880 թ-ին ստացել է փոխծովակալի աստիճան: Հոդվածներ է տպագրել ռուսական նավատորմի, ռուս անվանի ադմիրալների վերաբերյալ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1881 թ-ին հրատարակած «Տեղեկություններ փոխադմիրալ Ալանբեկովի այցելած տեղերի մասին» հոդվածը:

130. Իշխան ԹՈՒՄԱՆՈՎ ԳԵՈՐԳԻ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (14.05.1896 թ.)
*Ռուսական բանակի հետևազորի գեներալ (**բանակի գեներալ**. 1900 թ.)*

Իշխան Գեորգի Եվսեի Թումանովը (Թումանյան) (ծն. 16.03.1839 թ. - 30.05.1901 թ.) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Սերում է հնագույն հայկական Մամիկոնյան տոհմից: Ավարտել է առաջին կադետական կորպուսը: Զինվորական ծառայությունն սկսել է Կովկասյան 2-րդ սակրավորական գումարտակում 1857 թ-ի հունիսի 6-ին: 1858-1862 թթ-ին ծառայել է Թերեքի մարզի Արղունի օկրուգում, 1863 թ-ին Սանկտ-Պետերբուրգի սակրավորական գումարտակում, 1864-1875 թթ-ին Արևմտյան Սիբիրի գեներալ-նահանգապետի մոտ: 1875-1877 թթ-ին եղել է Ռուսաստանի ներքին նահանգների 1-ին սակրավորական գումարտակի հրամանատար, 1877-1887 թթ-ին՝ ճանապարհա-ճարտարագիտական բրիգադի հրամանատար, 1887-1891 թթ-ին՝ 5-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, 1896-1897 թթ-ին՝ 32-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար: 1873 թ-ին արժանացել է գնդապետի, 1887 թ-ի հունվարի 1-ին՝ գեներալ-մայորի աստիճանի: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի լեռնականների դեմ Արղունի օկրուգում կազմակերպված 1858-1862 և 1864-1872 թթ-ի արշավանքներին, Թուրքեստանի երկրամասի Աուլիս-Աթա և Չիմքենդ բերդերի գրոհին, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին Կովկասյան ռազմաճակատում և Սողանլուից հասել մինչև Էրզրում: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1864 թ., Սանկտ-Պետերբուրգում ստացել է անձամբ Ալեքսանդր Բ կայսեր ձեռքից), 3-րդ (1878 թ.), 2-րդ (1879 թ.), 1-ին (1899 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1864 թ.), 2-րդ (1874 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1862 թ.), 2-րդ (1865 թ.), 1-ին (1891 թ.), պրուսական՝ Թագի 3-րդ (1875 թ.) աստիճանների շքանշաններով: Կազմել և 1875 թ-ին հրատարակել է «Դաշտային ամրություններ և զինվորական հաղորդակցություններ» երկհատոր աշխատությունը:

Դմիտրի Դոխտուրով

131. ԴՈԽՏՈՒՐՈՎ ԴՄԻՏՐԻ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1886 թ.)
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
(բանակի գեներալ.1898 թ.)
Ռուսաստանի ռազմական խորհրդի անդամ (1901 թ.)

Դմիտրի Պետրովի Դոխտուրովը (ծն. 1838 թ. - 12.03.1905 թ.) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Սերում է հնագույն հայկական ռուսացած Դոխտուրովների տոհմից: Սովորել է ազնվականական կորպուսում, 1861 թ. ավարտել է գլխավոր շտաբի Նիկոլաևյան ակադեմիան: 1855-1857 թթ-ին եղել է Կավալերգրադյան գնդի կորնետ: 1861-1863 թթ-ին ծառայել է Կովկասյան բանակում և մասնակցել է լեռնականների դեմ ծավալված մարտական գործողություններին: 1863-1864 թթ-ին վերադարձել և ծառայել է Կավալերգրադյան գնդում: 1864-1870 թթ-ին եղել է գլխավոր շտաբի փոխգնդապետ, 1870-1876 թթ-ին՝ 13-րդ հեծելազորային գնդի հրամանատար: 1876-1877 թթ-ին ընտանեկան հանգամանքների բերումով եղել է պահեստազորում: Ռուս-թուրքական պատերազմի սկզբին վերադարձել է զինվորական ծառայության: *Եղել է 35-րդ, 33-րդ, 16-րդ հետևակային դիվիզիաների բրիգադի հրամանատար: 1880-1884 թթ-ին եղել է 2-րդ հեծելազորային դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար, 1884-1886 թթ-ին՝ նույն դիվիզիայի պետ*: 1886 թ-ին եղել է զինվորական նախարարի տրամադրության տակ: *1887-1894 թթ-ին եղել է 12-րդ, ապա՝ 13-րդ հետևակային դիվիզիաների հրամանատար, 1894-1900 թթ-ին՝ 11-րդ բանակային կորպուսի հրամանատար, 1900-1904 թթ-ին՝ Օդեսայի զինվորական օկրուգի հրամանատարի տեղակալ*: Ռուս-ճապոնական պատերազմի սկզբին նշանակում է ստացել 2-րդ Մանչժուական բանակում, սակայն մինչև մեկնումը մահացել է: 1877 թ-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1862 թ.) աստիճանի շքանշանով, «Խիզախության համար» ոսկե սրով (1877 թ.):

132. ԻՇԽԱՆ ՄԱՆՎԵԼՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (03.08.1876 թ.)
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
(բանակի գեներալ. 03.08.1885 թ.)
Ռուսաստանի խնկական գաղտնի խորհրդական (01.08.1887 թ.)

Ալեքսանդր Նիկոլայի Մանվելովը (ծն. 05.04.1824 թ. - 02.04.1906 թ., Սանկտ-Պետերբուրգ, թաղված է Տրոիցե-Սերգիևյան անապատի գերեզմանոցում) ռուսական բանակի ռազմական ու պետական գործիչ է, ռուսական բանակի գեներալ-մայոր

Նիկոլայ Մանվելովի կրտսեր եղբայրը: 1847-1864 թթ-ին ծառայել է լեյբ-գվարդիայի Հեծելազորային գնդում. եղել է համհարզ, շտաբային կապիտան, կապիտան, գնդապետ: 1864-1866 թթ-ին եղել է Չուգուևի հեծյալ գնդի հրամանատար (1866 թ-ի մարտի 27-ին ստացել է գեներալ-մայորի աստիճան և մտցվել Կայսեր շքախմբի մեջ), 1869-1871 թթ-ին՝ **լեյբ-գվարդիայի Հեծյալ գնդի հրամանատար, 1876-1887 թթ-ին՝ 8-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար**: Մասնակցել է 1853-1856 թթ-ի Ղրիմի պատերազմին: 1877-1878 թթ-ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բալկանյան բանակի կազմում եղել է կորպուսի հրամանատար: 1887 թ-ին զորացրվել և Ռուսաստանի իսկական գաղտնի խորհրդականի աստիճանով անցել է քաղաքացիական աշխատանքի: Եղել է Սանկտ-Պետերբուրգի Կայսրուհի Մարիայի բարեգործական ընկերության հոգաբարձուների խորհրդի պատվավոր հովանավոր, ինչպես նաև աչքի հիվանդանոցի հոգաբարձու: Պարգևատրվել է Սպիտակ արծվի (1881 թ.), Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1868 թ.), 2-րդ (27.02.1878 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1858 թ.), 1-ին (1873 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1863 թ.), 1-ին (1870 թ.), հեսսենյան՝ Ֆիլիպպ Մեծահոգու 1-ին աստիճանի (1874 թ.) շքանշաններով, «Խիզախության համար» ոսկե թրով (1878 թ.):

133. ԱՂԱՍԻ-ԲԵԿ-ԱՎՇԱՐՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1896 թ.)
Ռուսական բանակի հեծելազորային գեներալ
***(բանակի գեներալ**. 1903 թ.)*

Ալեքսանդր Ալեքսանդրի Աղասի-բեկ-Ավշարովը (ծն. 1833 թ. - 1907 թ., թաղված է Սանկտ-Պետերբուրգի Սուրբ Կիրակի եկեղեցու հայկական գերեզմանոցում) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: Սովորել է 2-րդ կադետական կորպուսում, ավարտել է Ելիզավետգրադյան հեծելազորային ուսումնարանը: Ծառայությունը բանակում սկսել է 1853 թ-ի հունիսի 12-ին: 1883 թ-ի հունիսի 24-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Եղել է հեծելազորային էսկադրոնի հրամանատար, հեծելազորային ուսումնարանի պետ: 1877-1883 թթ-ին եղել է Լիտովսկյան 5-րդ հեծելազորային գնդի հրամանատար, *1883-1885 թթ-ին՝ 8-րդ հեծելազորային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար, 1897 թ-ին՝ 12-րդ հեծելազորային դիվիզիայի 2-րդ, ապա՝ 6-րդ բրիգադների հրամանատար*, 1897-1902 թթ-ին՝ սպայական դպրոցի պետ, 1902 թ-ին՝ Ռուսական կայսեր հանձնարարությունների համար գեներալ: *1902 թ-ի փետրվարին նշանակվել է հեծելազորի գեներալ-հրահանգիչ*: Մասնակցել է 1853-1854 թթ. պատերազմական գործողություններին: Պարգևատրվել է Սպիտակ արծվի (1901 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1879 թ.), 3-րդ (1883 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1866 թ.), 2-րդ (1878 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1874 թ.), 1-ին (1886 թ.) աստիճանի, ռումինական Սպիտակ արծվի (1899 թ.) շքանշաններով: Տապանաքարի վրա հայերեն փորագրված է. «Շամախեցի հին զորապետ Աղասի բեկ Ավշարով»:

Վասիլի Մարկոզով

134. ՄԱՐԿՈԶՈՎ ՎԱՍԻԼԻ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (30.08.1882 թ.)
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
(բանակի գեներալ. 05.10.1893 թ.)

Վասիլի Իվանի Մարկոզովը (ծն. 01.01.1838 թ. - 1908 թ.) ռուսական բանակի ռազմական գործիչ է, ռազմական գրող, գեներալ-մայոր Իվան Պավլովի Մարկոզովի որդին, հավատը՝ ուղղափառ: 1867 թ. երկրորդ կարգի դիպլոմով ավարտել է Գլխավոր շտաբի Նիկոլայան ակադեմիան: Ծառայությունը Նիժեգորոդյան հեծելազորային գնդում սկսել է 1854 թ-ի օգոստոսի 2-ին: 1858-1868 թթ-ին եղել է Հյուսիսային հեծելազորային գնդի էսկադրոնի հրամանատար, Կովկասյան հրաձգային դպրոցի սպայական բաժնի պետ, Թիֆլիսի զինվորական ուսումնարանի վաշտի հրամանատար, 1860-1870 թթ-ին՝ 39-րդ հետևակային դիվիզիայի շտաբի ավագ համարզ, 1870-1872 թթ-ին՝ Կովկասյան զինվորական օկրուգի շտաբի ավագ համարզ, *1872 թ-ին՝ 39-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ, 1872-1879 թթ-ին՝ ջոկատի հրամանատար, գործող բանակի հոսպիտալների հրահանգիչ, 1881-1891 թթ-ին՝ 12-րդ բանակային կորպուսի շտաբի պետ, 1891 թ-ին՝ 6-րդ հետևակային դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար, 1892 թ-ին՝ 2-րդ հետևակային դիվիզիայի պետ*: 1878 թ-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Մասնակցել է 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմին, Կարսի գրոհին, Կովկասի լեռնականների դեմ կազմակերպված 1857-1859 թթ., 1863 թ., 1871 թ., 1873 թ. արշավանքներին, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Զինվորական մամուլում տպագրել է մի շարք հոդվածներ: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1873 թ.), 2-րդ (1887 թ.), Սուրբ Աննայի 4-րդ (1857 թ.), 3-րդ (1869 թ.), 1-ին (1884 թ.), Սուրբ Ստանիսլավի 1-ին (1880 թ.), պարսկական՝ Առյուծի և Արևի 2-րդ (1873 թ.), ռումինական՝ Աստղի 3-րդ (1879 թ.) աստիճանի շքանշաններով:

135. ԴՈՒՍՏՈՒՐՈՎ ՄԻԽԱՅԻԼ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ
(1870-ական թթ-ին)
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
(բանակի գեներալ.1885 թ.)

Միխայիլ Նիկոլայի Դուստուրովը (ծն. 1824 թ. - 1911 թ.) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Սերում է Կ.Պոլսից Ռուսաստան փոխադրված, ռուսական ազնվականի կարգավիճակ ստա-

ցած հայկական հնագույն գերդաստանից: 1843 թ. ավարտել է ազնվականական կորպուսը, նշանակվել Ուլանական գնդի կորնետ և 16 տարի ծառայել այդ գնդում: 1859-1865 թթ-ին եղել է պետական ձիաբուծարանների կառավարիչ: Այս բնագավառում աչքի է ընկել և ապահովել է ազնվացեղ ձիերով բանակի ապահովման գործը: 1865-1874 թթ-ին եղել է հեծելազորի գեներալ-հրահանգիչ, **1874-1883 թթ-ին՝ 1-ին հեծելազորային դիվիզիայի հրամանատար, 1883-1885 թթ-ին՝ հեծելազորային կորպուսի հրամանատար**: 1885 թ-ին արժանացել է հեծելազորի գեներալի աստիճանի և արձակվել պահեստազոր: Պարգևատրվել է Սպիտակ Արծվի (1878 թ.) շքանշանով:

136. ԻՍԿԱՆԴԱՐ ԽԱՆ ՍԵԹԽԱՆՅԱՆ

Իրանի բանակի խան (գեներալ, 1898 թ.)
Իրանի բանակի սարդար (մարշալ, 1914 թ.)

Իսկանդար խան Սեթխանյան

Իսկանդար (Սեդրակ °) խան Սեթխանյանը (ծն. 1864 թ., Իրան, Թավրիզ - 08.04.1953 թ., Թեհրան) Իրանի բանակի ռազմական գործիչ է: Սկզբնական կրթություն ստացել է Թավրիզում՝ աշակերտելով հայ մեծ պատմավիպասան Ռաֆֆուն, միջնակարգը՝ Թիֆլիսում, բարձրագույն ռազմական կրթությունը՝ Մոսկվայում: 1890-1921 թվականներին ծառայել է Իրանի բանակում: Կարճ ժամանակահատվածում դարձել է իրանի բանակի հեծելազորի ընդհանուր հրամանատար: **1906-1907 թթ-ին եղել է Իրանի բանակի գլխավոր շտաբի պետը**: Զինվորական ծառայությունը թողել է 1921 թ-ին:

137. ԵՓՐԵՄ ԽԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Իրանի բանակի սարդար (մարշալ, 24.08.1911 թ.)

Եփրեմ խան Դավթյան

Եփրեմ Խանը (Եփրեմ Դավթի Դավթյան) (ծն. 1868 թ., Ելիզավետպոլի նահանգ, Շամխորի գավառ, գ. Բարսում - 06.05.1912 թ., գ. Սուրջև, զոհվել է Համադան քաղաքի մոտ, Իրան) հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ է, 1905-1911 թթ-ի իրանական հեղափոխության և Իրանի բանակի ռազմական գործիչ, Իրանի ազգային հերոս: 1880-ական թվականներին անցել է Արևմտյան Հայաստան, միացել Մուշում, Սասունում, Վանում, Էրզրումում գործող հայդուկային խմբերին և մարտնչել թուրքերի դեմ: 1890 թ-ին Սարգիս Կուկունյանի խմբի արշավանքին մասնակցելու համար ձերբակալվել և աքսորվել է Սիբիր (1892թ.), ապա՝ Սախալին: 1896 թ. փախել է աքսորից և հասել Թավրիզ:

1897 թ-ին մասնակցել է Խանասորի արշավանքին: Հետագայում գործուն մասնակցություն է ունեցել 1905-1911 թթ-ի իրանական հեղափոխությանը, դարձել նրա նշանավոր ղեկավարներից մեկը: 1909 թ-ին, Թեհրանի գրավումից և շահի տապալումից հետո, **նշանակվել է Թեհրանի ոստիկանապետ, ապա՝ Իրանի ժամանակավոր կառավարության զինված ուժերի հրամանատար**: 1910 թ-ի հունիսին սարդար Բահադուրի հետ հաղթել են շահսևաններին և գերել են հակառակորդի 59 խաների (գեներալների): Տվել է ավելի քան 60 մեծ ու փոքր ճակատամարտ և հաղթել հակահեղափոխական ու միապետական ուժերին: Զոհվել է Իրանի Համադան քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Թաղվել է Թեհրանի կենտրոնում իր ունեցած կալվածքում, որի տարածքի վրա հետագայում կառուցվել են Հայկազյան (հետագայում Եփրեմ Խանի անունով կոչվել է Դավթյան) դպրոցը, Սուրբ Աստվածածին եկեղեցին, ուսումնական-առողջապահական կենտրոն: Դպրոցի մարզահրապարակը կառուցելու նպատակով Եփրեմ խանի աճյունը մոտ 30 մետր փոխադրվել է և շիրմաթմբի վրա կանգնեցվել է կիսանդրի: 1922 թ-ին Թավրիզում, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցվել է Սահմանադրական կռիվներում նահատակված հայերի հուշարձան, որի վրա առաջինը փորագրված է Եփրեմ խանի անունը: Իրանական պատմագրությունը բարձր է գնահատել նրան և համարել բուրժուադեմոկրատական առաջադեմ գործիչ, ժողովրդական հերոս, տաղանդավոր զորավար: Նրան անվանել են Արևելքի Գարիբալդի: Ականավոր բանաստեղծ Դանիել Վասրուժանը նվիրյալ հայորդուն է ձոնել «Եփրեմ» պոեմը:

Մատվեյ Լալաև

138. ԼԱԼԱԵՎ ՄԱՏՎԵՅ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1882 թ.)
Ռուսական բանակի հրետանու գեներալ
(բանակի գեներալ. 01.05.1896 թ.)

Մատվեյ Ստեփանի Լալաևը (ծն. 1828 թ., Աստրախան - 1912 թ., թաղված է Սանկտ-Պետերբուրգի Սուրբ Հարություն եկեղեցու հայկական գերեզմանատանը) ռուսական բանակի ռազմական գործիչ է, ռազմական մանկավարժ, գրող, հայ-գրիգորյանական: 1846 թ. ավարտել է կադետական 2-րդ կորպուսը, Գվխավոր շտաբի Նիկոլաևյան զինվորական ակադեմիան: Զինվորական ծառայությունը ենթասպայի կոչումով սկսել է 14-րդ հետևակային հրետանային մարտկոցում 1846 թ-ի օգոստոսի 12-ին: 1849 թ-ին անցել է մանկավարժական աշխատանքի: 1856-1863 թթ-ին եղել է կադետական 2-րդ կորպուսի դաստիարակ, համատեղությամբ՝ գրադարանավար, 1863-1865 թթ-ին՝ 2-րդ վարժարանի դաստիա-

րակ, *1865-1877 թթ-ին՝ ուսումնական հաստատությունների գլխավոր վարչության սպա: 1877 թ-ի հունվարի 19-ին նշանակվել է հանձնարարությունների գծով գեներալ:* 1872 թ-ի հունվարի 1-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Սպիտակ արծվի շքանշանով (1887 թ.), Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1869 թ.), 2-րդ (1879 թ.), Սուրբ Աննայի 2-րդ (1867 թ.), 1-ին (1876 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1861 թ.), 2-րդ (1864 թ.), 1-ին (1873 թ.) աստիճանի, Ֆրիդրիխի Հրամանատարական խաչ շքանշաններով (01.06.1880 թ.): Երիտասարդ տարիներին աշխատել է «Սովրեմեն-նիկ» հանդեսի խմբագրությունում: Երկարամյա ծառայության ընթացքում գրել և հրատարակել է մանկավարժական բնույթի, պատմական թեմաներով բազմաթիվ հոդվածներ:

139. Իշխան ԹՈՒՄԱՆՈՎ ՆԻԿՈԼԱՅ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (06.12.1899 թ.)
Ռուսական բանակի ճարտարագետ-գեներալ
(բանակի գեներալ. 06.12.1907 թ.)
Ռուսաստանի ռազմական խորհրդի անդամ (1910-1916 թթ-ին)

Իշխան Նիկոլայ Եվսեյի Թումանովը (Թումանյան) (ծն. 24.10.1844 թ. - 1916 թ.) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հավատը՝ ուղղափառ: Սերում է հնագույն հայկական Մամիկոնյան տոհմից: Սովորել է 1-ին կադետական կորպուսում, ավարտել է 1-ին Պավլովյան զինվորական ուսումնարանը, 1-ին կարգի դիպլոմով Նիկոլայեան ճարտարագիտական ակադեմիան: Ծառայությունը բանակում սկսել է 1863 թ. օգոստոսի 25-ին: 1881 թ-ի ապրիլի 12-ին արժանացել է գնդապետի կոչման, 1892 թ-ի օգոստոսի 30-ին՝ գեներալ-մայորի աստիճանի: 1880-1882 թթ-ին եղել է Քութայիսի ճարտարագիտական կրակադաշտի պետ, 1882-1897 թթ-ին Կարս ամրոցի ճարտարագիտական վարչության պետ, 1897-1899 թթ-ին՝ Մերձկասպյան մարզի ճարտարագիտական կառույցների պետ, *1899-1903 թթ-ին՝ Վարշավայի զինվորական օկրուգի ճարտարագիտական վարչության պետ, 1903 թ-ին՝ 38-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, 1904-1905 թթ-ին՝ 1-ին Մանջուրական բանակի տեսուչ-ճարտարագետ, 1905-1906 թթ-ին՝ Վարշավայի զինվորական օկրուգի ճարտարագիտական վարչության պետ, 1906-1910 թթ-ին՝ Բրեստ-Լիտովսկի ամրոցի հրամանատար.* 1910-1912 թթ-ին՝ Ռազմական խորհրդին կից ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփող ժամանակավոր հանձնաժողովի նախագահ: 1912-1916 թթ-ին եղել է 3-րդ հրետանային ուսումնարանի կառուցման կոմիտեի նախագահ: *1916 թ. հուլիսի 13-ին նշանակվել է Արևմտյան ճակատի բանակների մատակարարման գլխավոր վարչության պետ:* Պարգևատրվել է ռուսական Սուրբ Ալեքսանդր Նևսկու (1911 թ.), Սպիտակ արծվի (1906 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1878 թ.), 3-րդ (1895 թ.), 2-րդ (1906 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1874 թ.), 2-րդ (1888 թ.), 1-ին (1904 թ.), Սուրբ Ստանիսլավի 1-ին (1898 թ.), պարսկական Առյուծի և Արևի 1-ին (1899 թ.), բուխարական Ոսկե աստղի 1-ին (1898 թ.) աստիճանի շքանշաններով:

140. ԽԵՄՇԻԵՎ ԳԵՈՐԳԻ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1901 թ.)
Ռուսական բանակի հրետանու գեներալ
(բանակի գեներալ. 13.04.1908 թ.)

Գեորգի Սպիրիդոնի Խեմշիևը (ծն. 14.01.1836 թ. - 16.07.1917 թ., Թիֆլիս) Աջարիայի ռազմական գործիչ է: Սերում է Աջարիայի Համշենահայ (Խեմշի օղլի՝ Խեմշինի կամ Համշենի որդի) աթաբեկների ընտանիքից: Ավարտել է Պավլովսկի կադետական կորպուսը: Ծառայությունը բանակում սկսել է 1855 թ-ին: *1892-1893 թթ-ին եղել է 6-րդ հրետանային բրիգադի հրամանատար, 1893-1897 թթ-ին՝ 39-րդ հրետանային բրիգադի հրամանատար, 1897-1899 թթ-ին՝ Կովկասյան առաջին բանակային կորպուսի հրետանու պետ և Կովկասյան զինվորական օկրուգի հրետանու պետ:* 1905 թ-ին նշանակվել է վիրավոր զինվորների Ալեքսանդրյան կոմիտեի անդամ: 1877 թ-ին արժանացել է գնդապետի կոչման, 1892 թ-ի հոկտեմբերի 12-ին՝ գեներալ-մայորի աստիճանի: Մասնակցել է 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմին: Պարգևատրվել է Սպիտակ արծվի (1911 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1881 թ.), 3-րդ (1883 թ.), 2-րդ (1905 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1860 թ.), 2-րդ (1871 թ.), 1-ին (1893 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1896 թ.), 2-րդ (1874 թ.), 1-ին (1899 թ.) աստիճանի շքանշաններով:

Ադամ Ղորղանան

141. ՂՈՐՂԱՆՅԱՆ ԱԴԱՄ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (17.04.1905 թ.)
Ռուսական բանակի հեծելազորի գեներալ
(բանակի գեներալ. 10.08.1911 թ.)

Ադամ Սողոմոնի Ղորղանյանը (Ղորղանով) (ծն. 15.08.1846 թ. - մահվան թվականն՝ անհայտ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: Ավարտել է 2-րդ կադետական կորպուսը, 1-ին Պավլովյան զինվորական ուսումնարանը, Կովկասյան հեծելազորային էսկադրոնի ուսումնական վաշտը: Ծառայությունը բանակում սկսել է 1865 թ. օգոստոսի 7-ին: Եղել է էսկադրոնի, դիվիզիոնի հրամանատար, հատուկ հանձնարարությունների սպա: 1891-1899 թթ-ին եղել է 22-րդ Աստրախանյան հեծելազորային գնդի հրամանատար, *1899-1904 թթ-ին՝ 3-րդ հեծելազորային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար, 1904-1905 թթ-ին՝ Կովկասյան 11-րդ դիվիզիայի հրամանատար, 1905 թ-ին՝ Կովկասյան 9-րդ դիվիզիայի հրամանատար, 1905-1908 թթ-ին՝ Կովկասյան 9-րդ դիվիզիայի պետ, 1908-1913 թթ-ին՝ 12-րդ բանա-*

կային կորպուսի հրամանատար (Կիև): Մասնակցել է 1877-1878 և 1879 թթ. պատերազմներին: 1899 թ. ապրիլի 28-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1895 թ.), 3-րդ (1895 թ.), Սուրբ Աննայի 1-ին (1909 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1878 թ.), 1-ին (1860 թ.) աստիճանի շքանշաններով: Գեներալ-լեյտենանտ Թարխան Խոջամինասովի կնոջ եղբայրն է:

142. ԿՈՄԱՐՈՎ ԱՆԴՐԵՅ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1910-ական թթ-ին)
*Ռուսական բանակի հեծելազորի գեներալ (**բանակի գեներալ**.1915 թ.)*

Անդրեյ Նիկոլայի Կոմարովը (Կոմարյանց) (կենսագրական տվյալներ չկան) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Փոխգնդապետի կոչումով մասնակցել է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին: Գործուն մասնակցություն է ունեցել այդ պատերազմի հետևանքները և այլ ռազմական խնդիրներ քննելու համար ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին: Ժամկետից շուտ ստացել է գնդապետի կոչում: Առաջին համաշխարհային պատերազմն սկսել է Արևմտյան ռազմաճակատում. 1914 թ-ի օգոստոսի 28-ին, 3-րդ Ֆինլանդական հրաձգային բրիգադի կազմում. եղել է 4-րդ հրաձգային գնդի հրամանատար: Գունդը մասնակցել է Գրոդնոյի գրավման մարտերին, առանձնապես աչքի է ընկել Կարպատյան լեռների Կոզյուվկի անցումը գերմանացիներից պաշտպանելու մարտերում (երբ վերջացել է ռազմամթերքը զորավարը զինվորներին սվինամարտի է տարել և ապահովել հաղթանակը): Ռազմական պատմաբան Վերխովսկին գրել է. «Կոմարովն իր ռազմական ուղին անցել է զինվորին վայել պատվով և իր երդմանը հավատարիմ: Նա բարձրագույն սպայակազմի սպաներից առանձնանում էր իր դաստիարակությամբ, պահվածքով, դավերում և խարդավանքներում իր իներտությամբ»: *1917 թ-ի վերջերին ծառայել է ծովակալ Կոլչակի բանակում: Եղել է Չերնամորյան դիվիզիայի հրամանատար*: Դիվիզիան կազմավորվել է ծանր պայմաններում և բազմափորձ. կադրային գեներալի նշանակումը դիվիզիայի հրամանատարի պաշտոնում պատահական չի եղել:

143. Իշխան ԹՈՒՄԱՆՈՎ ԳԵՈՐԳԻ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (01.07.1910 թ.)
*Ռուսական բանակի հեծելազորի գեներալ (**բանակի գեներալ**.1916 թ.)*

Իշխան Գեորգի Ալեքսանդրի Թումանովը (ծն. 24.11.1856 թ. - 1933 թ., Փարիզ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, գեներալ-մայոր Ալեքսանդր Գեորգիի Թումանովի (1821-1872 թթ-ին) որդին, հավատը՝ ուղղափառ: Սերում է հնագույն հայկական Մամիկոնյան տոհմից: Ավարտել է Մոսկվայի Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանի գիշերօթիկ դպրոցը, Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանը և գերազանցությամբ՝ գլխավոր շտաբի Նիկոլաևյան ակադեմիան: Ծառայությունը Նիժեգորոդյան 1-ին հեծելազորային գնդում սկսել է 1875 թ. սեպտեմբերի 1-ին: 1894 թ. ապ-

րիլի 17-ին արժանացել է գնդապետի, 1902 թ. դեկտեմբերի 6-ին՝ գեներալ-մայորի աստիճանների: Եղել է էսկադրոնի հրամանատար, շտաբի ավագ համարգ, զինվորական օկրուգի շտաբի հատուկ հանձնարարությունների սպա, ավագ համարգ, շտաբային սպա: 1896-1900 թթ-ին՝ 6-րդ հեծելազորային դիվիզիայի շտաբի պետ, 1900-1901 թթ-ին՝ 27-րդ հեծելազորային Կինյան գնդի հրամանատար, 1901-1904 թթ-ին՝ Վարշավայի զինվորական օկրուգի հրամանատարի հատուկ հանձնարարությունների գեներալ, *1904-1905 թթ-ին՝ Սիբիրյան կազակական դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար, 1905-1906 թթ-ին՝ 10-րդ բանակային կորպուսի շտաբի պետ, 1906-1907 թթ-ին՝ 2-րդ հեծելազորային կորպուսի շտաբի պետ, 1907 թ-ին՝ 16-րդ բանակային կորպուսի շտաբի պետ*, 1907-1910 թթ-ին՝ Վարշավայի զինվորական օկրուգի շտաբի հերթապահ գեներալ, *1910-1916 թթ-ին՝ 13-րդ հեծելազորային դիվիզիայի պետ: 1916 թ. ապրիլի 6-ին նշանակվել է 7-րդ հեծելազորային կորպուսի հրամանատար*: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական, 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմներին: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1905 թ.), 2-րդ (1913 թ.), Սուրբ Աննայի 4-րդ (1880 թ), 3-րդ, 2-րդ, 1-ին (1909 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1878 թ), 2-րդ, 1-ին (1906 թ) աստիճանի շքանշաններով, ոսկե զենքով (1906 թ.): 1919 թ-ից եղել է էմիգրացիայում:

144. ՕԳԱՆՈՎՍԿԻ ՊՅՈՏՐ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1911 թ.)
Ռուսական բանակի հեծելազորային գեներալ
(բանակի գեներալ. 1916 թ.)

Պյոտր Իվանովիչ Օգանովսկին (ծն. 1866 թ. - մահվան թվականն անհայտ) ռուսական բանակի ռազմական գործիչ է: Սերում է հնագույն հայկական ազնվական տոհմից: 1901-1903 թթ-ին գնդապետի կոչումով եղել է Կովկասյան 1-ին բանակային կորպուսի 20-րդ հետևակային դիվիզիայի 79-րդ գնդի հրամանատար, 1908-1909 թթ-ին՝ գեներալ-մայորի աստիճանով՝ 66-րդ պահեստային բրիգադի հրամանատար, *1911-1913 թթ-ին՝ գեներալ-լեյտենանտի աստիճանով՝ Կովկասյան 2-րդ բանակային կորպուսի 51-րդ Կովկասյան հետևակային դիվիզիայի հրամանատար, համատեղությամբ՝ Վրաստանի Քութաիսի քաղաքի հաշտարար դատավոր*: ***1915 թ-ին ստացել է հեծելազորային գեներալի աստիճան և նշանակվել Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար***: Աչքի է ընկել Սարիղամիշի, Ալաշկերտի օպերացիաների ժամանակ: 4-րդ կորպուսի զորամասերը 1915 թ-ի ապրիլի 24-ին հարձակման են անցել և ազատագրել է Վանը, Արճեշը, Կոփը: Սակայն հուլիսի 5-ին սկսվել է թուրքերի հակահարձակումը և կորպուսը թողել է ազատագրված տարածքներն ու նահանջել է:

145. ԱԹԱԲԵԿՈՎ ԱՆԴՐԵՅ

Անդրեյ Աթաբեկով

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (06.12.1906 թ.)
Ռուսական բանակի հրետանու գեներալ
*(**բանակի գեներալ**. 10.04.1916 թ.)*

Անդրեյ Ադամի Աթաբեկովը (ծն. 05.10.1854 թ. - մահվան թվականն՝ անհայտ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, հավատը՝ ուղղափառ: Սերում է Արցախի հնագույն Մելիք-Վանի Աթաբեկյան տոհմից, հայրը ցարական բանակի գնդապետ էր: Ավարտել է Կիևյան-Վլադիմիրյան զինվորական վարժարանը, Ալեքսանդրյան և Միխայիլովյան 3-րդ զինվորական ուսումնարանը, գերազանցությամբ՝ Միխայիլովյան ակադեմիան: Ծառայությունը բանակում սկսել է 1870 թ-ի օգոստոսի 5-ին: 1900 թ-ի ապրիլի 9-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Եղել է մարտկոցի հրամանատար, հրետանային ուսումնական կրակադաշտի պետ: *1900-1903 թթ-ին եղել է հրետանային 1-ին բրիգադի հրամանատար, 1903-1907 թթ-ին՝ Կոնստանտինովյան հրետանային ուսումնարանի պետ, 1907 թ-ին՝ 19-րդ հրետանային բանակային կորպուսի հրետանու պետ, 1907-1910 թթ-ին՝ 17-րդ բանակային կորպուսի հրետանու պետ, 1910-1913 թթ-ին՝ 17-րդ բանակային կորպուսի հրետանու հրահանգիչ: 1913 թ-ի ապրիլի 21-ին նշանակվել է Մոսկվայի զինվորական օկրուգի հրետանու պետ*: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 2-րդ (1910 թ.), Սուրբ Աննայի 1-ին (1906 թ.), Սուրբ Ստանիսլավի 1-ին (1903 թ.) աստիճանի շքանշաններով:

146. Իշխան ԲԱՐԱԹՈՎ ՆԻԿՈԼԱՅ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (1912 թ.)
*Ռուսական բանակի հեծելազորի գեներալ (**բանակի գեներալ**.1916 թ.)*

Նիկոլայ Նիկոլայի Բարաթովը (Բարաթյան) (ծն. 01.02.1865 թ. - 22.03.1932 թ., Փարիզ, թաղված է Փարիզի մոտակա Սենտ-Ժենեվն դե Բուայի գերեզմանոցում) ռուսական բանակի ռազմական գործիչ է: 1882 թ. ավարտել է դասական գիմնազիան, 1886 թ. 2-րդ Կոստանտինովյան զինվորական ուսումնարանը, 1888 թ.՝ Նիկոլաևյան ճարտարագիտական ուսումնարանը, 1891 թ.՝ Գլխավոր շտաբի Նիկոլաևյան ակադեմիան: 1891-1897 թթ-ին եղել է 13-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետի համհարզ, 1897-1900 թթ-ին՝ փոխգնդապետի կոչումով՝ Ստավրոպոլի կազակական ուսումնարանի մարտավարական արվեստի դասախոս, 1900-1904 թթ-ին՝ գնդապետի կոչումով՝ 65-րդ հետևակային պահեստային բրի-

գաղի շտաբային սպա, 1904-1905 թթ-ին՝ Մանջուրական բանակի Սունժենսկի-Վլադիկավկազյան 1-ին Թերեքյան գնդի հրամանատար, *1906-1916 թթ-ին՝ Կովկասյան 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետ (1906 թ-ի մայիսի 18-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի), 1916-1918 թթ-ին՝ Առանձին էքսպեդիցիոն կորպուսի գլխավոր հրամանատար (Իրան)*: Մասնակցել է քաղաքացիական պատերազմին: *1918 թ-ի փետրվար -1919 թ-ի հոկտեմբեր ամիսներին եղել է Անդրկովկասում Ռուսաստանի Կամավորական բանակի և Ռուսաստանի Հարավի զինված ուժերի ներկայացուցիչ*: 1919 թ-ի սեպտեմբերի 13-ին Թիֆլիսում իր վրա կատարված մահափորձի ժամանակ ծանր վիրավորվել և կորցրել է ոտքը: *1919 թ-ի դեկտեմբեր - 1920 թ-ի մարտ ամիսներին Մելնիկովի «Հարավռուսական կառավարություն»-ում եղել է արտաքին գործերի նախարարության կառավարիչ, մարտ - ապրիլ ամիսներին՝ արտաքին գործերի նախարար*: 1920 թ-ի ապրիլ-մայիս ամիսներին եղել է Վրաստանում: 1920 թ-ի մայիսին Բաթումիից անցել է արտասահման, բնակվել է Ֆրանսիայում: Գեներալ Վրանգելի հանձնարարությամբ զբաղվել է հաշմանդամներին օգնություն կազմակերպելու հարցերով: 1930-1932 թթ-ին եղել է ռուս հաշմանդամների Արտասահմանյան միության նախագահը և «Ռուսսկի ինվալիդ» ամսաթերթի խմբագիրը: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1906 թ.), 3-րդ (1909 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1895 թ.), 2-րդ (1904 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1893 թ.), 2-րդ (1898 թ.) աստիճանի շքանշաններով:

147. ԲԱՂՐԱՄՈՎ ԻՎԱՆ

Ռուսական բանակի գեներալ-մայոր (25.03.1912 թ.)
ՀՀ բանակի գեներալ-լեյտենանտ (1919 թ.)
ՀՀ բանակի ռազմական խորհրդի անդամ (24.04.1919 թ.)

Իվան Սերգեյի Բաղրամովը (Բաղրամյան) (ծն. 07.11.1860 թ. - 1921 թ., խորհրդային բռնատիրության զոհ) ռուսական և Հայաստանի Առաջին Հանրապետության բանակների ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: Ավարտել է Կոստանտինովյան 2-րդ զինվորական ուսումնարանը, Գլխավոր շտաբի Նիկոլաևյան ակադեմիան: Ծառայությունը բանակում սկսել է 1879 թ-ի սեպտեմբերի 1-ին: 1906 թ-ի ապրիլի 2-ին արժանացել է գնդապետի աստիճանի: Ծառայել է գլխավոր շտաբում: 1906-1909 թթ-ին եղել է գլխավոր շտաբի զորակոչային բաժնի գործավար, 1909-1910 թթ-ին՝ գլխավոր շտաբի գլխավոր վարչության գործավար, 1910-1913 թթ-ին՝ գլխավոր շտաբի գլխավոր վարչության բաժնի պետ: *1913 թ-ի հունվարի 14-ին նշանակվել է գլխավոր շտաբի զորահավաքային բաժնի պետ: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին,* ***եղել է բանակային 12 կորպուսներից կազմված 500 հազարանոց բանակային խմբի շտաբի պետ***: Պարգևատրվել է Սուրբ Աննայի 3-րդ (1900 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1909 թ) աստիճանի շքանշաններով: Մասնակցել է Հայաստանի Առաջին Հանրապետության բանակաշինության գործընթացներին, եղել է ՀՀ բանակի ռազմական խորհրդի անդամ: 1921 թ-ի հունվարին աքսորվել է Ռյազանի համակենտրոնացման ճամբար: 2004 թ-ի օգոստոսի 6-ին Մոսկվայի զինվորական օկրուգի զինվորական դատախազության որոշմամբ արդարացվել է:

148. ՀԱԿՈԲ ՁԱՏԻԿ

Հակոբ Ձատիկ

Ռումինիայի բանակի գեներալ-լեյտենանտ (1916 թ.)

Հակոբ (Յակոբ) Ձատիկը (ծն. 08.12.1867 թ., Ռումինիա, Յաշ գավառ, գյուղի անունն անհայտ է – 1970 թ.) ռումինական բանակի ռազմական գործիչ է: Սերում է Անիից Մոլդավիա փոխադրված Ձատիկյանների հնագույն գերդաստանից: Ձատիկ ընտանիքն ազգակցական կապեր ունի հայկական ծագում ունեցող Միսիր, Կապրի, Պրունկու, Գոյլավ, Բույուկլիու, Քեսիմ ընտանիքների հետ: 1888 թ. ավարտել է Բուխարեստի սպայական դպրոցը, 1890 թ.՝ Հրետանային և ճարտարագիտական հատուկ դպրոցը, 1898 թ.՝ Ռազմական բարձրագույն դպրոցը: 1916 թ-ին, Ազգային միավորման պատերազմի ժամանակ, եղել է Հյուսիսային բանակի շտաբի պետ: Աչքի է ընկել Մըրըշեշտի ճակատամարտում: *1917 թ-ին եղել է Ռազմամթերքի և պատերազմական տեխնիկայի նախարարության գլխավոր քարտուղար, 1918-1920 թթ-ին՝ 8-րդ դիվիզիայի հրամանատար*: 1919 թ-ի կեսերին Մարգիլոմանի կառավարությունը որոշել է օգնել Բուկովինիայի ռումիններին և կարգադրել է 8-րդ դիվիզիային սահմանապահների, ժանդարմական ուժերի հետ ազատագրել Բուկովինիան՝ ներառյալ Իցկա, Սուչավա, Չերնովիցե քաղաքները: Սահմանն անցնելուց առաջ Հակոբ Ձատիկը զինվորներին ասել է. «Զինվորներ, ձեզ է տրված բախտի ճակատագիրը՝ սիրելի Բուկովինիայի հողի վրա առաջինը ոտք դնելու իրավունքը: Եղեք հպարտ և արժանի այդ վստահության համար: Ցանկանում եմ հաջողություն և ասում. Ատծո հետ, առաջ»: Հրամանը կատարվել է, Բուկովինիան ազատագրվել է և Ռումինիայի Սենատն ու պատգամավորների պալատը 1919 թ-ի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Բուկովինիան հայտարարել են Ռումինիայի պատմական տարածք: Ժամանակակիցները նրան անվանել են «Ռումինիայի պսակ»: Պարգևատրվել է ռումինական «Հայրենիքի պաշտպանության համար» 2-րդ աստիճանի, ֆրանսիական «Պատվո լեգիոնի» շքանշաններով: Մահվան մահճում 103-ամյա գեներալը գոչել է. «Ես հայ եմ»:

149. ԲՈՉՈՅԱՆ (ՊՈՉՈԵՎ) ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ռուսական բանակի գեներալներ

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ (31.05.1913 թ.) Լևոն Ավետիքի Բոզոևը (Բոզոյան, Պոզոև-Պոզոյան) (ծն. 06.01.1855 թ. - մահվան թվականն՝ անհայտ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, գեներալ-մայորներ Ռուբեն և Գեորգի Բոզոևների եղբայրը, հայ-գրիգորյանական: Սերում է Թիֆլիսի հայկական տոհ-

միկ ազնվականական տոհմից: Ավարտել է Մոսկվայի 2-րդ զինվորական վարժարանը, Միխայիլովյան հրետանային ուսումնարանը, գերազանցությամբ՝ Միխայիլովյան հրետանային ակադեմիան: Ծառայությունը բանակում սկսել է 1875 թ-ի օգոստոսի 4-ին: 1900 թ-ի ապրիլի 9-ին արժանացել է գնդապետի կոչման: Եղել է հրետանային մարտկոցի, դիվիզիոնի հրամանատար: 1906-1907 թթ-ին եղել է 5-րդ պահեստային բրիգադի 1-ին դիվիզիոնի հրամանատար, *1907-1910 թթ-ին՝ 1-ին Թուրքեստանյան հրետանային բրիգադի հրամանատար, 1910-1916 թթ-ին՝ 1-ին Թուրքեստանյան բանակային կորպուսի հրետանու հրահանգիչ: 1916 թ-ի ապրիլի 16-ին նշանակվել է Թուրքեստանյան զինվորական օկրուգի հրետանու պետ*: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, 1904-1905 թթ.՝ ռուս-ճապոնական պատերազմին: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1901 թ., 1905 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1885 թ.), 2-րդ (1894 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1879 թ.), 2-րդ (1889 թ.) աստիճանի շքանշաններով, ոսկե զենքով (1905 թ.):

Ռուսական բանակի գեներալ-մայոր (1916 թ.) Գեորգի Ավետիքի Բոզոևը (Բոզոյան, Պոզոև-Պոզոյան) (ծն. 20.10.1858 թ., Ախալցխա-մահվան թվականն՝ անհայտ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, գեներալ-լեյտենանտ Լևոն Բոզոևի և գեներալ-մայոր Ռուբեն Բոզոևի եղբայրը, հայ-գրիգորյանական: Սերում է Թիֆլիսի հայկական տոհմիկ ազնվականական տոհմից: Ավարտել է Մոսկվայի 2-րդ զինվորական վարժարանը, Մոսկվայի 3-րդ Ալեքսանդրովյան զինվորական ուսումնարանը և սպայական հրետանային դպրոցը: Զինվորական ծառայությունն սկսել է 1876 թ-ի օգոստոսի 16-ին: 1910 թ-ի օգոստոսի 1-ին ստացել է գնդապետի աստիճան: Եղել է հրետանային դասակի, մարտկոցի, դիվիզիոնի հրամանատար: Մասնակցել է 1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմին: Եղել է 3-րդ գրենադերական հրետանային գնդի 2-րդ դիվիզիոնի հրամանատար: 1914 թ-ի օգոստոսին կռվել է Արևմտյան ռազմաճակատի Զամիտիե, Զամոստյա քաղաքների շրջանում, և նշանառու կրակով ապահովել ռուսական զորքերի հաղթանակը: 1910 թ-ին արժանացել է գնդապետի կոչման: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 2-րդ, Սուրբ Աննայի 2-րդ, Սուրբ Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշաններով:

Ռուսական բանակի գեներալ-մայոր (1917 թ.) Ռուբեն Ավետիքի Բոզոևը (Բոզոյան, Պոզոև-Պոզոյան) (ծն. 16.11.1856 թ. - 1930-ական թվականներ, խորհրդային բռնատիրության զոհ) ռուսական բանակի ռազմական գործիչ է, գեներալ-լեյտենանտ Լևոն Բոզոևի և գեներալ-մայոր Գեորգի Բոզոևի եղբայրը, հայ-գրիգորյանական: Սերում է Թիֆլիսի հայկական տոհմիկ ազնվականական տոհմից: Ավարտել է Մոսկվայի 2-րդ զինվորական վարժարանը, Միխայիլովյան հրետանային ուսումնարանը և սպայական հրետանային դպրոցը: Ծառայությունը բանակում սկսել է 1875 թ-ի օգոստոսի 12-ին: Սպայական կոչում ստացել է 1878 թ-ի ապրիլի 16-ին: Սպայական ծառայությունն սկսել է Կովկասյան ճակատում գործող 39-րդ հրետանային բրիգադում, եղել է մարտկոցի հրամանատար: 1885 թ-ի դեկտեմբերի 1-ին արժանացել է շտաբս-կապիտանի, 1892 թ-ի մարտի 25-ին՝ կապիտանի, 1898 թ-ի հոկտեմբերի 13-ին՝ փոխգնդապետի, 1910 թ-ի հունիսի 1-ին՝ գնդապետի աստիճանի: Եղել է հրետանային մարտկոցի, դիվիզիոնի հրամանատար: *1916-1917 թթ-ին եղել է 6-րդ հրետանային բրիգադի հրամանատար: 1917 թ-ի նոյեմբերին նշանակվել է Հայկական կորպուսի հրետանու պետ*: Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումից հետո ծառայել է Հայաստանի զինված ուժերում, եղել է զինվորական նախարարությանն առընթեր հրետանու գծով հանձնակատար-գեներալ: Մասնակցել է 1877-1878 թթ.

ռուս-թուրքական պատերազմին, 1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմին՝ Կովկասյան ճակատում: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1921 թ-ին, այլ հայ սպաների թվում աքսորվել է Ռյազան: Նույն թվականին բանտից ազատվելուց հետո հաստատվել է Թբիլիսիում: 2004 թ-ի օգոստոսի 6-ին Մոսկվայի զինվորական օկրուգի զինվորական դատախազության որոշմամբ արդարացվել է: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 3-րդ (1912 թ.), Սուրբ Աննայի 2-րդ (1902 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1898 թ.) աստիճանի շքանշաններով:

150. ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ ԹՈՎՄԱՍ

Թովմաս Նազարբեկյան

Ռուսական բանակի գեներալ-մայոր (1907 թ.),
Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի
գեներալ-լեյտենանտ (15.07.1919 թ.),
Հայոց սպարապետ (25.03.1919 թ.),
Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի
*հետևազորի գեներալ (**բանակի գեներալ, 26.01.1920 թ.**)*

Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյանը (Ֆոմա Նազարբեկով) (ծն. 04.04.1855 թ. - 17.02.1931 թ., Թիֆլիս) ռուսական և Հայաստանի Առաջին Հանրապետության բանակների ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: Սերում է հին տոհմական ազնվական ընտանիքից: 1874 թ. ավարտել է Մոսկվայի 2-րդ զինվորական վարժարանը, 1876 թ.՝ Ալեքսանդրյան զինվորական ուսումնարանը: Ծառայությունը լեյբ-գվարդիայի Երևանյան 13-րդ հեծելազորային գնդում սկսել է 1876 թ. օգոստոսի 10-ին: 1877-1881 թթ-ին եղել է 4-րդ գումարտակի համարգ, 13-րդ վաշտի հրամանատար, 1881-1895 թթ-ին՝ Վրացական հեծելազորային գնդի 2-րդ, ապա՝ 1-ին վաշտերի հրամանատար, 1895-1896 թթ-ին՝ գնդի ավագ սպա, գնդի դատարանի նախագահ, 1896-1901 թթ-ին՝ 4-րդ պահեստային գումարտակի հրամանատար, 1902-1904 թթ-ին՝ Անդիջանի գումարտակի հրամանատար, 1904-1906 թթ-ին՝ Կիրսանի 286-րդ հետևակային գնդի հրամանատար, 1906-1907 թթ-ին՝ Օլոնեցկի 14-րդ հետևակային գնդի հրամանատար: 1907-1914 թթ-ին գեներալ-մայորի աստիճանով եղել է պահեստազորում: Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո զորակոչվել է զինվորական ծառայության: *1914 թ-ին եղել է Կովկասյան 2-րդ հետևակային բրիգադի հրամանատար, 1915-1917 թթ-ին՝ Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, 1917 թ-ին՝ Երևանյան ջոկատի պետ և կորպուսի հրամանատարի իրավունքներով նահանգի զորքերի հրամանատար, 1917-1918 թթ-ին՝ Հայկական առանձին բանակային կորպուսի հրամանատար, 1919-1920 թթ-ին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության զորքերի հրամանատար-սպարապետ, ռազմական խորհրդի նախա-*

զահ: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական (Արդահան), 1904-1905 թթ. ռուս-ճապոնական (Մուկդեն) պատերազմներին: Կռվել է Կովկասյան ռազմաճակատում: Նազարբեկյանի դիվիզիայում է գործել Անդրանիկի Հայկական կամավորական առաջին գունդը: 1915 թ-ի ապրիլի 17-18-ին Դիլմանի մոտ ռուսական զորաբանակը Նազարբեկյանի հրամանատարությամբ պարտության է մատնել Խալիլ բեյի թուրքական կորպուսին: 1918 թ-ի մայիսին նրա ընդհանուր հրամանատարությամբ հայերը հաղթանակներ են տարել Սարդարապատի ու Ապարանի հերոսամարտերում: 1919 թ-ի մարտի 25-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության բանակի ռազմական խորհրդի նախագահ, 1919 թ-ի ապրիլի 24-ին՝ միաժամանակ նշանակվել է զինված ուժերի գլխավոր հրամանատար - սպարապետ: Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո բռնադատվել է, աքսորվել: Ազատվելուց հետո 1921-1931 թթ-ին բնակվել է Թիֆլիսում: Բանակում ծառայել է 39 տարի: Պարգևատրվել է Սուրբ Գեորգի 4-րդ (19.06.1915 թ.), Սուրբ Վլադիմիրի 3-րդ (03.03.1905 թ.), 2-րդ (10.06.1916 թ.), Սուրբ Աննայի 3-րդ (1878 թ.), 2-րդ (22.08.1901 թ.), 1-ին (15.03.1915 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1877 թ.), 2-րդ (26.11.1892 թ.), 1-ին (25.03.1915 թ.) աստիճանի շքանշաններով. «Խիզախության համար» ոսկե զենքով (1904 թ.): 2004 թ-ի օգոստոսի 6-ին Մոսկվայի զինվորական օկրուգի զինվորական դատախազության որոշմամբ արդարացվել է: Զինվորական գրող, գնդապետ Հայկ Հայրապետյանի «Վերջին սպարապետը» կենսագրական վեպը ներկայացնում է Թովմաս Նազարբեկյանի կյանքն ու զինվորական անցած ժանապարհը (ռուսերեն, Մոսկվա, 1995 թ., 303 էջ, 5000 օրինակ):

Անդրանիկ Օզանյան

151. ՕԶԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Ռուսական բանակի զորավար (դերակալ) գեներալ-մայոր (23.01.1918 թ.)

Անդրանիկը (Անդրանիկ Թորոսի Օզանյան, Զորավար Անդրանիկ) (25.02.1865 թ., Շապին- Գարահիսար -31.08.1927 թ., ԱՄՆ, ք. Ֆրեզնո, թաղվել է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը, 2000 թ-ին նրա աճյունը Փարիզից տեղափոխվել և թաղվել է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում) հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ է: Զորավարը նրա պատվանունն է. ժողովուրդը նրան անվանում է Անդրանիկ Զորավար: Այս մեծ հայը աշխարհում ապրող բոլոր հայերի համար դարձել է քաջության, խիզախության ու արիության խորհրդանիշ ու չափանիշ: Անդրանիկը նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Մուշեղյան դպրոցում: 14-15 տարեկանում ընբռնտացել է թուրքա-

կան բռնությունների դեմ, որի համար բանտարկվել է: Ազատվելուց հետո անցել է Կ. Պոլիս և զբաղվել ատաղձագործությամբ, ընդգրկվել ազատագրական պայքարի մեջ: Այնուհետև Կ. Պոլսից անցել է Բաթում, ապա՝ Կարս: 1890-ական թվականների կեսին, աբդուլհամիդյան «զուլումի» տարիներին նվիրվել է հայերի ազատագրության պայքարին և անհաշտ կռիվներ մղել թուրքական բռնապետության դեմ, դարձել քաջարի ֆիդայի: Աղբյուր Սերոբի խմբում մարտնչել է Տարոնում ու Սասունում: 1901 թ-ի նոյեմբերին իր փոքրաթիվ զորաջոկատով Մշո Առաքելոց վանքում կռվել է թուրքական զորքերի և քրդական խուժանի դեմ, ճեղքել թշնամու պաշարումը, անորսալի քաջի համբավ ձեռք բերել և արժանացել համաժողովրդական ճանաչման: 1904 թ-ին մարտեր է մղել Վասպուրականում (Աղթամար, Վան), անցել Պարսկաստան. ապա Անդրկովկաս: Մտերմացել է Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ, նրա հետ քննել հայ ժողովրդի ճակատագրի հարցը: 1905 թ-ին մեկնել է Ժնև, որտեղ հանդիպել է Սիամանթոյին: Ժնևից անցել է Վիեննա, ապա՝ Ֆիլիպե (Բուլղարիա): Հետագայում Անդրանիկն այցելել է Ֆրանսիա, Բելգիա, Անգլիա, բնակվել Վառնայում: 1912-1913 թթ-ին Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ Գարեգին Նժդեհի հետ Հայկական զորաջոկատով բուլղարական բանակի կազմում քաջաբար մարտնչել է թուրքական զորքերի դեմ: 1914 թ-ին՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, Թիֆլիսում նշանակվել է Հայկական կամավորական առաջին գնդի (Ռուսաստանի Կովկասյան բանակի կազմում) հրամանատար, ղեկավարել շուրջ 20 հաղթական մարտեր, վճռական դեր խաղացել Դիլմանի (1915 թ.), Զևանի, Բիթլիսի ճակատամարտերում: Այդ մարտերի ժամանակ փայլատակել է Անդրանիկի զորավարական տաղանդը: **1918 թ-ի հունվարին նշանակվել է դիվիզիայի հրամանատար**: *1918 թ-ի փետրվարին նշանակվել է Էրզրումի պաշտպանության ղեկավար*: Թուրքական գերակշիռ ուժերի հակահարձակման պայմաններում Անդրանիկն իր զորամասով և մեծաթիվ գաղթականներով նահանջել է Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ, հունիսին հասել Նախիջևան: Չհաշտվելով Հայաստանի Առաջին Հանրապետության որոշ քաղաքական, պետական այրերի գործելակերպի հետ 1919 թ-ի ապրիլին Էջմիածնում ցրել է իր զորամասը, գույքը հանձնել կաթողիկոս Գևորգ Ե Տփղիսեցուն և մեկնել արտասահման: Պարգևատրվել է բուլղարական Զինվորական խաչ 2-րդ (1913 թ.), ռուսական Սուրբ Գեորգիի 4-րդ (1915 թ.), Սուրբ Վլադիմիրի 4-րդ (15.12.1917 թ.), Սուրբ Ստանիսլավի 2-րդ (15.12.1917 թ.) աստիճանների, ֆրանսիական «Պատվո լեգիոնի» շքանշաններով: 2001 թ-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հիմնել է «Անդրանիկ Օզանյան» մեդալը: 2004 թ-ին, Երևան քաղաքի Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարի տարածքում կանգնեցվել է Անդրանիկ Օզանյանի երկձի արձանը:

152. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Ռուսական բանակի գեներալ-մայոր (27.11.1915 թ.)
Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի գեներալ-լեյտենանտ (28.05.1919 թ.)
Հայաստանի Առաջին Հանրապետության առաջին պաշտպանության նախարար (15.06.1918 թ. - 17.02.1919 թ.)
ՀՀ բանակի ռազմական խորհրդի անդամ (24.04.1919 թ.)

Հովհաննես Բարսեղի Հախվերդյանը (Իվան Վասիլի Հախվերդով) (ծն. 29.07.1873 թ., Սանկտ-Պետերբուրգ - 1937 թ., ստալինյան բռնության զոհ) ռուսական և Հայաստանի Առաջին Հանրապետության բանակների ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: Սովորել է Սանկտ-Պետերբուրգի 1-ին կադետական կորպուսում, գերազանցությամբ ավարտել է Պավլովսկի ռազմական ուսումնարանը, 1902 թ-ին՝ գերազանցությամբ՝ գլխավոր շտաբի Նիկոլաևյան ակադեմիան: Ծառայությունը բանակում սկսել է 1890 թ. սեպտեմբերի 1-ին: Սպայական կոչում ստացել է 1891 թ-ին: 1902-1904 թթ-ին եղել է վաշտի հրամանատար, 1904-1909 թթ-ին՝ գումարտակի հրամանատար, բանակային կորպուսի շտաբի սպա, համհարզ, 1909-1914 թթ-ին՝ Թուրքեստանի զինվորական օկրուգի զորքերի ավագ համհարզ, Սվենբորգի ամրոցի շտաբի պետ, *1914-1915 թթ-ին՝ 2-րդ Կովկասյան հեծելազորային կորպուսի շտաբի պետ, 1915-1917 թթ-ին՝ Տրապիզոնի 127-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ, 5-րդ Ֆինլանդական, ապա՝ 3-րդ հրաձգային դիվիզիաների հրամանատար*: 1910 թ-ի արժանացել է գնդապետի կոչման: 1917 թ-ի վերջին ռուսական Կովկասյան բանակը փլուզվել է: 1917-1918 թթ-ին ակտիվ մասնակցություն է ունեցել ազգային զորամիավորումների, մասնավորապես Հայկական առանձին կորպուսի կազմավորման գործում: **Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումից հետո, 1918 թ-ի հունիսի 15-ից մինչև 1919 թ-ի մարտի 27-ը եղել է Հայաստանի Հանրապետության զինվորական առաջին նախարար**: 1919 թ-ի ապրիլի 25-ին նշանակվել է ՀՀ զինված ուժերի գլխավոր հրամանատարի՝ Սպարապետի շտաբի պետ, մայիսի 28-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ: Հայաստանի Հանրապետության անկումից հետո բանտարկվել է և ուղարկվել Բաքու: 1921 թ-ին ազատվել և հաստատվել է Խորհրդային Հայաստանում, զբաղվել դասախոսական աշխատանքով, եղել է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների զինղեկ: 1937 թ-ին ենթարկվել է ստալինյան բռնաճնշումների և մահացել: Ռուսական 1-ին և 2-րդ Մանջուրական բանակների կազմում մասնակցել է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին, 1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմին նախ Արևմտյան ճակատում, ապա՝ Կովկասյան ճակատում: Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 4-րդ (1906 թ.), Սուրբ Աննայի 4-րդ (1902 թ.), 3-րդ (1905 թ.), 2-րդ (1906 թ.), Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1905 թ.), 2-րդ (1906 թ.), բուխարական՝ «Ոսկե աստղ» 2-րդ (1906 թ.) աստիճանի շքանշաններով, 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի հիշատակի բրոնզե մեդալով:

153. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՀԱԿՈԲ

Հակոբ Բագրատունի

Ռուսական բանակի գեներալ-մայոր (30.08.1917 թ.)
ՀՀ Առաջին Հանրապետության բանակի
գեներալ-լեյտենանտ (1919 թ.)

Հակոբ (Յակով) Գերասիմի Բագրատունին (ծն. 25.08.1879 թ., Վրաստան, ք. Ախալցխա- 23.12.1943 թ., Անգլիա, Լոնդոն) ռուսական բանակի ռազմական, Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական և պետական գործիչ է: 1898 թ. ոսկե մեդալով ավարտել է Թիֆլիսի արական գիմնազիան, ապա՝ Կիևի առաջին ռազմական ուսումնարանը: Մասնակցել է 1905 թ. ռուս-ճապոնական պատերազմին: 1907 թ. ավարտել է Նիկոլևյան ակադեմիան: 1908-1914 թթ-ին ծառայել է Թուրքեստանյան զինվորական օկրուգում, կատարել ռազմա-քաղաքական և հետախուզական կարևոր հանձնարարություններ: Ակտիվորեն մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին: Եղել է դիվիզիայի, ապա բրիգադի շտաբի պետ: 1917 թ-ի փետրվարից ծավալել է ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն: *1917 թ-ի հուլիսի 12-ին նշանակվել է Պետրոգրադի զինվորական օկրուգի գլխավոր շտաբի պետ*, օգոստոսի 30-ին ստացել է գլխավոր շտաբի գեներալ-մայորի աստիճան: Գեներալ Լ. Տիգրանյանի և Հ. Ջավրյանի հետ կազմել է Հայկական կորպուսի կազմակերպման ծրագիրը: 1917 թ-ի նոյեմբերին նշանակվել է նորաստեղծ Հայկական կորպուսի հրամանատար, սակայն ոչ մի ճանապարհով չի կարողացել հասնել Հայաստան: 1918 թ-ի գարնանը գեներալ Ի. Ս. Բաղրամյանի հետ ղեկավարել է Բաքվի հայության պաշտպանությունը: Բաքվի կոմունայի անկումից հետո, *1918 թ-ի հունիսի 31-ից մինչև սեպտեմբերի 15-ը, եղել է Կասպիական նավատորմի կենտրոնական կոմիտեի (Ցենտրոկասպիի դիկտատուրա) ռազմածովային կոմիսար*: 1919 թ-ի փետրվարին Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի կողմից նշանակվել է Հայկական միացյալ ռազմական առաքելության պետ (որի կազմում էր նաև Անդրանիկը), ապա մինչև 1920 թ-ի վերջը գործել է ԱՄՆ-ում: **1920 թ-ի նոյեմբերին նշանակվել է Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպան Անգլիայում**: Մասնակցել է 1921 թ-ի Լոնդոնի և 1923 թ-ի Լոզանի կոնֆերանսներին: Պարգևատրվել է Սուրբ Գեորգի 4-րդ, 3-րդ, Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1905 թ.), 2-րդ, Սուրբ Վլադիմիրի 4-րդ, 3-րդ, Սուրբ Աննայի 4-րդ (1905 թ.), 3-րդ, 2-րդ, Բուխարայի Ոսկե աստղի 3-րդ (1914 թ.) աստիճանի շքանշաններով:

Մովսես Սիլիկյան

154. ՍԻԼԻԿՅԱՆ ՄՈՎՍԵՍ

Ռուսական բանակի գեներալ-մայոր (22.08.1917 թ.)
Հայաստանի Առաջին Հանրապետության
բանակի գեներալ-լեյտենանտ (28.05.1919 թ.)
ՀՀ բանակի ռազմական խորհրդի անդամ (24.04.1919 թ.)

Մովսես Բաբայի Սիլիկյանը (Սիլիկով) (ծն. 14.09.1862 թ., Ելիզավետպոլի նահանգ, Նուխիի գավառ, գ. Վարդաշեն - 10.12.1937 թ., խորհրդային բռնության զոհ, գնդակահարվել է Երևանի մերձակա Ավանի ձորում, ներկայիս գազանանոցի տարածքում) ռուսական և հայկական բանակների ռազմական գործիչ է, հայ-գրիգորյանական: 1882 թ. ավարտել է Մոսկվայի 2-րդ զինվորական գիմնազիան, 1884 թ.՝ 3-րդ Ալեքսանդրովյան զինվորական ուսումնարանը, 1904 թ.՝ Սպայական հրաձգային դպրոցը: Ծառայությունը բանակում սկսել է 1884 թ-ի օգոստոսի 14-ին: Հիմնականում ծառայել է Կովկասյան զինվորական օկրուգում: Եղել է վաշտի, գումարտակի հրամանատար: 1914 թ-ին նշանակվել է Երևանի զինվորական պարետի օգնական, 1915 թ-ին՝ 8-րդ գնդի հրամանատար, 1916 թ-ին՝ Վանի զորախմբի հրամանատար: Աչքի է ընկել Մուշի, Բիթլիսի գրավման, Էրզրումի գրոհի ժամանակ: Էրզրումի գրավումից հետո նշանակվել է Էրզրումի պարետ: 1911 թ-ի հունիսի 25-ին արժանացել է գնդապետի կոչման, 1917 թ-ի օգոստոսի 22-ին՝ գեներալ-մայորի աստիճանի: ***1918 թ-ի հունվարին նշանակվել է Հայկական բանակային կորպուսի 1-ին հրաձգային դիվիզիայի, ապա՝ Երևանյան զորախմբի հրամանատար***: Սիլիկյանի հմուտ ռազմավարությամբ թուրքական զորամասերը ջախջախիչ հարված են ստացել Սարդարապատի մատույցներում և Ապարանում, ու կասեցվել է նրանց հարձակումը Երևանի ուղղությամբ: 1919 թ-ին նշանակվել է Գավառի տարածաշրջանի ճակատի հրամանատար, 1920 թ-ի աշնանը՝ Կարս-Ալեքսանդրապոլի ճակատի ընդհանուր հրամանատար և փորձել է կանգնեցնել առաջացող թուրքերին, սակայն այդ նրան չի հաջողվել: 1921 թ-ի հունվարին աքսորվել է Ռյազան: Նույն թվականի մայիսին վերադարձել է աքսորից և բնակություն հաստատել Դոնի-Ռոստովում: Խորհրդային բռնաճնշիչ մեքենան հաջորդ բոլոր տարիներին հետապնդել է անվանի զորավարին: 1927 թ-ին և 1935 թ-ի նոյեմբերին նա ձերբակալվել է, սակայն հանցանքների ապացուցված չլինելու պատճառով ազատ արձակվել: Վերջին անգամ ձերբակալվել է 1937 թ-ին և գնդակահարվել: Պարգևատրվել է Հայաստանի Առաջին Հանրապետության՝ Գեորգիևյան խաչի 1-ին (18.11.1918 թ.), ցարական՝ Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1910 թ.) աստիճանի շքանշաններով:

155. ՄԱՀՄՈՒԴ ՔԵՐԻՄ

Հայազգի աֆղանական զորավար (20-րդ դար)

Մահմուդ Քերիմը (կենսագրական տեղեկություններ չկան) սերում է Աֆղանստանում հաստատված, մուսուլմանություն ընդունած հայկական գիլզայ կամ կուչի ցեղից: 1919 թ-ին անգլո-աֆղանական պատերազմի ժամանակ գիլզայ ցեղի առաջնորդ Մահմուդ Քերիմը նշանակվել է աֆղանական բանակի հրամանատար: Հետագայում եղել է Աֆղանական պետության հիմնադիրներից մեկը: Մահմուդ Քերիմի տոհմը հիմնականում բնակվել է Աֆղանստանի հարավում՝ Կարմսելում: 1968 թ-ին 111-ամյա Մահմուդ Քերիմին հանդիպել է բրիտանական «Նացիոնալ գեոգրաֆիկ» հանդեսի թղթակից Տոման Էպրկրոմպը:

156. ԿԱՆԱՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ

Դրաստամատ Կանայան՝ Դրո

Հայաստանի Առաջին Հանրապետության զորավար
(լրիվ գեներալ. 1920 թ.)
Գերմանական ՍՍ-ի գեներալ-մայոր (1942 թ.)
Հայաստանի Առաջին Հանրապետության պաշտպանության նախարար
(1920 թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին)
Խորհրդային Հայաստանի առաջին պաշտպանության նախարար
(1920 թ-ի դեկտեմբեր - 1921 թ-ի հունվար)

Դրաստամատ Մարտիրոսի Կանայանը՝ Դրո (ծն. 01.05.1883 թ., Իգդիր - 08.03.1956 թ., ԱՄՆ, Բոստոն) հայ ազգային-ազատագրական շարժման, ռազմական, պետական գործիչ է: Սովորել է Երևանի ռուսական գիմնազիայում, 1904-1905 թթ-ին՝ Պյատիգորսկի զինվորական ուսումնարանում: 1905 թ-ին Նիկոլ Դումանի հրամանով դարձել է Կոտայքի շրջանի ինքնապաշտպանության հրամանատար և մարտեր մղել տեղական թաթարական ուժերի դեմ: 1914-1917 թթ-ին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, եղել է Հայկական 2-րդ կամավորական գնդի հրամանատար, 1917 թ-ի վերջին՝ Սարիղամիշի ռազմական կոմիսար: *1917 թ-ի վերջին նշանակվել է Հայկական կորպուսի կոմիսար:* **1918 թ-ի մայիսի 24-29-ին եղել է Ապարանի ռազմաճակատի ընդհանուր հրամանատար և դրսևորել զորավարական տաղանդ:** *1920 թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության պաշտպանության նախարար* և կարողացել է թուրքական ճակատում որոշ չափով կայունացնել իրավիճակը: 1920 թ-ի դեկտեմբերի 2-ին Հայաստանի Առաջին Հանրապետության կողմից ստորագրել է «Համաձայնագիր Հայաս-

տանի Հանրապետության և ՌԽՖՍՀ միջև», որով Հայաստանի Հանրապետությունը անեքսիայի է ենթարկվել Խորհրդային Ռուսաստանի կողմից: Համաձայնագրի համաձայն, *1920 թ-ի դեկտեմբերի 1-ից մինչև 1921 թ-ի հունվարի 11-ը եղել է ՀԽՍՀ զորքերի ընդհանուր հրամանատարը*: 1921 թ-ի հունվարի 11-ին գործուղվել է Մոսկվա և մինչև 1923 թ-ը ապրել և գործել Մոսկվայում: 1923 թ-ին անցել է արտասահման: Սկզբնական շրջանում ապրել է Ռումինիայում, ավելի ուշ անցել է Լիբանան, ապա՝ վերջնականապես հաստատվել ԱՄՆ-ում: Ուրույն դերակատարություն է ունեցել 1941-1945 թթ-ի Հայրենական պատերազմի տարիներին: Գերմանիայի հաղթանակի դեպքում, թուրքերի կողմից Հայաստանին սպառնացող վտանգը ի չիք դարձնելու նպատակով, գործակցել է գերմանացիների հետ: 1941 թ-ին փոխադրվել է Բեռլին և մաս կազմել «Հայկական ազգային խորհրդին», որ ղեկավարել է Արտաշես Աբեղյանը: Գարեգին Նժդեհի հետ դարձել է «Հայկական լեգեոնի» կազմակերպիչներից մեկը: Ուկրաինայի, եվրոպական երկրների համակենտրոնացման ճամբարներից հավաքագրվել է 9000-ից ավելի հայ ռազմագերի և ստեղծվել 10 լեգեոն: Ի պատիվ հայ լեգեոներների պիտի նշել, որ նրանք թե գերմանա-խորհրդային, թե ֆրանսիական, հունական, հոլանդական ճակատ ուղարկվելիս հիմնականում անցել են հակառակորդի կողմը և կռվել գերմանական ֆաշիստների դեմ: Հայկական 808-րդ գումարտակի հետ եղել է Հյուսիսային Կովկասում՝ Տուապսեի շրջանում: Փաստորեն ի սկզբանե որդեգրված հայրենասիրական նպատակն իրագործվել է. ռազմագերիները փրկվել են սպանդից: Հայրենական պատերազմի ավարտից հետո փոխադրվել է ԱՄՆ և մեծ աշխատանք կատարել հայապաշտպանության ուղղությամբ: Մահկանացուն կնքել է 1956 թ-ի մարտի 8-ին Բոստոն քաղաքում՝ կտակելով մարմինը հողին հանձնել իր պատմական հայրենիքում: Աճյունը Բոստոնից բերվել և 2000 թ-ի մայիսի 28-ին հողին է հանձնվել Ապարան քաղաքում՝ Ապարանի հերոսամարտի հուշահամալիրում: 2001 թ-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հիմնել է «Դրաստամատ Կանայան» մեդալ: Նրա անունով փողոցներ են անվանակոչվել Երևանում, Ապարանում, այլ բնակավայրերում:

157. ՍԵՊՈՒՀ

Հայաստանի Առաջին Հանրապետության զորավար
(լրիվ գեներալ. 1919 թ.)

Սեպուհը (Արշակ Ներսեսի Ներսիսյան) (ծն. 20.04.1872 թ., Էրզրումի նահանգ, Բաբերդի գավառ, գ. Թոմնա - 31.07.1940 թ., ԱՄՆ, Նյու Յորք) հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական Առաջին Հանրապետության բանակի ռազմական գործիչ է, Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի անդամ (1919-1920 թթ-ին): Երիտասարդական տարիներին հարել է հնչակյան կուսակցությանը, 1894 թ-ից՝ Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցությանը: Սովորել է Տրապիզոնի ազգային վարժարանում: 1888-1890 թթ-ին ապրել և գործել է Կ.Պոլսում: 1890 թ-ին Գում Գափուի ցույցից հետո անցել է Ղրիմ, հետո՝ Կարս, Տարոն, 1903 թ-ից՝ Սասուն («Մրրիկ» խմբի կազմում): Մասնակցել է 1904 թ-ի Սասունի ապստամբությանը: 1907-1912 թթ-ին գործել է Տարոնում, ապա՝ Կարինում, Թիֆլիսում, 1913 թ-ից՝ Խարկովում: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին 21 հոգուց բաղկացած խմ-

Սեպուհ

բով միացել է Անդրանիկի գնդին: Եղել է Հայկական 1-ին կամավորական գնդի 2-րդ վաշտի հրամանատար: Մասնակցել է Խոյի և Դիլմանի ճակատամարտերին: 1916 թ-ին Երզնկայում Մուրադ Սեբաստացու հետ ստեղծել է «Մեկ հայ՝ մեկ ոսկի» հիմնադրամը, հավաքել բազմաթիվ հայ որբերի: 1917 թ-ին նշանակվել է Բաբերդի գավառապետ և զինվորական ուժերի հրամանատար: Բաբերդի և Կարսի անկումից հետո անցել է Վլադիկավկազ, ապա օգնության գնացել Բաքվում կռվող հայկական ուժերին: Բաքվի անկումից հետո անցել է Բաթումի: 1919 թ-ի հունիսի 21-23-ին տեղի ունեցած Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի ընտրությունների արդյունքում դարձել է խորհրդարանի պատգամավոր: 1919 թ-ի ամռանը վերադարձել է Հայաստան: *Պահպանելով խորհրդարանի պատգամավորի մանդատը՝ ստացել է զորավարի աստիճան և նշանակվել նորաստեղծ բանակի 4-րդ բրիգադի հրամանատար*: Իր զորամիավորումով մարտական գործողություններ է վարել Հայաստանի գրեթե բոլոր սահմանային բնագծերում, ճնշել է բոլշևիկյան մայիսյան խռովությունը: **Հանրապետության գոյության վերջին օրերին եղել է Կարսի ճակատի հրամանատարը**: 1921 թ-ի սկզբին, չվստահելով բոլշևիկներին, անցել է արտասահման: Եղել է Պոլսում, Լոնդոնում, Բուլղարիայում, վերջնականապես հաստատվել է Նյու Յորքում: Մահից առաջ կտակել է այրել իր մարմինը և մոխիրը պահել մինչև դրա Հայրենիք վերադառնալը: Աճյունասափորն այժմ պահվում է Դետրոյթի ՀՅԴ ակումբում: Պատմաբան Աշոտ Ներսիսյանը հրատարակել է «Զորավար Սեպուհ» մենագրությունը (Ե., 2005 թ., 346 էջ):

158. ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Գարեգին Նժդեհ

ՀՀ Առաջին Հանրապետության բանակի գնդապետ (1919 թ.)
Կապանի, Գնդնազի, Գողթանի, Բաղաբերդի
ռազմական ուժերի դիկտատոր (25.08.1920 թ.)
Ինքնավար Սյունիքի սպարապետ (25.12.1920 թ.)
Լեռնահայաստանի Հանրապետության զորավար
(լրիվ գեներալ , 26.04.1921 թ.)
Գերմանական ՍՍ-ի հայկական լեգիոնի գեներալ-մայոր (1942 թ.)

Գարեգին Նժդեհը (Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյանը) (ծն. 01.01.1886 թ., Նախիջևանի գավառ, գ. Կզնուտ - 21. 12.1955 թ., ք. Վլադիմիր) ազգային, քաղաքական, ռազմական, պետական ականավոր գործիչ է, Ցեղակրոն (1932-1934 թթ-ին) և Տարոնական (1937-1938 թթ-ին) շարժումների հիմնադիր ու գաղափարախոս, հրապարակախոս, իմաստաբան, ճարտասան: Սովորել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (դուրս է եկել 1904 թ-ին), 1906 թ. ավարտել է Կնյաժևոյի պահեստի սպաների վարժարանը, 1907 թ.՝ Սոֆիայի սպայական դպրոցը: 1907-

1908 թթ-ին մասնակցել է պարսկական ժողովրդական հեղափոխությանը: 1908-1912 թթ-ին ՀՅԴ գործով արգելափակվել է ցարական բանտերում: 1912 թ-ին անցել է Բուլղարիա և Անդրանիկի հետ կազմակերպել Հայկական կամավորական վաշտը, որը բուլղարական բանակի կազմում 1913 թ-ին կռվել է թուրքերի դեմ: 1914 թ-ին զինվորագրվել է հայկական կամավորական շարժմանը: Եղել է 5-րդ գնդի հրամանատարի օգնական, 2-րդ գնդի հրամանատարի օգնական, 1-ին գնդի հրամանատարի օգնական, Ախալքալակի կամավորական ջոկատի կազմակերպիչ, հայկական զորաջոկատի հիմնադիր հրամանատար: Աչքի է ընկել Ալաշջայի ճակատամարտում: 1918 թ-ի մայիսի 22-28-ին մասնակցել և վճռորոշ դեր է խաղացել Վանաձորի ճակատամարտում: 1918 թ-ի մայիսից 1919 թ-ի օգոստոսը եղել է Գառնիի գումարտակի հրամանատար, Նախիջևանի գավառամասի կոմիսար: Ճնշել է Վեդիի թուրքերի ապստամբությունը: 1919 թ-ի օգոստոսից դարձել է Սյունիքի զինվորական առաջնորդը: Նա փայլուն հաղթանակներ է տարել մի շարք մարտերում, պարտության մատնել Սյունիք մտած խորհրդային Ադրբեջանի, Թուրքիայի կանոնավոր զորամիավորումներին, խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի զորամասերին (11-րդ բանակը տվել է 12 հազար սպանված ու 4 հազարից ավելի գերի): 1920 թ-ի դեկտեմբերի 25-ին Տաթևում կայացած համազանգեզուրյան 1-ին համագումարը հռչակել է Սյունիքի Ինքնավար Հանրապետությունը, **Գարեգին Նժդեհը նշանակվել է Սյունիքի Հանրապետության Սպարապետ**, օծման արարողությունը տեղի է ունեցել 1921 թ-ի փետրվարի 21-ին Գորիսի Սուրբ Լուսավորիչ եկեղեցում: 1921 թ-ի ապրիլի 26-ին Ինքնավար Սյունիքի Հանրապետության 2-րդ արտակարգ համագումարը հռչակել է Սյունիքի անկախությունը և ընդունել Լեռնահայաստանի Հանրապետություն անունը: **Գարեգին Նժդեհը նշանակվել է վարչապետ, արտգործնախարար, զինվորական նախարար**: Նրա հերոսական ջանքերի շնորհիվ Սյունիքը փաստացի եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության մաս, ապա՝ Ինքնավար և Անկախ կազմավորում, որի արդյունքում էլ 1921 թ-ի հունիսին մտցվել է Խորհրդային Հայաստանի վարչատարածքային կազմի մեջ: 1921 թ-ի հուլիսի 9-ին անցել է Արաքսը, պատսպարվել նախ Պարսկաստանի Մուժամբար գյուղում, ապա անցել Թավրիզ: 1921 թ-ի վերջին հաստատվել է Սոֆիայում: 1932-1934 թթ-ին ԱՄՆ-ում հիմնել և ղեկավարել է Ցեղակրոն շարժումը, որով ոգեշնչվել է ողջ ափյուռքահայությունը: 1941-1942 թթ-ին գործուն մասնակցություն է ունեցել Գերմանական վերմախտի ղեկավարների հետ բանակցություններին և մասնակցել գերմանական համակենտրոնացման ճամբարներում գտնվող հայազգի գերիներից Հայկական լեգիոնի կազմավորման աշխատանքներին: Նաև նրա գործուն ջանքերով ստույգ մահվանից փրկվել են հազարավոր հայազգի գերիներ: 1944 թ-ին, երբ խորհրդային զորքերը մտել են Բուլղարիա, կամավոր ներկայացել է խորհրդային ռազմական իշխանությանը, տեղափոխվել է Մոսկվա, որտեղ 1944 թ-ի նոյեմբերի 2-ին ձերբակալվել է: Երևանում նրան դատապարտել են 25 տարվա բանտարկության, 1947 թ-ի տեղափոխել են Վլադիմիր քաղաքի բանտ, որտեղ էլ մահացել է: 1983 թ-ի օգոստոսին Վլադիմիրի գերեզմանոցից նրա աճյունը գաղտնի Երևան է փոխադրել Սպարապետի թոռնուհի Գոհար Տրդատյանի ամուսինը՝ Պավել Անանյանը: Գարեգին Նժդեհի աճյունի փոքր մասը 1983 թ-ի հոկտեմբերի 7-ին ամփոփվել է Խուստուփ լեռան (Կապան) լանջին, իսկ աճյունի հիմնական մասը՝ 1987 թ-ին՝ Վայոց ձորի Սպիտակավոր եկեղեցու բակում: Ամեն տարի հունիսի 17-ին հայ ժողովուրդը ուխտի է գնում Սպարապետի գերեզմանին: Հրատարակել է «Զինվորական մարգանք ու կանոնադրություն» (վաշտապետ Շերամի հետ, 1918 թ.),

«Խուստուփյան կանչեր» (1921 թ.), «Լեռնահայաստանի գոյամարտը» (1923 թ.), «Ռազմական խոհեր» գրքերը: Պարգևատրվել է Լեռնահայաստանի Հանրապետության «Խուստուփի արծիվ» երկաթե խաչ (26.04.1921 թ.), բուլղարական Սպայական քաջության խաչ (1913 թ.), Մակեդոնա-օրդինյան կամավորական կազմակերպության, ռուսական՝ Սուրբ Գեորգիի 4-րդ, Սուրբ Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշաններով: 1992 թ-ին Երևանի մետրոպոլիտենի վերջին կայարանը և հրապարակն անվանակոչվել է «Գարեգին Նժդեհի կայարան և հրապարակ»: 1996 թ-ին ՀՀ զինված ուժերի ուսումնական զորամասերից մեկն անվանակոչվել է նրա անունով և զորամասի հրապարակում կանգնեցվել է Գարեգին Նժդեհի արձանը: 2001 թ-ին Կապան քաղաքի մերձակայքում Գարեգին Նժդեհի անվան համալիրում տեղադրվել է նրա կիսանդրին: 2001 թ-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հիմնել է «Գարեգին Նժդեհ», 2002 թ-ին՝ Սյունիքի մարզպետարանը՝ «Լեռնահայաստանի արծիվ» գերատեսչական մեդալները: ՀՀ և ԼՂՀ ռազմաուսումնական հաստատություններում սահմանվել են «Սպարապետ Գարեգին Նժդեհ» կրթաթոշակներ: 2001 թ-ին Հայաստանի Հանրապետությունում պետական մակարդակով նշվել է Գարեգին Նժդեհի 115-ամյակը: Սպիտակավոր եկեղեցու մոտ տեղադրվել է խաչքար-հուշարձան (17.06.2005 թ.):

159. ՈՍԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Գասպար Ոսկանյան

Խորհրդային բանակի 2-րդ կարգի բանակային կոմանդարմ
(2-րդ կարգի բանակի գեներալ, 1926 թ.)

Գասպար Կարապետի Ոսկանյանը (ծն. 09.01.1886 թ., Ռուսաստան, Խերսոնի նահանգ, ք. Գրիգորիոպոլիս - 20.09.1937 թ., խորհրդային բռնատիրության զոհ) խորհրդային բանակի ռազմական գործիչ է: Սերում է Արևմտյան Հայաստանի Արդվին քաղաքից: 1899 թ. ավարտել է գյուղի տարրական դպրոցը, 1910 թ. Տիրասպոլյան 56-րդ հետևակային գնդի կրտսեր հրամկազմի դպրոցը, 1913-թ.՝ Թիֆլիսի ռազմական ուսումնարանը, 1922 թ.՝ կարմիր բանակի գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի բարձրագույն հրամկազմի դասընթացը: Ծառայությունը բանակում սկսել է 1908 թ-ին Քիշինյովյան 207 -րդ հետևակային գնդում: 1913 թ-ին նշանակվել է 81-րդ Ապշերոնյան գնդի դասակի հրամանատար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել է ավստրո-գերմանական ճակատում: Պատերազմի ավարտին եղել է գնդի հրամանատար՝ փոխգնդապետի աստիճանով: 1918 թ-ին մտել է կարմիր բանակի շարքերը, կանչվել է Մոսկվա և նշանակվել գնդի հրամանատար, ապա՝ Մոսկվայի շրջաններից մեկի զինվորական կոմիսար: *1918 թ-ի օգոստոս-1919 թ-ի հունվար*

ամիսներին եղել է Մ.Վ. Ֆրունզեի ղեկավարած բանակի 25-րդ դիվիզիայի հրամանատար (այստեղ նրան փոխարինել է Վասիլի Չապաևը), ապա՝ 49-րդ դիվիզիայի հրամանատար: Չապաևի զոհվելուց հետո կրկին եղել է 25-րդ դիվիզիայի հրամանատար: 1919 թ-ի հոկտեմբերին նշանակվել է 4-րդ բանակի հրամանատար (բանակի կազմի մեջ մտել է 5 դիվիզիա, 1 ավիաջոկատ, մի քանի այլ ստորաբաժանումներ): 4-րդ բանակը 1919 թ-ի դեկտեմբեր - 1920 թ. հունվար ամիսներին ջախջախիչ հարված է հասցրել գեներալ Բելովի կազակական զորքերին, հունվարի 6-ին գրավել Գուրև քաղաքը և վերջ դրել Ուրալյան ռազմաճակատին: **1920 թ-ի մայիսին նշանակվել է 12-րդ բանակի հրամանատար** և Արևմտյան ռազմաճակատի Կիևյան հատվածում կռվել է Պիլսուդսկու լեհական բանակի դեմ և հունիսի 12-ին գրավել է Կիև քաղաքը: 1922-1925 թթ-ին եղել է 6-րդ կորպուսի հրամանատար, 1925-1926 թթ-ին՝ Թուրքեստանի զինվորական օկրուգի զորքերի հրամանատարի տեղակալ: 1926-1931 թթ-ին կատարել է դիվանագիտական ծառայություն, եղել է Ֆինլանդիայում, ապա Իտալիայում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցչության զինվորական կցորդ: 1931-1937 թթ-ին եղել է կուսակցական աշխատանքի: Պարգևատրվել է Կարմիր դրոշի երկու շքանշանով (1920 թ., 1922 թ.): 1937 թ-ին ձերբակալվել և գնդակահարվել է: Արդարացվել է 1956 թ-ի դեկտեմբերի 29-ին: Գասպար Ոսկանյանի անունով փողոց է անվանակոչվել Ալթայի երկրամասի Բառնաուլ քաղաքում:

Հայկ Բժշկյանց՝ Գայ

160. ԲԺՇԿՅԱՆՑ ՀԱՅԿ

Խորհրդային բանակի կոմկոր
(կորպուսի հրամանատար, գեներալ-գնդապետ, 1935 թ.)
Հայաստանի զինվորական նախարար
(1922-1925 թթ-ին)

Հայկ Դմիտրիի Բժշկյանցը (ծն.06.02.1887 թ., Իրան, ք. Թավրիզ - 1937 թ., Մոսկվա, խորհրդային բռնության զոհ) խորհրդային ռազմական գործիչ է, պրոֆեսոր (1932 թ.): Տարրական կրթությունն ստացել է Թավրիզի Արամյան ծխական դպրոցում: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1915 թ. ավարտել է Թիֆլիսի ռազմական ուսումնարանը, 1922 թ.՝ կարմիր բանակի բարձրագույն հրամկազմի դասընթացը, 1927 թ.՝ Մոսկվայի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: 1915 թ-ին նորավարտ կրտսեր սպան մտել է նորակազմ հայկական 6-րդ գնդի շարքերը և մեկնել ռուս-թուրքական ռազմաճակատ: Գնդի հրամանատարի զոհվելուց հետո փոխարինել է հրամանատարին: 1918 թ-ի սկզբին մտել է կարմիր բանակի շարքերը: 1918 թ-ի

փետրվարին գտնվել է Մոսկվայում, ապա փոխադրվել Սամարղանդ: 1918 թ-ի հուլիսին Սամարայի նահանգում ձևավորված ռազմաճակատի շուրջ 30 կմ երկարությամբ Սենգիլյան ճակատի հրամանատարն էր: *1918 թ-ի հուլիսի կեսերին կռիվներում կոփված իր հազար զինվորների, Սիմբիրսկյան 1-ին, 2-րդ և այլ ստորաբաժանումների միավորմամբ ստեղծել է Սիմբիրսկյան 1-ին դիվիզիան, որ հետագայում կոչվել է 24-րդ Երկաթյա դիվիզիա*: 1918 թ-ի սեպտեմբերի սկզբին մի քանի օրում ճեղքելով կոլչակյան զորքերի համառ դիմադրությունը, անցնելով ավելի քան 70 կմ սեպտեմբերի 12-ին գրավել է Սիմբիրսկ քաղաքը: Դիվիզիան գրավել է Սիզրան, Սամարա, Ստավրոպոլ, Օրենբուրգ, Օրսկ, Ակտյուբինսկ, Ուֆա քաղաքները: Երկաթյա դիվիզիան մարտերով անցել է ավելի քան 5000 կմ: 1919 թ-ին եղել է 1-ին բանակի հրամանատար և մասնակցել Ուրալի արևելյան շրջանների ազատագրման մարտերին: 1920 թ-ի սկզբին եղել է Ղրիմի դեսանտային գործողությունների ղեկավար, կազմավորել է Կովկասյան 1-ին հեծյալ դիվիզիան և կռվել Մամոնտովի ու Պավլովի սպիտակգվարդիական զորքերի դեմ: *Մի քանի ամիս անց կազմավորել է 3-րդ հեծյալ կորպուսը և մեկնելով Արևմտյան ռազմաճակատ կռվել սպիտակ լեհերի դեմ*: 1920 թ-ի հունիս-օգոստոս ամիսներին 3-րդ կորպուսը մյուս զորամասերի հետ անցել է գրոհի, ճեղքել թշնամու ճակատը, գրավել Վիլնո, Գրոդնո, Լոմժա, Օսովեց, Մլավո, Պլոցկ և այլ բնակավայրեր, դուրս է եկել Վիսլայի ափը, սակայն կտրվելով թիկունքից՝ մնացել առանց զինամթերքի և ստիպված մտել է Գերմանիայի տարածք: Կորպուսի զինվորները Խորհրդային Միություն են վերադարձել 1920 թ-ի վերջին Էստոնիայի վրայով: **1922-1925 թթ-ին եղել է Հայաստանի զինվորական գործերի ժողովրդական կոմիսար (նախարար)**: 1927-1932 թթ-ին եղել է Մոսկվայի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ռազմական արվեստի պատմության ամբիոնի պետ, 1932-1937 թթ-ին՝ Մոսկվայի Ն.Ե. Ժուկովսկու անվան ռազմաօդային ակադեմիայի քաղաքացիական պատերազմի պատմության ամբիոնի պետ: 1918-1920 թթ-ին եղել է Սիմբիրսկի, Սամարայի, Օրենբուրգի հեղկոմների անդամ, Սամարայի նահանգական գործադիր կոմիտեի նախագահության անդամ, 1920-1925 թթ-ին՝ Բելոռուսիայի, Հայաստանի, Անդրֆեդերացիայի կենտգործկոմի անդամ, Մինսկի քաղաքային խորհրդի անդամ, 1934 թ-ին ընտրվել է Ուլյանովսկի քաղաքային խորհրդի պատվավոր անդամ: Պարգևատրվել է ցարական Սուրբ Գեորգիի 4-րդ, Սուրբ Աննայի 4-րդ աստիճանի, խորհրդային՝ Կարմիր դրոշի երկու շքանշանով (1920 թ., 1922 թ.): Հրատարակել է մեկ տասնյակից ավելի ռազմագիտական ու գեղարվեստական գրքեր: 1937 թ-ին ձերբակալվել և գնդակահարվել է: Արդարացվել է: Հայկ Բժշկյանց-Գայի անունով դպրոցներ ու փողոցներ կան ՀՀ-ում, ԼՂՀ-ում: Երևան քաղաքի Նորքի զանգվածում կանգնեցվել է նրա ձիարձանը, երգահան Գեղունի Չթչյանը գրել է նրան նվիրված հիմն: Մեծ զորավարի կյանքի ողիսականին է նվիրվել Ալեքսանդր Դունաևսկու «Գայի հետքերով» գիրքը (ռուսերեն, հայերեն):

Անդրեյ Մելիք-Շահնազարյան

161. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՆԴՐԵՅ

Խորհրդային բանակի կոմկոր
(կորպուսի հրամանատար / գեներալ-գնդապետ, 1935 թ.)

Անդրեյ Պավելի Մելիք-Շահնազարյանը (Անդրեաս Պողոսի Մելիք-Մարտիրոսյան) (ծն. 24.07.1887 թ., Լեռնային Ղարաբաղ, ք. Շուշի - 31.10.1937 թ., Մինսկ, խորհրդային բռնատիրության զոհ) խորհրդային բանակի ռազմական գործիչ է, ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ Պավել Մելիք-Շահնազարյանի որդին: 1906 թ. ավարտել է Վարշավայի Սուվորովի անվան կադետական կորպուսը, 1908 թ.՝ Պետերբուրգի Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանը: 1917-1918 թթ-ին ծառայել է Հայկական կորպուսում, 1918-1920 թթ-ին Հայաստանի Առաջին Հանրապետության զինված ուժերում: 1918 թ-ին մասնակցել է Վանաձորի ճակատամարտին, հայ-վրացական պատերազմին, 1920 թ-ին՝ Կարսի մարզում ծավալված ռազմական գործողություններին: 1920 թ-ին արժանացել է գնդապետի կոչման և նշանակվել է Գյումրիի կայազորի առաջին հեծելազորային գնդի հրամանատար: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո մտել է Հայաստանի կարմիր բանակի շարքերը: 1921-1922 թթ-ին եղել է Հայկական հավաքական բրիգադի հրամանատար, *1922-1931 թթ-ին՝ Հայկական 76 -րդ լեռնահրաձգային դիվիզիայի, 1931-1935 թթ-ին՝ 81-րդ հրաձգային դիվիզիայի, 1935-1937 թթ-ին՝ Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի 16-րդ կորպուսի հրամանատար*: Կեղծ մեղադրանքով ձերբակալվել է 1937 թ-ի հունիսին և գնդակահարվել: Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով (1930 թ.):

Սուրեն Շահումյան

162. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Խորհրդային բանակի կոմկոր
(գեներալ-գնդապետ, 1935 թ.)

Սուրեն Ստեփանի Շահումյանը (ծն. 1902 թ., - 04.06.1936 թ., Մոսկվա) խորհրդային բանակի ականավոր ռազմական գործիչ է, ականավոր հեղափոխական Ստեփան Շահումյանի ավագ որդին: Տարրական կրթությունն ստացել է Բաքվի նավթահանքային Սաբունչի թաղամասի դպրոցում, 1911-1914 թթ-ին սովորել է Աստրախանի ռուսական վարժարանում, 1917 թ. ավարտել է Բաքվի ռուսական վարժարանի 5-րդ դասարանը, 1922 թ.՝ կարմիր բանակի գլխավոր ակադեմիան, 1927 թ.՝ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին կից Մոսկվայի մարքսիզմի դասընթացը: 1918-1920 թթ-ին մասնակցել է Բաքվում

ծավալված հեղափոխական ու մարտական գործողություններին, եղել է կարմիր դրուժինայի շարքային, գնդացրի հրամանատար, երկու անգամ շրջափակված Բաքու զենք ու զինամթերք է հասցրել Ռուսաստանից, երեք անգամ ձերբակալվել ու շուրջ 8 ամիս անցկացրել է Բաքվի բանտերում: 1922-1925 թթ-ին ծառայել է Ադրբեջանական հրաձգային դիվիզիայում, եղել է վաշտի հրամանատար, գնդի հրամանատարի օգնական, դիվիզիայի ուսումնաշտաբային մասի պետ, դիվիզիայի օպերատիվ բաժնի պետ, *երկար ժամանակ փոխարինել է դիվիզիայի հրամանատարին*, 1927-1930 թթ-ին՝ Օրյոլ քաղաքի Մ.Վ. Ֆրունզեի անվան զրահատանկային դպրոցի պետ, *1931-1934 թթ-ին՝ Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի ավտո-զրահատանկային զորքերի հրամանատար, 1935-1936 թթ-ին՝ Լենինգրադի զինվորական օկրուգի ավտո-զրահատանկային զորքերի պետ*: Պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով (1921 թ.): Հրատարակել է մի շարք արժեքավոր աշխատություններ, այդ թվում «Բաքվի կոմունան» գիրքը:

163. ԽԱԽԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Գրիգոր Խախանյան

Խորհրդային բանակի 2-րդ կարգի բանակային կոմանդարմ
(2-րդ կարգի բանակի գեներալ, 1935 թ.)

Գրիգոր Դավթի Խախանյանը (ծն. 28.12.1895 թ., Վրաստան, Ջավախք, գ. Սաթխա - 22.02.1939 թ., խորհրդային բռնատիրության զոհ) խորհրդային ռազմական գործիչ է: 1909 թ-ին ընտանիքի հետ հաստատվել է Թիֆլիս քաղաքում: Տարրական կրթությունն ստացել է Սաթխայի ծխական դպրոցում, 1915 թ. ավարտել է Թիֆլիսի ռուսական վարժարանը, 1915-1916 թթ-ին սովորել է Մոսկվայի համալսարանի բանասիրական ֆակուլտետում, 1917 թ-ին ավարտել է Մոսկվայի ենթասպաների 3-րդ դպրոցը, 1924 թ.՝ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան: 1917 թ-ի սկզբին նշանակվել է Կամիշով քաղաքի պահեստային գնդի վաշտի ենթասպա: 1917 թ-ի կեսերին ուղարկվել է ռազմաճակատ: 1917 թ-ի նոյեմբերին մտել է կարմիր բանակի շարքերը, մասնակցել խորհուրդների համառուսաստանյան 2-րդ համագումարին: 1918 թ-ի սկզբին նշանակվել է կարմիր բանակի Նովո-Ռժևի խմբավորման կոմիսար և ամռանը Կազանի մոտ մտել կռվի մեջ: *Մարտադաշտում աճել և դարձել է 27-րդ Օմսկյան դիվիզիայի 79-րդ բրիգադի հրամանատար*: Բրիգադը մարտերով անցել է Վոլգայից մինչև Ենիսեյ գետը, Բերեզինկայից մինչև Վիսլա, մասնակցել է Կազանը, Ուֆան, Չելյաբինսկը, Օմսկը Կոլչակի սպիտակգվարդիականներից ազատագրելու, Լեհական ռազմաճակատում Պիլսուդսկու սպիտակ լեհերի առաջխաղացումը կանխելու, անառիկ

Կրոնշտադտի բերդում խռովությունը ճնշելու գործողություններին: *1920-1921 թթ-ին եղել է 27-րդ Օմսկյան Կարմրադրոշ դիվիզիայի հրամանատար*, 1924-1927 թթ-ին՝ Մոսկվայի ռազմաօդային ակադեմիայի ռազմական ֆակուլտետի պետ, ապա՝ հրաձգային բարձրագույն դասընթացի պետ և կոմիսար, 1927-1929 թթ-ին՝ Հեռավորարևելյան 19-րդ հրաձգային կորպուսի հրամանատար և կոմիսար, 1929-1930 թթ-ին՝ կորպուսի բազայի վրա ստեղծված Հեռավորարևելյան հատուկ Կարմրադրոշ բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ, 1930-1934 թթ-ին՝ Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ֆակուլտետի պետ, 1935-1937 թթ-ին՝ Ուկրաինայի ռազմական օկրուգի քաղվարչության պետ: Բազմիցս ընտրվել է կուսակցական ու պետական բարձրագույն օրգաններում: Եղել է 5-րդ բանակի բանակային կոմիտեի անդամ, Պսկովի նահանգային գործադիր կոմիտեի անդամ, Ցարիցինի նահանգային գործադիր կոմիտեի նախագահության անդամ, ԽՄԿԿ Հեռավորարևելյան երկրամասային կոմիտեի բյուրոյի անդամ, Ուկրաինայի կոմկուսի կենտրոնական կոմիտեի և կազմբյուրոյի անդամ, Ռուսաստանի Ֆեդերացիայի կենտգործկոմի անդամ, ԽՍՀՄ կենտգործկոմի անդամ: Մասնակցել է ԽՄԿԿ 17-րդ համագումարին և ընտրվել վերստուգիչ հանձնաժողովի անդամ: Պարգևատրվել է Կարմիր դրոշի՝ երեք շքանշանով (28.01.1921 թ., 05.02.1921 թ., 1921 թ.): 1937 թ-ին ձերբակալվել և 1939 թ-ին գնդակահարվել է: Հետագայում արդարացվել է:

Արմենակ Խանփերյանց

164. ԽԱՆՓԵՐՅԱՆՑ ԱՐՄԵՆԱԿ

***ԽՍՀՄ ավիացիայի մարշալ** (19.08.1944 թ.)*

Արմենակ Արտեմի Խանփերյանցը (Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակով) (ծն. 26.12.1901 թ., Լեռնային Ղարաբաղ, Հադրութի շրջան, գ. Մեծ Թաղլար - 18.04.1950 թ., ստալինյան բռնության զոհ) խորհրդային ականավոր զորավար է: 1922 թ. ավարտել է Թիֆլիսի հրամկազմի կատարելագործման հեծելազորային դասընթացը, 1936 թ.՝ Մոսկվայի Ն. Ե. Ժուկովսկու անվան ռազմաօդային ակադեմիան: Կարմիր բանակում սկսել է ծառայել 1917 թ-ի դեկտեմբերից: 1918 թ-ին մասնակցել է Բաքվի պաշտպանությանը, այստեղ էլ ընդունել է իր զոհված հրամանատարի ազգանունն ու անունը՝ Խուդյակով Սերգեյ Ալեքսանդրի: Քաղաքացիական պատերազմի ժամանակ Ուկրաինայում եղել է դասակի, էսկադրոնի հրամանատար, 1924-1928 թթ-ին՝ գնդի դպրոցի պետ, 1928-1931 թթ-ին՝ հեծյալ գնդի շտաբի պետ, 1936 թ-ին՝ Բելոռուսիայի ավիոբրիգադի շտաբի պետ, 1937 թ-ին՝ ռազմաօդային ուժերի շտաբի օպերատիվ բաժնի պետ, 1938-1940 թթ-ին՝ ռազմաօդային ուժերի թիկունքի ղեկավարման պետ, 1940-1941 թթ-ին՝ Բելառուսի

հատուկ զինվորական օկրուգի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, ***1941 թ-ին՝ Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, 1942-1943 թթ-ին՝ ռազմաօդային ուժերի պետ, խորհրդային բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, առաջին օդային բանակի հրամանատար, խորհրդային բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ և հրամանատարի տեղակալ***: Նրա հրամանատարությամբ ավիացիոն միավորումները մասնակցել են Արևմտյան ռազմաճակատի զորքերի հարձակողական մարտերին: 1943 թ-ին համակարգել է Վորոնեժի և Տափաստանային ռազմաճակատների ավիացիայի գործողությունները Կուրսկի և Դնեպրի ճակատամարտերում: 1945 թ-ին, խորհրդային պատվիրակության անդամի կարգավիճակով, մասնակցել է Ղրիմի կոնֆերանսին: **1945 թ-ի հունիսին նշանակվել է 12-րդ օդային բանակի հրամանատար և մասնակցել ճապոնական զորքերի ջախջախմանը Հեռավոր Արևելքում**: 1941 թ-ի հոկտեմբերի 29-ին արժանացել է ավիացիայի գեներալ-մայորի, 1943 թ-ի մարտի 17-ին՝ ավիացիայի գեներալ-լեյտենանտի, 1943 թ-ի հունիսի 10-ին՝ ավիացիայի գեներալ-գնդապետի աստիճանի: Պարգևատրվել է Կարմիր դրոշի՝ երկու, զորավարական՝ Սուվորովի 2-րդ, Կուտուզովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով: Ձերբակալվել է 1945 թ-ին, գնդակահարվել՝ 1950 թ-ին: 1954 թ-ի օգոստոսի 18-ին հետմահու արդարացվել է:

165. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Հովհաննես Բաղրամյան

Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար (1943-1945 թթ-ին)
Խորհրդային Միության մարշալ *(11.03.1955 թ.)*
ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ
(1955, 1958-1968 թթ-ին)

Հովհաննես (Իվան) Խաչատուրի (Քրիստափորի) Բաղրամյանը (ծն. 02.12.1897 թ., Ելիզավետպոլի նահանգ, Շամխորի գավառ, գ. Չարդախլու - 21.09.1982 թ., Մոսկվա, աճյունասափորն ամփոփված է Մոսկվայի Կրեմլի պատի մեջ) խորհրդային ականավոր ռազմական գործիչ է, Խորհրդային Միության կրկնակի հերոս (29.07.1944 թ. և 01.12.1977 թ.), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 2-9-րդ գումարումների պատգամավոր: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա՝ Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանում: 1917 թ. ավարտել է Թիֆլիսի ենթասպաների դպրոցը, 1925 թ.՝ Լենինգրադի հեծելազորային հրամկազմի կատարելագործման, 1931 թ.՝ բարձրագույն հրամկազմի դասընթացները, 1934 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան, 1938 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիաները: Զինվորական ծառայությունն սկսել է 1915 թ-ին: 1918 թ-ին մարտնչել է թուրքական զավթիչների դեմ Քյոփրիքյոյում, Սա-

րիղամիշում, Սարդարապատի ճակատամարտում (եղել է Հայկական առաջին հատուկ հեծելազորային գնդի դասակի հրամանատար): Նրա զինվորական տաղանդը փայլատակել է խորհրդային Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Այդ տարիներին նա վարել է զինվորական բարձր պաշտոններ: Աչքի է ընկել հատկապես Կուրսկի ճակատամարտում, Վոլխովի, Խոտինեցի, Կարաչևի, Բրյանսկի հարձակողական օպերացիաներում, բազմաթիվ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման ժամանակ: **1943 թ-ի նոյեմբերի 19-ին նշանակվել է 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար**: Նրա ղեկավարած խորհրդային զորքերը ջախջախել են ֆաշիստական զորքերի կուռլանդական խմբավորումը (39 դիվիզիա): *Պատերազմի եզրափակիչ փուլում (1945 թ. ապրիլ), որպես 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար իրականացրել է Քյոնիգսբերգ քաղաք-ամրոցի գրավումը*: 1945-1954 թթ-ին եղել է Մերձբալթյան զինվորական օկրուգի հրամանատար, 1954 թ-ին՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչ, **1955 թ-ին ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ**, 1956-1958 թթ-ին՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի պետ, **1958-1968 թթ-ին՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ, զինված ուժերի թիկունքի պետ**, 1968 թ-ից՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչ և տեսուչների խմբի ղեկավար: 1941 թ-ի օգոստոսի 12-ին արժանացել է գեներալ-մայորի, 1941 թ-ի դեկտեմբերի 27-ին՝ գեներալ-լեյտենանտի, 1943 թ-ի օգոստոսի 27-ին՝ գեներալ-գնդապետի, 1943 թ-ի նոյեմբերի 17-ին՝ բանակի գեներալի աստիճանի: Հեղինակ է 8 մենագրության, ավելի քան 200 այլ աշխատության: Պարգևատրվել է խորհրդային Լենինի՝ յոթ, Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր դրոշի՝ երեք, Սուվորովի 1-ին աստիճանի՝ երկու, Կուտուզովի 1-ին աստիճանի, ԽՍՀՄ զինված ուժերում Հայրենիքին ծառայության համար 3-րդ աստիճանի շքանշաններով, մեդալներով, պատվավոր զենքով, բուլղարական՝ «Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետություն» 1-ին կարգի, մոնղոլական՝ Սուխե-Բատորի և Կարմիր դրոշի, լեհական՝ Լեհաստանի վերածննդի 2-րդ կարգի և Լեհաստանի վերածննդի 1-ին կարգի շքանշանի Կոմանդորական խաչ, գերմանական՝ Կարլ Մարքսի շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով: Ընդհանուր առմամբ բանակում ծառայել է 67 տարի: Հովհաննես Բաղրամյանի անունով բնակավայրեր, փողոցներ կան Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղում, Բելառուսում: 1985 թ-ին Երևանի մետրոպոլիտենի երկրորդ կայարանը անվանակոչվել է Մարշալ Բաղրամյանի անունով: 1991 թ-ին Երևանի մետրոպոլիտենի Բարեկամություն կայարանից սկսվող և մինչև օպերա ձգվող փողոցին տրվել է Մարշալ Բաղրամյան անունը: ՀՀ պաշտպանության նախարարությունը 1997 թ-ին հիմնել է «Մարշալ Բաղրամյան-100» մեդալը, որով մինչև այժմ պարգևատրվել է շուրջ 8000 մարդ: 2003 թ-ին Մարշալ Բաղրամյան փողոցի Մարշալ Բաղրամյան կայարանի մոտ տեղադրվել է Հովհաննես Բաղրամյանի ձիարձանը (հեղինակ՝ քանդակագործ Նորիկ Կարգանյան):

166. ԻՍԱԿՈՎ ԻՎԱՆ

Իվան Իսակով

Խորհրդային Միության նավատորմի ծովակալ *(03.03.1955 թ.)*

Իվան Ստեփանի Իսակովը (Հովհաննես Ստեփանի Տեր-Իսահակյան) (ծն. 22.08.1894 թ., Խանլարի շրջան, գ.Ագիշեն - 11.10.1967 թ., Մոսկվա, թաղված է Նովոդևիչիե գերեզմանատանը) խորհրդային ռազմական գործիչ է, ռազմածովային գիտությունների թեկնածու (1937 թ.), Խորհրդային Միության հերոս (1965 թ.), ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1951 թ., «Ծովային ատլասի» առաջին հատորի համար), ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1958 թ.), ՀԽՍՀ ԳԱ պատվավոր անդամ, ՀԽՍՀ աշխարհագրական ընկերության պատվավոր անդամ (1967 թ.), արձակագիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1955 թ.), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր (1937-1946 թթ-ին): 1913 թ. ավարտել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը. 1917 թ.՝ Պետրոգրադի գարդեմարինյան (ծովային) դասընթացը, 1928 թ՝. Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի բարձրագույն հրամկազմի դասընթացը: 1918-1920 թթ-ին ծառայել է խորհրդային ռազմածովային նավատորմում (Բալթիական նավատորմի «Իզյասլավ», «Ռիգա», «Կորչիկ», «Կորշուն» նավերի վրա): Մասնակցել է 1918 թ-ին Բալթիկ ծովում Գերմանական նավատորմի դեմ մղած ծովային մարտերին: 1920-1922 թթ-ին եղել է Վոլգա-կասպիական նավատորմի «Դեյատելնի» ականակրի հրամանատար: 1922-1927 թթ-ին ծառայել է Սևծովյան նավատորմում: 1929-1932 թթ-ին եղել է բանվորագյուղացիական կարմիր բանակի գլխավոր շտաբի ծովային սեկտորի պետ, 1932-1937 թթ-ին՝ ռազմածովային ակադեմիայի ռազմական արվեստի ամբիոնի դասախոս, 1937 թ-ին՝ Բալթիական նավատորմի հրամանատար: **1938-1946 թթ-ին եղել է ԽՍՀՄ ռազմածովային ուժերի շտաբի պետ**, ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի տեղակալ, ապա՝ առաջին տեղակալ: 1939-1940 թթ-ին համակարգել է Բալթիական նավատորմի և կարմիր բանակի գործողություններն ընդդեմ Ֆինլանդիայի: 1940 թ-ին արժանացել է ծովակալի աստիճանի: 1941 թ-ին նշանակվել է Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի, 1942 թ-ին՝ Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական խորհրդի անդամ: 1942 թ-ի հոկտեմբերին՝ Տուապսեի մոտ, մարտում վիրավորվել է, վիրահատվել, սակայն մնացել է մարտական դիրքում՝ վարելով ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնը: 1940 թ-ի հունիսի 4-ին արժանացել է ադմիրալի. 1944 թ-ի մայիսի 31-ին՝ նավատորմի ծովակալի աստիճանի: Պարգևատրվել է խորհրդային Լենինի՝ վեց, Կարմիր դրոշի երեք, Ուշակովի 1-ին աստիճանի՝ երկու, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի, հարավսլավական՝ Պարտիզանական աստղ 1-ին, Ժողովրդական ազատագրություն, լեհական՝

Գրյունվալդի խաչ շքանշաններով: Զբաղվել է նաև ռազմատեսական ու ռազմապատմական հարցերի ուսումնասիրությամբ: 1932-1933 թթ-ին մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի պատմության փաստաթղթերի ժողովածուների կազմմանն ու խմբագրմանը: 1937 թ-ին պաշտպանել է «Ճապոնացիների օպերացիան Ցինդաոյի դեմ 1914 թվականին» թեմայով ատենախոսությունը: Եղել է Լենինյան և ԽՍՀՄ պետական մրցանակների կոմիտեի երկրաբանության և աշխարհագրության հանձնաժողովի անդամ (1958-1967 թթ-ին), Ռազմածովային գիտությունների գծով ատեստացիոն հանձնաժողովի նախագահ, «Խորհրդային մեծ հանրագիտարանի» ռազմածովային գործի խմբագիր-խորհրդատու, «Օվկիանոսագիտական ընկերության» անդամ: Նրա գրքերից մի քանիսը լույս են տեսել հայերեն, այդ թվում՝ «Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում» գիրքը (1946 թ.): ԽՍՀՄ հածանավերից մեկը անվանակոչվել է «Ադմիրալ Իսակով»: Հովհաննես Իսակովի անունով փողոց կա Երևանում: ՀՀ պաշտպանության նախարարությունը 2004 թ-ին հիմնել է «Ծովակալ Հովհաննես Իսակով» մեդալ: Երևան քաղաքի Հայաստանի խորհրդայնացման 30-ամյակի հուշահամալիրի հարևանությամբ կանգնեցվել է ծովակալի հուշարձանը:

Համազասպ Բաբաջանյան

167. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ

Խորհրդային բանակի զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ (1975 թ.)
ԽՍՀՄ տանկային զորքերի պետ (1969-1977 թթ-ին)

Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը (ծն. 18.02.1906 թ., Ելիզավետպոլի նահանգ, Շամխորի գավառ, գ. Չարդախլու - 01.11.1977 թ., Մոսկվա, թաղված է Նովոդևիչիե գերեզմանատանը) խորհրդային ականավոր ռազմական գործիչ է, Խորհրդային Միության հերոս (26.04.1944 թ.): 1925 թ. ավարտել է 7-ամյա դպրոցը, 1929 թ.՝ գերազանցությամբ՝ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը (այդ ժամանակ դպրոցն արդեն տեղափոխվել էր Թիֆլիս), 1940 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի արագացված դասընթացը, 1948 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան: 1939 թ-ին նշանակվել է գնդի հրամանատար և 1940 թ-ին մասնակցել խորհրդա-ֆիննական պատերազմին: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի սկզբին եղել է 395-րդ հրաձգային գնդի հրամանատար, մասնակցել մի շարք ճակատամարտերի, հզոր հարվածով գրավել գերմանացիների կողմից պլացդարմի վերածված Ելնյա քաղաքը, որի արդյունքում գունդը արժանացել է գվարդիականի կոչման: 1942 թ-ին նշանակվել է 3-րդ մեքենայաց-

ված բրիգադի հրամանատար և 1943 թ-ի հուլիս-օգոստոս ամիսներին Բելգորոդ-Կուրսկի ուղղությամբ հզոր հարված է հասցրել գերմանական մեքենայացված ու տանկային զորամիավորումներին: 1944 թ. հուլիս-օգոստոսին նրա գլխավորած բրիգադն առաջիններից մեկը գետանցել է Վիսլան: **1944 թ-ի օգոստոսից մինչև պատերազմի հաղթական ավարտը եղել է 1-ին տանկային բանակի 11-րդ գվարդիական տանկային կորպուսի հրամանատար և հաղթական մտել Բեռլին**: Հետագայում վարել է զինվորական պատասխանատու պաշտոններ: 1957-1967 թթ-ին եղել է Օդեսայի զինվորական օկրուգի հրամանատար, 1967-1969 թթ-ին՝ Զրահատանկային զորքերի ակադեմիայի պետ, **1969-1977 թթ-ին՝ ԽՍՀՄ տանկային զորքերի պետ**: 1945 թ-ի հուլիսի 11-ին արժանացել է գեներալ-մայորի, 1953 թ-ին՝ գեներալ-լեյտենանտի, 1967 թ-ի հոկտեմբերի 17-ին՝ զրահատանկային զորքերի մարշալի աստիճանի: Պարգևատրվել է Լենինի՝ երեք, Կարմիր դրոշի՝ չորս և այլ շքանշաններով:

168. ԱԳԱՆՈՎ ՍԵՐԳԵՅ

Խորհրդային բանակի ճարտարագիտական զորքերի մարշալ (04.06.1980 թ.)
ԽՍՀՄ ճարտարագիտական զորքերի պետ (1975-1987 թթ-ին)

Սերգեյ Ագանով

Սերգեյ Քրիստափորովիչ Ագանովը (Սերգեյ Քրիստափորի Օհանյան) (ծն. 04.06.1917 թ., Աստրախան - 01.02.1996 թ., Մոսկվա) խորհրդային բանակի ռազմական գործիչ է, ռազմական գիտության թեկնածու (1964 թ.), դոցենտ (1966 թ.): 1940 թ. ավարտել է Մոսկվայի ռազմաճարտարագիտական ուսումնարանը, 1952 թ. ոսկե մեդալով՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1955 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան: Մասնակցել է 1939-1940 թթ. խորհրդա-ֆիննական և 1941-1945 թթ. խորհրդային Հայրենական մեծ պատերազմներին, մինչև 1942 թ-ի վերջը ծառայել է Արևմտյան ճակատում (սակրավորական վաշտի հրամանատար), ապա նշանակվել սակրավորական գումարտակի շտաբի պետ: 1943 թվականին ընդգրկվել է ԽՍՀՄ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարության ներկայացուցիչների խմբում, մասնակցել Վորոնեժի, Բրյանսկի, 3-րդ Բելոռուսական, 1-ին և 2-րդ Մերձբալթյան ռազմաճակատների ճարտարագիտական ապահովման աշխատանքներին, մեծ ներդրում ունեցել Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերի հաջողության գործում: 1960-1967 թթ-ին եղել է ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ավագ դասախոս, ապա՝ ճարտարագիտական ամբիոնի պետ, 1967-1970 թթ-ին՝ Գերմանիայում տեղակայված խորհրդային զորախմբի ճարտարագիտական զորքերի պետ, 1970-1974 թթ-ին՝ ԽՍՀՄ ՊՆ

ճարտարագիտական զորքերի պետի տեղակալ, **1975-1987 թթ-ին՝ ճարտարագիտական զորքերի պետ**: 1987 թ-ին նշանակվել է ԽՍՀՄ ՊՆ գլխավոր տեսուչների խմբի ռազմական տեսուչ-խորհրդական: Մեծ աշխատանք է կատարել Չեռնոբիլի ատոմակայանի վթարի հետևանքները վերացնելու ուղղությամբ: Դասախոսական գործունեության ընթացքում հրատարակել է 15 ռազմագիտական աշխատություն և հատուկ թեմայով մեկ մենագրություն:

169. ԲԱՐՍԵՂՈՎ ՄԻՔԱՅԵԼ

Խորհրդային բանակի հրետանու գեներալ-գնդապետ (18.02.1958 թ.)

Միքայել Բարսեղով

Միքայել Արտեմի Բարսեղովը (Բարսեղյան, Պարսեղով) (ծն. 15.06.1899 թ., Լեռնային Ղարաբաղ, Մարտունու շրջան, գ. Կոլխոզաշեն - 27.04.1964 թ., Լենինգրադ, թաղված է Բոգոսլավսկի գերեզմանատանը) խորհրդային բանակի ռազմական գործիչ է, Խորհրդային Միության հերոս (21.03.1940 թ.): Սովորել է գյուղի տարրական դպրոցում, 1922 թ. ավարտել է Տաշքենդի ռազմահրետանային ուսումնարանը, 1936 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1948 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան: 1916-1917 թթ-ին մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին: 1918 թ-ին կամավոր մտել է կարմիր բանակի շարքերը: 1918-1920 թթ-ին Միջին Ասիայի Անդիջանի, Նամանգանի, Կոկանդի շրջաններում կռվել է բասմաչների, Բուխարայի էմիրի զորքերի դեմ: 1922-1930 թթ-ին եղել է Լենինգրադի զինվորական օկրուգի մարտկոցի հրամանատար, Մերձվոլգյան զինվորական օկրուգի դիվիզիոնի հրամանատար, Անդրբայկալյան զինվորական օկրուգի 57-րդ Ուրալյան հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար: 1937 թ-ին նշանակվել է Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու պետ: 1939-1940 թթ-ին եղել է 7-րդ բանակի հրետանու պետը և մասնակցել խորհրդա-ֆիննական պատերազմին, եղել է «Մաններհայմի գիծը» ճեղքողների թվում: Նա առաջին արցախցին է, որ արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Կիևի պաշտպանների շարքում էր: *1941 թ. նոյեմբերից մինչև 1942 թ. հունվարը եղել է Հարավարևմտյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալը.* ***1942 թ. հունվարին նշանակվել է 40-րդ բանակի հրամանատար.*** *1945 թ. մայիսին՝ Հեռավորարևելյան 2-րդ ռազմաճակատի հրետանու հրամանատար*: Մասնակցել է խորհրդա-ճապոնական պատերազմին: Հետպատերազմյան տարիներին եղել է Հեռավորարևելյան, Լենինգրադի զինվորական օկրուգների հրետանային զորքերի հրամանատար: 1962-1964 թթ-ին եղել է Մ. Ի. Կալինինի անվան հրետանային ակադեմիայի հրամանատարական ֆակուլ-

տեսի պետ: 1940 թ. հունիսի 4-ին արժանացել է հրետանու գեներալ-լեյտենանտի աստիճանի: Պարգևատրվել է Լենինի՝ երեք, Կարմիր դրոշի՝ չորս, զորավարական՝ Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշաններով: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ 1965 թ-ին Բոգոլավսկի գերեզմանոցում կանգնեցվել է Մ.Բարսեղովի արձանը: 1972 թ-ին Կոլխոզաշենում բացվել է հերոսի արձանը և նրա հուշաթանգարանը:

170. ՍԱՐԴԱՐՈՎ ՍԵՐԳԵՅ

Խորհրդային բանակի ավիացիայի գեներալ-գնդապետ (1965 թ.)

Սերգեյ Սարդարով

Սերգեյ Արշակի Սարդարովը (Սարդարյան) (ծն. 25.02.1909 թ., Լեռնային Ղարաբաղ, Հադրութի շրջան, գ. Ազոխ - 06.09.1987 թ., Մինսկ) խորհրդային ռազմական գործիչ է, Բելոռուսիայի Գերագույն խորհրդի պատգամավոր: 1917 թ-ին ընտանիքի հետ հաստատվել է Տաշքենդ քաղաքում: Սովորել է հանրակրթական դպրոցում, ավարտել է բանֆակը, 1929-1931 թթ-ին սովորել Մոսկվայի մեխանիկա-մեքենաշինական ինստիտուտում, 1933 թ. ավարտել է Լենինգրադի ռազմատեսական օդաչուական դպրոցը, 1934 թ.՝ Սևաստոպոլի հրամանատարական կազմի դասընթացը, 1952 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան: 1934-1936 թթ-ին եղել է Հեռավորարևելյան հատուկ բանակի սպա, 1936-1938 թթ-ին՝ գրոհային ավիացիոն էսկադրիլիայի ջոկատի հրամանատար, 1938-1939 թթ-ին՝ էսկադրիլիայի զինվորական կոմիսար, 1939-1940 թթ-ին՝ ավիացիոն գնդի զինկոմ, 1940-1942 թթ-ին՝ 307-րդ կործանիչ ավիագնդի հրամանատար: 1942-1943 թթ-ին նրա գլխավորած 965-րդ կործանիչ ավիագունդը պաշտպանել է Արխանգելսկը, Աստրախանը, Գրոզնին, Մինեռալնիյե Վոդին, 1944 թ-ին մասնակցել է Թաման թերակղզու, Ղրիմի ազատագրմանը, Օդեսայի օդային պաշտպանության: *1944 թ-ի վերջին նշանակվել է կործանիչ ավիացիոն դիվիզիայի հրամանատարի տեղակալ*: 1945 թ-ին մասնակցել է Ռումինիայի ազատագրմանը: *1945-1950 թթ-ին եղել է ավիացիոն դիվիզիայի, 1952-1956 թթ-ին՝ ավիացիոն զորամիավորման հրամանատար, 1956-1971 թթ-ին՝ Գ.Կ.Ժուկովի անվան ՀՕՊ ռազմահրամանատարական ակադեմիայի պետի տեղակալ*: 1952 թ-ին արժանացել է ավիացիայի գեներալ-մայորի, 1958 թ-ին՝ ավիացիայի գեներալ-լեյտենանտի աստիճանի: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի երկու և այլ շքանշաններով ու մեդալներով: Ակտիվորեն մասնակցել է երկրի հասարակական-քաղաքական կյանքին. եղել է ԽՄԿԿ 22-րդ և 23-րդ համագումարների պատգամավոր, Բելոռուսիայի կոմկուսի կենտկոմի անդամ: Զորացրվել է 1971 թ-ին:

Վլադիմիր Տամրուչի

171. ՏԱՄՐՈՒՉԻ ՎԼԱԴԻՄԻՐ

Խորհրդային բանակի կոմբրիգ (գեներալ-մայոր, 1935 թ.)
Խորհրդային բանակի տանկային զորքերի
գեներալ-լեյտենանտ (09.11.1941 թ.)

Վլադիմիր Ստեփանի Տամրուչին (Վլադիմիր Ստեփանի Դեմիրճյան) (ծն. 20.04.1892 թ., ՌԴ, Պենզայի մարզ, գ. Մալի Բուտաս - 28.10.1950 թ., խորհրդային բռնատիրության զոհ) խորհրդային բանակի ռազմական գործիչ է, դոցենտ (1935 թ.): Ծնողները Նոր Նախիջևանի այն հայերից են, ովքեր իրենց համարում են հայ նշանավոր բանաստեղծ ու քննադատ Միքայել Նալբանդյանի տոհմից սերած: Սովորել է Բաքվի քաղաքային ուսումնարանում, Ռոստովի քաղաքային ուսումնարանում, 1915 թ. ավարտել է Թիֆլիսի ռազմական ուսումնարանը, 1917 թ.՝ Պետրոգրադի գլխավոր շտաբի ակադեմիայի նախապատրաստական դասընթացը: 1915-1916 թ-ին ծառայել է ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատում, եղել է Կարսի ամրոցի հրետանային վաշտի կրտսեր սպա, ապա՝ Էրզրումի ամրոցի հրետանային վաշտի հրամանատար, մասնակցել է Էրզրումի գրավմանը: 1917-1918 թթ-ին եղել է Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի ավագ սպայի պաշտոնակատար, ապա՝ նույն կորպուսի շտաբի պետի պաշտոնակատար: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո կամավոր մտել է Հայաստանի կարմիր բանակի շարքերը. եղել է բանակի օպերատիվ բաժնի պետի տեղակալ, ՀԽՍՀ ռազմական գործերի ժողկոմատի շտաբի օպերատիվ բաժնի, ապա՝ Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի շտաբի պետ: 1921 թ-ի սեպտեմբերին եղել է Կարսի կոնֆերանսում հայկական հանձնաժողովի խորհրդական և մասնակցել հոկտեմբերի 13-ին Կարսի պայմանագրի կնքման արարողությանը: 1923 թ-ին Հայաստանից տեղափոխվել է Թիֆլիս, 1925 թ-ին՝ Մոսկվա, զբաղեցրել հրամանատարական պաշտոններ, դասավանդել ռազմատեխնիկական և մոտոմեքենայացված զորքերի ակադեմիաներում: 1933-1940 թթ-ին եղել է խորհրդային բանակի գլխավոր շտաբի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ավագ դասախոս, զրահատանկային ամբիոնի պետ, 1940-1941 թթ-ին՝ ավտոզրահատանկային զորքերի գլխավոր տեսչի օգնական, **1941-1943 թթ-ին՝ 22-րդ մեքենայացված կորպուսի հրամանատար, Հարավ-արևմտյան ռազմաճակատի ավտոզրահատանկային զորքերի հրամանատար, ապա՝ նույն ռազմաճակատի հրամանատարի ավտոզրահատանկային զորքերի գծով տեղակալ**: 1940 թ-ի հունիսի 4-ին արժանացել է տանկային զորքերի գեներալ-մայորի աստիճանի: 1941-1943 թթ-ին մասնակցել է Ուկրաինայի պաշտպանությանը, Ժիտոմիրի ուղղությամբ հարձակողական մարտերին: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր աստղի շքան-

շաններով: 1943 թ-ի մայիսի 22-ին լտեսական հակախորհրդային կազմակերպության անդամ լինելու անհիմն մեղադրանքով ձերբակալվել է: Բոլոր մեղադրանքները կտրականապես մերժել է: Մահացել է բանտում 1950 թ-ին: 1953 թ-ի օգոստոսին նրա գործը վերանայվել է և հանցակազմի բացակայության պատճառով կարճվել է:

172. ՎԵՔԻԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Հովհաննես Վեքիլյան

Խորհրդային բանակի հրետանու գեներալ-լեյտենանտ (05.07.1943 թ.)

Հովհաննես Դավթի Վեքիլյանը (Իվան Դավթի Վեքիլով) (ծն. 24.11. 1894 թ., Վրաստան, Կախեթի գավառ, գ. Կրասնոյե Կոլոդցի - 16. 06. 1953 թ., Մոսկվա) խորհրդային բանակի ռազմական գործիչ է: 1912 թ. ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, 1914 թ.՝ գերազանցությամբ՝ Պետրոգրադի հրետանային ուսումնարանը, 1925 թ.՝ Մոսկվայի բարձրագույն հրետանային դպրոցը, 1952 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան: 1914-1918 թթ-ին ծառայել է Արևմտյան, ապա՝ Կովկասյան ճակատում, մասնակցել է Սարիղամիշի մարտերին, 1918-1920 թթ-ին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության բանակում: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1921 թ-ին կամավոր մտել է Հայաստանի կարմիր բանակի շարքերը: 1921-1930 թթ-ին ծառայել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում, եղել է հրետանային գնդի հրամանատար: 1930 թ-ին նշանակվել է Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգի շտաբի հրետանային ծառայության պետ: 1934-1939 և 1940-1941 թթ-ին պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել կարմիր բանակի գլխավոր շտաբի հրետանու գլխավոր վարչությունում: 1939-1940 թթ-ին մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին: Հրետանային գունդը տոննաներով մետաղ է թափել «Մաններհայմի գծի» վրա և մյուս զորամասերի հետ ճեղքել այդ անառիկ ամրությունը: 1941 թ-ի հուլիսին նշանակվել է Հարավային ուղղության հրետանու շտաբի պետի տեղակալ, 1942 թ-ի հունվարին՝ Հարավարևմտյան ուղղության հրետանու պետի տեղակալ, 1942 թ-ի ապրիլին՝ կարմիր բանակի հրետանու շտաբի պետի տեղակալ, 1942 թ-ի նոյեմբերին՝ հրետանու մարշալ Վորոնովի օպերատիվ խմբի պետ (կազմակերպել է հրետանային հարձակումը Ստալինգրադի օպերացիայի ժամանակ), 1943 թ-ի հունիսին՝ կարմիր բանակի հրետանու մարտական պատրաստության վարչության պետ: Մասնակցել է Օդեսայի պաշտպանությանը, Ստալինգրադի Ճակատամարտին, Բելոռուսական, Կորսուն-Շևչենկովյան, Վիսլա-Օդերյան, Պոմերանյան գործողություններին, Բեռլինի գրավմանը: 1942 թ. հունվարի 10-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: 1946 թ-ին նշանակվել է Գլ-

խավոր շտաբի ակադեմիայի դասախոս: Պարգևատրվել է Կարմիր դրոշի՝ երեք, Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 1-ին, զորավարական՝ Սուվորովի 2-րդ, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով:

Սերգեյ Հալաջև

173. ՀԱԼԱՋԵՎ ՍԵՐԳԵՅ

Խորհրդային բանակի գեներալ-լեյտենանտ (28.07.1944 թ.)

Սերգեյ Ֆյոդորի Հալաջևը (Հալաջյան, Գալաջև) (ծն. 17.04.1902 թ., ք. Նոր Նախիջևան - 23.12.1954 թ., Մոսկվա) խորհրդային ռազմական ու պետական գործիչ է, ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1949-1954 թվականներին): 1917 թ. ավարտել է Նոր Նախիջևանի վարժարանի 3-րդ դասարանը, 1936 թ.՝ գերազանցությամբ՝ Լենինգրադի Վ. Ի. Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիան: 1920 թ-ին ծառայել է Կարմիր բանակում, մասնակցել քաղաքացիական կռիվներին: 1921-1922 թթ-ին անցել է իսկական զինվորական ծառայության և զորացրվել է: 1924 թ-ին դիմումի համաձայն մտել է կարմիր բանակի շարքերը: 1924-1932 թթ-ին եղել է Դոնի 9-րդ հրաձգային դիվիզիայի 27-րդ հրաձգային գնդի գերակետիկ ծառայող, կապի դասակի ջոկի հրամանատար, դասակի հրամանատարի օգնական, վաշտի հրամանատարի քաղգծով տեղակալ, գնդի ակումբի պետ, գնդի դպրոցի քաղղեկ, զինվորական օկրուգի քաղվարչության ապարատի հրահանգիչ: 1936-1939 թթ-ին ծառայել է հայրենի ակադեմիայում. եղել է կուրսի պետ, ցամաքային ֆակուլտետի պետ, կարմիր բանակի քաղաքական վարչությանն առընթեր բարձրագույն ռազմաքաղաքական դասընթացների երկրորդ կուրսի պետ: 1939 թ-ի մայիսին նշանակվել է հատուկ կորպուսի ավիացիոն զորամասերի քաղբաժնին առընթեր ագիտպրոպի մասի պետ և մասնակցել Խալխին-Գոլի պատերազմական գործողություններին: 1940-1941 թթ-ին եղել է 32-րդ կորպուսի կոմիսար: *Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել է Արևմտյան, Դոնի, Կենտրոնական, 1-ին Բելոռուսական ռազմաճակատների քաղվարչությունների պետ*, մասնակցել է մի շարք քաղաքների ազատագրմանը, Բեռլինի գրավմանը: Հետպատերազմյան տարիներին՝ 1945 թ-ին եղել է Գերմանիայում տեղակայված խորհրդային զորախմբի, 1946-1951 թթ-ին՝ ԽՍՀՄ զինված ուժերի ցամաքային զորքերի քաղվարչությունների պետ: 1942 թ-ի դեկտեմբերի 6-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Լենինի՝ երկու, Կարմիր դրոշի՝ երեք, զորավարական՝ Սուվորովի 2-րդ աստիճանի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով:

174. ԳԻՆՈՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Ստեփան Գինոսյան

Խորհրդային բանակի
գեներալ-լեյտենանտ (19.04.1945 թ.)

Ստեփան Իլյիչի (Եղիայի) Գինոսյանը (ծն. 1900 թ., Վրաստան, Ախալքալաքի շրջան, գ. Սաթխա -29.09.1965 թ., Մոսկվա) խորհրդային ռազմական գործիչ է, ռազմական գիտությունների թեկնածու (1956 թ.), դոցենտ: Ավարտել է գյուղի տարրական դպրոցը, Ախալքալաքի ուսումնարանը, 1925 թ.՝ Համամիութենական Կենտգործկոմի անվան զինվորական դպրոցը, 1936 թ.՝ առաջին կարգի դիպլոմով՝ Մ.Վ. Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիան, 1950 թ.՝ գլխավոր շտաբի Կ.Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան: 1918 թ-ին տեղափոխվել է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի), որտեղից զորակոչվել է Հայաստանի Առաջին Հանրապետության բանակ: 1920 թ-ի դեկտեմբերից զինվորական ծառայությունը շարունակել է Կարմիր բանակի շարքերում: 1925-1933 թթ-ին ծառայել է Երևանում, ապա՝ Թբիլիսիում: 1936-1939 թթ-ին ծառայել է 48-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում՝ որպես շտաբի 1-ին բաժնի պետ, Կիևի հատուկ զինվորական օկրուգի շտաբի բաժնի պետի օգնական, 1939 թ.՝ Ի.Վ. Բոլդինի հեծյալ-մեքենայացված շտաբի բաժնի պետ, մասնակցել Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը: 1939-1940 թթ-ին մասնակցել է խորհրդա-ֆինական պատերազմին: 1941-1945 թթ-ին մասնակցել է խորհրդային Հայրենական մեծ պատերազմին, *եղել է 33-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ, ապա՝ 49-րդ բանակի շտաբի պետ*: Հետպատերազմյան տարիներին եղել է զինվորական օկրուգի շտաբի պետ, Մ.Վ. Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիայի օպերատիվ արվեստի ամբիոնի ավագ դասախոս, ապա ստրատեգիայի և օպերատիվ արվեստի ամբիոնի գծով կուրսային ղեկավար: 1942 թ-ի նոյեմբերի 17-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի՝ հինգ, զորավարական՝ Սուվորովի 2-րդ, Կուտուզովի 1-ին և 2-րդ, Բոգդան Խմելնիցկու 1-ին աստիճանի և լեհական երեք շքանշաններով: Զորացրվել է 1964 թ-ին:

175. ՇԵՔԵՐՋՅԱՆ ՀԱՅԿ

Հայկ Շեքերջյան

ԱՄՆ-ի բանակի գեներալ-լեյտենանտ (1945 թ.)

Հայկ Շեքերջյանը (ծն. 1886 թ., Արևմտյան Հայաստան, Ադաբազար - 22.06.1966 թ.) ԱՄՆ-ի բանակի ռազմական գործիչ է: 1890 թ-ին գաղթել է ԱՄՆ: Միջնակարգ կրթությունն ստացել է Կոլորադոյի Թորինգթոն քոլեջում, սովորել է Քոլգեյթի և Ուեսթ Փոյնթ

համալսարաններում: 1911 թ. ավարտել է Վեստ Պոնտի ռազմական ակադեմիան: Ծառայությունը զինված ուժերում սկսել է ենթասպայի կոչումով: 1916 թ-ին գեներալ Ջոն Պերշինգի հրամանատարությամբ մասնակցել է Մեքսիկայի դեմ պատերազմին: *Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել է ԱՄՆ-ի առաջին բանակում, եղել է Միքերտ ճամբարի պետ:* ***Նշանակվել է ամերիկյան բանակի քիմիական զորքերի պետ***: 1946 թ-ին պաշտոնաթող է եղել: 1942 թ-ին արժանացել է բրիգադի գեներալի աստիճանի: ԱՄՆ-ում գեներալի կոչման արժանացած առաջին հայն է: Պատերազմից հետո, կնոջ՝ Հելենի հետ զբաղվել է հայանպաստ գործունեությամբ: Գազային հարձակումից պաշտպանվելու տեսության հեղինակն է: Պարգևատրվել է Երախտիքի լեգեոն շքանշանով: 1919 թ-ին այցելել է Հայաստանի Առաջին Հանրապետություն:

Սարգիս Մարտիրոսյան

176. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Խորհրդային բանակի
գեներալ-լեյտենանտ (27.06.1945 թ.)

Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը (ծն. 21.09.1900 թ., Շամախու գավառ, գ. Մաղրասա - 15.02.1984 թ., Երևան) խորհրդային բանակի ռազմական գործիչ է, Խորհրդային Միության հերոս (29.05.1945 թ.): Սովորել է գյուղի ծխական դպրոցում, 1918 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1928 թ.՝ կարմիր բանակի գլխավոր շտաբի Մոսկվայի բարձրագույն զինվորական դասընթացը, 1956 թ. ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ակադեմիան: 1918 թ-ին մտել է կարմիր գվարդիայի շարքերը: 1922-1938 թթ-ին ծառայել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում: 1939-1940 թթ-ին եղել է Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի հրաձգային դիվիզիաներից մեկի օպերատիվ մասի պետ, ապա՝ Մերձբալթիկայում տեղաբաշխված խորհրդային զորքերում: Խորհրդային Հայրենական պատերազմի նախօրյակին նշանակվել է Խարկովի օկրուգի դիվիզիաներից մեկի շտաբի պետ: 1941 թ-ի աշնանը երկրի խոր թիկունքում նրա ղեկավարությամբ կազմավորվել է 340-րդ հրաձգային դիվիզիան, որը կոմբինացված ռազմերթով հասել է ռազմաճակատ և մտել 49-րդ բանակի կազմի մեջ, Շեմետովո-Մելեխովո բնագծում ջախջախել թշնամուն, միացել 50-րդ բանակին և գրավել Կալուգա քաղաքը: **1943 թ-ի աշնանը նշանակվել է 1-ին Ուկրաինական ռազմաճակատի կազմում գործող 38-րդ բանակի 50-րդ կորպուսի հրամանատար**: Կորպուսն աչքի է ընկել Դնեպրի հաղթահարման և Կիևի ազատագրման ժամանակ: 1944 թ-ի ապրիլին ընդունել է 73-րդ հրաձ-

գային կորպուսը, որը մասնակցել է Մոլդովայի, Ռումինիայի, Լեհաստանի, Գերմանիայի և Չեխոսլովակիայի ազատագրման մարտերին, մարտական ուղին ավարտել Պրագայում: Պատերազմից հետո հրամանատարական պաշտոններ է վարել ԽՍՀՄ տարբեր զինվորական օկրուգներում: 1942 թ-ի դեկտեմբերի 20-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Լենինի՝ չորս, Կարմիր դրոշի՝ չորս, զորավարական՝ Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Պաշտոնաթող է եղել 1953 թ-ին և մինչև իր կյանքի վերջը Երևանում գլխավորել Խորհրդա-չեխոսլովակյան բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի աշխատանքները:

177. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԲԱԳՐԱՏ

Բագրատ Առուշանյան

Խորհրդային բանակի գվարդիայի
գեներալ-լեյտենանտ (05.05.1945 թ.)

Բագրատ Իսահակի Առուշանյանը (ծն. 27.02.1903 թ., գ. Վերիշեն /Հին Գորիս/, այժմ՝ ՀՀ, Սյունիքի մարզ - 1997 թ., Մոսկվա) խորհրդային ռազմական գործիչ է: 1914 թ. ավարտել է գյուղի ծխական դպրոցը, 1926 թ.՝ գերազանցությամբ՝ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը, 1936 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան և 1948 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիաները: 1926-1932 թթ-ին ծառայել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում, եղել է դասակի, վաշտի, հրաձգային գումարտակի հրամանատար, գնդի դպրոցի պետ: 1939-1940 թթ-ի ձմռանը 7-րդ բանակի 19-րդ հրաձգային կորպուսի շտաբի պետի պաշտոնում մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին և անձամբ ղեկավարել «Մաններհայմի գծի» ճեղքմանը: 1940 թ-ի ապրիլի 6-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Հարավ-Արևմտյան ռազմաճակատում եղել է 12-րդ բանակի շտաբի պետ, ապա՝ նույն ռազմաճակատի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ: 1941 թ-ի հոկտեմբերին նշանակվել է 56-րդ բանակի շտաբի պետ և մասնակցել Դոնի Ռոստովի ազատագրմանը: 1943 թ-ին տեղափոխվել է 1-ին Մերձբալթյան ռազմաճակատ: **1944 թ-ի հունիսին նշանակվել է 11-րդ գվարդիական կորպուսի հրամանատար**: Հետպատերազմյան տարիներին դասախոսել է ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիայում: Պարգևատրվել է Լենինի, Մարտական կարմիր դրոշի՝ երեք, զորավարական՝ Սուվորովի 2-րդ և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Հրատարակել է ռազմագիտական և ռազմապատմական հոդվածներ: Պաշտոնաթող է եղել 1951 թ-ին:

Արամ Գարամանուկյան

178. ԳԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԱՄ

Սիրիական բանակի գեներալ-լեյտենանտ (1956 թ.)

Արամ Հակոբի Գարամանուկյանը (Կարամանուկյան) (ծն. 26.05.1910 թ., Այնթափ - 23.12.1996 թ., ԱՄՆ, Նյու-Ջըրսի, Ֆորթ Լի) Սիրիայի Արաբական Հանրապետության բանակի ռազմական գործիչ է, Սիրիայի խորհրդարանի, Սահմանադիր ժողովի անդամ (1961 թ.), միջազգային իրավունքի դոկտոր (1972 թ.): 1923 թ. ավարտել է Այնթափի Աթենական դպրոցը, 1926 թ.՝ գերազանցությամբ՝ Սիրիայի զինվորական վարժարանը, 1934 թ.՝ ֆրանսիական բանակի սիրիական գնդերի համար սպաներ պատրաստող Դամասկոսի զինվորական դպրոցի հրետանային բաժինը: 1945 թ-ին ստացել է սպայական կոչում: Սովորել է Ֆրանսիայի Հոմսի և Ֆոնտենբլոյի բարձրագույն ռազմական պատերազմավարական քոլեջներում: 1964 թ-ին հետևել է իրավունքի դասընթացներին Բեյրութի Սեն Ժոզեֆ, ապա՝ Փարիզի Սորբոնի համալսարաններում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին եղել է թնդանոթաձիգ: Սիրիայի անկախացումից հետո (1946 թ.) մասնակցել է սիրիական բանակի կազմավորմանը: 1948 թ-ին Իսրայելի դեմ պատերազմում եղել է հրետանային գնդի հրամանատար, **1949-1957 թթ-ին՝ Սիրիայի բանակի հրետանու ընդհանուր հրամանատար և սպայակույտի անդամ**: Մասնակցել է պաղեստինյան պատերազմին: 1953 թ-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: 1957-1958 թթ-ին եղել է Վաշինգտոնի սիրիական հյուպատոսարանի ռազմական կցորդ: 1964 թ-ին անցել է կենսաթոշակի: Զբաղվել է փաստաբանական գործունեությամբ: Հրատարակել է «Օտարազգիները և զինվորական ծառայությունը» գիրքը (Փարիզ, 1978 թ., ֆրանսերեն): Պարգևատրվել է Սիրիայի «Արժանյաց», «Պատերազմական», «Անձնվիրության», «Պաղեստինյան պատերազմի», Լիբանանի «Արժանյաց» Ա կարգի, Եգիպտոսի «Արժանյաց» Ա կարգի, Ֆրանսիայի «Պատերազմական խաչ», «Լեժիոն տ,Օնեոր» շքանշաններով: Արժանացել է Հայ Առաքելական եկեղեցու «Ներսես Շնորհալի», Մեծի Տանն Կիլիկիո «Կիլիկյան Մեծ Խաչի ասպետ» (1985 թ.), «Իշխանի» շքանշաններով: Բազմիցս եղել է Հայաստանում: Ողջունել է Հայաստանի անկախացումը և իր ազնիվ ծառայության համար ստացած բոլոր շքանշանները նվիրել է Հայրենիքին: 2004 թ-ին Հասմիկ Գարամանուկյանը ԱՄՆ-ում տպագրել է «Ձօրավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը» ստվարածավալ գիրքը (486 էջ):

179. ԱՍՐԻԵՎ ՆԻԿՈԼԱՅ

Նիկոլայ Ասրին

Խորհրդային բանակի հրետանու գեներալ-լեյտենանտ (1968 թ.)

Նիկոլայ Աշոտի Ասրիևը (ծն. 24.04.1920 թ.. Թուրքմենստան, ք. Չարջոու) խորհրդային ռազմական գործիչ է, ռազմական գիտությունների դոկտոր (1980 թ.), պրոֆեսոր (1981 թ.): Հոր մահից հետո, 1920-ական թվականների կեսերին ընտանիքը հաստատվել է Բաքու քաղաքում: 1937 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1939 թ.՝ Սմոլենսկի հրետանային ուսումնարանը. 1953 թ. Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1961 թ. ոսկե մեդալով ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան: 1939-1941 թթ-ին ծառայել է Սմոլենսկի հրետանային ուսումնարանում. եղել է դասակի հրամանատար: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի սկզբին Սմոլենսկի հրետանային ուսումնարանի բազայի վրա կազմավորվել է հրետանային գունդ, որը կռվի մեջ է մտել Սմոլենսկ քաղաքի մատույցներում: 1941 թ-ի աշնանը ուսումնարանը տեղափոխվել է Ուրալ: Դասակի հրամանատարը 1942 թ-ին դիմումի համաձայն իրավունք է ստացել վերադառնալ ռազմաճակատ և Վոլխովյան ռազմաճակատի 946-րդ հրետանային գնդում նշանակվել է հրետանային դիվիզիոնի հրամանատար: 1943 թ-ի աշնանը նշանակվել է հրածգային դիվիզիայի շտաբի հրետանու շտաբի պետ. ապա՝ կորպուսի հրետանու շտաբի պետ և մասնակցել Նովգորոդյան օպերացիային: *1944 թ-ին նշանակվել է 54-րդ բանակի հրետանու շտաբի պետ և մասնակցել Ռիգա քաղաքի ազատագրման մարտերին*: Հետպատերազմյան տարիներին վարել է տարբեր պատասխանատու պաշտոններ. 1968-1971 թթ-ին եղել է հակաօդային պաշտպանության Մոսկովյան օկրուգի շտաբի պետ: 1971 թ-ին նշանակվել է ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ամբիոնի պետ: 1961 թ-ին արժանացել է հրետանու գեներալ-մայորի աստիճանի: Պարգևատրվել է Կարմիր դրոշի երկու շքանշանով: 1966 թ-ին եղել է ԽՄԿԿ 23-րդ համագումարի պատգամավոր: Սպորտի մի քանի ձևերից 1-ին կարգ է ունեցել, եղել է ԽՍՀՄ մարմնամարզության ֆեդերացիայի նախագահության նախագահի տեղակալ, 1967 թ-ին ստացել է մարմնամարզության գծով համամիութենական կարգի մրցավարի կոչում:

Նորատ Տեր-Գրիգորյանց

180. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ՆՈՐԱՏ

Խորհրդային բանակի գեներալ-լեյտենանտ (1985 թ.)

Նորատ Գրիգորի Տեր-Գրիգորյանցը (ծն. 16. 07. 1936 թ., ք. Վլադիկավկազ) խորհրդային և ՀՀ բանակի ռազմական գործիչ է: 1954 թ. ավարտել է Վլադիկավկազի հայկական միջնակարգ դպրոցը, 1960 թ.՝ Ուլյանովսկի գվարդիական տանկային ուսումնարանը, 1968 թ.՝ «Վիստրել» բարձրագույն սպայական դասընթացը, 1973 թ.՝ ԽՍՀՄ զրահատանկային զորքերի ակադեմիան, 1980 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ակադեմիան: 1960-1992 թթ-ին ծառայել է ԽՍՀՄ, ապա՝ ՌԴ զինված ուժերում: *1976-1978 թթ-ին եղել է Հունգարիայում տեղակայված խորհրդային զինվորական խմբավորման 93-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատար, 1980 թ-ին՝ Թուրքմենստանյան զինվորական օկրուգի շտաբի պետի առաջին տեղակալ, 1981-1983 թթ-ին՝ Աֆղանստանում խորհրդային 40-րդ բանակի հրամանատարի առաջին տեղակալ, ապա՝ շտաբի պետ,* ***1983-1991 թթ-ին՝ ԽՍՀՄ ցամաքային զորքերի գլխավոր շտաբի պետ, գլխավոր հրամանատարի տեղակալ***: 1980 թ-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: 1992-1993 թթ-ին ծառայել է ՀՀ զինված ուժերում, եղել է *ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ - ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ*: Գործուն մասնակցություն է ունեցել ՀՀ ԶՈՒ կազմավորման, ՀՀ սահմանների պաշտպանության, ՀՀ ԶՈՒ ռազմական արվեստի զարգացման գործում: 1993 թ-ին տեղափոխվել է Մոսկվա: Պարգևատրվել է ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով (18.09.2006 թ.), ինչպես նաև խորհրդային շքանշաններով, մեդալներով: Մոսկվայում ռուսերեն լեզվով հրատարակել է հայ կազակության պատմության վերաբերյալ «Հայ կազակությունը» գիրքը (2005 թ.):

Գուրգեն Ղարագյոզյան

181. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

Ռուսաստանի Դաշնության բանակի գեներալ-լեյտենանտ (1991 թ.)

Գուրգեն Արամի Ղարագյոզյանը (ծն. 1941 թ., Գանձակ, չարդախլվեցի վերաբնակչի ընտանիքում) ՌԴ բանակի ռազմական գործիչ է: Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրի ռուսական դպրոցում: Ավարտել է Բաքվի գյուղատնտեսական ինստիտուտը, 1980 թ.՝ Յու. Գագարինի անվան ռազմաօդային ակադեմիան: Վրաստանում եղել է հատուկ զորամասի հրամանատար: 1976-1981 թթ-ին ծառայել է Գերմանիայում և Լեհաստանում, եղել է դիվիզիայի հրամանատարի տեղակալ, 1981-1983 թթ-ին՝

Սանկտ-Պետերբուրգի զինվորական օկրուգի օդային ուժերի շտաբի պետ, 1983-1987 թթ-ին՝ ռազմաօդային բանակի հրամանատար, 1988-1991 թթ-ին՝ Մոսկվայի զինվորական օկրուգի ավիացիայի հեռագնաց ուժերի հրամանատարի տեղակալ, 1991-1994 թթ-ին՝ Ռուսաստանի Դաշնության ռազմաօդային ուժերի հրամանատարի և համատեղությամբ՝ ԱՊՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ:

182. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ

Սերգեյ Կարապետյան

Խորհրդային բանակի գվարդիայի գեներալ-մայոր (01.10.1942 թ.)

Սերգեյ Եսայու Կարապետյանը (ծն. 25.11.1899 թ., Թուրքմենստան, Կըզլ-Արվատ - 09.11.1956 թ., Երևան) խորհրդային բանակի ռազմական գործիչ է: Սերում է Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղից: 1918 թ. ավարտել է Մոսկվայի առևտրական ուսումնարանի 5-րդ դասարանը, 1921 թ.՝ Օրենբուրգի հեծելազորային դասընթացը, 1923 թ.՝ Անդրկովկասի զինվորական օկրուգի դասընթացը, 1925 թ.՝ Սանկտ-Պետերբուրգի հեծելազորային դասընթացը, 1934 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1942 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիային առընթեր հրամկազմի կատարելագործման բարձրագույն դասընթացը: 1918 թ-ին Մոսկվայում մտել է կարմիր բանակի շարքերը: 1919-1920 թթ-ին 49-րդ դիվիզիայի էսկադրոնի կազմում մասնակցել է Արևելյան ռազմաճակատում ընթացող կռիվներին: 1921-1937 թթ-ին ծառայել է Հայաստանում. եղել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի էսկադրոնի հրամանատար, Անդրկովկասյան զինվորական օկրուգի 2-րդ հեծյալ դիվիզիայի Հայկական 22-րդ հեծյալ գնդի հրամանատար: 1938-1940 թթ-ին ծառայել է Բելոռուսիայի հատուկ զինվորական օկրուգում. եղել է 5-րդ տանկային դիվիզիայի 5-րդ մոտոհրաձգային գնդի հրամանատար, մասնակցել Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին նշանակվել է 183-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ, *1942 թ. ապրիլին նշանակվել է 174-րդ հրաձգային դիվիզիայի (վերակազմավորվել և վերանվանվել է 46-րդ գվարդիական դիվիզիա) հրամանատար*, աչքի է ընկել Կորոտյակի (1942 թ.), Օստրովի (1943 թ.), Վելիկիե Լուկիի (1943 թ.), Տարտուի և Ռիգայի (1944 թ.) ազատագրական մարտերում: 1945 թ-ին 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերի կազմում մասնակցել է Վիսլայի վրա մղված մարտերին, Վարշավայի ազատագրմանը, Օդերի գետանցմանն ու Բեռլինի գրավմանը: Պատերազմի ավարտից հետո 1945-1948 թթ-ին ծառայել է Անդրկովկասյան

զինվորական օկրուգում, եղել է 7-րդ գվարդիական բանակի շտաբի մարտական ուսուցման բաժնի պետ: 1948-1956 թթ-ին եղել է Հայկական պետական ֆիզիկական ինստիտուտի ռազմագիտության ամբիոնի պետ: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի՝ երեք, զորավարական՝ Սուվորովի 2-րդ, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Պաշտոնաթող է եղել 1948 թ-ին:

183. ՄԱՆՍՈՒՐՈՎ ԲՈՐԻՍ

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (նեյեմբեր, 1943 թ.)

Բորիս Վլադիմիրի Մանսուրովը (ծն. 1902 թ., Բալաջար կայարան - 1961 թ., Մոսկվա) խորհրդային բանակի ռազմական գործիչ է: Սերում է Հյուսիսային Օսեթիայի Բեսլան քաղաքում հաստատված հայկական ընտանիքից: 1912 թ. ավարտել է Բալաջարի կայարանի երկաթուղային ուսումնարանը, 1917 թ.՝ Բաքվի գիմնազիան, 1921 թ.՝ Պյատիգորսկի միջնակարգ դպրոցը, 1935 թ.՝ Նովոչերկասկի կրտսեր հրամանատարական հեծելազորային վերապատրաստման դասընթացը, 1948 թ.՝ ոսկե մեդալով՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան: 1924 թ-ին զորակոչվել է կարմիր բանակ և ծառայության ուղարկվել 35-րդ հեծելազորային գունդ: Այստեղ ծառայել է մինչև 1932 թ-ը և շարքայինից հասել գնդի շտաբի պետի պաշտոնի: 1935-1938 թթ-ին եղել է 24-րդ հեծելազորային դիվիզիայի գնդային ուսումնական դպրոցի պետ, 1938-1941 թթ-ին՝ Տամբովի հեծելազորային ուսումնարանի տակտիկայի դասախոս: 1941 թ-ի հուլիսին նշանակվել է Արևմտյան ռազմաճակատի 7-րդ գվարդիական հեծելազորային դիվիզիայի շտաբի պետ և մասնակցել է Օռլովի և Տուլայի ուղղությունների ծանր պաշտպանական մարտերի: *1941 թ-ի վերջին եղել է հեծելազորային դիվիզիայի հրամանատար, 1942 թ-ին՝ հեծելազորային կորպուսի շտաբի պետ*: Նա հարձակողական մարտերի է մասնակցել Արևմտյան, Բրյանսկի, 1-ին և 2-րդ Բելոռուսական ռազմաճակատներում: 1948-1952 թթ-ին եղել է ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ավագ դասախոս, 1952-1961 թթ-ին՝ նույն ակադեմիայի խորհրդի գիտնական քարտուղար: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի հինգ, Կուտուզովի 2-րդ, Բոգդան Խմելնիցկու 2-րդ, Բրիտանական կայսրության 3-րդ աստիճանի շքանշաններով:

184. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԻՍԱՀԱԿ

Խորհրդային բանակի գվարդիայի
գեներալ-մայոր (22.02.1944 թ.)

Իսահակ Գասպարի Գասպարյանը (ծն. 17.06.1902 թ., Վանի նահանգ, Բայազետի գավառ, գ. Սինդ - 19.10.1962 թ., Սոչի, թաղված է Երևանում) խորհրդային ռազմական գործիչ է, Խորհրդային Միության հերոս (31.05.1945 թ.): Տարրական կրթություն ստացել է Իջևանի մանկատանը, 1927 թ. ավարտել է Թիֆլիսի Անդրկովկասյան միացյալ հետևակային ուսումնարանը, 1930 թ.՝ Մոսկվայի սահմանապահների կենտրոնացված դասընթացը, հետպատերազմյան տարիներին՝ Մ. Վ. Ֆրունզեի անվան

ակադեմիայի հրամկազմի դասընթացը, ապա՝ Գլխավոր շտաբի Կ.Վորոշիլովի անվան ակադեմիան: 1919-1920 թթ-ին եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի զինվոր: 1922 թ-ին զորակոչվել է կարմիր բանակ և նշանակվել Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 2-րդ գնդի մարտիկ: 1927-1930 թթ-ին եղել է 3-րդ հրաձգային դիվիզիայի Կովկասյան 8-րդ գնդի դասակի հրամանատար, ապա՝ վաշտի հրամանատարի քաղգծով օգնական (Գյումրի), 1930-1933 թթ-ին՝ Անդրկովկասի սահմանապահ զորամասի հետախուզական գծի պետ (Լենքորան), 1933-1941 թթ-ին՝ 41-րդ հրաձգային դիվիզիայի 122-րդ հրաձգային գնդի գումարտակի շտաբի պետ, գնդի դպրոցի պետ, գնդի շտաբի պետ (Բաքու), 151-րդ հրաձգային դիվիզիայի հետախուզության պետ: 1941 թ-ի սեպտեմբերին նշանակվել է Վոլխովյան ռազմաճակատի 19-րդ բանակի 25-րդ հրաձգային կորպուսի հետախուզության պետ: *1942-1945 թթ-ին եղել է Ուրալյան զինվորական օկրուգի դիվիզիայի հրամանատարի տեղակալ, Արևմտյան ռազմաճակատի 9-րդ կործանիչ-հակատանկային բրիգադի հրամանատար, 290-րդ դիվիզիայի հրամանատար, Բելոռուսական 1-ին ռազմաճակատի 5-րդ բանակի 94-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հրամանատար*, մասնակցել տասնյակ ճակատամարտերի, Բեռլինի գրավմանը: 1946-1957 թթ-ին եղել է զորամիավորումների հրամանատար: Պարգևատրվել է Լենինի՝ երկու, Կարմիր դրոշի՝ չորս, զորավարական՝ Սուվորովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով: 1957 թ-ին առողջական պատճառով զորացրվել է:

Իսահակ Գասպարյան

185. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Խորհրդային բանակի գվարդիայի գեներալ-մայոր (11.07.1945 թ.)

Գրիգոր Գրիգորյան

Գրիգոր Արկադիի (Արշակի) Գրիգորյանը (ծն. 1898 թ., Գյումրի - 27.03.1970 թ., Լենինգրադ) խորհրդային ռազմական գործիչ է: Ավարտել է Գյումրիի առևտրային դպրոցը, 1928 թ.՝ Կիևի ռազմական դպրոցը, 1931 թ.՝ Նովոչերկասկի բարձրագույն հեծելազորային դպրոցը, 1942 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: 1917 թ-ին զորակոչվել է ցարական բանակ: 1917 թ-ի նոյեմբերին կամավոր մտել է կարմիր բանակի շարքերը: Եղել է դասակի հրամանատար: 1918-1920 թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ ծառայել է 1-ին հեծյալ բանակում, մասնակցել Դենիկինի, Վրանգելի, սպիտակ լեհերի դեմ կռիվներին, 1921-1922 թթ-ին կռվել է Ուկրաինական պետլյուրականների, 1923-1924 թթ-ին՝ Միջին Ասիայի բասմաչների դեմ: Հայկական լեռնահրաձգային դիվիզիայում եղել է առանձին հեծյալ էսկադրո-

նի հրամանատար: *Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել է 217-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարը* և պատերազմի մեջ է մտել Լվով քաղաքի մոտ: *1942 թ-ին ծանր վիրավորվել է, ապաքինվելուց հետո նշանակվել է այլ դիվիզիայի հրամանատար*: Դիվիզիան մասնակցել է Ուկրաինայի, Բելոռուսիայի և Լեհաստանի ազատագրմանը, Բեռլինի գրավմանը: Հետպատերազմյան տարիներին շարունակել է ծառայությունը, եղել գվարդիական կորպուսի հրամանատարի տեղակալ: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի՝ չորս, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

Ասքանազ Կարապետյան

186. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՍՔԱՆԱԶ

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (02.11.1944 թ.)

Ասքանազ Գևորգի Կարապետյանը (ծն. 20.12.1899 թ., Երևանի նահանգ, Սուրմալուի գավառ, գ. Էվջիլար - 31.10.1978 թ., Երևան) խորհրդային բանակի ռազմական գործիչ է, Խորհրդային Միության հերոս (01.11.1943 թ.): 1927 թ. ավարտել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը, 1942 թ.՝ Սպայական կազմի կատարելագործման դասընթացը, 1948 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան, 1954 թ.՝ Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիաները: Ծառայել է Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի շարքերում, մասնակցել է Սարիղամիշի ուղղությամբ ծավալված մարտական գործողություններին: 1920 թ-ի վերջին կամավոր մտել է 11-րդ բանակի կազմում գտնվող Հայկական 2-րդ գնդի շարքերը: Այդ գնդի բազայի վրա ավելի ուշ կազմավորվել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան: 17 տարի ծառայել է դիվիզիայում. եղել է ուսումնական դասակի, վաշտի հրամանատար, գնդի շտաբի պետ, գնդի հրամանատար: 1938-1941 թթ-ին ծառայել է Բելոռուսական զինվորական օկրուգում. եղել է գնդի հրամանատար և մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրման գործողություններին: Մասնակցել է Խորհրդային Հայրենական մեծ պատերազմին: **1942 թ-ին նշանակվել է բրիգադի հրամանատար, մարտնչել Ստալինգրադի ճակատամարտում: 1943 թ-ի նոյեմբերից եղել է 51-րդ բանակի 315-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար.** մասնակցել մի շարք քաղաքների ազատագրմանը: Նրա զորավարական հմտությունը հատկապես դրսևորվել է Մելիտոպոլ քաղաքի ազատագրման մարտերում: *1951-1952 թթ-ին եղել է եռակի շքանշանակիր Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի հրամանատար*: Պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել այլ զորամիավորումներում: Պարգևատրվել է Լենինի՝ երկու, Կարմիր դրոշի՝ չորս, զորավարական՝ Սուվորովի 2-րդ աստի-

ճանի, Կարմիր աստղի շքանշաններով: Ուկրաինայի Սնեժնոյե քաղաքի պատվավոր քաղաքացի էր: Նրա անունով փողոցներ կան Երևան և Սնեժնոյե քաղաքներում: Պաշտոնաթող է եղել 1954 թ-ին:

187. ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Կարապետ Հախնազարյան

Խորհրդային բանակի հրետանու գեներալ-մայոր (18.11.1944 թ.)

Կարապետ Վարդանի Հախնազարյանը (ծն. 28.01.1894 թ., ՀՀ, Արարատի մարզ, գ. Վերին Արտաշատ - 08 02.1980 թ., Կրասնոդար, թաղված է Վերին Արտաշատում) խորհրդային բանակի ռազմական գործիչ է: 1909 թ. ավարտել է Դվինի երկդասյա դպրոցը, 1912 թ.՝ Երևանի ռուսական գիմնազիան, 1916 թ.՝ Թիֆլիսի ենթասպաների դպրոցը (մարշալ Հ.Բաղրամյանի հետ սովորել է նույն խմբում), 1930 թ.՝ բարձրագույն սպայական հրետանային դպրոցը, 1941 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի երեկոյան բաժինը: 1916-1917 թթ-ին Հարավարևմտյան ռազմաճակատում մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին: 1918 թ-ին կամավոր մտել է կարմիր բանակի շարքերը և նշանակվել է զրահահրապարակի հրամանատար: 1920-1941 թթ-ին կարմիր բանակի շարքերում տարբեր սպայական պաշտոններ է զբաղեցրել, եղել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի դասակի, վաշտի հրամանատար, հրետանային գնդի մարտկոցի հրամանատար, նույն գնդի շտաբի պետ, Խարկովի հրետանային դպրոցի պետի տեղակալ - դասախոս: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել է Բրյանսկի ռազմաճակատի 8-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետը (1941-1943 թթ-ին), *1943 թ-ի փետրվար - օգոստոս ամիսներին՝ առանձին 9-րդ հրետանային բրիգադի, ապա՝ 64-րդ ծանր հրետանային բրիգադի հրամանատար, 1943 թ-ի օգոստոսին 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 43-րդ բանակի հրետանու հրամանատարի տեղակալ, 1944 թ-ի հուլիսից մինչև 1945 թ-ի մայիսը նույն բանակի 1-ին հրաձգային կորպուսի հրետանու հրամանատար*: 1945-1953 թթ-ին վարել է հրամանատարական պաշտոններ: Պարգևատրվել է ցարական՝ Սուրբ Գեորգիի 4-րդ, Սուրբ Վլադիմիրի 4-րդ, Սուրբ Աննայի 3-րդ, Սուրբ Ստանիսլավի 3-րդ աստիճանի, խորհրդային՝ Լենինի, Կարմիր դրոշի՝ հինգ, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի երկու շքանշաններով: Զորացրվել է 1953 թ-ին:

Նվեր Սաֆարյան

188. ՍԱՖԱՐՅԱՆ ՆՎԵՐ

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (20.12.1943 թ.)

Նվեր Գևորգի Սաֆարյանը (ծն. 23. 10. 1907 թ., Վանի նահանգ, Արճեշ - 28. 09. 1982 թ., Երևան) խորհրդային բանակի ռազմական գործիչ է: 1927 թ. ավարտել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը, 1940 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: 1923 թ-ին կամավոր մտել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի շարքերը և մինչև 1940 թ-ը ծառայել է հարազատ դիվիզիայում. եղել է դասակի հրամանատար: 1933 թ-ին նշանակվել է վաշտի հրամանատար: 1940 թ-ին ավարտել է ռազմական ակադեմիան և նշանակվել Կիևի հատուկ զինվորական օկրուգի գնդի շտաբի պետ: Խորհրդային Հայրենական պատերազմի նախօրյակին՝ 1941 թ-ին նշանակվել է արևմտյան սահմանի վրա տեղակայված գնդի հրամանատար, և առաջիններից մեկն իր վրա ընդունել գերմանացիների հարվածը: *1942 թ-ի հունիսի 15-ից մինչև 1943 թ-ի փետրվարի 13-ը եղել է 295-րդ դիվիզիայի հրամանատար*, մասնակցել Կովկասի համար մղված մարտերին: **1943 թ. փետրվարի 13-ին նշանակվել է Հայկական 89-րդ դիվիզիայի հրամանատար**: Դիվիզիան Կովկասյան լեռներից մարտերով հասել է Գերմանիա և մասնակցել Բեռլինի գրավմանը: Փառավոր ճանապարհ է անցել դիվիզիան, երեք անգամ արժանացել է շքանշանի (Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններ) և անվանակոչվել «Թամանյան» անունով, տվել է Խորհրդային Միության 9 հերոս, հազարավոր շքանշանակիրներ ու մեդալակիրներ: Հրամանատարը պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի՝ երեք, Կուտուզովի 2-րդ աստիճանի՝ երկու, Պատվո նշան (29.05.1936 թ.) շքանշաններով: Զորացրվել է 1949 թ-ին, վատառողջության պատճառով:

Տիմոֆեյ Դեդեօղլյան

189. ԴԵԴԵՕՂԼՅԱՆ ՏԻՄՈՖԵՅ

Խորհրդային բանակի գվարդիայի գեներալ-մայոր (27.03.1942 թ.)

Տիմոֆեյ Վլադիմիրի Դեդեօղլյանը (ծն. 04.03.1898 թ., Թիֆլիս - 1989 թ., Օդեսա) խորհրդային ռազմական գործիչ է: 1923 թ. ավարտել է Խարկովի կարմիր հրամանատարների դպրոցը, 1930 թ.՝ հեծյալ զորամասերի կոմիսարների վերապատրաստման դասընթացը, 1933 թ.՝ կարմիր ավագների դպրոցը, 1940 թ.՝ Նովոչերկասկի հեծելազորային բարձրագույն, 1942 թ.՝ Ուֆայի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիայի դասընթացները: Կար-

միր բանակ է մտել 1919 թ-ին և մասնակցել Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմին: Ծառայել է Ի. Յակիրի 45-րդ դիվիզիայում, ապա՝ Գ. Կոտովսկու բրիգադում: 1920 թ-ին կռվել է սպիտակ լեհերի դեմ: 1923-1941 թթ-ին եղել է Խարկովի հրամանատարների դպրոցի կուրսանտական դասակի հրամանատար, հեծյալ 2-րդ կորպուսի միացյալ դպրոցի կուրսանտական դասակի հրամանատար, Բեսարաբական 3-րդ դիվիզիայի 14-րդ հեծելագնդի դասակի հրամանատար, գնդացրային էսկադրոնի հրամանատարի օգնական, 16-րդ հեծելագնդի էսկադրոնի հրամանատար, 14-րդ հեծյալ գնդի դպրոցի պետ - քաղղեկ, նույն գնդի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ, 5-րդ դիվիզիայի 131-րդ հեծյալ գնդի հրամանատար, հրածգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ: 1939-1940 թթ-ին մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մարտնչել է տարբեր ռազմաճակատներում, *եղել է 49-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար, 2-րդ գվարդիական հեծյալ կորպուսի հրամանատարի տեղակալ: 1944 թ-ին տեղափոխվել է Հեռավոր Արևելք, ստանձնել 84-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատարությունը*: 1945 թ-ի օգոստոսի 9-ից սեպտեմբերի 2-ը մասնակցել է խորհրդա-ճապոնական պատերազմին: Հետպատերազմյան տարիներին եղել է Հյուսիսային զորախմբավորման հեծելազորի տեսուչ, 1947-1953 թթ-ին՝ Տերսկի զինվորական ձիաբուծական գործարանի տնօրեն: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի երեք, զորավարական՝ Սուվորովի 2-րդ, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով: Պահեստազոր է արձակվել 1953 թ-ին:

190. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (22.02.1943 թ.)

Անդրանիկ Ղազարյան

Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը (ծն. 14.05.1904 թ., Լեռնային Ղարաբաղ, Շուշի - 16.01.1992 թ., ք. Սիմֆերոպոլ) խորհրդային ռազմական գործիչ է, Խորհրդային Միության հերոս (16.09.1943 թ.): Ստացել է տարրական կրթություն, 1928 թ. ավարտել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը, 1942 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիային կից հրամկազմի դասընթացը: 1920 թ-ին կամավոր մտել է կարմիր բանակի շարքերը և նշանակվել Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի Երևանի կայազորի երաժշտական դասակի սան: 1920-1937 թթ-ին ծառայել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում. եղել է դասակի, վաշտի, գումարտակի հրամանատար, գնդի շտաբի պետ, գնդի հրամանատար: 1938-1939 թթ-ին եղել է Երևանի պետական համալ-

սարանի ռազմագիտության ամբիոնի վարիչ, 1940 թ-ին դասավանդել է Սարատովի հրամանատարական կազմի կատարելագործման դասընթացում: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմն սկսել է Դնեպրոպետրովսկի մարզի Նովոմոսկովսկի շրջկենտրոնի մոտ: Նրա ղեկավարած 988-րդ գունդը տասը օր հետ է մղել գերմանացիների կատաղի գրոհները: *1942 թ-ի գարնանը Բրյանսկի ռազմաճակատում ղեկավարել է 134-րդ բրիգադը, ապա՝ 74-րդ հրաձգային դիվիզիան*: Աչքի է ընկել Կուրսկի ճակատամարտում: 1943 թ-ի սեպտեմբերին 74-րդ դիվիզիան առաջիններ թվում իրականացրել է Դնեպրի գետանցը: Հրամանատարը ծանր վիրավորվել և ուղարկվել է Մոսկվա: ***Ակադեմիական դասընթացն ավարտելուց հետո նշանակվել է 215-րդ դիվիզիայի հրամանատար***: 1945 թ-ի մարտին դիվիզիան մասնակցել է բելոռուսական, լիտվական մի շարք բնակավայրերի և Քյոնիգսբերգի գրավմանը: 1945 թ-ին դիվիզիան փոխադրվել է Հեռավոր Արևելք և մտցվել 1-ին Հեռավորարևելյան ռազմաճակատի 5-րդ բանակի կազմի մեջ: 1945 թ-ի օգոստոսի 9-ից սեպտեմբերի 2-ը մասնակցել է խորհրդա-ճապոնական պատերազմին: Այնուհետև նշանակվել խորհրդային հրամանատարության ներկայացուցիչ Մանջուրիայում: Պատերազմից հետո նշանակվել է խորհրդային հրամանատարության ներկայացուցիչ Հարավային Մանջուրիայում: Մինչև 1955 թ-ը մի շարք զինվորական օկրուգներում վարել է պատասխանատու պաշտոններ, եղել է ռազմական միավորման հրամանատարի տեղակալ: Պարգևատրվել է խորհրդային Լենինի՝ երկու, Կարմիր դրոշի՝ հինգ, զորավարական՝ Սուվորովի 2-րդ աստիճանի երեք, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, չինական՝ «Յան Գույ» շքանշաններով: Զորացրվել է 1955 թ-ին:

Հայկ Մարտիրոսյան

191. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (01.09.1943 թ.)

Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը (ծն. 22.12.1903 թ., Բաքու - 15. 04.1995 թ., Երևան) խորհրդային բանակի ռազմական և պետական գործիչ է, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1947-1952 թվականներին): 1925 թ. ավարտել է Թիֆլիսի Անդրկովկասյան ռազմաքաղաքական դպրոցը, 1931 թ.՝ Մոսկվայի հետախույզների դասընթացը, 1936 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1944 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի բարձրագույն դասընթացը: 1922 թ-ին ընտանիքի հետ փոխադրվել է Հայաստան և 1923 թ-ին կամավոր ծառայության անցել Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում: 1923-1930 թթ-ին եղել է 1-ին գնդի վաշտի քաղղեկ, ապա՝ վաշտի հրամանատար: 1931-1932 թթ-ին եղել է 48-րդ

հրաձգային դիվիզիայի հետախուզության բաժնի պետ, 1936-1941 թթ-ին՝ Հեռավորարևելյան 1-ին բանակի դիվիզիաներից մեկի օպերատիվ մասի պետ, ապա՝ դիվիզիայի շտաբի պետ, դիվիզիայի հրամանատարի տեղակալ, ապա՝ հրամանատար: 1938 թ-ի հուլիսի 29-ից օգոստոսի 11-ը Խասան լճի մոտ մասնակցել է ճապոնական զավթիչների ջախջախմանը: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի սկզբին եղել է 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, աչքի ընկել Մոսկվայի ճակատամարտում: 1943 թ-ին մի քանի ամիս եղել է Մ.Վ.Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ամբիոնի պետ: **1943-1946 թթ-ին եղել է 43-րդ բանակի հրամանատարի տեղակալ, 90-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, կրկին 43-րդ բանակի հրամանատարի տեղակալ,** մասնակցել է մի քանի պաշտպանական ու հարձակողական մարտերի, աչքի ընկել Քյոնիգսբերգի գրավման ժամանակ: 1946-1951 թթ-ին եղել է եռակի շքանշանակիր Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի հրամանատար, 1951-1954 թթ-ին՝ կորպուսի հրամանատար: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի՝ երեք, Հայրենական պատերազմի 1-ին, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Պաշտոնաթող է եղել 1954 թ-ին: Մինչև կյանքի վերջը ղեկավարել է «Հայաստանի պատերազմի վետերանների խորհրդի» աշխատանքները:

192. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲԱԳՐԱՏ

Բագրատ Իսահակյան

Խորհրդային բանակի զրահատանկային զորքերի գեներալ-մայոր (31.05.1954 թ.)

Բագրատ Հովհաննեսի Իսահակյանը (ծն. 25.12.1904 թ., Նոր Նախիջևան - 26.10.1974 թ., Մինսկ) խորհրդային ռազմական գործիչ է: Սերում է ԼՂՀ Շուշի քաղաքից: 1920 թ. ավարտել է 7-րդ դասարանը, 1925 թ.՝ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը, 1941թ.՝ ռազմաօդային ակադեմիայի օպերատիվ բաժինը, 1950 թ.՝ զրահատանկային զորքերի ակադեմիան: Կարմիր բանակում կամավոր ծառայության է անցել 1920 թ-ին, մասնակցել է Ադրբեջանում խորհրդային իշխանության ամրապնդման համար պայքարին, Գյանջայի մուսավաթական ապստամբության ճնշմանը: 1923-1929 թթ-ին ծառայել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում, 1929-1938 թթ-ին՝ 66-րդ հեծյալ գնդում: Հաջորդաբար եղել է դասակի, էսկադրոնի հրամանատար, գնդի դպրոցի պետ, գնդի շտաբի պետ: 1938 թ-ին ստացել է մայորի կոչում և նշանակվել Լենինգրադի զինվորական օկրուգի 25-րդ հեծյալ դիվիզիայի 63-րդ հեծյալ գնդի հրամանատար: 1939-1940 թթ-ին գունդը մասնակցել է խորհրդա-ֆիննական

պատերազմին: Խորհրդային Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին նշանակվել է Սերգբալթյան հատուկ զինվորական օկրուգի կորպուսային մոտոցիկլետային գնդի հրամանատար: Գունդը պատերազմի մեջ է մտել արևելապրուսական սահմանային Ռասեյնյայ շրջանում: *1942 թ-ի սկզբին նշանակվել է նորակազմ 111-րդ հեծյալ դիվիզիայի 250-րդ հեծյալ գնդի, 1943 թ-ի ամռանը՝ 20-րդ տանկային կորպուսի Ստալինգրադյան 7-րդ գվարդիական մոտոհրաձգային բրիգադի հրամանատար:* Նրա ենթակա զորամասերը մարտեր են մղել Վելիկիե Լուկիի շրջանում, մասնակցել են Ստալինգրադի ճակատամարտին, Կովկասի պաշտպանությանը, Կորսուն-Շևչենկովսկի օպերացիային, Գերմանիայում մղված մարտերին: Հետպատերազմյան տարիներին շարունակել է ծառայությունը. 1947-1949 թթ-ին եղել է տանկային զորամիավորման հրամանատարի տեղակալ, 1950-1954 թթ-ին՝ զորամիավորման հրամանատար: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի՝ երկու, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով: Պահեստազոր է արձակվել 1955 թ-ին:

Քրիստափոր Ժելաուխյան

193. ԺԵԼԱՈՒԽՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (1955 թ.)

Քրիստափոր Միքայելի Ժելաուխյանը (Ջելաուխյան) (ծն. 24.09.1905 թ., Ռոստովի մարզ, Մյասնիկյանի շրջան, գ. Ղրիմ - մահվան թվականն՝ անհայտ) խորհրդային ռազմական գործիչ է, ռազմական գիտությունների դոկտոր (1966 թ.), պրոֆեսոր (1969 թ.): 1924 թ. ավարտել է Ռոստովի 2-րդ աստիճանի աշխատանքային դպրոցը, 1924-1927 թթ-ին սովորել է Երևանի պետական համալսարանի սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետի հեռակա բաժնում, 1928 թ. ավարտել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը, 1929 թ.՝ Թիֆլիսի Անդրկովկասյան ռազմահետևակային դպրոցը, 1941 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1948 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան: 1925 թ-ի հոկտեմբերին կամավոր մտել է Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի շարքերը: Մասնակցել է խորհրդային Հայրենական մեծ պատերազմին: 1925-1940 թթ-ին զինվորական ստորաբաժանումներում տարբեր պաշտոններ է զբաղեցրել. եղել է դասակի, վաշտի հրամանատար, գնդի շտաբի պետի օգնական, օկրուգային դասընթացների երկրորդ բաժնի պետ, դիվիզիայի շտաբի 2-րդ բաժնի պետի օգնական, ապա՝ պետ: Պատերազմի սկզբում եղել է 23-րդ Խարկովյան դիվի-

զիայի շտաբի պետի տեղակալ, *1942-1943 թթ-ին՝ 298-րդ հրաձգային դիվիզիայի, 1943-1945 թթ-ին՝ Ուկրաինական 3-րդ ռազմաճակատի 46-րդ բանակի 68-րդ կորպուսի շտաբի պետ*: Մասնակցել է Մոսկվայի պաշտպանական մարտերին, Ստալինգրադի ճակատամարտին, Ուկրաինայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի ազատագրական մարտերին: 1948-1957 թթ-ին տարբեր զինվորական օկրուգներում եղել է միավորման օպերատիվ բաժնի պետ: 1957-1978 թթ-ին դասախոսել է ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայում: Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի՝ չորս, Հայրենական պատերազմի 1-ին, Կուտուզովի 2-րդ, Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի երկու շքանշաններով:

194. ԻՎԱՆՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ

Քրիստափոր Իվանյան

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (օգոստոս, 1968 թ.)
ՀՀ բանակի գեներալ-լեյտենանտ (28.01.1994 թ.)

Քրիստափոր Իվանի Իվանյանը (ծն. 20.12.1920 թ., Թիֆլիս - 02.09.1999 թ.) խորհրդային և ՀՀ բանակի ռազմական գործիչ է, Արցախի ազգային հերոս (հետմահու, 2000 թ.): 1940 թ. ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, 1941 թ.՝ Կրասնոդարի հետևակային ուսումնարանը, 1949 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1956 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան: 1941-1942 թթ-ին եղել է 9-րդ բանակի 30-րդ հրաձգային դիվիզիայի 39-րդ գնդի մարտկոցի հրամանատար, 1942-1943 թթ-ին՝ 56-րդ բանակի 76-րդ ծովային հետևակային բրիգադի հրետանային դիվիզիոնի հրամանատար, 1943-1944 թթ-ին՝ 18-րդ բանակի 195-րդ լեռնաականանետային գնդի հրամանատար, *1944-1946 թթ-ին՝ 318-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար*, 1949-1952 թթ-ին՝ կորպուսի շտաբի բաժնի պետ: 1952-1958 թթ-ին ծառայել է Գերմանիայում տեղակայված խորհրդային զորախմբում, եղել է հրետանային գնդի, ապա՝ առանձին բրիգադի հրամանատար: 1958-1968 թթ-ին ծառայել է Օդեսայի զինվորական օկրուգում, եղել է հրետանային դիվիզիայի հրամանատար, Օդեսայի պետական համալսարանի ռազմական ամբիոնի պետ, հրետանային բրիգադի հրամանատար: **1968 թ-ին նշանակվել է 14-րդ բանակի հրետանու պետ: 1973-1978 թթ-ին եղել է Անդրբայկալի զինվորական օկրուգի հրթիռահրետանային զորքերի հրամանատարի տեղակալ**: 1978 թ-ին անցել է կենսաթոշակի: 1978-1981 թթ-ին աշխատել է Քիշնևի, 1981-1992 թթ-ին՝ Զապորոժիեի քաղաքացիական պաշտպանության մարմիններում: Արցախյան շարժումը 1992 թ-ին նորից զինվորական ծառայության է կոչել պաշտոնաթող գեներալ-մայորին:

1992-1997 թթ-ին եղել է ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահի խորհրդական, ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարի առաջին տեղակալ, 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատար, ԼՂՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ: Մեծ ջանքեր է ներդրել ԼՂՀ բանակի կառույցների, հատկապես հրետանու կազմավորման, ուսումնական զորամասերի, կենտրոնների, հրաձգարանների ու փորձադաշտերի ստեղծման գործում: 1941-1945 թթ-ին մասնակցել է խորհրդային Հայրենական մեծ պատերազմին, Կովկասյան նախալեռներից մարտերով հասել մինչև Չեխոսլովակիա: Հատկապես աչքի է ընկել Նովոռոսիյսկի ազատագրման, Կերչ-Էլտիգենյան դեսանտային գործողության ժամանակ: 1993-1994 թթ-ին անձամբ ղեկավարել է Ստեփանակերտի շրջակայքի, Մարտունու շրջանի ադրբեջանական կրակակետերի ճնշման ռազմական գործողությունները: Պարգևատրվել է ՀՀ Մարտական խաչ 1-ին, ԼՂՀ Մարտական խաչ 1-ին աստիճանի (31.07.1994 թ.), ԼՂՀ Ոսկե արծիվ (01.09.2000 թ.) շքանշաններով, Արցախի «Մայրական երախտագիտություն» մեդալով, խորհրդային՝ Լենինի երկու (05.11.1941 թ. և 17.11.1943 թ.), Մարտական կարմիր դրոշի (18.09.1943 թ.), զորավարական՝ Սուվորովի 3-րդ աստիճանի (17.11.1943 թ.), Կարմիր աստղի երեք (առաջինը՝ 17.11.1943 թ.), Հայրենիքի ծառայության համար 3-րդ աստիճանի շքանշաններով, «Մարտական ծառայության համար» մեդալով: Քրիստափոր Իվանյանի անունով են կոչվում Ստեփանակերտի ռազմական ուսումնարանը (բակում տեղադրվել է Քրիստափոր Իվանյանի արձանը) և Ասկերանի շրջանի Խոջալու գյուղը: 2001 թ-ին հրատարակվել է Տիգրան Դերիկյանի «Երկու պատերազմների լեզենդը» կենսապատում-գիրքը՝ նվիրված Քրիստափոր Իվանյանին:

Գուրգեն Դալիբալթայան

195. ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

Խորհրդային բանակի գեներալ-մայոր (20.02.1971 թ.)
ՀՀ բանակի գեներալ-գնդապետ (04.06.1996 թ.)

Գուրգեն Հարությունի Դալիբալթայանը (ծն. 05.06.1926 թ., Վրաստան, Նինոծմինդայի շրջան, գ. Մեծ Արագյալ) խորհրդային և ՀՀ բանակի ռազմական, պետական գործիչ է: 1944 թ. ավարտել է Գորլովկա գյուղի միջնակարգ դպրոցը, 1947 թ.՝ Մախաչկալայի ռազմա-հետևակային ուսումնարանը, 1961 թ.՝ Մոսկվայի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1976 և 1978 թթ-ին՝ ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի ակադեմիական դասընթացները: 1942-1944 թթ-ին դպրոցում սովորելուն զուգահեռ կատարել է զինվորական հաշվառման սեղանի պետի աշխատանքը:

1947-1958 թթ-ին եղել է հրաձգային զորամասի հրաձգային դասակի, գնդի դպրոցի կուրսանտական դասակի, ուսումնական վաշտի, հրաձգային գումարտակի հրամանատար: 1961-1990 թթ-ին հրամանատարական տարբեր պաշտոններ է վարել. եղել է Բաքվի 259-րդ դիվիզիայի, Լենքորանի, ապա՝ Կիրովաբադի 60-րդ մոտոհրաձգային դիվիզիայի գնդի հրամանատար, նույն դիվիզիայի հրամանատարի տեղակալ. *Սիբիրի զինվորական օկրուգի 242-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատար. ԽՍՀՄ Եվրոպական զորամիավորման հարավային խմբավորման (Բուդապեշտ) զորքերի շտաբի պետ, Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգի (Դոնի Ռոստով) հրամանատարի տեղակալ*: 1990 թ-ին մտել է ՀՀ նորակազմ զինված ուժերի շարքերը: **1991 թ-ին եղել է ՀՀ պաշտպանության կոմիտեի շտաբի պետ, 1992 թ-ին՝ ՀՀ զինված ուժերի շտաբի պետ, 1992-1993 թթ-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ: 1993 թ-ին նշանակվել է ՀՀ Նախագահի խորհրդական և ՀՀ ռազմական գլխավոր տեսուչ**: 2007 թ-ի փետրվարի 12-ին արձակվել է պահեստազոր: 1971 թ-ի փետրվարի 20-ին արժանացել է խորհրդային բանակի գեներալ-մայոր, 1992 թ-ի մայիսի 29-ին՝ ՀՀ բանակի գեներալ-լեյտենանտի աստիճանի: Արցախյան պատերազմի ակտիվ ղեկավարներից է: 1991-1994 թթ-ին մասնակցել է Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական և ազատագրական ռազմական գործողությունների մարտական պլանների մշակման աշխատանքներին; անձամբ ղեկավարել է Խոջալուի ազատագրման, Քաշաթաղի մարդասիրական միջանցքի բացման, Գորիս-Քաշաթաղ ռազմական գործողության, Քարվաճառի կրակակետերի վնասազերծման գործողությունները: Վազգեն Սարգսյանի հետ մշակել և վավերացրել է Շուշիի ազատագրման «Հրազդան» ռազմական գործողության պլանը: Պարգևատրվել է խորհրդային Կարմիր դրոշի , ՀՀ Մարտական խաչ 1-ին, ԼՂՀ Մարտական խաչ 1-ին աստիճանի. Հայ Առաքելական եկեղեցու Սուրբ Ներսես Շնորհալի շքանշաններով. ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով (18.09.2006 թ.): Արժանացել է ՀՀ Ազգային ժողովի պատվոգրի (28.01.2005 թ.): 2001 թ-ին հրատարակվել է Հովհաննես Այվազյանի «Հաղթանակած բանակի գեներալը» կենսապատում-գիրքը՝ նվիրված Գուրգեն Դալիբալթայանի ծննդյան 75-ամյակին:

Միխայիլ Հարությունյան

196. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻԽԱՅԻԼ

ՀՀ բանակի գեներալ-գնդապետ (25.01.2002 թ.)
ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ -
ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ
(1994 - 2007 թթ-ին)
ՀՀ պաշտպանության նախարար (2007 - 2008 թթ-ին)

Միխայիլ Հարությունի Հարությունյանը (ծն. 10.03.1946 թ., Շամախի, գ. Սաղյան) ՀՀ բանակի ռազմական գործիչ է: 1967 թ. ավարտել է Բաքվի բարձրագույն ռազմական համազորային հրամանատարական ուսումնարանը, 1976 թ.՝ Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1988 թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան: 1963-1992 թթ-ին ծառայել է խորհրդային բանակում: 1967-1973 թթ-ին ծառայել է Գերմանիայում տեղակայված խորհրդային զորախմբում: 1976-1983 թթ-ին եղել է Անդրկովկասյան զինվորական օկրուգի 7-րդ բանակի բաժնի պետ, շտաբի պետի տեղակալ, 1988-1992 թթ-ին՝ Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ամբիոնի վարիչ: 1992 թ-ի մայիսին զինվորագրվել է Հայաստանի ազգային զինված ուժերին: 1992 թ-ին եղել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 1-ին տեղակալ - օպերատիվ վարչության պետ, **1992-1994 թթ-ին՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 1-ին տեղակալ, 1994-2007 թթ-ին՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ - պաշտպանության նախարարի առաջին տեղակալ**: 2007 թ-ի մայիսի 6-ին իր դիմումի համաձայն արձակվել է պահեստազոր և նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար: 2008 թ-ին նշանակվել է ՀՀ Նախագահի խորհրդական և ՀՀ ռազմական գլխավոր տեսուչ: 1992-1994 թթ-ին մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության կազմակերպման և ղեկավարման աշխատանքներին: 1994 թ-ի սեպտեմբերի 19-ին արժանացել է գեներալ-մայորի, 1996 թ-ի սեպտեմբերի 20-ին՝ գեներալ-լեյտենանտի աստիճանների: Պարգևատրվել է խորհրդային «Անբասիր ծառայության համար» 3-րդ, 2-րդ, 1-ին աստիճանի մեդալներով, ՀՀ Վարդան Մամիկոնյան (2003 թ.), ՀՀ Մարտական խաչ 2-րդ աստիճանի (20.09.1999 թ.), ԼՂՀ Մարտական խաչ 2-րդ աստիճանի (20.09.2000 թ.) շքանշաններով, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (18.09.2006 թ.), «Մարտական ծառայության» (30.06.1994 թ.), ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան», «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալներով, անվանական զենքով, ամերիկյան զինվորական «Պատվո լեգեոն» մեդալով (2004 թ.):

Սեյրան Օհանյան

197. ՕՀԱՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀՀ բանակի գեներալ-գնդապետ (25.05.2007 թ.)
ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ -
ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ (2007 - 2008 թթ-ին)
ՀՀ պաշտպանության նախարար (2008 -)

Սեյրան Մուշեղի Օհանյանը (ծն. 01.07.1962 թ., Լեռնային Ղարաբաղ, ք. Շուշի) ՀՀ և ԼՂՀ ռազմական գործիչ է, Արցախի ազգային հերոս (02.09.1999 թ.): 1983 թ. ավարտել է Բաքվի համազորային հրամանատարական ռազմական ուսումնարանը: 1979-1992 թթ-ին ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: 1983-1988 թթ-ին եղել է Գերմանիայում տեղակայված խորհրդային զորախմբի զորամասերից մեկի մոտոհրաձգային դասակի, ապա վաշտի հրամանատար, 1988-1992 թթ-ին՝ Ստեփանակերտում տեղակայված 23-րդ դիվիզիայի 366-րդ մոտոհրաձգային գնդի վաշտի, գումարտակի հրամանատար: 1992 թ-ի մարտ-դեկտեմբեր ամիսներին եղել է Ստեփանակերտում կազմավորված Հայկական առանձին գնդի հրամանատար, 1992-1993 թթ-ին՝ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարի առաջին տեղակալ, 1993-1994 թթ-ին՝ ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի պետ, 1994-1998 թթ-ին՝ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարի առաջին տեղակալ, 1998-1999 թթ-ին՝ զորամիավորման հրամանատար: 1999 թ-ի օգոստոսի 2-ին նշանակվել է ԼՂՀ պաշտպանության նախարար, 2000 թ-ի հունվարի 17-ին՝ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար: 2007 թ-ի մայիսի 6-ին նշանակվել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ - ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, 2008 թ-ին՝ ՀՀ պաշտպանության նախարար: 1995 թ. մայիսի 5-ին արժանացել է ԼՂՀ բանակի գեներալ-մայորի, 2000 թ-ի մարտի 14-ին՝ ԼՂՀ բանակի գեներալ-լեյտենանտի զինվորական աստիճանի: Մասնակցել է Արցախի ազատագրության համար մղված բոլոր մարտերին: Հայրենի հողի համար մարտերից մեկում կորցրել է ոտքը: Պարգևատրվել է ՀՀ Տիգրան Մեծ (20.09.2003 թ.), ՀՀ Մարտական խաչ 1-ին (20.09.1996 թ.), ԼՂՀ Մարտական խաչ 1-ին (08.05.1996 թ.) աստիճանի, ԼՂՀ Ոսկե արծիվ (02.09.1999 թ.) շքանշաններով, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (18.09.2006 թ.), ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան», «Դրաստամատ Կանայան», «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի, ԼՂՀ «Շուշիի ազատագրման համար», «Մայրական երախտագիտություն» մեդալներով, ՀՀ ՊՆ «Զինանշան» հուշամեդալով: 2007 թ-ի մայիսի 9-ին Ստեփանակերտում ընդունել է ԼՂՀ բանակի զորահանդեսը:

Մանվել Գրիգորյան

198. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀՀ բանակի գեներալ-լեյտենանտ (27.05.2000 թ.)

Մանվել Սեկտորի Գրիգորյանը (ծն. 14.07.1956 թ., ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս) ՀՀ բանակի ռազմական գործիչ է, ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1992-1996 թթ-ին), Արցախի ազգային հերոս (01.09.2000 թ.): Ավարտել է Արշալույսի միջնակարգ դպրոցը, 1996 թ.՝ ՀՀ ՊՆ բարձրագույն ակադեմիական դասընթացը, 1998 թ.՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1975-1977 թթ-ին ծառայել է խորհրդային բանակում: 1992 թ-ին ծառայության է անցել է ՀՀ զինված ուժերում և նշանակվել գումարտակի հրամանատար: **1993-1997 թթ-ին եղել է բրիգադի, 1997-2000 թթ-ին՝ զորամիավորման հրամանատար**: 2000 թ-ի մարտի 14-ին նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ: 1989 թ-ի գարնանը եղել է Էջմիածնի կամավորական ջոկատի, ամռանը՝ ԼՂՀ Հադրութի շրջանի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար: 1990 թ-ի ձերբակալվել է ԼՂՀ-ում տեղակայված ԽՍՀՄ ներքին զորքերի կողմից, սակայն դեկտեմբերին փախել է գերությունից: 1990-1993 թթ-ին մասնակցել է ԼՂՀ հարավային շրջանների, 1993-1994 թթ-ին՝ Հայաստանի հարավ-արևելյան և ԼՂՀ Մարտակերտի շրջաններում ծավալված ինքնապաշտպանական և ազատագրական մարտական գործողություններին: Ղեկավարել է Հադրութի շրջանի Հողեր գյուղի ազատագրման գործողությունը: 1996 թ-ի սեպտեմբերի 20-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: 1999 թ-ին ընտրվել է ՀՀ «Երկրապահ» կամավորական միության նախագահ: Պարգևատրվել է ՀՀ Վարդան Մամիկոնյան (18.09.2006 թ.), Մարտական խաչ 1-ին (28.05.1994 թ.), ԼՂՀ Ոսկե արծիվ (01.09.2000 թ.), ԼՂՀ Մարտական խաչ 1-ին (25.07.1994 թ.) աստիճանի, ԵԿՄ «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշաններով, ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան», «Դրաստամատ Կանայան», «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալներով:

199. ԲԱԲԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Սամվել Բաբայան

ԼՂՀ բանակի գեներալ-լեյտենանտ (20.09.1996 թ.)
ԼՂՀ պաշտպանության նախարար (1995-1999 թթ-ին)

Սամվել Անդրանիկի Բաբայանը (ծն. 05.03.1965 թ., Լեռնային Ղարաբաղ, ք. Ստեփանակերտ) ԼՂՀ պետական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական գործիչ է, ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր (1992-1995 թվականներին), ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի անդամ (1992-1994 թվականներին), ԼՂՀ կառավարության անդամ - ԼՂՀ Նախագահին առընթեր անվտանգության խորհրդի անդամ (1995-1999 թվականներին), Արցախի ազգային հերոս (08.05.1997 թ.): 1982 թ. ավարտել է Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցը: 1983-1985 թթ-ին ծառայել է խորհրդային բանակում (նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում տեղակայված ԽՍՀՄ զորախմբում): 1986-1989 թթ-ին աշխատել է Ստեփանակերտի արտադրական կոմբինատում. եղել է բանվոր, ապա՝ հերթափոխի վարպետ: 1988-ին զինվորագրվել է Արցախի ազատամարտին: Եղել է առաջին ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպիչներից, Ստեփանակերտի 2-րդ կամավորական վաշտի հիմնադիր հրամանատարը: 1991 թ-ի սկզբին եղել է Ստեփանակերտում գործող ընդհատակյա կենտրոնական շտաբի անդամ, մայիսին՝ Արցախի ազատագրական բանակի ընդհանուր հրամանատարի տեղակալ: 1991 թ-ի մայիսի վերջին գլխավորել է «Կոլցո» ռազմագործողության ժամանակ գրավված և հայաթափված Հադրութի շրջանի Խանձաձոր գյուղի ազատագրումը: 1991 թ-ի հունիսի 1-ին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի կողմից ձերբակալվել է և շուրջ 6 ամիս կալանվել Շուշիի ու Բաքվի բանտերում: Հրաշքով փրկվել է ազերիների ձեռքից և նվիրվել հայրենի երկրի ազատագրության գործին: 1992 թ-ի մարտի 26-ին նշանակվել է ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի անդամ, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի տեղակալ, 1992 թ-ի օգոստոսին՝ ԼՂՀ ԻՊԿ նախագահի առաջին տեղակալ - ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատար: 1993 թ-ի ապրիլից մինչև նոյեմբեր եղել է ԼՂՀ ԻՊԿ նախագահի պաշտոնակատար: 1993 թ-ի նոյեմբերի 10-ից մինչև 1999 թ-ի դեկտեմբերի 17-ը եղել է ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար, 1995 թ-ի հունվարի 9-ից մինչև 1999 թ-ի օգոստոսի 2-ը՝ ԼՂՀ պաշտպանության առաջին նախարար: Ղեկավարել է ԼՂՀ շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական բոլոր մարտերը՝ կազմելով և հաստատելով դրանց ռազմական պլանները: 1992 թ-ին եղել է Շուշիի ռազմագործողության մշակողներից մեկը, Շուշիի ազատագրման 4 ուղղություններից գլխավորի՝ Քաշաթաղի ուղղության հրամանա-

տարը: Արցախի ազատագրական պատերազմում իրականացրել է պաշտպանական շրջանների համակարգումը: 1993-1994 թթ-ին կազմելով ռազմական պլանները գլխավորել է Քարվաճառի, Քաշաթաղի, Մարտակերտի, Աղդամի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի, Զանգելանի, Հորադիզի, Օմարի ազատագրական մարտերը: Արդյունքում ազատագրվել է 12 հազար քառակուսի կիլոմետր տարածք (որի վրա հռչակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը), ցամաքային կապ է ապահովվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև, հաստատվել զինադադար, Արցախի պաշտպանության բանակի հսկողության տակ են առնվել ազատագրված տարածքները, ԼՂՀ-ի շուրջը ձևավորվել անվտանգության գոտի: 1992-1994 թթ-ին մասնակցել է ռազմաճակատում հրադադարի հաստատման, 1992-1999 թթ-ին՝ Արցախի հակամարտության կարգավորման միջազգային բանակցություններին, մասնավորապես ԼՂՀ պաշտոնական ներկայացուցչի կարգավիճակով 1994 թ-ի մայիսի 11-ին վերջինն է ստորագրել (մայիսի 9-ին՝ Ադրբեջանի, մայիսի 10-ին՝ Հայաստանի պաշտպանության նախարարներից հետո) մինչև օրս գործող հրադադարի հաստատման վերաբերյալ փաստաթուղթը: 1992 թ-ին նրան շնորհվել է փոխգնդապետի, 1993 թ-ին՝ գնդապետի կոչումներ, 1994 թ-ի մայիսի 28-ին՝ ԼՂՀ բանակի գեներալ-մայորի աստիճան: 1995 և 1997 թթ-ին ընդունել է Ստեփանակերտում կայացած ԼՂՀ պաշտպանության բանակի զորահանդեսները: Զինադադարի հաստատումից հետո 1994-1999 թթ-ին ղեկավարել է ԼՂՀ բանակաշինության, արդիական ու մարտունակ բանակի կայացման, զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական վիճակի բարելավման աշխատանքները: 1998-1999 թթ-ին եղել է ԼՂՀ կառավարության անդամ և անմիջական մասնակցություն է ունեցել ԼՂՀ կառավարման, տեղական ինքնակառավարման, ֆինանսաբյուջետային, դատահիրավական համակարգի, արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, գիտության, մշակույթի բնագավառներում բարեփոխումների իրականացման, բազմաթիվ օրենքների, օրինագծերի ստեղծման աշխատանքներին: Պարգևատրվել է ԼՂՀ Ոսկե արծիվ (08.05.1997 թ.) շքանշաններով: Նրա անունն է կրում տիեզերքի աստղերից մեկը: 2000 թ-ի մարտին անհիմն բռնադատվել է, դատապարտվել 14 տարվա ազատազրկման, 2004 թ-ի սեպտեմբերին ազատվել է: 2004 թ-ի նոյեմբերին Երևանում հիմնել է «Խաչմերուկ» տեղեկատվական-վերլուծական հասարակական կազմակերպությունը: 2005 թ-ի նոյեմբերին իր համակիրների հետ Երևանում հիմնադրել է «Դաշինք» կուսակցությունը (2007 թ-ին լուծարվել և միավորվել է ռամկավար-ազատական կուսակցության հետ): Լրագրող Վահրամ Աղաջանյանը «Ազգային հերոս Սամվել Բաբայան» վերնագրով 236 էջանոց գիրք է հրատարակել նրա մասին (հրատարակչական տեղեկությունները բացակայում են): 2008 թ-ին Երևանում հրատարակվել է «Հաղթանակներն՝ ինչպես եղել են» փաստավավերագրական գիրքը (հեղինակներ Հ. Խաչատրյան, Գ. Ղազարյան, Ս. Մարգարյան), որն ամբողջովին ներկայացնում է Սամվել Բաբայանի մարտական ուղին: Գիրքը հրատարակվել է նաև ռուսերեն:

200. ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

Արկադի Տեր-Թադևոսյան

ՀՀ բանակի գեներալ-մայոր (1992 թ.)

Արկադի Իվանի Տեր-Թադևոսյանը (Արտուշ Հովհաննեսի Թադևոսյան) (Կոմանդոս) (ծն. 22. 05.1939 թ., Թիֆլիս) ՀՀ բանակի ռազմական գործիչ է, Արցախի հերոս (08.09.2009 թ.): 1962 թ. ավարտել է Բաքվի համազորային հրամանատարական ուսումնարանը, 1972 թ.՝ Լենինգրադի թիկունքի և տրանսպորտի ռազմական ակադեմիան: 1962-1972 թթ-ին ծառայել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում տեղակայված խորհրդային զորախմբում, 1972-1977 թթ-ին՝ Անդրկովկասյան զինվորական օկրուգում (ք. Գյումրի), 1977-1982 թթ-ին՝ Չեխոսլովակիայում տեղակայված խորհրդային զորախմբում, 1982-1988 թթ-ին՝ Բելոռուսական զինվորական օկրուգում: 1988 թ-ին զինվորական ծառայության է անցել Հայաստանում: 1990 թ-ի մայիսին անդամագրվել է «Սասունցի Դավիթ» ռազմականացված ջոկատին: 1991 թ-ի հունիսին ՀՀ պաշտպանության կոմիտեի կողմից գործուղվել է Ստեփանակերտ՝ Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը համակարգելու և ղեկավարելու համար: 1991-1992 թթ-ին եղել է ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, 1992-1993 թթ-ին՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ, ապա՝ ռազմաուսումնական հաստատությունների և արտազորանոցային պատրաստականության վարչության պետ, 1993-1995 թթ-ին՝ ՀՀ ՊՆ անձնակազմի հետ տարվող աշխատանքի վարչության պետ, 1996-2002 թթ-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարի ավագ օգնական: 2002 թ-ին ընտրվել է ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերության նախագահ: 2000 թ-ի մայիսին հիմնադրել է «Կոմանդոս» հասարակական կազմակերպությունը: Նվիրվել է Արցախի ազգային-ազատագրական պայքարին և դրսևորել իրեն որպես խիզախ զորահրամանատար: Նրա ղեկավարած զորաջոկատները բազում սխրանքներ են գործել Արցախի բնակավայրերի համար մղված ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերում, ժողովրդի կողմից արժանացել է «Կոմանդոս» պատվանունի: **Նրա ղեկավարությամբ 1992 թ-ի մայիսի 8-9-ին ազատագրվել է Արցախի ոստան Շուշին**: Պարգևատրվել է ՀՀ Մարտական խաչ 1-ին, ԼՂՀ Մարտական խաչ 1-ին աստիճանի, ԼՂՀ Ոսկե արծիվ (2009 թ.)շքանշաններով, ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան», ԼՂՀ «Շուշիի ազատագրման համար», ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» մեդալներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի վերջին օրերը, (Անհայտ գրողի օրագիրը): Կազմող հեղինակ՝ Սարգիս Հարությունյան, Ե., «Մ.Վարանդեան» հրատարակչություն, 1993 թ.:
Այվազյան Սուրեն, Ռուսաստանի պատմություն, Հայկական հետք: Մոսկվա, ռուսերեն, նկարազարդ, 1997 թ.:
Ասադով Յու., Հայ սպաները ցարական ծառայության մեջ: Մոսկվա (ռուսերեն), 1999 թ.:
Ավետիսյան Հրանտ, Հայ գեներալները ռուսական կայսրությունում (ռուսերեն): Ե., 2007 թ.:
Բախչինյան Արծվի, Հայազգի գործիչներ, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, (Կենսագրական հանրագիտակ): Ե., 2002 թ.:
Բախչինյան Արծվի, Ծագումով՝ հայեր: Ե., 1997 թ.:
Գաբոր Բոնա, 1848/49 թթ. Հունգարիայի ազատագրական պայքարի հայ հերոսները (հունգարերեն, հայերեն): Բուդապեշտ, 1996 թ.:
Գեներալ-լեյտենանտ Տեր-Ղուկասով, կազմող Վահան Մկրտչյան: Ե., 2001 թ. (ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն):
Գևորգյան Համլետ, Ազատագրական պայքարի հերոսապատումից: Հեղինակային հրատարակություն, Ե., 2006:
Դերենիկ Եպիսկոպոս, Ագրայի հայերը: Պեյրութ, 1963 թ.:
Զարդարեան Վահան, Յիշատակարան (1512-1933), հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները: Ա-Ե հատոր, Գահիրէ, 1933-39 թ.:
Թեոդիկ, Ամենույն տարեցույց: 1907-1929 թթ.:
Իսոյան Ալբերտ Ներսեսի, Սամցխե-Ջավախքի նշանավոր հայորդիները: Պատմա-աշխարհագրական, ժողովրդագրական, կենսագրական ակնարկ: Երկու գրքով: Գիրք 1, Ե., 2005 թ.:
Խաչատրյան Հայկ, Պետրոսյանց Տիգրան, Հայկազունք, Հայ զորավարներ, ռազմական, պետական գործիչներ, դիվանագետներ: Ե., «Ամարաս», 2002 թ.:
Կարապետյան Մուրադ, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920 թթ.): Ե.,1996 թ.:
Կոստանդին Ծիրանածին: (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 6, Բյուզանդական աղբյուրներ Բ), Ե., 1970 թ.:
Կրբեկյան Վ.Գ., Հայերի մասնակցությունը 1877-1878 թթ-ի ռուս-թուրքական պատերազմին: Ե. (ռուսերեն), 2004 թ.:
Հակոբ-Գրիգոր Գ., Հայերը, հայտնիները և անհայտները: Փարիզ, 1972 թ.:
Հակոբյան Մուրադ, Հայ ժողովրդի ռազմական տարեգիրք, գիրք չորրորդ: Ե.,մ.թ.ա.614-331,2007 թ.:
Հայկական կորպուսն ընդդեմ թուրքական զորքերի: Գեներալ Թ.Նազարբեկյանի հուշերը,Ե.,1994 թ.:
Հայկական համառոտ հանրագիտարան, հ.1-4: Ե., 1990-2003 թթ.:
Հայկական սովետական հանրագիտարան, հ.1-13: Ե., 1974-1986 թթ.:
Հայ Սփյուռք հանրագիտարան: Ե., 2003 թ.:
Հանրագիտարան Իրանահայոց: Կազմեց Ժանեթ Տ. Լազարեան (պարսկերեն լեզվով, բառհոդվածների գլխատողերը՝ անգլերեն): Թեհրան, 2003 թ.:
Հայրապետյան Հայկ, Վերջին Սպարապետը (Թովմաս Նազարբեկյանի մասին, ռուսերեն): Մոսկվա, 1995 թ.:
Հարությունյան Մ.Ա., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը: Ե.,2000 թ.:
Հարությունյան Կլիմենտ, Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945 թթ.): Ե., 2001 թ.:

Հարությունյան Ս., Հայը: Ե., 2000 թ.:
Հովհաննես Սկիլիցես, (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 6. Բյուզանդական աղբյուրներ Գ): Ե., 1979 թ.:
Ղազարյան Աշոտ, Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, գիրք առաջին: Ե., 1979 թ.:
Ղազարյան Աշոտ, Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, գիրք երկրորդ: Ե., 1982 թ.:
Մալխասյան Արմն, Հայ գեներալներ և Սովետական Միության հերոսներ. ալբոմ: Ե., 1947 թ.:
Մալխասյան Արմն, Սովետական բանակի հայ գործիչները: Ե., 1963 թ.:
Մամուլով Ս., Զարմանահրաշ ժողովուրդը հրաշքների երկրից: Մոսկվա (ռուսերեն), հ. 3, 2000 թ., հ. 4, 2005 թ.:
Մինասյան Սերգեյ Մամիկոնի, Հայերի մասնակցությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին: Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Ե., 2002 թ.:
Միքայելյան Վ., Ծովակալ Լ.Մ.Սերեբրյակով: Ե., 1979 թ.:
Մկրտչյան Վահան, Գեներալ-ադյուտանտ Լազարև: Ե., 2001 թ. (ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն):
Մկրտչյան Վահան, Գեներալ-լեյտենանտ Մադաթով: Ե., 2001 թ. (ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն):
Մկրտչյան Վահան, Ծովակալ Հովհաննես Իսակով: Ե., 2004 թ. (ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն):
Մոմջյան Խ., Գեներալ-ադյուտանտ Ի.Դ.Լազարև: Ե., 1943 թ.:
Մովսես Խորենացի Հայոց պատմություն: Ե., 1997 թ.:
Ներսիսյան Աշոտ, Զորավար Սեպուհ /մենագրություն/: Ե., 2005 թ., 346 էջ:
Յակուբովիչ Ա., Լեհահայերի կենսագրական բառարան: Վարշավա (լեհերեն), 1998 թ.:
Շերմազանեան Գալուստ, Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան: Ռոստով /Դոնի վրա/, 1890 թ.:
Ով ով է Հայաստանում 2005, Mediamax լրատվական գործակալություն: Ե., 2005 թ.:
Չաուշ Բ., Ռումինիայի նշանավոր հայերը, բառարան (ռումիներեն): Բուխարեստ, 1998 թ.:
Պապինյան Կորյուն, Ծովակալ Իսակով: Ե. (չգրանցված հրատարակություն), 2003 թ.:
Պատմութիւն հայ գաղթականութեան, Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը: Նոր դարու սկիզբէն մինչեւ Ի դարու սկիզբը: Ա մաս, գրեց Արշակ Ալպոյաճեան, Գահիրէ, 1961 թ.:
Ռումինիայի հայ նշանավոր դեմքերը /ռումիներեն, երկրորդ վերանայված հրատարակություն/: «Արարատ» հրատարակչություն, Բուխարեստ, 1998 թ.:
Սահակյան Ն., Հայերը: Ե., 1997թ.:
Վիրաբյան Արշակ, Գիրք դարերի խորքից: Ե., 1998 թ.:
Վրացյան Սիմոն, Հայաստանի Հանրապետություն: Ե., 1993 թ.:
Տիգրան Հայազն, Գարեգին Ղազարյան, 1000 հայազգի գեներալներ և ծովակալներ: Ե., 2009 թ.:
Փաշայան Ասատուր, Տիտղոսակիր հայեր (15-19-րդ դարեր): Ե., 2001 թ.:
Փարսադանյան Ալբերտ, Հայը. կենսագրություն՝ մեկ տողով: Ե., 2004 թ.:
Օհանյան Մ.Ս., Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը: Ե.,2003 թ.:
Օրացույց 2002 (սեղանի), ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն:Ե.,«Ամարաս», 2001 թ.:
Օրացույց 2003, ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն: Ե., «Ամարաս», 2002 թ.:
Օրացույց 2004, ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն: Ե., «Ամարաս», 2003 թ.:
Օրացույց 2005, ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն: Ե., «Ամարաս», 2004 թ.:
Օրացույց 2006, ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն: Ե., «Ամարաս», 2005 թ.:
Օրացույց 2007, ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն: Ե., 2006 թ.:
Օրացույց 2008, ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն: Ե., 2007 թ.:

Հանդեսներ և թերթեր

«Հայաստանի Հանրապետություն» /ՀՀ ՊՆ ծառայողներին կոչումներ շնորհելու, ՀՀ շքանշաններով և մեդալներով պարգևատրելու մասին/: 2006 թ., 31 հունվարի, թիվ 16:
«Հայաստանի Հանրապետություն» /ՀՀ ՊՆ, ոստիկանության, ԱԱԾ ծառայողներին կոչումներ շնորհելու, ՀՀ շքանշաններով և մեդալներով պարգևատրելու մասին/: 2006 թ., 19 սեպտեմբերի, թիվ 168:
«Հայաստանի Հանրապետություն» /ՀՀ ՊՆ ծառայողներին կոչումներ շնորհելու, ՀՀ շքանշաններով և մեդալներով պարգևատրելու մասին/: 2006 թ., 20 սեպտեմբերի, թիվ 169:
«Հայաստանի Հանրապետություն» /ՀՀ ՊՆ ծառայողներին կոչումներ շնորհելու, ՀՀ շքանշաններով և մեդալներով պարգևատրելու մասին/: 2007 թ., 27 հունվարի, թիվ 15:
«Հայաստանի Հանրապետություն» /ՀՀ Նախագահի խորհրդական, ՀՀ գլխավոր ռազմական տեսուչ, գեներալ-գնդապետ Գ.Դալիբալթայանին պաշտոնից ազատելու մասին/: 2007 թ., 14 փետրվարի, թիվ 27:

Հոդվածներ

Կարապետյան Մ., Հայերը ռուսական բանակի կազակային զորամասերում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «Հայկական բանակ», 2005 թ., թիվ 1, էջ 117-120:
Ղորղանյան Գ., Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա: «Հայրենիք» (Բոստոն), 1927 թ., թիվ 11-12:
Պետրոսյանց Տիգրան, Դեպի հավերժություն (խորհրդային հայազգի առաջին մարշալ Արմենակ Արտեմի Խանփերյանցի ծննդյան 100-ամյակի առթիվ): «Հայ գինվոր», 22-29 դեկտեմբերի, թիվ 50, էջ 8-9:
Պետրոսյանց Տիգրան, Հայ ծովակալներ: «Հայրենիքի մարտիկ» (ՀՀ պաշտպանության նախարարություն), Ե-Զ-ՍԱ, 5-6-2001 թ., էջ 21-32:
Պետրոսյանց Տիգրան, «Սուրբ անունդ պիտի հիշվի դարեդար» (Զորավար Անդրանիկ Օզանյանի մասին): «Ապարան», 1990 թ., 17 փետրվարի, թիվ 21, էջ 3:
Օհանյան Մ.Ս., Հայաստանը հին աշխարհի երկրների գահակարգում: Պատմաբանասիրական հանդես, 2003 թ., թիվ 2.:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ
ՀՐԱՉՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

200 ՀԱՅ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ

Խմբագիր՝ Մելանյա Պետրոսյանց
Գեղ. խմբագիր՝ Արգիշտի Պետրոսյանց
Շարվածքը, էջադրումը՝ հեղինակի

Պատվեր՝ 373: Տպաքանակ՝ 300:

Տպագրված է «**Տիգրան Մեծ**» հրատարակչության տպարանում

Ա 114752

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ.
Հասարակական, քաղաքական գործիչ, Արցախյան ազատամարտի մասնակից, մշակութաբան, մատենագետ, պատմաբան, լրագրող, ՀՀ բանակի փոխգնդապետ (24.07.2000 թ.), Երևանի «ԵՐԱ» բիզնեսի և քաղաքականության ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր (26.03.2006 թ.), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս (15.08.2006 թ.), Հայաստանի լրագրողների միության անդամ (1982 թ.), Հայ գրողների միության անդամ (03.12.2004 թ.), Ապարանի շրջանի Վարդենիս համայնքի (30.05.2003 թ.), Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (26.03.2006 թ.) պատվավոր քաղաքացի:

Հրատարակել է 30 գիրք ու գրքույկ, 100-ից ավելի գիտական հոդված, 1000-ից ավելի այլ հոդվածներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ ՀՐԱՉՅԱ ՏԻԳՐԱՆԻ,
ՀՀ բանակի փոխգնդապետ (05.08.2010 թ.), Արցախյան ազատամարտի մասնակից: 1993 թ-ին ավարտել է Ապարանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1994 թ-ին՝ Երևանի պոլիգրաֆ տեխնիկական ուսումնարանը, 1997 թ-ին՝ էջմիածնի ակումբա-գրադարանային տեխնիկումը, 2000 թ-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի համազորային-շտաբային հրամանատարական ֆակուլտետը, 2004 թ-ին՝ գերազանցությամբ՝ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի համազորային ակադեմիայի սպաների վերապատրաստման «Վիստրել» ուսումնական կենտրոնի մարտավարության դասընթացը, 2001 թ-ին՝ զինված բախումների իրավունքի հրահանգչի դասընթացները: 1994-1995 թթ-ին ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2000 թ-ին օգոստոսին նշանակվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի մարտավարության ամբիոնի դասախոս, 2005 թ-ին՝ ավագ դասախոս: Պարգևատրվել է ՀՀ «Մարտական ծառայության» մեդալով (2007 թ.):